ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԵՐԸ.
1920-2020թթ. հին խնդիրներ և նոր մարտահրավերներ»
երիտասարդ գիտնականների դպրոց
07-13 դեկտեմբեր, 2020, Գյումրի

СБОРНИК СТАТЕЙ

«УРОКИ ИСТОРИИ:
1920-2020гг. Старые вопросы и новые вызовы»
Школа молодых ученых
Гюмри, 07-13 декабря, 2020

COLLECTION OF ARTICLES

“LESSONS OF THE HISTORY:
1920-2020: Old problems - new challenges”
School of Young Scientists
Gyumri, December 07-13, 2020

Գյումրի
2020

ՀՏԴ 94(479.25)(042.4)
ԳՄԴ 63.3(5Հ)g7
Պ 306

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների Կենտրոնի գիտական խորհրդի 18. 07. 2020թ. նիստի որոշմամբ և ՀՀ ԿԳՄՍ Գիտության կոմիտեի «Երիտասարդ գիտնականների դպրոցի» կազմակերպման համար ֆինանսական աջակցությամբ

Խմբագրական հանձնախումբ՝
Ս. Հայրապետյան (գլխ. խմբագիր),
Հ. Հարությունյան, Կ. Բազեյան, Ռ. Հովհաննիսյան

Պ 306 **Պատմության դասերը. 1920-2020թթ. հին խնդիրներ և նոր մարտահրավերներ**: *Երիտասարդ գիտնականների դպրոց*: 07-13 դեկտեմբեր, 2020, Գյումրի:Հոդվածների ժողովածու.- Գյումրի: ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2020.- 280 էջ:

Ժողովածուն ընդգրկում է 2020թ. դեկտեմբերի 07-13-ին Գյումրիում «Պատմության դասերը. 1920-2020թթ. հին խնդիրներ և նոր մարտահրավերներ» խորագրով երիտասարդ գիտնականների դպրոցում ներկայացված դասախոսությունները ծավալուն գիտական հոդվածների տեսքով: Դրանք վերաբերում են Հայաստանի վերջին 100-ամյակի արտաքին քաղաքականության մի շարք կարևորագույն հիմնահարցերին:
Ժողովածուն նախատեսված է մասնագետների և ընթերցող լայն շրջանների համար:

ՀՏԴ 94(479.25)(042.4)
ԳՄԴ 63.3(5Հ)g7

ISBN 978-9939-1-1206-0

© ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2020

ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ 100-ԱՄՅԱ ՈՒՂԻՆ
(պատմական զուգահեռներ)

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Հայ ժողովուրդ, Ռուսական կայսրության, բոլշևիկյան հեղաշրջում, Բրեստ-Լիտովսկի պայմանագիր, Անդրկովկասյան սեյմ:

Անոտացիա: Հոդվածում ներկայացված է հայ և վրաց ժողովուրդների անկախացման ուղին՝ սկսած 1917թ. ռուսական հեղափոխություններից հետո: Անկախացման գործընթացը հիմնականում ներկայացված է Հայաստանի օրինակով՝ ժամանակ առ ժամանակ զուգահեռներ անցկացնելով Վրաստանի հետ: Անդրադարձ է կատարված ինչպես Ժամանակավոր կառավարության քաղաքականությանը հայ և վրաց ժողովուրդների նկատմամբ, այնպես էլ բոլշևիկյան հեղաշրջումից հետո ձևավորված իրավիճակին, Անդրկովկասը Ռուսաստանից անջատվելուն և Հայաստանի ու Վրաստանի անկախացմանը:

Հայ և վրաց ժողովուրդները, հազարամյակներ շարունակ ապրելով կողք կողքի, համաշխարհային ծանրակշիռ տեղ ու քաղաքակրթական դեր են ունեցել շնորհիվ այն իրողության, որ դարեր ի վեր ունեցել են սեփական պետականություն, ինքնուրույն գիր-գրականություն ու հարուստ մշակութ: Վրաց Փառնավազյանների ու Հայոց Արտաշեսյանների, հայ և վրաց Բագրատունիների թագավորությունների պատմությունը դրա ամենավառ արտահայ-

տություններից է: Պատահական չէ, որ եղել են պատմական դարաշրջաններ, երբ հարևան քրիստոնյա ժողովուրդները միմյանց երկրներն ընկալել են որպես սեփական փրկության հանգրվաններ, 5-րդ դարում միասնաբար պայքարել են Սասանյան Պարսկաստանի, 7-9-րդ դարերում՝ արաբների, 11-13-րդ դարերում՝ սելջուկ-թուրքերի ու մոնղոլների, 16-18-րդ դարերում՝ Օսմանյան կայսրության ու Պարսկական տերության դեմ: Պատահական չէ, որ 17-18-րդ դարերում բախտակից ժողովուրդները կազմել են համատեղ պայքարի ու դրա արդյունքում միացյալ պետություն ստեղծելու ծրագրեր: Այդ առումով հատկապես հիշարժան է 18-րդ դարի երկրորդ կեսը, երբ հայ ազգային գործիչներ Հովսեփ Էմինը, Մովսես Սարաֆյանը, Հովսեփ Արղությանը և ուրիշներ Հայաստանի ազատագրության ծրագրերում կարևորել են հայ-վրացական զինակցության դերը, և կազմվել են ազատագրական ծրագրեր վրաց նշանավոր արքա Հերակլ II-ի գլխավորությամբ միացյալ պետություն ստեղծելու վերաբերյալ[1]:

Վրաստանը պետական անկախությունը կորցրեց 1801 թ., երբ Ռուսաստանը, կոպտորեն խախտելով 1783 թ. Գեորգիևսկի դաշնագրի պայմանները, Արևելյան Վրաստանը բռնակցեց իր կայսրությանը: Հայաստանն ավելի վաղ էր կորցրել միասնական պետականությունը, որի վերջին շառավիղները՝ Սյունիքի և Արցախի մելիքությունները, նույնպես վերացվեցին ցարական իշխանությունների կողմից 1805 թ.՝ այդ երկրամասերի Ռուսական կայսրությանը միացնելուց հետո: Ռուսական տիրապետության շրջանում

[1] Հայոց պատմություն, ՀՀ ԳԱԱ հրատ., հ. III, գիրք առաջին, Եր., 2010, էջ 167-178: Մարտիրոսյան Վ., Հայ և վրաց ժողովուրդների համագործակցությունը ազատագրական պայքարում, Եր., 1971:

երկու ժողովուրդների մեջ շարունակեց վառ մնալ անկախության գաղափարը:

1917 թ. Ռուսական կայսրության կործանումը հնարավորություն տվեց Անդրկովկասի երեք հիմնական ժողովուրդներին՝ վրացիներին, հայերին ու կովկասյան թաթարներին (ադրբեջանցիներ), նախ ստեղծելու մեկ միացյալ դաշնային պետություն՝ Անդրկովկասի Դեմոկրատական Դաշնային Հանրապետությունը, ապա նաև՝ ինքնուրույն անկախ պետությունները:

1918 թ. մայիսի վերջին Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության հռչակումը դարակազմիկ իրադարձություն էր երկու բարեկամ ժողովուրդների կյանքում, որը նրանց տրվեց շատ դժվարին գնով, համառ պայքարի շնորհիվ: Փորձենք համառոտ նախանշել այն ուղին, որ երկու ժողովուրդներն անցան 1917 թ. ռուսական հեղափոխություններից հետո: Այդ գործընթացը ներկայացնենք հիմնականում Հայաստանի օրինակով՝ ժամանակ առ ժամանակ զուգահեռներ անցկացնելով Վրաստանի հետ:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Ռուսական կայսրությունում սկսվեց ժողովրդավարացման գործընթաց: Ժամանակավոր կառավարությունն անհամեմատ ավելի բարյացակամ վերաբերմունք հանդես բերեց Ռուսաստանի ժողովուրդների նկատմամբ. բանտերից ազատվեցին քաղաքական բանտարկյալները, ազգային հարցի թեման դարձավ քննարկման առարկա:

Ժամանակավոր կառավարության ապրիլի 26-ի հրամանագրով թուրքերից գրավված արևմտահայ գավառներում ստեղծվեց գեներալ-կոմիսարություն, կրկին օրակարգ բերվեց Արևմտյան Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու խնդիրը: Բազմաթիվ արևմտահայ գաղթականներ վերադարձան հայրենի եզերքներ

և լծվեցին հայրենիքի վերաշինման գործին: Տիրող ոգևորության մասին Ս. Վրացյանը գրում էր. «Մի տեսակ արտահողային պետություն էր ստեղծւում՝ կենտրոնական և տեղական իշխանութիւններով: Ապագայում, երբ Թիւրքահայաստանը դառնար ազատ, կառավարական մեքենան արդէն պատրաստ էր»[1]:

Ամենուր ստեղծվեցին ազգային խորհուրդներ[2]: 1917 թ. սեպտեմբեր-հոկտեմբերին ձևավորվեց Հայոց ազգային խորհուրդը (նախագահ՝ Ավետիս Ահարոնյան), նոյեմբեր-դեկտեմբերին՝ Վրաց ազգային խորհուրդը (նախագահ՝ Նոյ Ժորդանիա[3]): Այդ խորհուրդները վերածվեցին երկու ժողովուրդների հասարակական-քաղաքական կյանքի կազմակերպման գլխավոր կենտրոնների և բացառիկ դերակատարություն ունեցան ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում իրենց ազգերի առջև ծառացած խնդիրների լուծման, մասնավորապես՝ անկախության վերականգնման գործընթացը ղեկավարելու գործում:

Ինչպես ամբողջ Եվրասիայում, այնպես էլ Անդրկովկասում իրադարձությունները կտրուկ շրջադարձ ապրեցին 1917թ. հոկտեմբերից, երբ Ռուսաստանում, օգտվելով երկրում ստեղծված ծանր սոցիալ-քաղաքական կացությունից, բոլշևիկյան կուսակցու-

---

[1] Վրացեան Ս., Հայաստանի Հանրապետութիւն, Թեհրան, 1982, էջ 30:

[2] Հայոց ազգային խորհրդի և 1917 թ. ընթացքում Անդրկովկասի զանազան շրջաններում ստեղծված այլ խորհուրդների մասին տե՛ս Պետրոսյան Գ., Հայոց ազգային ժողովի և Հայոց ազգային խորհրդի ստեղծման պատմությունից, Հայագիտության հարցեր, Եր., 2016, թիվ 2, էջ 51-57:

[3] Ուշագրավ է Նոյ Ժորդանիայի մասին հայ հայտնի ազգային գործիչ, Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ալեքսանդր Խատիսյանի կարծիքը. «Ժորտանիա կեդրոնական դէմքն էր Վրացիներու մէջ. . . , 1900թ. իսկ կը ճանչնամ զինքը: Շատ խելացի եւ իր ժողովուրդի հոգեբանութիւնը լաւ ըմբռնող հմուտ քաղաքագէտ մըն է, տեսականապէս լաւ պատրաստուած: Անոր ազդեցութիւնը վրացական զանգուածներու վրայ հսկայական է» (տե՛ս Խատիսեան Ալ., Հայաստանի Հանրապետութեան ծագումն ու զարգացումը, Պէյրութ, 1968, էջ 81):

թյունը Վ. Լենինի ղեկավարությամբ, զինված ճանապարհով զավթեց իշխանությունը: Հոկտեմբերի 24-25-ին (նոր տոմարով՝ նոյեմբերի 7-8) Պետրոգրադում բռնի տապալվեց ժամանակավոր կառավարությունը: Կազմվեց նոր կառավարություն՝ Ժողովրդական կոմիսարների խորհուրդ (ժողկոմխորհ)՝ Վլադիմիր Լենինի գլխավորությամբ:

Ռուսաստանում ընդհատվեց հեղափոխության ժողովրդավարական զարգացումը: Սկզբում բոլշևիկները, շարունակելով Ժամանակավոր կառավարության ժողովրդավարական քայլերը, խոստացան խոսքի, մամուլի ազատություն, ազգերի իրավահավասարություն, գյուղացուն՝ հող, զինվորին՝ պատերազմի ավարտ: Այս խոստումների շնորհիվ նրանք ստացան ժողովրդի լայն շրջանակների աջակցությունը: Ազգային փոքրամասնությունների կողմից սկզբում ոգևորությամբ ընդունվեց 1917թ. նոյեմբերի 3-ին «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների հռչակագիրը», որով կայսրությունում ապրող ազգերին բոլշևիկները խոստանում էին իրավահավասարություն, սուվերենություն, ինքնորոշման իրավունքի ճանաչում՝ ընդհուպ մինչև Ռուսաստանից անջատվելն ու ինքնուրույն պետություն ստեղծելը: Սակայն շուտով Լենինի կառավարությունը մոռացավ այդ խոստումները և անցավ բռնությունների քաղաքականությանը:

Հոկտեմբերյան հեղաշրջումը հանկարծակիի բերեց Անդրկովկասի ժողովուրդներին: Բոլշևիկները գտնում էին, որ համաշխարհային պատերազմը, որը շարունակվում էր 4 տարի, պետք էր դադարեցնել և գրավված տարածքները կրկին հանձնել իրենց նախկին տերերին: Դա նշանակում էր, որ արյան գնով գրավված Արևմտյան Հայաստանը և հարակից շրջանները կվերադարձվեին Թուրքիային: Այդ քաղաքականությունից խիստ դժգոհեցին հատ-

կապես հայ ազգային կուսակցությունները, որոնք հույս ունեին ռուսների կողմից գրավված Արևմտյան Հայաստանը միացնել Ռուսաստանին կամ վերջինիս հովանավորությամբ ստեղծել ինքնավարություն: Տրապիզոնի նահանգի նկատմամբ հավակնություն ունեին վրացիները, ուստի նրանք ևս դեմ էին գրավված հողերի վերադարձին: Այս և այլ հանգամանքներ դրդեցին Անդրկովկասում քաղաքական կուսակցություններին ինքնուրույն քայլերի:

1917թ. նոյեմբերի 15-ին Թիֆլիսում կազմվեց իշխանության նոր մարմին՝ Անդրկովկասյան կոմիսարիատը՝ վրացի մենշևիկ Եվգենի Գեգեչկորու գլխավորությամբ: Կոմիսարիատի մեջ ընդգրկվեցին 12 կոմիսարներ:

Կոմիսարիատի ստեղծումով փաստորեն դադարեց դեռ մարտին Ժամանակավոր կառավարության ստեղծած մարմնի՝ ԱՀԿ-ի գործունեությունը, և Անդրկովկասը՝ իբրև դաշնային երկրամաս, բռնեց Ռուսաստանից անջատվելու ուղին: Կոմիսարիատի 12-ից 3 հայ անդամները (Հ. Օհանջանյան, Խ. Կարճիկյան, Ղ. Տեր-Ղազարյան), թեպետ կողմնակից չէին երկրամասը Ռուսական կայսրությունից անջատելու քաղաքական ուղեգծին, զգուշանալով թուրքերի դեմ միայնակ մնալու հեռանկարից (ինչը, որ մի քանի ամիս հետո տեղի ունեցավ), փաստացի մաս կազմեցին այդ անկախական շարժմանը[1]:

[1] Ուստի խիստ վիճելի է այն տեսակետը, թե հայ քաղաքական ուժերի համար 1917թ. վերջին անկախության գաղափարն ընդունելի չէր: Ուղղակի թուրքական վտանգը ռուսական զորքերի միջոցով չեզոքացնելու խնդիրն ավելի առաջնային էր և օրախնդիր, քան այդ ժամանակ ստեղծված բարդ աշխարհաքաղաքական իրադրության մեջ՝ անկախության հռչակումը (հանգամանորեն տե՛ս Մելիքյան Վ., Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում. Անդրկովկասյան կոմիսարիատի գործունեությունը և հայ իրականությունը (1917թ. նոյեմբեր – 1918թ. փետրվար), Եր., 2010):

Վ. Լենինի կառավարությունը չեղյալ հայտարարեց կոմիսարիատի լիազորությունները և հայ նշանավոր բոլշևիկ Ստեփան Շահումյանին նշանակեց Անդրկովկասի արտակարգ և լիազոր կոմիսար՝ մինչև խորհրդային կարգերի հաստատումը երկրամասում: Շահումյանը պայքար սկսեց Անդրկովկասում խորհրդային իշխանություն հաստատելու ուղղությամբ: Կոմիսարիատն իր հերթին քայլեր ձեռնարկեց նրա գործունեության դեմ: Վերջինս ստիպված եղավ անցնելու ընդհատակ և հեռանալու Թիֆլիսից:

Կոմիսարիատը Թուրքիայի հետ բանակցությունների արդյունքում 1917 թ. դեկտեմբերի 5-ին Երզնկայում կնքեց զինադադար: Ռազմաճակատի ողջ երկայնքով՝ Տրապիզոնից մինչև Սիրիա, դադարեցվում էին ռազմական գործողությունները: Թուրքական կողմը «երաշխավորում էր» իր հսկողության տակ գտնվող տարածքում հայերի անվտանգությունը: Իրականում թուրքերն այս զինադադարով ժամանակ էին շահում՝ նոր հարձակում սկսելու համար: Դրությունը բարդանում էր նրանով, որ պատերազմից հոգնած ռուսական կովկասյան բանակն ընդամենը մի քանի ամսվա ընթացքում կազմալուծվել էր: Հայրենիք վերադարձող ռուս դասալիք զինվորների խմբերը հարյուրավոր կիլոմետրերով ձգվում էին Երզնկայից մինչև Հյուսիսային Կովկաս: Դրան նպաստում էր նաև երկրամասի հակառուս ուժերի գործունեությունը[1]: Հայ ազգային կուսակցությունները, ինչպես և վրաց ազգային ուժերի մի մասը դեմ էին ռուսական զորքերի հեռանալուն՝ դրա մեջ տեսնելով հայ և քրիստոնյա մյուս ժողովուրդներին սպառնացող վտանգ:

1917 թ. բոլշևիկյան հեղաշրջումից հետո էլ, երբ Ռուսաստանի նոր իշխանություններն աչքի չընկան իրենց «հայասիրու-

[1] Муханов Б.М., Грузинская демократическая республика, М., 2018, с. 61-80.

թյամբ» և վարած քաղաքականությամբ, հանգեցրին կովկասյան բանակի ու ճակատի կազմալուծմանը, հայ քաղաքական շրջանակները շարունակեցին Արևմտյան Հայաստանում ինքնավար պետություն ստեղծելու ջանքերը: Դրա վառ արտահայտություններից էր տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնող ու հայացքներ ունեցող գործիչների մասնակցությամբ ստեղծված և բոլշևիկյան Ռուսաստանի կառավարության կողմից 1917 թ. դեկտեմբերի 29-ին ընդունված «Թուրքահայաստանի մասին հռչակագիրը», որն անվանապես ճանաչում էր Արևմտյան Հայաստանում հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքը[1]:

Նմանատիպ մեկ այլ դրսևորում էր վերոհիշյալ հրովարտակի ընդունումից մեկ ամիս անց՝ 1918 թ. հունվարի 30-ին, Էրզրումում հայ գործիչներից զնդապետ Թորգոմի (Արշակ Երվանդյան) կողմից հայկական պետականության վերականգնման հռչակումը: Սակայն ռուսական ռազմական իշխանությունները թշնամաբար ընդունեցին այդ քայլը և ձերբակալելով Թորգոմին, դատական գործ հարուցեցին նրա դեմ[2]:

1918 թ. հունվարին Թիֆլիսում քննարկումներ սկսվեցին դաշնակցականների (Ռ. Տեր-Մինասյան, Հ. Զավրիյան և ուրիշներ) և հայ բոլշևիկների (Ս. Շահումյան, Դ. Շահվերդյան, Ս. Կասյան և այլք) միջև Հայաստանի երկու հատվածների ապագայի վերաբերյալ մոտեցումները հստակեցնելու նպատակով: Կողմերը եկան այն եզրակացության, որ պետք է պայքարել Արևմտյան Հայաստանում անկախ պետություն, իսկ Արևելյան Հայաստանում՝ ռուսական հովանավորությամբ ինքնավարություն՝ հայկական կանտոն, ստեղ-

[1] Խուրշուդյան Լ., Սովետական Ռուսաստանը և հայկական հարցը (1917-1918 թթ.), Եր., 1977:

[2] Մելքոնյան Ա., Էրզրում, Հայկական հարց հանրագիտարան, Եր., 1996, էջ 136:

ծելու համար:[1] Քաղաքական զանազան պատճառներով այս ծրագիրը չիրագործվեց:

Ռուսաստանից անջատվելու շարժումը Վրաստանում թափ էր հավաքում: Վրաց ազգային խորհուրդը դեկտեմբերի 6-ին (19) հանդես եկավ վրաց ժողովրդին ուղղված կոչով, որտեղ նշվում էր՝ Ռուսաստանի տրոհման պայմաններում Վրաստանի ազգային-տարածքային ինքնավարության անհրաժեշտության մասին[2]:

1918թ. փետրվարից, օգտվելով Կովկասյան ճակատից ռուսական զորքերի հեռանալուց, օսմանյան զորքերն անցան հակահարձակման և կարողացան մարտ ամսին վերագրավել Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներ՝ Երզնկան, Դերջանը, Էրզրումը, Սարիղամիշը, ապրիլին՝ Կարսը: Նման պայմաններում Վանի նահանգային վարչությունում ձեռք բերած փորձառությունը Ա. Մանուկյանին հուշում էր, որ օր առաջ Թիֆլիսի հայոց ազգային խորհուրդը պարտավոր է զբաղվելու Հայաստանում բնակչության պաշտպանության և այնտեղ պետականության հիմքեր ստեղծելու գործով: Ուստի տեղափոխվելով Երևան և ստանալով դիկտատորական լիազորություններ՝ նա ստանձնեց տեղի ազգային խորհրդի ղեկավարի պարտականությունները, կարճ ժամանակում կարգուկանոն հաստատեց երկրամասում, կազմակերպեց զինական ինքնապաշտպանական ուժեր: Ուստի և հիրավի դարձավ ապագա Հայաստանի Հանրապետության հիմնադիրը[3]:

---

[1] Մելիքյան Վահան, Իշխանության հիմնահարցը Անդրկովկասում, Եր., 2010, էջ 242:

[2] Грузинский национальный совет, ru.m.wikipedia.org.

[3] Երևանի նահանգում հայոց պետականության վերականգնման գործում Արամ Մանուկյանի բացառիկ դերի մասին հանգամանորեն տե՛ս Ասրյան Արմեն, Արամ Մանուկյան. կյանքը և գործը, Եր., 2005:

1918 թ. փետրվարի 10-ին Թիֆլիսում գումարվեց Անդրկովկասի դաշնային հանրապետության իշխանության նոր մարմնի՝ Անդրկովկասյան սեյմի անդրանիկ նիստը: Սեյմում ներկայացված էին 32 մենշևիկներ, 30 մուսավաթականներ, 27 դաշնակցականներ և տասնյակ այլ կուսակցությունների ներկայացուցիչներ: Սեյմի նախագահ ընտրվեց Նիկոլայ Չխեիձեն:

Անդրկովկասյան հանրապետությունը փորձեց քայլեր ձեռնարկել թուրքական առաջխաղացումը կասեցնելու ուղղությամբ: Սակայն շուտով ստացվեց Բրեստ-Լիտովսկում 1918 թ. մարտի 3-ին Խորհրդային Ռուսաստանի և գերմանաթուրքական խմբավորման միջև պայմանագրի կնքման լուրը: Բոլշևիկյան կառավարությունը հրաժարվում էր Արևմտյան Ուկրաինայից, Արևմտյան Բելոռուսիայից, Մերձբալթիկայից և Արևմտյան Հայաստանից: Փաստորեն թուրքերին էր տրվում նաև Կարսի մարզը, որը 1878 թ. Ռուսաստանի կազմում էր[1]:

Անդրկովկասյան սեյմը չճանաչեց Բրեստ-Լիտովսկի թալանչիական պայմանագիրը և 1918թ. մարտին Տրապիզոնում առանձին բանակցություններ սկսեց թուրքերի հետ: Սեյմի պատվիրակության (նախագահ՝ Ա. Չխենկելի) 12 անդամներից 7-ը մահմեդականներ էին, ուստի շուտով դրսևորվեց վերջիններիս թուրքամետ դիրքորոշումը: Ադրբեջանցի պատվիրակները, ընդառաջ գնալով իրենց ազգակից թուրքերի զավթողական պահանջներին, գտնում էին, որ պետք է ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված հողերի անցումը Թուրքիային: Հայ և վրաց պատվիրակ-

[1] Բրեստ-Լիտովսկի բանակցությունների և պայմանագրի մասին մանրամասն տե՛ս Аветисян Г. А., Брест-Литовск: Как были отторгнуты Турцией Карс, Ардаган и Батум, Ер., 1994.

ները դեմ էին Արևմտյան Հայաստանի և Տրապիզոնի անցմանը Օսմանյան կայսրությանը:

Տրապիզոնի խորհրդաժողովի մարտի 7-ի (20) նիստում Ա. Չխենկելին նշեց, որ Անդրկովկասյան սեյմը չի ճանաչում առանց իրենց մասնակցության կնքված Բրեստ-Լիտովսկի անօրինական պայմանագիրը: Նրան հակադարձեց թուրքերի ներկայացուցիչ Հուսեյն Ռաուֆ բեյը՝ ասելով, թե քանի որ Անդրկովկասը չի անջատվել Ռուսաստանից, որևէ մեկն իրավունք չունի հանդես գալու այդ երկրամասի անունից: Ուստի պահանջեց, որ սեյմը հռչակի երկրամասի անջատումը Ռուսաստանից: Անկասկած, ձգտելով Անդրկովկասի անջատմանը, թուրքերը նպատակ ունեին հեշտացնելու իրենց զորքերի առաջխաղացումը դեպի Անդրկովկաս և Ռուսաստանի դեմ ստեղծելու բուֆերային երկիր[1]: Նրանք հատկապես թշնամաբար ընդունեցին սեյմի պատվիրակության առաջարկը՝ Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու վերաբերյալ՝ այն համարելով միջամտություն Թուրքիայի ներքին գործերին[2]: Թուրքերը մերժեցին նաև Չխենկելու առաջարկը՝ հաշտություն կնքել 1878 թ. սահմանների ճանաչումով, այսինքն՝ Բաթումի, Կարսի և Արդահանի նկատմամբ հավակնություններից հրաժարվելով: Բանակցությունները մտան փակուղի և որոշ ընդմիջումներից հետո դադարեցին:Սեյմի պատվիրակությունը վերադարձավ Թիֆլիս:

Անհրաժեշտ միասնության բացակայության և ուժերի անհավասարության պայմաններում հնարավոր չեղավ կասեցնել թուրքերի առաջխաղացումը: Այդ հանգամանքն ավելացրեց Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու մասին թուրքերի պահանջ-

[1] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:
[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 101:

ներն ընդունելու կողմնակիցների թիվը: Ապրիլի 6-ին սեյմի թուրք-թաթար պատվիրակները հայտարարեցին, որ իրենք չեն երաշխավորում պատերազմում թուրքերի դեմ մահմեդականների մասնակցությունը: Հայերից Մ. Հարությունյանը նկատեց, որ նման պայմաններում մնում է մի ճանապարհ՝ զենքը ձեռքին դուրս գալ կենաց ու մահվան կռվի:Հայ պատվիրակներին պաշտպանեցին վրացի գործիչները: Ն. Ժորդանիայի առաջարկությամբ երկրամասում հայտարարվեց ռազմական դրություն: Կազմվեց արտակարգ լիազորություններով օժտված մարմին՝ Ե. Գեգեչկորի, Խ. Խատիսյան և Ն. Ռամիշվիլի կազմով: Դրանում թաթարների բացակայությունը հուշում էր, որ նրանց նկատմամբ այլևս վստահություն չկար:

Ընդունվեց Անդրկովկասի ժողովուրդներին ուղղված կոչ, որում ասված էր. «Հնչել է ժամը, երբ վճռուում է բախտը մեր ընդհանուր հայրենիքի...: Մեզանից պահանջում էին մեր լաւագոյն բերդը՝ Կարսը եւ մեր ամենալաւ նավահանգիստը՝ Բաթումը…: Ի զէ՛ն ամենքդ: Դէպի ճակա՛տ ամենքդ»[1]: Սեյմի շատ գործիչներ, զինական նոր խմբեր մեկնեցին ռազմաճակատ:

Սակայն ապրիլի 1-ին ստացվեց Բաթումի անկման լուրը: Աջարիայում ոտքի կանգնեցին տեղի մահմեդականները և միացան թուրքական զորքերին: Վերջիններս շուտով մտան նաև Գուրիա: Վիճակը բարդացավ նրանով, որ Կովկասի թաթարներն ու մեսխեթցի թուրքերն էլ աշխուժացան ճակատը պահող հայ-վրացական ուժերի թիկունքում: Այսպիսի բարդ պայմաններում՝ օսմանյան Թուրքիայի ճնշման տակ, ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան սեյմը ձայների մեծամասնությամբ որոշում ընդունեց՝ երկրամասը Ռուսաստանից անջատելու և անկախ հանրապետություն հռչակելու մասին: Բանաձևի օգտին կողմ քվեարկած հայ և վրացի

[1] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 100-101:

պատվիրակներն իրականում այլընտրանք չունեին: Բայց եղան մարդիկ, որոնք բացահայտորեն դեմ արտահայտվեցին այդ որոշմանը: Հայ սոցիալ-դեմոկրատներից Լ. Թումանյանն այն գնահատեց որպես խիստ վտանգավոր քայլ:

Սեյմի թաթարական խմբակցությունը հրճվանք էր ապրում: «Տօնական տրամադրութիւն ունէին... մանաւանդ թուրքերը,-գրում էր Ս.Վրացյանը,- Ռասուլ - Զադէն ցնծում էր: Մուսաւաթական ֆրակցիան իրեն զգում էր նոր փեսայի դերում: Չէ՞ որ իրականանում էր իրենց նուիրական տենչը՝ մի քայլ դէպի Ռուսաստանի քայքայումը, մի քայլ դէպի «թուրք ազգերի դաշնակցութիւնը»՝ Ղրիմից Վոլգա, Վոլգայից Թուրքեստան եւ Թուրքեստանից Անատոլիա»[1]:

Մի քանի օր անց՝ ապրիլի 11-12-ին, գրեթե առանց կռվի, թուրքերի ձեռքն անցավ բավական լավ ամրացած Կարսի բերդը, որի անկման մեջ սեյմի անդամներն սկսեցին միմյանց ներկայացնել մեղադրանքներ: Ժամանակի գործիչների վկայությամբ՝ ռազմաճակատում օսմանյան թուրքերի հաջողություններին զուգընթաց, սեյմում կովկասյան թաթարների դիրքերն ավելի էին ամրապնդվում: Բոլորն էլ գիտեին, որ «…մահմետականները Կովկասում ոչ թէ չէին կռւում թիւրքերի դէմ, այլ դաւաճանում էին Անդրկովկասի միութեան, փորում էին նրա հիմքերը...: Կովկասեան մահմետականների տեսակարար կշիռը օրէցօր բարձրանում էր. Թուրքական զորքը մոտենում էր, և հետզհետե նրանց քծնելը դառնում էր սովորական»[2]:

Մայիսի սկզբներից վրաց գործիչները գերմանացիների, իսկ թաթար մուսավաթականները՝ օսմանյան թուրքերի հետ բանակ-

[1] Վրացեան Ս., նշվ. աշխ., էջ 105:
[2] Նույն տեղում, էջ 106:

ցություններում ձեռք բերեցին համաձայնություն՝ անկախություն հռչակելու դեպքում նրանց կողմից աջակցություն ստանալու մասին: Ակնհայտ է, որ Անդրկովկասյան դաշնությունը բռնել էր քայքայման ուղի:

Մայիսի 11-ին Բաթումում վերսկսվեցին թուրքերի հետ Տրապիզոնում ընդհատված բանակցությունները: Թուրքերի ներկայացուցիչ Հալիլ փաշան ներկայացրեց իրենց նոր ու ավելի թալանչիական պահանջները՝ հրաժարվել Ախալցխայից, Ախալքալաքից, Կարսից, Բաթումից, Երևանի նահանգի արևմտյան մասից, Կարս-Ջուլֆա երկաթգծից[1]:

Հայ քաղաքական շրջանակներին պատմությունը ծանր ընտրության առջև կանգնեցրեց: Թուրքերն առանձնակի թշնամությամբ էին տրամադրված հայերի նկատմամբ և ձգտում էին հնարավորինս ավելի շատ հայկական հողեր զավթել և ավարտին հասցնել Հայոց ցեղասպանության երիտթուրքական ծրագիրը: Մայիսի 15-ին նրանք գրավեցին Ալեքսանդրապոլը և ներխուժեցին Արարատյան դաշտ՝ լուրջ սպառնալիք ստեղծելով ինչպես արևելահայության, այնպես էլ Արևելյան Հայաստանում ծվարած հարյուրհազարավոր արևմտահայ գաղթականների համար: Ուստի հայության առաջնակարգ խնդիրը դարձավ թուրքերին կանգնեցնելը, որին էլ նա լծվեց ռազմաճակատի ողջ երկայնքով՝ Ախալցխայից մինչև Շարուրի դաշտ:

Դեռևս 1917 թ. դեկտեմբերից շարունակվում էին տեղի թուրք-մեսխեթցիների, ապա կանոնավոր օսմանյան զորքերի դեմ Ախալցխայի և հարակից հայկական ու վրացական գյուղերի դի-

[1] Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии, Тифлис, 1919, с. 272-278.

մաղրական մարտերը Զորի Զորյանի գլխավորությամբ[1]: Մարտ-մայիս ամիսներին տեղի էին ունեցել Ախալքալաքի գավառի, մաս-նավորապես Դամալա, Կարզախ և Սաթխա գյուղերի ինքնա-պաշտպանական կռիվները[2]: Թուրքական ներխուժման դեմ հաջող մարտեր էին մղել Շիրակի դաշտի բնակիչները, որոնց միացել էին հայտնի կամավորական Պանդուխտի զինյալները[3]: Այնպես որ մինչև մայիսի վերջին տասնօրյակը տեղի ունեցած վերոհիշյալ ծանր մարտերը զգալիորեն թուլացրել էին արշավող թուրքական ուժերին ու նրանց միացած տեղական ավազակային ջոկատներին և նախապատրաստել հայկական զորքերի հաղթանակները Սար-դարապատում, Բաշ Ապարանում և Ղարաքիլիսայում:

Հետևաբար, 1918 թ. մայիսի վերջին Հայաստանի անկախու-թյան վերականգնման գործում հայ ժողովրդի մղած հերոսական պայքարն ունեցավ բացառիկ նշանակություն:

Թուրքական վտանգը կանխելու և սեփական պետականու-թյունը վերականգնելու նպատակով վրաց քաղաքական շրջանակ-ները մայիսի 26-ին հայտարարեցին Անդրկովկասյան սեյմի լու-ծարման և Վրաստանի անկախության հռչակման մասին: Շուտով նրանց օրինակին հետևեցին կովկասյան թաթարները: Մայիսի 28-ին Հայոց ազգային խորհուրդը անկախության ուղղությամբ լուրջ քայլ կատարեց՝ թուրքերի հետ հաշտություն կնքելու նպատակով պատվիրակություն ուղարկելով Բաթում: Մայիսի 30-ին ընդունվեց

---

[1] Ախալցխայի ինքնապաշտպանության մասին տե՛ս Սիմոնյան Ե., Ախալցխան կրակե օղակում, Եր., 2000:

[2] Սանոսյան Ա., Ախալցխայի և Ախալքալաքի 1918 թ. Ինքնապաշտպանությունը, Եր., 1992: Մելքոնյան Ա., Ջավախքը 19-րդ դարում և 20-րդ դ. առաջին քառորդին, Եր., 2003, էջ 271-284:

[3] 1918 թ. Մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ, Եր., 2005, էջ 54-85:

Հայաստանի անկախության հռչակագիրը, որը խմբագրված էր Նիկոլ Աղբալյանի ձեռքով:

Վրաստանի Դեմոկրատական Հանրապետությունն (1918-1921) ու Հայաստանի Հանրապետությունը (1918-1920) ծնվեցին աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում: Ընդամենը օրեր անց՝ հունիսի 4-ին, Բաթումում մի կողմից՝ Անդրկովկասի նորահռչակ երեք հանրապետությունների և մյուս կողմից՝ Թուրքիայի միջև կնքված պայմանագրերով Օսմանյան կայսրությունը ճանաչում էր Վրաստանի Ադրբեջանի և Հայաստանի անկախությունը: Սակայն եթե թուրք-ադրբեջանական պայմանագիրն իրականում նշանակում էր կողմերի միջև դաշինքի կնքում, ապա Հայաստանի ու Վրաստանի համար ենթադրում էր տարածքային կորուստներ: Անդրկովկասը զրկվում էր իր տարածքի 20%-ից, որը կազմում էր 45 հազար քառ. կմ: Դրա 75%-ը բաժին էր ընկնում Կարսի մարզին և Երևանի նահանգին: Թուրքերին անցած տարածքներում ապրող 1 մլն 250 հազ. բնակիչների մեծ մասը հայեր էին, որոնցից միայն 400 հազարը՝ Երևանի նահանգից[1]:

Այդուհանդերձ, անգամ ծանրագույն պայմաններում, համեստ տարածքի վրա ստեղծված հանրապետությունները ժամանակի ընթացքում լուրջ առաջընթաց ապրեցին: Նրանք համեմատաբար կարճ ժամանակամիջոցում ձեռք բերեցին անկախ ու ժողովրդավար պետականությանը բնորոշ բոլոր հատկանիշները՝ տարածք, իշխանության մարմիններ, բանակ, միջազգային ճանաչում և այլն[2]: Հանրապետությունները կործանվեցին քեմալաբոլ-

[1] Кадышев А.В., Интервенция и гражданская война в Закавказье, Москва, 1960, с. 4: Ռիչարդ Գ. Հովհաննիսյան, Հայաստանի Հանրապետություն հ. I,Եր., 2005, էջ 39:

[2] Richard G. Hovannisian, The Republic of Armenia, vol. I-IV, Berkeley, Los Angeles, London, 1971-1996, Հակոբյան Արարատ, Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Եր., 2005:

շևիկյան գործակցության արդյունքում: Սակայն շնորհիվ առաջին հանրապետությունների բոլշևիկները ստիպված եղան հաշվի նստելու խորհրդային հանրապետությունների գոյության հետ:

Խորհրդային տարիներին հայ և վրաց ժողովուրդները, հայտնվելով համանման պայմաններում և հաճախ միասնաբար պայքարելով իրենց ազգային շահերի համար, կարողացան պահպանել սեփական ինքնությունը, ապահովել քաղաքական, տնտեսական ու մշակութային առաջընթաց: Հատկանշական է, որ այդ համատեղ պայքարի շնորհիվ ԽՍՀՄ 15 հանրապետություններից միայն Վրացական և Հայկական ԽՍՀ-ների 1978 թ. Սահմանադրություններում տեղ գտան վրացերենին ու հայերենին պետական լեզվի կարգավիճակ շնորհելու մասին համապատասխան հոդվածներ[1]:

Առաջին Հանրապետության հենքի վրա, թեև վարչաքաղաքական միանգամայն այլ համակարգի պայմաններում ստեղծված Խորհրդային Վրաստանն ու Հայաստանը հող նախապատրաստեցին Երրորդ՝ անկախ հանրապետությունների ձևավորման համար:

Այս է շուրջ հարյուրամյա հեռավորությունից 1918 թ. մայիսին Վրաստանի և Հայաստանի անկախ պետականությունների վերականգնման պատմական խորհուրդը:

[1] nodussr.ru, konstituciya-gruznskoj-ssr, Конституция Грузинской ССР (15 апреля 1978г.), статья 75, nodussr.ru, konstituciya-armyanskoj-ssr, Конституция Армянской ССР (14 апреля 1978 г.), статья 72.

100-ЛЕТНИЙ ПУТЬ ВОССТАНОВЛЕНИЯ НЕЗАВИСИМОСТИ ГРУЗИИ И АРМЕНИИ (исторические параллели)

Ашот МЕЛКОНЯН
Институт истории НАН РА

Ключевые слова: Демократическая Республика Грузия, Республика Армения, Российская империя, большевистская революция, Брест-Литовский договор, Закавказский сейм.

Живя бок о бок на протяжении тысячелетий, армяне и грузины сыграли значительную глобальную политическую роль благодаря тому, что на протяжении веков у них была собственная государственность и богатая культура. Не случайно были исторические эпохи, когда два народа воспринимали страны друг друга как места своего спасения, вместе боролись против иноземных захватчиков, строили планы совместной борьбы и создания единого государства.

В конце мая 1918 года провозглашение Демократической Республики Грузия и Республики Армения стало важной вехой в жизни дружественных народов. Эти республики родились на скромной территории в сложной геополитической ситуации, но добились значительного прогресса.

В советские годы армяне и грузины, находясь в одинаковых условиях, часто вместе борясь за свои национальные интересы, смогли сохранить свою идентичность, обеспечить политический, экономический и культурный прогресс. Так что не случайно из 15 республик СССР в 1978 году лишь им удалось включить в свои Конституции соответствующие статьи о предоставлении грузинскому и армянскому языкам статуса государственного. Основанные на базе Первой республики, Советская Грузия и Армения вскоре подготовили почву для образования Третьих независимых республик.

Это и есть исторический замысел восстановления в 1918 году независимой государственности в Грузии и Армении со столетнего расстояния.

THE 100-YEAR-OLD PATH OF GEORGIA AND ARMENIA‘s INDEPENDENCE RESTORATION (historical parallels)

Ashot MELKONYAN
Institute of History NAS RA

Key words: Democratic Republic of Georgia, Republic of Armenia, Russian Empire, Bolshevik revolution, Treaty of Brest-Litovsk, Transcaucasian Seim.

The Armenian and Georgian peoples, living side by side for thousands of years, have played a significant global political role since they have had their own statehood and rich culture for centuries. It is not by chance that there have been historical periods when the two peoples perceived each other's countries as bases for their own salvation, fought together against a foreign power, made plans for a joint struggle and the creation of a united state.

The proclamation of the Democratic Republic of Georgia and the Republic of Armenia at the end of May 1918 became an epoch-making event in the life of the friendly peoples. These republics were born in a difficult geopolitical situation and on a modest territory, yet they made significant progress.

During the Soviet era, the Armenian and the Georgian peoples, finding themselves in similar conditions, often fighting together for their national interests, were able to preserve their identity, ensure political, economic, and cultural progress. So, it is not accidental that from the soviet republics only the Georgian and Armenian SSRs’ constitutions of 1978

comprised relevant articles on granting Georgian and Armenian the status of state languages. Being founded on the bases of the First Republic, Soviet Georgia and Soviet Armenia soon paved the way for the formation of the Third Independent Republics.

This is the historical meaning of the restoration of the Georgian and Armenian independence in May 1918 over 100 years of retrospect.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՔԵՄԱԼԱԿԱՆ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԾՐԱԳԻՐԸ (1920 թ.)

Ռուբեն ՍԱՖՐԱՍՏՅԱՆ
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Երիտթուրքեր, Մուստաֆա Քեմալ, Թուրքիա, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջան, Ազգային ուխտ, Քյազիմ Քարաբեքիր, Ազգային Մեծ ժողով։

Անոտացիա։ Հոդվածը նվիրված է երիտթուրքերի կողմից հայոց ցեղասպանության քաղաքականության շարունակմանը Քեմալական Թուրքիայի կողմից։ Անդրադարձ է կատարվում հայերի ոչնչացման քեմալականների ծրագրին, Մուստաֆա Քեմալի կապերին երիտթուրք գործիչների և «Հատուկ կազմակերպության» անդամների հետ։ Ներկայացվում է Հայաստանի Հանրապեության դեմ պատերազմի քաղաքական և ռազմական մակարդակներում

նախապատրաստմանը, բացահայտվում այդ պատերազմի իրական նպատակները:

Երիտթուրքերի սկսած գործը որոշել էին ավարտել քեմալականները՝ այս անգամ ստրկացնելով Հայաստանի Հանրապետությանը և ցեղասպանության ենթարկելով Արևելյան Հայաստանի հայությանը: Այդ է վկայում այն պաշտոնական գաղտնի փաստաթուղթը, որտեղ 1920 թ. սեպտեմբերին ՀՀ դեմ պատերազմ սանձազերծած Թուրքիայի ղեկավարությունը ամենայն հստակությամբ նշում է այդ պատերազմի իրական նպատակը՝ «մեջտեղից վերացնել» Հայաստանը:

Փաստաթուղթը ստեղծվել է 1920 թ. նոյեմբերին: Նրա նախապատմությունը հետևյալն է:

Առաջին աշխարհամարտում Օսմանյան Թուրքիան, որը ղեկավարվում էր երիտթուրքերի հանցավոր վարչակարգմի կողմից, ծանր պարտություն կրեց: Երիտթուրքական պարագլուխները դիմեցին փախուստի: Սակայն նախապես ստեղծած գաղտնի կազմակերպությունների միջոցով նրանք շարունակում էին որոշիչ ազդեցություն ունենալ երկրի քաղաքական կյանքի վրա: Դրանցից էին «Հատուկ կազմակերպությունը» (Teşkilât-ı Mahsusa), որի անդամները դեռևս Հայոց ցեղասպանության տարիներին աչքի էին ընկել որպես ամենադաժան մարդասպաններ, ինչպես նաև հատկապես «Քարաքոլը», որն առանձնապես ակտիվացել էր քեմալական շարժման ընթացքում: Նրանք մեծ դեր ունեցան կայսրության ասիական շրջաններում ազգայնամոլական շարժման առաջացման և նրա զինված ջոկատներին զենքով ապահովելու գործում: Այդ շարժման ղեկավար ուժը հիմնականում թուրքական բանակի

սպայակույտի ներկայացուցիչներն էին, մեծ էր նաև երիտթուրքական կուսակցության նախկին անդամների դերը:

«Քարաքոլը» ստեղծել էր գաղտնի գործակալների մի լայն ցանց, որը հավաքագրում էր մայրաքաղաքում գտնվող թուրք սպաների և նրանց գաղտնի փոխադրում Փոքր Ասիա՝ այնտեղ զինված պայքար կազմակերպելու նպատակով: «Քարաքոլը» կապ հաստատեց նաև նոյեմբերից մայրաքաղաք Կ.-Պոլսում գտնվող օսմանյան բանակի «Յըլդըրըմ» (Կայծակ) բանակային խմբի նախկին հրամանատար Մուսթաֆա Քեմալ փաշայի հետ, որն, ինչպես օսմանյան բանակի շատ սպաներ, ժամանակին անդամակցել էր երիտթուրքական կուսակցությանը և մաս է կազմել նրա ղեկավար խմբավորման[1]: Որոշ լավատեղյակ հեղինակներ գրում են, որ նա եղել է նաև վերը նշված «Հատուկ կազմակերպության» «ամենավստահելի» անդամներից մեկը[2]: Պատահական չէ, որ Քեմալի ղեկավարած ազգայնամոլական շարժման կորիզը կազմում էին երիտթուրքերը՝ հիմնականում «Հատուկ կազմակերպության» անդամները: Իր հուշերում այդ կազմակերպության ղեկավարներից Հյուսամեթին Էրթյուրքը նշում է, որ «Հատուկ կազմակերպությունը», օժանդակելով Քեմալին, նպատակ ուներ նրա միջոցով կայսրության արևելյան վիլայեթներում ստեղծել խոշոր մի կազմակերպություն[3]:

Քեմալը երիտթուրքերին և «Հատուկ կազմակերպության» անդամներին մեծ տեղ էր տալիս իր ղեկավարած շարժման շրջա-

---

[1] Akal Emel, Mustafa Kemal, İttihat Terakki ve Bolşevizm Milli Mücadelenin Başlangıcında. 2. Basım (genişletilmiş ve gözden geçirilmiş). İstanbul, 2006, s. 57-60.

[2] Şimşek Erdal, Bahar İlhan, Türkiye'de Istihbaratçılık ve MİT. İstanbul: Kum Saati, 2004, s. 173.

[3] [Erturk Hüsamettin], Samih Nafiz Tansu, *İki Devrin Perde Arkası.* Anlatan: Hüsamettin *Ertürk,* İstanbul: Çınar. *1969,* s. 217.

նակներում, իհարկե՝ այն դեպքում, երբ նրանք հայտարարում էին անձամբ Քեմալին իրենց հավատարմության մասին: Ուշագրավ է, օրինակ, հետևյալ փաստը. 1919թ. հուլիսի 23-ին բացված Էրզրումի (Կարինի) քեմալականների համաժողովին մասնակցում էր 34 երիտթուրք, իսկ մասնակիցների ընդհանուր թիվը 60-ն էր[1]:

Հետագայում նույնպես, Թուրքիայի Հանրապետության ծագումնաբանության շրջանում, Քեմալը լայնորեն հենվում էր «Միություն և առաջադիմություն» երիտթուրքական կուսակցության և «Հատուկ կազմակերպություն» գաղտնի կազմակերպության անդամների վրա: Նա շարունակեց ընկերական մոտիկ կապեր պահպանել վերջինիս անդամների հետ, որոնք Հայոց ցեղասպանության համար անմիջական պատասխանատվություն կրող հանցագործներ էին. օրինակ, Քուշչուբաշը Էշրեֆը, Շյուքրյու Քայան և այլք: Այդ հանցավոր կազմակերպության անդամ է եղել նաև Թուրքիայի Հանրապետության 3-րդ նախագահը՝ Ջելալ Բայարը, որը Քեմալի հավատարիմ զինակիցն էր և նրա նախագահության շրջանում զբաղեցրել է վարչապետի պաշտոնը:

Այս ամենի համատեքստում լրացուցիչ արժանահավատություն են ձեռք բերում բազմաթիվ վկայություններն այն մասին, որ վերը նշված գաղտնի «Քարաքոլ» կազմակերպությունն է մեծապես նպաստել, որ Մուսթաֆա Քեմալը նշանակում ստանա արևելյան վիլայեթներում: Լինելով չափազանց փառասեր անձնավորություն՝ Մուսթաֆա Քեմալը ջանք չէր խնայում հետպատերազմյան Օսմանյան կայսրությունում ավելի բարձր ղեկավար պաշտոն ստանալու համար և ակտիվորեն ներգրավվել էր մայրաքա-

[1] Տես Kılıçkaya M. Derviş, Milli Mücadele'de Kongreler ve İttihatçılık Sorunu,- http://www.ait.hacettepe.edu.tr/akademik/arsiv/kongr.htm

դաքային քաղաքական ինտրիգների մեջ: «Քարաքոլի» օգնությամբ նրան հաջողվեց ստանալ կայսրության փոքրասիական տարածաշրջանում տեղակայված 9-րդ բանակի տեսուչի պաշտոնը: Պաշտոնապես նրա առջև խնդիր էր դրվել ապահովել զինապահեստների անվտանգությունը, ճնշել Անտանտի դեմ ընդհատակում ձևավորվող դիմադրության խմբերը, վերակազմավորել այդ բանակի քայքայված ստորաբաժանումները և նպաստել այդ տարածաշրջանում կարգուկանոնի հաստատմանը:

Իրականում Քեմալը պատրաստվում էր ղեկավարել այնտեղ արդեն սկիզբ առնող զինված պայքարը հանուն Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականության պահպանման: 1919 թ. մայիսի 19-ին նա մի խումբ համախոհների հետ ծովային ուղիով հասավ Սամսուն: Այդ օրը թուրքական պաշտոնական պատմագրությունը համարում է քեմալական շարժման սկիզբն ազդարարող ամսաթիվ: Այն նշվում է որպես ազգային տոն: Քեմալական շարժումը երիտթուրքերի նախապատրաստած ազգայնամոլական շարժում էր, որի նպատակն էր պահպանել Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը և թուրքերի իշխանությունը հպատակ ժողովուրդների նկատմամբ:

Ժամանելուն պես և տեղում իրադրությունն ուսումնասիրելուց հետո՝ Քեմալը սկսեց կազմակերպել իր կողմնակիցների համաժողովներ, որտեղ քննարկվում էին այդ ազգայնամոլական շարժման նպատակները և ծրագրերը: Դրանցից ամենակարևորը 1919 թ. հուլիսի 23-ին Էրզրումում (Կարինում) բացված «Արևելյան վիլայեթների իրավունքների պաշտպանության ընկերության» համաժողովն էր, որը տևեց երկու շաբաթ:

Համաժողովի ընդունած բանաձևի առաջին կետը նշում էր, թե «Փոքր Ասիայի արևելյան վիլայեթները, Տրապիզոնի վիլայեթը և

Ջանիկի սանջակը» կազմում են Օսմանյան կայսրության անքակտելի մաս, և այդպիսով ընդգծվում էր կայսրության տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտությունը: Նշվում էր, որ պետք է ստեղծել ժամանակավոր «ազգային կառավարություն», որի գլխավոր խնդիրը կլինի պայքարը հայերի և հույների դեմ: Այդ բանաձևն իր էությամբ խորապես հակահայկական էր, քանի որ չէր ճանաչում Հայաստանի Հանրապետության գոյությունը և Արևմտյան Հայաստանի իրավունքը՝ անջատվելու Օսմանյան կայսրությունից:

Հարկ է նշել, որ այդ համաժողովն անցկացվեց Կարնո (Էրզրումի) հայտնի Հայկական Սանասարյան վարժարանի շենքում: Վարժարանի աշակերտները և ուսուցիչները զոհ էին գնացել Հայոց ցեղասպանությանը, իսկ նրա շինությունն էլ բռնազավթվել էր իշխանությունների կողմից:

Քեմալական շարժման հետագա համախմբման և հեղինակության բարձրացման տեսակետից կարևոր հանգրվան հանդիսացավ 1919 թ. սեպտեմբերին Սվազում (Սեբաստիայում) կայացած «Անատոլիայի և Ռումելիայի իրավունքների պաշտպանության ընկերությունների» համաժողովը: Այն վերահաստատեց Կարինի համաժողովի որոշումները և դրանք տարածեց կայսրության ամբողջ տարածքի վրա: Սակայն կար նաև տարբերություն. Սեբաստիայի համաժողովում շատ ավելի սուր և ընդգծված էին արտահայտվում հակահայկական և հակահունական տրամադրությունները: Այսպես, ընդունված բանաձևում նշվում էր, որ համաժողովի պատգամավորները պատրաստ են «մինչև արյան վերջին կաթիլը» պայքարելու հունական կամ հայկական պետությունների դեմ:

Մուսթաֆա Քեմալը համաժողովի աշխատանքների ավարտին նամակով դիմեց սուլթանին: Այստեղ, ակնհայտորեն կեղծելով

իրականությունը, 3-3,5 անգամ ուռճացնելով թուրքերի թիվը[1] և փաստորեն արդարացնելով Հայոց ցեղասպանությունը, նա հայտարարեց, թե այն տարածքների բնակչությունը, որոնք պետք է հանձնվեն «նորաստեղծ պետություններին», այսինքն՝ Հայաստանին, 75-90 %-ով կազմում են թուրքերը: Ուղերձում մեկ անգամ ևս ամենայն վճռականությամբ ու հստակ ընդգծվում էր՝ բացառվում է նույնիսկ մեկ թիզ հողի հանձնումը Հայաստանին կամ որևէ այլ պետության:

Այսպիսով, քեմալական շարժման ձևավորման արդեն սկզբնական փուլում ակնհայտ էր նրա հակահայկական բնույթը: Փաստորեն, քեմալականների հայտարարությունները վկայում էին, որ նրանց հարձակումը Հայաստանի Հանրապետության վրա անխուսափելի էր:

Վերը նշված տեսակետից կարևոր է ծանոթանալ «Ազգային ուխտ» (Misak-ı Millî) անվանումը ստացած փաստաթղթի ստեղծման պատմությանը և բովանդակությանը, քանի որ այն, ըստ էության, դարձավ այն «գաղափարախոսական» հենքը, որն անհրաժեշտ էր Հայաստանի վրա հարձակումը «հիմնավորելու» համար: Դրա նախաձեռնողն ու հեղինակը Մուսթաֆա Քեմալն էր: Ժամանակակից Թուրքիայում այն բնութագրվում է որպես քեմալական շարժման բուն նպատակներն արտահայտող ծրագիր[2]:

Ուշագրավ է այդ փաստաթղթի ընդունման նախապատմությունը: Քեմալի մոտիկ ընկեր և զինակից Ալի Ֆուադը (հետագայում ընդունեց Ջերեսոյ ազգանունը) պնդում է, որ դեռևս 1907 թ. Քե-

[1] Համաձայն Կ.Պոլսի Հայոց պատրիարքարանի կողմից 1912 թ. հրապարակված տվյալների՝ Արևմտյան Հայաստանում թուրքերի թիվը կազմում էր 25,4 տոկոս:

[2] Sakin Serdar, Millî Mücadelenin Programı: Misâk-ı Millî, - Atatürk Haftası Armağanı: Genelkurmay ATASE ve Denetleme Başkanlığı Yayınları, 10 Kasım, 2005, Sayı: 32, s. 31-48.

մալը գծել և ցույց էր տվել իրեն Օսմանյան կայսրության կազմում գտնվող բուն Թուրքիայի մի քարտեզ, որը հետագայում համարյա նույնությամբ հիմք ծառայեց «Ազգային ուխտի» նախանշված սահմանների համար[1]: Ալի Ֆուադի վկայությունից ակնհայտ է դառնում, որ Մուսթաֆա Քեմալն արդեն 1907 թ., երբ դեռ տեղի չէր ունեցել Հայոց ցեղասպանությունը և հայ ժողովրդի բնօրրանի մի զգալի հատվածը կազմող Արևմտյան Հայաստանի հայ ազգաբնակչությունը չէր ոչնչացվել, դիտարկում էր այն որպես բուն թուրքական տարածք: Այստեղից հետևում է եզրակացություն. Մուսթաֆա Քեմալի հեռուն գնացող ծրագրերում հայ ժողովրդի գոյությունն իր Հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, բացառվում էր, և երիտթուրքական կառավարության իրագործած ցեղասպանությունը միայն նպաստում էր այդ ծրագրերի իրականացմանը:

Քեմալի այս վաղեմի գաղափարներն ընդգծում էին միատարր թուրքական պետության ստեղծման անհրաժեշտությունը, որտեղ կոտորածներից հրաշքով փրկված քրիստոնյա ժողովուրդների մնացորդները զրկված կլինեին իրենց ինքնությունը պահպանելու իրավունքից: Հայոց ցեղասպանության արդյունքներից «օգտվելու» միտումն ակնհայտ է:

Զարգացնելով իր մոտեցումները՝ Քեմալը 1919 թ. դեկտեմբերի 28-ին Անկարայում հանդես եկավ երկարաշունչ ճառով և դիմելով այդ քաղաքի երևելիներին՝ նշեց, որ երկրի սահմանների մեջ պետք է ընդգրկել Օսմանյան կայսրության այն տարածքները, որոնք գտնվում էին օսմանյան բանակի հսկողության տակ 1918 թ. հոկտեմբերի 30-ի դրությամբ, այսինքն՝ Մուդրոսի զինադադարի

[1] Sakin Serdar, Misâk-ı Millî'nin Hazırlanışı ve Ilânıyla Ilgili Görüşler, - Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, S.: 13, Y.: 2002, s. 316-317:

ստորագրման օրը[1]: Ըստ ամենայնի, նա արդեն ուներ ապագա «Ազգային ուխտի» մասին իր պատկերացումը:

1920 թ. հունվարի 3-ից Քեմալը սկսեց Անկարայի իր կենտրոնատեղիում հանդիպել Կ.Պոլիս մեկնող՝ օսմանյան վերջին խորհրդարան ընտրված պատգամավորների հետ և, մանրամասն ծանոթացնելով «Ազգային ուխտի» արդեն իսկ իր նախապատրաստած տեքստի հիմնական դրույթներին, պահանջել, որ նրանք խորհրդարանում ներկայացնեն այդ փաստաթուղթը և հասնեն դրա ընդունմանը[2]:

Քեմալի կողմից առաջադրանք ստացած պատգամավորներն այդպես էլ վարվեցին: Նրանք սկզբում նախաձեռնեցին ոչ պաշտոնական քննարկումներ, հետագայում ստեղծեցին նույնպես ոչ պաշտոնական հանձնաժողով, որը մշակեց փաստաթղթի վերջնական տեքստը: Այն ընթերցվեց խորհրդարանի ոչ պաշտոնական փակ նիստում հունվարի 28-ին և ընդունվեց, սակայն պահվեց գաղտնի: Առաջին անգամ այդ փաստաթղթի գոյության մասին հանրությունն իմացավ փետրվարի 3-ին, երբ Կ.Պոլսում հրատարակվող «Ենի գյուն» լրագիրը հանդես եկավ համապատասխան հրապարակումով՝ նշելով, որ այն ծրագիր է, որի շուրջ համախմբվել են տարբեր հայացքների տեր պատգամավորներ: Միայն փետրվարի 17-ին օսմանյան խորհրդարանը պաշտոնապես ընդունեց և հրապարակեց «Ազգային ուխտը»[3]:

---

[1] [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 6 (1919-1920), İstanbul: Kaynak Yayınları, 2001, s. 30.

[2] Sakin Serdar, Misâk-ı Millî'nin Hazırlanışı ve Ilânıyla Ilgili Görüşler, - Sosyal Bilimler Enstitüsü Dergisi, S.: 13, Y.: 2002, s. 319:

[3] Sakin Serdar, İlân ediliş sürecinde Misâkımillî ve Mustafa Kemal Atatürk, - Askeri Tarih Araştırmalı Dergisi, Yıl: 2, Şubat 2004, Sayı: 3, s. 77- 78.

«Ազգային ուխտը» բաղկացած էր նախաբանից և 6 կետից[1]: Առաջին կետը նշում էր, որ «Օսմանյան կայսրության այն տարածքների ճակատագիրը, որոնք բնակեցված են բացառապես արաբական մեծամասնությամբ, և որոնք 1918 թ. հոկտեմբերի 30-ի զինադադարի կնքման պահին գրավված են եղել թշնամական բանակների կողմից, պետք է որոշել տեղական ազգաբնակչության ազատ արտահայտված կամքի համաձայն», այսինքն՝ ճանաչվում էր օսմանյան տիրապետության ներքո հարյուրամյակներ գտնված արաբների ինքնորոշման իրավունքը: Արաբ ժողովրդի նկատմամբ քեմալականների՝ արտաքուստ «բարի» կամքն արտահայտող այս դրույթի հիմքում ընկած էր մի շատ պարզ իրողություն. արաբները պատերազմի տարիներին բարձրացրել էին զինված ապստամբություն, հաղթել էին, արդեն դուրս էին եկել թուրքերի իշխանությունից և գտնվում էին հաղթական բրիտանական բանակի պաշտպանության ներքո: Այլ խոսքերով՝ թուրքերը կորցրել էին արաբական երկրները և հնարավորություն չունեին դրանք վերանվաճելու: Այս պայմաններում նրանց մնում էր միայն «ճանաչել» արաբ ժողովրդի ինքնորոշման իրավունքը: Նախապատերազմական օսմանյան պետության մնացած բոլոր տարածքները, որոնք Մուդրոսի զինադադարի կնքման օրը չէին գրավված դաշնակիցների կողմից, հայտարարվում էին Օսմանյան կայսրության անբաժանելի միասնություն կազմող տարածք: Այդպիսով, բացառվում էր Արևմտյան Հայաստանի և Հայկական հարցի գոյությունը, այն, ինչը ստիպված ընդունել էր երիտթուրքերի կառավարությունը 1914 թ. հունվարին՝ համաձայնելով օտար պետությունների հսկողության

[1] Տեքստը տես. Milli Egemenlik Belgeleri: Havza Genelgesi, Amasya Tamimi, Erzurum Kongresi Beyannamesi, Sivas Kongresi Beyannamesi, Misak-ı Millî Beyannamesi, Ankara: TBMM Basımevi, 2015, s. 35-36.

ներքո իրականացնել բավական լուրջ բարենորոգումներ կայսրության հայկական վիլայեթներում:

Հայ ժողովրդի համար կարևոր նշանակություն ուներ նաև 2-րդ կետը: Այն վերաբերում էր Կարսի, Արդահանի և Բաթումի լիվաներին (գավառներին), որոնք, ինչպես հայտնի է, նախքան Առաջին աշխարհամարտը գտնվում էին Ռուսական կայսրության կազմում: Նշվում էր, թե նրանց բնակչությունը հանրաքվեի արդյունքում արդեն որոշել է միանալ «մայր հայրենիքին», և պատրաստակամություն էր հայտնվում մեկ անգամ ևս այնտեղ անցկացնել հանրաքվե: Իրականում հանրաքվեի մասին դրույթով քեմալականները քողարկում էին այս կետի բացահայտ հակահայկական էությունը, քանի որ այն ուղղված էր հայ ժողովրդի պատմական անառարկելի իրավունքի դեմ: Փաստաթղթում հիշատակված հանրաքվեն ժամանակին անց էր կացվել Մեծ եղեռնի հեղինակներից մեկի՝ Էնվեր փաշայի նախաձեռնությամբ ու ղեկավարությամբ՝ բազմաթիվ աղաղակող խախտումներով:

Փաստաթղթի երրորդ կետը վերաբերում էր Արևմտյան Թրակիայի, իսկ չորրորդը՝ նեղուցների կարգավիճակին: Երկու դեպքում էլ նախատեսվում էր պահպանել օսմանյան տիրապետությունը: Հինգերորդ կետով հայտարարվում էր, որ Օսմանյան կայսրությունում բնակվող փոքրամասնությունների իրավունքների պահպանումը պայմանավորված կլինի հարևան երկրներում մուսուլմանների իրավունքների պահպանմամբ: Այս ձևակերպումը տարբերվում էր Մուսթաֆա Քեմալի առաջարկած տարբերակից և վկայում էր, որ խորհրդարանի անդամները, հավանական է՝ Կ.Պոլիսի կառավարության կողմնակիցների առաջարկով, փորձել էին հանդես գալ մի փոքր ավելի «ճկուն» դիրքերից՝ ցույց տալով դաշնակիցներին, որ «Ազգային ուխտը» հարգում է նրանց կողմից

առաջ քաշված սկզբունքները՝ միաժամանակ առիթը բաց չթողնելով օգտագործել բալկանյան և կովկասյան հարևան երկրներում բնակվող մուսուլմաններին՝ որպես գործիք հարևանների վրա ճնշում իրականացնելու նպատակով:

Վերջին՝ վեցերորդ կետը փաստորեն ազդարարում էր, որ Օսմանյան կայսրությունը ոչ միայն չի ճանաչում կապիտուլյացիաները, այլև պետական պարտքի վճարումներն իրականացնելու է ընտրովի՝ ելնելով այն հանգամանքից՝ արդյոք խոչընդոտո՞ւմ են դրանք երկրի զարգացմանը, թե՞ ոչ:

Ընդհանուր առմամբ՝ «Ազգային ուխտն» աչքի էր ընկնում ազգայնամոլական բնույթով՝ լիովին համապատասխանելով քեմալական շարժման գաղափարական և քաղաքական հիմնադրույթներին: Այն ավելի շատ հիշեցնում էր պատերազմում հաղթանակած, այլ ոչ թե պարտված երկրի խորհրդարանի հայտարարություն, որը գործում էր Անտանտի հաղթող պետություններից Մեծ Բրիտանիայի և Ֆրանսիայի զինված ուժերի հսկողության տակ գտնվող մայրաքաղաքում:

Պատահական չէ, որ «Ազգային ուխտն» առաջացրեց վերջիններիս դժգոհությունը և սուր հակազդեցությունը: Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջը բնութագրեց այն որպես վտանգավոր, որն արգելք կարող էր դառնալ Անտանտի և Օսմանյան կայսրության միջև նախատեսվող խաղաղության պայմանագրի ստորագրման համար: Որոշվեց վերջ դնել խորհրդարանի գործունեությանը, ինչպես նաև ավելի խիստ հսկողության տակ վերցնել մայրաքաղաքը, որտեղ հետզհետե ուժեղանում էին քեմալականների կողմնակիցները: Սուլթանի համաձայնությամբ 1920 թ. մարտի 16-ին Կ.Պոլիսը պաշտոնապես հայտարարվեց գրավված դաշնակիցների կողմից: Նրանց զինված ստորաբաժանումների թվաքանակը մայ-

բաքաղաքում ու շրջակայքում հասցվեց 60 հազարի: Հայտարարվեց ռազմական դրություն, դաշնակիցները ցրեցին խորհրդարանը, ձերբակալեցին պատգամավորների մի մասին, ինչպես նաև աչքի ընկնող քաղաքական այն գործիչներին, որոնք պաշտպանում էին քեմալականներին:

Անտանտի երկրները ճիշտ էին կռահել Քեմալի մտադրությունները՝ «Ազգային ուխտի» նախապատրաստումը և ընդունումը նշանակում էին, որ նա արդեն սկզբունքորեն որոշում է կայացրել պատերազմ սկսելու մասին: Նրանց ձեռնարկած միջոցները կարող էին գործադրվել միայն մայրաքաղաքում: Սակայն Քեմալի թիրախը Կ.Պոլիսը չէր: Նա որոշել էր սկսել «Ազգային ուխտի» դրույթները բռնի ուժով իրականություն դարձնելու քաղաքականությունը կայսրության հակառակ կողմից՝ Արևելքից: Նա արդեն ընտրել էր այդ քաղաքականության առաջին թիրախը. դա Հայաստանի Հանրապետությունն էր: Թուրքիայում հրատարակված նյութերը, այդ թվում նաև Զինված ուժերի Գլխավոր շտաբի կողմից, հնարավորություն են տալիս վերականգնելու 1920թ. ընթացքում հույժ գաղտնիության պայմաններում ՀՀ դեմ պատերազմի նախապատրաստման ընթացքը:

Պատահական չէ, որ Մուսթաֆա Քեմալն առաջին անգամ հայտնում է ՀՀ դեմ պատերազմ սկսելու անհրաժեշտության վերաբերյալ իր եզրակացության մասին 1920 թ. փետրվարի 5-ին՝ Կ.Պոլսում խորհրդարանի կողմից «Ազգային ուխտի» գաղտնի ընդունումից մեկ շաբաթ անց, ինչը նշանակում էր, որ նախապատրաստման «գաղափարական» փուլն ավարտված է և կարելի է անցնել բուն պատերազմի նախապատրաստմանը: Այդ օրը Մուսթաֆա Քեմալը, որն ընտրվել էր ազգայնամոլական շարժման Ներկայացուցչական մարմնի ղեկավար, նրա անունից ծածկագրով դիմում է

15-րդ կորպուսի հրամանատար Քարաբեքիր փաշային և առաջարկում[1], որ ՀՀ դեմ հարձակման անցնելու նպատակով սկսվի «պաշտոնական կամ ոչ պաշտոնական զորակոչ»[2]:

Քեմալի վերը նշված ծածկագիրը կարևոր փաստաթուղթ է, որը վկայում է, որ նա էր, որ նախաձեռնեց ՀՀ դեմ պատերազմը, և որ նա այդ արեց դեռևս 1920 թ. փետրվարի սկզբին, նախքան Սևրի դաշնագրի ստորագրումը: Թուրքիայի Հանրապետության ԶՈՒ Գլխավոր շտաբի հրատարակություններից մեկը, հիմք ընդունելով այդ ծածկագիրը, Քեմալին բնութագրում է որպես «Արևելքում իրականացվելիք հարձակման հիմնական գաղափարի» հեղինակ[3]: Ուշագրավ է, որ Քարաբեքիրին հանգիստ չէին տալիս Քեմալի՝ որպես Հայաստանի դեմ պատերազմի նախաձեռնողի «դափնիները»: Իր հուշագրությունների ստվարածավալ հատորում նա գրում է, որ պատերազմի մասին ինքը «մտածել» էր դեռևս Քեմալից մեկ տարի առաջ[4]...:

Ի պատասխան Քեմալի «առաջարկին»՝ Քարաբեքիր փաշան հայտնում է, որ մի կողմից՝ բնակլիմայական պայմանները ՀՀ դեմ բացվելիք ռազմաճակատում անբարենպաստ են, ինչը կդժվարացնի զորքերի մատակարարման խնդիրները, իսկ մյուս կողմից՝ քանի դեռ բոլշևիկները չեն անցել Կովկասյան լեռնաշղթան և չեն

[1] Իր օրագրում Քարաբեքիրը 1920թ. փետրվարի 6-ին կատարում է հետևյալ գրառումը. «Մ. Քեմալի առաջարկը Կովկասում հարձակման մասին»-Տե ս. Karabekir Kâzım, Günlükler (1906 - 1948). 1. Cilt. Çeviriyazı: Budak Kayabek. Hazırlayan: Yücel Demirel. İstanbul: Yapı Kredi Yayınları, 2009, s. 663.

[2] Տե ս փաստաթղթի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 466.

[3] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 56.

[4] Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 463.

մտել Ադրբեջան, թուրքական բանակը կարող է ենթարկվել պարտության: Նա մասնավորապես նշում է, որ ձմեռվա պայմանները շատ ծանր են, առատ ձյուն էր տեղացել, և հրաժարվում է կատարել հրամանը[1]: Քեմալը և Ներկայացուցչական մարմինը համարում են հրամանատարի առարկությունները հիմնավորված և ընդունում են դրանք[2]: Զորակոչը հետաձգվում է:

Սակայն Մուսթաֆա Քեմալը չի հրաժարվում ՀՀ դեմ պատերազմ սանձազերծելու իր գաղափարից՝ որպես պատրվակ օգտագործելով Անտանտի երկրների կողմից 1920 թ. մարտի 16-ին մայրաքաղաք Կ.Պոլսի պաշտոնապես գրավումը: Նա հենց նույն օրը՝ մարտի 16-ին, նորից դիմում է Քարաբեքիրին և հարցնում նրա կարծիքը Հայաստանի դեմ պատերազմ սկսելու բարենպաստ ժամկետների մասին[3]: Քարաբեքիրի պատասխանը վկայում է, որ նա դեռևս անբարենպաստ է համարում և՛ ռազմաքաղաքական իրադրությունը, և՛ բնակլիմայական պայմանները՝ հարձակում սկսելու տեսակետից: Նա մասնավորապես նշում է, որ Էրզրումի (Կարինի) և Սարիղամիշի միջև գտնվող տարածաշրջանում մեծ քանակությամբ ձյուն է նստած և այդ պատճառով հնարավոր կլինի հարձակումը սկսել ապրիլի սկզբներին, իսկ ավելի լավ է՝ ապրիլի կեսերից հետո: Միաժամանակ նա առաջարկում է արդեն սկսել նախապատրաստական աշխատանքները հարձակման համար և

[1] Տե՛ս փաստաթղթի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 467-468.

[2] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 57.

[3] Տե՛ս. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 41.

սպասել բարենպաստ պահին[1]: Քեմալը համաձայնում է Քարաբեքիրի առաջարկին, ինչի մասին և հայտնում է նրան:

Այսպիսով, պարզ է դառնում, որ արդեն 1920 թ. մարտից սկսվում են Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման աշխատանքները:

Քյազրմ Քարաբեքիր փաշան, որն ուշադիր հետևում էր բոլշևիկյան Ռուսաստանի Կարմիր բանակի գործողություններին, լրատվություն ստանալով, որ Կարմիր բանակը պարտության է մատնել Դենիկինի զորքերին և ճանապարհ է բացել դեպի Կովկաս, այս անգամ արդեն ինքն է դիմում է Մուսթաֆա Քեմալին՝ առաջարկով. սկսել հարձակումը Հայաստանի ուղղությամբ՝ Կարմիր բանակին հնարավորինս ավելի առաջխաղացման պայմաններում հանդիպելու և Կարսի, Արդվինի ու Արդահանի սանջակները գրավելու համար:

Իր զեկուցագրում՝ ուղղված Մուսթաֆա Քեմալին 1920 թ. մարտի 28-ին, Քարաբեքիրը, մասնավորապես, նշում էր, որ ազգի և պատմության առջև մեծ պատասխանատվություն կլինի, եթե բաց թողնվի պահը՝ հասնելու Թուրքիայի այն սահմաններին, որոնք նախանշված էին ռուսների հետ ստորագրված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով: Նրա զեկուցագրից պարզ է դառնում, որ ՀՀ վրա հարձակման նպատակն է լինելու գրավել ողջ տարածքները՝ մինչև Արաքս գետը: Նա նաև նշում է, որ արդեն սկսվել են նախապատրաստական աշխատանքները, և մեկ անգամ ևս ընդգծում է, որ այդ տարվա, այսինքն՝ 1920 թ. ձմեռը չափազանց խիստ լինելու պատճառով ապրիլի 15-ից ավելի վաղ գործողություններ սկսելն ան-

[1] Այդ փաստաթուղթը հրատարակել է Քյազրմ Քարբեքիրը: Տես Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 534-535.

հնարին է: Միաժամանակ նա խնդրում է արդեն սկսված բոլոր նախապատրաստական աշխատանքները պահել գաղտնի[1]:

Մուսթաֆա Քեմալը, ստանալով և քննարկելով Քարաբեքիրի վերը նշված զեկուցագիրը, հանգում է եզրակացության, որ անհրաժեշտ է արագացնել ՀՀ դեմ պատերազմի նախապատրաստական աշխատանքները՝ ապահովելով գաղտնիությունը, մասնավորապես գաղտնի պահելով հարձակումն սկսելու ճշգրիտ ժամկետը: Նա եզրակացնում է, որ նախապատրաստվող պատերազմը թուրքական պետության և թուրք ազգի փրկության միակ միջոցն է[2]:

Թուրքական փաստաթղթերի ուսումնասիրումը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու պատերազմի նախապատրաստման ուղղությամբ իրականացվող գործնական քայլերի մասին: Մասնավորապես, Քարաբեքիրը, որպես առաջին քայլ, հրապարակում է մի հայտարարագիր, որը նպատակ ուներ սահմանամերձ շրջաններում տարածելու հակահայկական տրամադրություններ և համախմբելու բնակչությանը ՀՀ դեմ՝ ներկայացնելով վերջինիս որպես թշնամի: Հայտարարագրում հատուկ շեշտվում էր մահմեդական ազգաբնակչության միասնական գործողությունների անհրաժեշտությունը՝ այդպիսով ձգտելով օգտագործել նաև քրդերին նախապատրաստվող պատերազմում[3]:

Միաժամանակ սկսվում են աշխատանքները Հայաստանի դեմ հարձակման գործողությունների ծրագիրը նախապատրաստելու ուղղությամբ: Այդ ծրագիրը պատրաստ եղավ շուրջ երկու

---

[1] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 58-59.

[2] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 59.

[3] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 59-60.

ամիս անց և 1920թ. մայիսի 26-ին ուղարկվեց Քարաբեքիրի հրամանատարության ներքո գտնվող կորպուսի ստորաբաժանումներին: Այստեղ որպես հարձակման թիրախ նշվում էին Իգդիրի գրավումը և Արաքս գետին հասնելը: Այդ օպերատիվ պլանը նախատեսում էր, որ հյուսիսից թուրքական զորքերը կստանան բոլշևիկների աջակցությունը, ինչը կհեշտացնի նրանց առաջխաղացումը: Այն հատուկ նշում էր, որ պատերազմի նպատակն է լինելու ապահովել «Ազգային ուխտով» նախանշված Թուրքիայի սահմանները, որոնց մեջ մտնելու էին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլ նաև Կարսի, Արդահանի, Արդվինի նահանգները, ինչպես նաև Նախիջևանը և Իգդիրը[1]:

Ապրիլի վերջերին, ավելի հստակ ապրիլի 26-ին, երբ բնակլիմայական պայմանները դարձան բարենպաստ և հայտնի դարձավ, որ Կարմիր բանակը մտել է Ադրբեջան, 15-րդ կորպուսի հրամանատար Քարաբեքիր փաշան մի նոր զեկուցագրով դիմեց Մուսթաֆա Քեմալին՝ հայտնելով, որ արդեն ստեղծվել են ՀՀ դեմ պատերազմ սկսելու համար բարենպաստ պայմաններ: Նա ընդգծում էր, որ արդեն իսկ կորպուսը սկսել է պատերազմի նախապատրաստական աշխատանքները, որոնք կավարտվեն երկու շաբաթ անց: Քարաբեքիրը Քեմալի ուշադրությունը հրավիրում էր 2 հանգամանքի վրա: Առաջին. երբ ավարտվեն նախապատրաստական աշխատանքները և կորպուսը պատրաստ լինի հարձակմանը, զորքերին երկար ժամանակ սպասողական վիճակում պահելը կազդի նրանց մարտունակության վրա: Երկրորդ հանգամանքը քաղաքական բնույթի էր: Քարաբեքիրը մտավախություն ուներ, որ

[1] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 59.

Կարմիր բանակի առաջխաղացումը Հարավային Կովկասում կարող է կանգնեցնել իրենց՝ թուրքերին, փաստի առջև, քանի որ Կարմիր բանակը կարող է շարունակել հարձակումը նաև Հայաստանի ուղղությամբ: Այդ պատճառով Քարաբեքիրն առաջարկում էր, որ պատերազմ սկսելու որոշումն ընդունվի անհապաղ[1]:

Հաջորդ օրը՝ ապրիլի 27-ին, Քեմալը, ի պատասխան Քարաբեքիրի վերը նշված զեկուցագրի, հայտնում է, որ պատերազմի մասին վերջնական որոշումը կարող է ընդունել միայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովը և պետք է սպասել նրա որոշմանը՝ միաժամանակ շարունակելով նախապատրաստական աշխատանքները:

Մուսթաֆա Քեմալի կողմից Քարաբեքիրին ուղարկված հրամանում նշվում էր, որ հաստատվել են դաշնակցային հարաբերություններ բոլշևիկյան Ռուսաստանի հետ և նախատեսվում է նրա հետ անցկացնել համատեղ գործողություններ անգլիական իմպերիալիստների և նրանց դաշնակից Հայաստանի Հանրապետության դեմ: Այդպիսով, Քեմալը հրամայում էր Քարաբեքիրին դեռևս զերծ մնալ Հայաստանի վրա հարձակումից, քանի որ Ռուսաստանի հետ համագործակցությունը, ինչպես նաև Ռուսաստանից ստացվելիք լայնածավալ օգնությունը դեռևս քննարկման փուլում էին[2]:

Քարաբեքիրը, գնահատելով առաջին հերթին տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական իրադրությունը, մայիսի 6-ին նոր զեկուցագրով դիմում է Քեմալին՝ նշելով, որ, իր կարծիքով, արդեն ստեղծվել է բարենպաստ իրադրություն Հայաստանի

[1] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 79.

[2] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 80.

վրա հարձակվելու համար, քանի որ Հայաստանի սահմանին է գտնվում Կարմիր բանակը: Քարաբեքիրն ընդգծում էր, որ «պահը չի կարելի բաց թողնել»[1]:

Նույն օրը Քեմալը, պատասխանելով Քարաբեքիրին, նշում է, որ դեռևս վաղ է սկսել ՀՀ դեմ պատերազմը, քանի որ արտաքին դրությունն անբարենպաստ է: Նա, մասնավորապես, նշում է, որ դեռևս պարզ չէ, թե ինչ կոնկրետ պայմանների հիման վրա հնարավոր կլինի դաշինք կնքել բոլշևիկների հետ: Ընդգծենք, որ կառավարությունը քննարկել է Քեմալի կողմից ստորագրված փաստաթղթում «Հայաստանի կառավարության մեջտեղից վերացման և ոչնչացման» հարցը[2]:

Քեմալի վերը նշված գրությունը ցույց է տալիս, որ նա Հայաստանի դեմ պատերազմը դիտարկում էր՝ հաշվի առնելով Թուրքիայի դեմ աշխարհում գոյություն ունեցող բացասական վերաբերմունքը: Նա գրում էր, որ «հայկական իրադարձությունները», նկատի ունենալով Հայոց ցեղասպանությունը, ողջ քրիստոնյա աշխարհը տրամադրել են թուրքերի դեմ, և եթե Թուրքիան պատերազմ սկսի Հայաստանի դեմ, դա կառաջացնի հակաթուրքական տրամադրությունների նոր ալիք: Այդ պատճառով նա հրամայում է Քարաբեքիրին շարունակել գաղտնի նախապատրաստվել պատերազմին և սպասել հրամանի, որը կտրվի, երբ ստեղծվի բարենպաստ իրավիճակ[3]:

---

[1] Տե՛ս զեկուցագրի տեքստում. Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 705-706.

[2] Տե՛ս կառավարության որոշման տեքստում. [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 131.

[3] [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s.132.

Դրանից հետո շուրջ երկու ամսվա ընթացքում Քեմալի և Քարաբեքիրի միջև տեղի է ունենում ինտենսիվ գրագրություն: Հունիսի 1-ին Կառավարությունը Քեմալի ղեկավարությամբ, արձագանքելով Քարաբեքիրի հերթական առաջարկին, մեկ անգամ ևս հետաձգում է Հայաստանի վրա հարձակման ամսաթիվը՝ նշելով, որ անհրաժեշտ է ապահովել այնպիսի պայմաններ, որ հնարավոր լինի ստանալ ռազմական օգնություն, քանի որ քեմալականների ուժերը միայնակ չեն կարող պարտության մատնել հայկական բանակին[1]:

Աստիճանաբար ավելի հստակ տեսք էր ստանում քեմալականների դաշինքը ռուս բոլշևիկների հետ: Այս պայմաններում, 1920 թ. հունիսի 6-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը՝ Մուսթաֆա Քեմալի ղեկավարությամբ, որոշում է ընդունում Հայաստանի վրա հարձակում սկսելու վերաբերյալ: Որպես հարձակման թիրախ նշվում են Սողանլըի լեռնանցքի գրավումը և Կարսի, Արդվինի և Արդահանի միացումը Թուրքիային: Կառավարության այդ որոշման տակ բացի Քեմալից ստորագրել են գլխավոր շտաբի պետ Իսմեթը, կառավարության անդամներ Իսմայիլ Ֆազըլը, դոկտոր Ադնանը, դոկտոր Ռըզա Նուրը, Ջելալեդդին Արիֆը և Ջամիլ Բեյը: Կառավարության որոշումը ենթադրում էր, որ հարձակման ճշգրիտ ժամկետը կորոշվի 15-րդ կորպուսի հրամանատար Քարաբեքիրի կողմից[2]:

Սկսելով իրականացնել կառավարության վերը նշված որոշումը՝ Քարաբեքիրն արդեն երկու օր հետո՝ 1920 թ. հունիսի 8-ին,

[1] Տե՛ս կառավարության որոշման տեքստում [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 146-149.

[2] Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 84.

հրապարակայնորեն հայտարարում է զորահավաք: Հետաքրքիր է, որ, ինչպես երևում է զորահավաքի մասին հայտարարության տեքստից, մահմեդական բնակչությանը համախմբելու նպատակով Քարաբեքիրը նույնիսկ թույլ էր տվել իրական իրադ-ության կեղծիք՝ հայտարարելով, որ «մահմեդական բանակները մոտեցել են մեզ և կարող են մեկնել օգնության ձեռք»: Այդ հայտարարության մեջ ասվում էր, որ «մինչև այժմ թուրքերի նկատմամբ ամենամեծ թշնամությունը ցույց են տվել հայերը», ինչը երբեք չի կարող մոռացվել: Հայտարարության մեջ ընդգծվում էր նաև, որ հայերի կողմից թույլ տրված այդ ահավոր «զուլումի» և անարդարության դեմ թուրքերի հետ համախմբվել են բոլշևիկները և մահմեդական բանակները, որոնք պետք է ոչնչացնեն բոլոր թշնամիներին[1]:

Այդպիսով, կառավարության որոշումով ավարտվում է Հայաստանի դեմ պատերազմի նախապատրաստման վերջին փուլը: Ընդհանուր առմամբ նախապատրաստումը տևեց շուրջ կես տարի: Այն սկիզբ առավ Մուսթաֆա Քեմալի նախաձեռնությամբ և ընթացավ նրա անմիջական ղեկավարության ներքո:

Հայաստանի վրա հարձակման վերջնական ժամկետը որոշվեց՝ հաշվի առնելով հիմնականում արտաքին գործոնը: 1920 թ. օգոստոսի վերջին և սեպտեմբերի սկզբին իրադրությունն այնպիսին էր, որ Հայաստանի դեմ նախանշվող պատերազմին չէին միջամտի ո՛չ արևմտյան երկրները, ո՛չ էլ բոլշևիկները: Որոշիչ նշանակություն ունեցավ քեմալականների և բոլշևիկների միջև փաստացի դաշնակցային հարաբերությունների հաստատումը: 1920 թ. սեպտեմբերի 8-ին Կարին (Էրզրում) հասավ Ռուսաստանից որ-

[1] Տե՛ս. Türk İstikâl Harbi: III ncü Cilt: Doğu Cephesi (1919-1921), Ankara: Genelkurmay Basımevi, 1965, s. 85.

պես օգնություն ուղարկված 200 կիլոգրամ ոսկին: Նրա մի մասը հանձնվեց Քարաբեքիրի հրամանատարության տակ գտնվող բանակին, մյուս մասը ուղարկվեց Անկարա և օգտագործվեց քեմալականների պաշտոնյաների և սպաների աշխատավարձերը վճարելու նպատակով:

Հրամանը՝ հարձակվելու Հայաստանի վրա, տրվեց 1920 թ. սեպտեմբերի 20-ին: Այն կառավարության անունից ստորագրված է Մուսթաֆա Քեմալի կողմից[1]: Հարձակման նպատակն էր հռչակվում «հայկական զինված ստորաբաժանումների ոչնչացումը»:

Հայաստանի սահմանին կենտրոնացվել էր 50-հազարանոց բանակ, որի կազմի մեջ մտնում էին նաև խաղաղ ազգաբնակչության դեմ թալանի և վայրագությունների պատրաստ անկանոն զինված ջոկատները:

Հետևելով Անկարայից ստացված հրամանին՝ Քարաբեքիրը սեպտեմբերի 24-ին իր հերթին հրամայեց իր հրամանատարության տակ գտնվող զորամիավորումներին սեպտեմբերի 26-ին ցերեկվա ընթացքում ավարտել բոլոր նախապատրաստական աշխատանքները և 26-ից 27-ի գիշերն անցնել հարձակման: Նախիջևանի շրջանում նույն օրը պետք է համատեղ հարձակում սկսեին թուրքական և ռուսական ստորաբաժանումները: Հետագայում հարձակումը հետաձգվեց մեկ օրով և սկսվեց սեպտեմբերի 28-ին: Այդպիսով իրականություն դարձավ Մուստաֆա Քեմալի՝ դեռևս 1920թ. փետրվարին առաջ քաշած գաղափարը Հայաստանի դեմ պատերազմ սկսելու վերաբերյալ:

[1] Հրամանի տեքստը տե՛ս. Doğu Cephesi Komutanı Kâzım Karabekir Paşa Hazretlerine, Ankara, 20 Eylül, Şifre, - [Atatürk], Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: II. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 189-190.

ՀՀ դեմ ռազմական գործողությունների ընթացքում Քեմալի դերը նվազեց, առաջին պլան մղվեց Արևելյան ռազմաճակատի հրամանատար նշանակված Քյազըմ Քարաբեքիր փաշան: Նրա ղեկավարած բանակի գործելակերպը խաղաղ բնակչության նկատմամբ շարունակում էր երիտթուրքերի ցեղասպանական «ավանդույթները»[1]: Այդ նմանությունը ակնհայտ էր նաև ժամանակակիցների և նույնիսկ հայ կոմունիստների համար: Լեգրանին ուղղված նամակում Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի կոմիսար Մռավյանն ընդգծում էր այդ հանգամանքը[2]:

Սակայն նույնիսկ Քարաբեքիրը մինչև վերջ չէր հասկանում իր ղեկավարի և վաղեմի ընկերոջ՝ Քեմալի բուն նպատակը՝ ՀՀ դեմ պատերազմին առնչվող: Դրա մասին պատկերացում է տալիս հետևյալ միջադեպը:

1920 թ. նոյեմբերի 5-ի երեկոյան Քարաբեքիրի զորքերը դիրքեր զբաղեցրին Ալեքսանդրապոլից դեպի արևմուտք գտնվող բարձունքների վրա և այդպիսով անմիջական վտանգ ստեղծեցին քաղաքի համար: Հաջորդ օրվա առավոտյան Քարաբեքիրը ստացավ ՀՀ կառավարության առաջարկը զինադադար հաստատելու մասին, որն ուղարկվել էր դեռևս նոյեմբերի 3-ին: Քարաբեքիրը այն փոխանցեց իր ղեկավարությանը և չսպասելով նրանից համապատասխան ցուցումների՝ անհապաղ ներկայացրեց հայկական կողմին վերջնագրային բնույթի մի շարք պահանջներ: Հաջորդ օրը՝ նոյեմբերի 7-ին, հայկական կողմը, ընդունելով վերջնագրի պայմանները, Ալեքսանդրապոլը հանձնեց թուրքերին:

---

[1] Ինքը՝ Քարաբեքիրը, նույնպես եղել է երիտթուրքական կուսակցության անդամ:
[2] Տե ս Հայաստանի պատմության պետական արխիվ, ֆ.114, ց. 2, գ. 31:

Քարաբեքիրի այդ հաջողությունը, փաստորոեն, արագացրեց կառավարության և Գլխավոր սպայակույտի կողմից ՀՀ հետ պատերազմում Թուրքիայի վերջնական նպատակների վերաձևակերպման գործընթացը: Այն խտացված ձևով արտահայտվեց զինադադարի վերաբերյալ հայկական կողմին ուղղված երկու վերջնագրերի տեքստերում[1]: Առաջինը՝ թվագրված նոյեմբերի 6-ով, պարունակում էր ավելի մեղմ պահանջներ, քան թե երկրորդը, որը ներկայացվել էր ընդամենը երկու օր անց՝ նոյեմբերի 8-ին: Նրանցից առաջինը արդյունք էր Քարաբեքիրի «ինքնագործունեության», որի համար, ամենայն հավանականությամբ, հիմք էր ծառայել Անկարայի կառավարության նոյեմբերի 2-ի համեմատաբար ավելի մեղմ պահանջներ ներկայացնող նոտան, իսկ երկրորդը գրված էր Մուսթաֆա Քեմալի կողմից կատարված իրադրության վերագնահատումներից հետո: Նրա համար հիմք էր ծառայել ԹԱՄԺ-ի կառավարության արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար Ահմեթ Մուհթարի նոյեմբերի 8-ով թվագրված հույժ գաղտնի ծածկագիրը, որի հասցեատերը Քարաբեքիրն էր[2]: Այստեղ մանրամասն ներկայացված են այդ վերագնահատումների արդյունքում վերջնական ձևակերպում ստացած մոտեցումները, ինչպես նաև բացատրված են դրանց շարժառիթները:

Ինչպես արդեն նշել էինք, այդ փաստաթուղթը պարունակում էր հայ ժողովրդի նկատմամբ ցեղասպանության իրականացման քեմալականների ծրագրի հիմնական կետերը: Ստորև ներկայացնում ենք այդ փաստաթուղթը՝ մեր թարգմանությամբ.

---

[1] Վերջնագրերի տեքստերը տե՛ս. Վրացյան Սիմոն, Հայաստանի Հանրապետություն. Երևան, 1993, էջ 511 – 513:

[2] Hariciye Vekili Ahmet Muhtar, Şark Cephesi Kumandanlığına, Ankara, 8/11/1336, – Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul, 1959 – 1960, s. 901.

ԱՐԵՎԵԼՅԱՆ ՌԱԶՄԱՃԱԿԱՏԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ՔՅԱԶԻՄ ՔԱՐԱԲԵՔԻՐ ՓԱՇԱՅԻՆ

(8 նոյեմբերի 1920թ.)[1]

Անկարա

8/11/1336

Արևելյան ռազմաճակատի հրամանատարությանը

Կասկած չկա, որ Հայաստանի զինադադարի առաջարկն այս պահին, երբ նա մեկուսացված է և՛ արևմտյան, և՛ արևելյան աշխարհներից, նպատակ ունի խուսափելու վրա հասնող աղետից: Ուժեղանալուն պես Հայաստանը, բնականաբար, կաշխատի իրականացնել Մերի պայմանագրով իր վրա դրված Արևելքի հետ մեր կապը կտրելու պարտականությունը, ինչպես նաև հույների հետ համատեղ կխաթարի մեր կյանքն ու զարգացումը: Անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահմեդական շրջանակի կենտրոնում, այդ դաժան ժանդարմի պարտականությունից սրտի համոզմունքով հրաժարվի և որոշի իր բախտը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ: Այդ պատճառով բացարձակ անհրաժեշտություն է, որ Հայաստանը քաղաքականապես ու նյութապես մեջտեղից վերացվի: Դրա հետ մեկտեղ, քանի որ այդ նպատակի իրականացումը կախված է մեր հզորության ընձեռած հնարավորությունից և ընդհանուր քաղաքական իրադրության բարենպաստությունից, ապա անհրաժեշտ է վերևում նշված կարևոր նախապայմանների համաձայնեցված նախապատրաստում:Դրանից բխում է, որ քննարկման առարկա չի կարող լինել հայերի հետ պարզ մի զինադադարի համաձայնության արդյունքում մեր հետ քաշվելը: Հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները

[1] Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 901.

պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երևալուն: Սակայն իրականում նրանց արդյունքը պիտի լինի մեր նպատակի աստիճանաբար նախապատրաստման ու հասունացման համար անհրաժեշտ նախապայմանների ստեղծումը:

Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է զորացրել հայկական բանակը և բռնագրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է մեր ռազմական հսկողությունը հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա և այդպիսով մեր ձեռքում պահել Թուրքիան Ադրբեջանին կապող բոլոր ճանապարհները: Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկված ու փափուկ ձևով՝ ինչպես խաղաղության պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աչքերում մշտապես խաղաղասեր երևալու պայմանով:

Հայկական կառավարությանը հանձնելու նպատակով այսօր Ձեզ ուղարկված զինադադարի պայմանների[1] առաջին կետով սահմանի վերաբերյալ հանրաքվեի սկզբունքի ընդունումը բխում է Հայաստանի հետ սահմանների վերջնական որոշմանը խոչընդոտելու ձգտումից: Կարող եք ժամանակավորապես ընդունել Բրեստ Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ձեռքից նախ և առաջ սահմանի վերաբերյալ գրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչընդոտել բանակցությունների փակուղի մտնելը: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտու-

[1] Նկատի ունի Հայաստանի արտաքին գործերի նախարարությանը փոխանցվելիք փաստաթուղթը:

թյան համար հող նախապատրաստել՝ սահմանի մյուս կողմում մնացող մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով: Պիտի պայմանագրի մեջ մտցնել կետեր, որոնք հնարավորինս արագ կապահովեն թշնամու ձեռքից զենքի բռնագրավումը և նրա բանակի զորացրումը: Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ: Նրանք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թուրքական պետություն:

Կառավարության իրական նպատակը պարունակող այս հրահանգը գաղտնի է: Այն նախատեսված է միայն Ձեզ համար:

Խնդրում ենք գրավոր հայտնել այս գաղտնագրի լրիվ վերծանման մասին:

Արտաքին գործերի նախարարի պաշտոնակատար

Ահմեթ Մուհթար[1]:

Հայոց ցեղասպանության այս ծրագիրը առանձնահատուկ տեղ է զբաղեցնում, քանի որ նպատակաուղղված էր ոչ թե հպատակ ժողովրդի, այլ ինքնիշխան պետության դեմ: Այդ պետության փաստացի ոչնչացումը պետք է հնարավորություն տար ֆիզիկապես բնաջնջելու հայ ժողովրդի կենդանի մնացած հատվածին՝ այդպիսով «քանդելով պատը» և ուղղակի կապ հաստատելով «մու-

[1] Ահմեթ Մուհթար, հետագայում ընդունել է Մոլլաօղլու ազգանունը (1870-1934): Դիվանագետ, փոխարտգործնախարար, 1920 – 1921թթ. հաճախակի փոխարինում էր երկարատև արտասահմանյան գործուղումներում գտնվող քեմալական Թուրքիայի առաջին արտգործնախարար Բեքիր Սամիին: Եղել է Օսմանյան կայսրության դեսպանը Հունաստանում, Ուկրաինայում, հանրապետության տարիներին զբաղեցրել է դեսպանի պաշտոններ Մոսկվայում ու Վաշինգտոնում: Բազմիցս ընտրվել է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի պատգամավոր:

[1] Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 901.

սուլմանական աշխարհի» մաս կազմող Ադրբեջանի հետ: Այդպիսով, շարունակվելու և ավարտին էր հասցվելու Հայոց ցեղասպանության քաղաքականությունը:

Վերևում նշված փաստաթղթում Հայաստանի «մեջտեղից վերացումը» հիմնավորվում է հետևյալ կերպ. «անհնարին է, որ Հայաստանը, որը գտնվում է մեծ մահմեդական շրջանակի կենտրոնում, ...դաժան ժանդարմի պարտականությունից սրտի համոզմունքով հրաժարվի և որոշի իր բախտը լիովին կապել Թուրքիայի և իսլամականության հետ»: Նույն փաստաթղթի մեկ այլ տեղում գրված է, որ անհրաժեշտ է «մեր ձեռքում պահել Թուրքիան Ադրբեջանի հետ կապող բոլոր ճանապարհները»: Այս արտահայտությունները բացահայտում են քեմալականների ցեղասպանական ծրագրի շարժառիթը:

Նշված են նաև նպատակին հասնելու միջոցները, որոնք ներառում են ինչպես ուժային, այնպես էլ դիվանագիտական գործողություններ: Այսպես, օրինակ, ծածկագիրն ընդգծում է, որ «Ներկայումս բացարձակ անհրաժեշտություն է զորացրել հայկական բանակը, բռնագրավել նրա զենքը՝ այդպիսով հնարավորություն չտալով, որ վերականգնվի նրա ռազմական կառույցը: Երկաթուղիները հսկողության տակ պահելու և մահմեդական ազգաբնակչության իրավունքները պաշտպանելու պատրվակով անհրաժեշտ է ռազմական բռնատիրություն հաստատել Հայաստանի ողջ տարածքի վրա»: Մեկ այլ տեղ նշվում է, որ «Կարող եք ժամանակավորապես ընդունել Բրեստ Լիտովսկի սահմանի գիծը, քանի որ նպատակ է դրված այդ հարցում հայերի ձեռքից նախ և առաջ սահմանի վերաբերյալ գրավոր առաջարկ ստանալ և այդպիսով խոչընդոտել բանակցությունների փակուղի մտնելը: Սակայն անհրաժեշտ է հարատև միջամտության համար հող նախապատրաստել՝

սահմանի մյուս կողմում մնալիք մահմեդական փոքրամասնության իրավունքները պաշտպանելու պատրվակով»[1]:

Ծածկագիր ծրագիրը բացահայտում է նաև քեմալականների քաղաքականության գաղափարական հենքը: Ակնհայտ է դառնում, որ քեմալականները, շարունակելով երիտթուրքերի քաղաքական նախապատվությունները, ապավինում էին պանթյուրքիզմի գաղափարական-քաղաքական ուսմունքին. «Անհրաժեշտ է հատուկ ջանքեր գործադրել քայլ առ քայլ տարածաշրջանի թյուրքերին զինելու և ազգային զինված ուժեր ստեղծելու ուղղությամբ, որոնք պիտի կապեն միմյանց հետ Արևելքն ու Արևմուտքը և դարձնեն Ադրբեջանը ինքնուրույն թյուրքական պետություն»[2]:

Փաստաթուղթը պարունակում է ձևակերպումներ, որոնք վկայում են, որ նրա հեղինակները հատուկ ուշադրություն էին հատկացնում նաև իրենց հանցավոր գործողությունները քողարկելուն: Ծածկագրում կարդում ենք. «Վերը նշված այդ նպատակը պիտի իրականացնել քողարկված ու փափուկ ձևով՝ ինչպես խաղաղության պայմանագրի տեքստում, այնպես էլ նրանից բխող գործողություններում՝ հայերի աչքերում մշտապես խաղաղասեր երևալու պայմանով»: Վավերագրի այլ հատվածում իրականությունը քողարկելու ձգտումը ի հայտ է գալիս ավելի բացահայտորեն. «Հայերին փոխանցվող զինադադարի հիմնադրույթները պիտի ուղղված լինեն ոչ թե Հայաստանից դուրս գալուն, այլ հայերին մոլորեցնելուն և Եվրոպայի նկատմամբ խաղաղասեր երևալուն: Սակայն իրականում նրանց նպատակը պետք է լինի նախապայմանների ու

[1] Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 901.
[2] Նույն տեղում:

նպատակի աստիճանաբար նախապատրաստում ու հասունացում»[1]:

Քեմալականների հեղինակած ծրագիրը ցույց է տալիս, որ նրանք ոչ միայն լավագույնս սերտել էին երիտթուրքերի «ցեղասպանության» դասերը, այլ նաև ցուցաբերում էին նույնիսկ ավելի մեծ «հմտություն»՝ դուրս բերելով ցեղասպանական քաղաքականությունը երկրի սահմաններից և նախապատրաստելով նրա գործարկումը ինքնիշխան պետության դեմ: Այս վերջին հանգամանքը պարտադրում էր նրանց ավելի մեծ ուշադրություն հատկացնել հանցագործությունը քողարկելու հնարքներին:

Մեր ձեռքի տակ եղած այս և նաև այլ թուրքական վավերագրերը բացահայտում են քեմալականների իրական նպատակները: Այդ տեսակետից կարևոր նշանակություն ունի Մուսթաֆա Քեմալի ելույթը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի 1920 թ. նոյեմբերի 18-ի փակ նիստում, որտեղ նա, հենվելով գլխավոր սպայակույտի եզրահանգումների վրա, նշում է, որ Հայաստանի դեմ ռազմական գործողությունները նպատակ ունեն ցամաքային կապ հաստատել Ադրբեջանի հետ[2]: Այդպիսով, հերքվում է ավելի ուշ՝ 1927 թ., նրա իսկ արտասանած հայտնի «Ճառում» ի լուր աշխարհին ծանուցած Հայաստանի դեմ պատերազմի պատճառի «պաշտոնական» մեկնաբանությունը՝ «1920 թ. աշնանը հայերի կողմից իրականացվող վնասարար գործողությունները դարձան անտանելի: Որոշում ընդունեցինք գնալ Հայաստանի վրա»:

---

[1] Karabekir Kâzım, İstiklâl Harbimiz. İstanbul: Türkiye, 1959-1960, s. 901.

[2] [Atatürk], Erzurum Mebusu İsmail Beyle Rüfekasının, Ermenistan Sulh Şeraiti Hakkında İstizah Takriri ve Hariciye Vekâleti Vekili Muhtar Beyin Cevabı Münasebetiyle Sözleri. - [Atatürk] Atatürk'ün T.B.M.M. açık ve gizli oturumlarındaki konuşmaları. Yayına hazırlayan: Kâzım Öztürk. Ankara, 1990, s. 322.

Շարունակականությունը երիտթուրերի և քեմալականների միջև Հայոց ցեղասպանության խնդրում ակնհայտ է: Մասնավորապես, նրանք պաշտպանում էին երիտթուրքերի թեզը առ այն, թե հայ ժողովուրդը, անշնորհակալ գտնվելով, ապստամբություն է կազմակերպել օսմանյան իշխանության դեմ և դարձել զորձիք ռուսների ձեռքին, ինչին ի պատասխան՝ օսմանյան կառավարությունը ստիպված է եղել տեղահանել հայ ազգաբնակչությանը սահմանամերձ շրջաններից դեպի երկրի խորքերը: Այսպես, օրինակ,1921թ. փետրվարի 26-ին, պատասխանելով ամերիկացի լրագրող Քլարենս Կ. Սթրայթի հարցին, թե որն է նրա ղեկավարած կառավարության պաշտոնական տեսակետը Հայոց ցեղասպանության վերաբերյալ, Մուսթաֆա Քեմալը հայտարարել է, որ 1915թ. Օսմանյան կայսրության հայերը ռուսների դեմ կռվող բանակի թիկունքում ապստամբություն են բարձրացրել և սկսել են հարձակվել թուրք խաղաղ բնակչության և ռազմական օբյեկտների վրա: Ստեղծված իրադրությունում կառավարությունը ստիպված էր կազմակերպել հայերի տեղահանությունը[1]:

Այս թեզը մինչև այսօր հիմնականն է թուրքական պաշտոնական պատմագրության և իշխանությունների կողմից վարվող Հայոց ցեղասպանության մասին իրականությունը քողարկելու քաղաքականության մեջ: Մուսթաֆա Քեմալը ոչ միայն հանդես էր գալիս նմանատիպ հրապարակային հայտարարություններով, այլ նաև իրականացնում էր քայլեր, որոնք նպատակ ունեին ապահովելու երիտթուրք հանցագործների անվտանգությունը և օգնելու նրանց խուսափելու պատժից: Այսպես, օրինակ, 1920թ. օգոստոսին

[1] [Atatürk], Atatürk'ün Bütün Eserleri, Cilt: 11 (1921), İstanbul: Kaynak Yayınları, 2003, s. 61-62.

ԹԱՄԺ-ը նրա նախագահությամբ լուծարեց Հայոց ցեղասպանության պատասխանատուների գործերը քննող ռազմական դատարանները[1]:

Ինչպես արդեն նշել ենք, Քեմալը լայնորեն օգտագործում էր հայ ժողովրդի դեմ գործած ոճրի մեծագույն հանցագործներին Թուրքիայի Հանրապետության հիմնադրման գործում: Հարց է առաջանում՝ արդյո՞ք այդ հանցագործներին պետական բարձր պաշտոններով օժտելն արվում էր՝ ելնելով երիտթուրքերի կառավարման շրջանում նրանց ձեռք բերած «փորձից», թե՞ մաս էր կազմում Քեմալի հեղինակած մի ծրագրի, որի իմաստը հետևյալն էր. այդ հանցագործները, որոնք ոչ միայն փրկվել էին արդարացի դատաստանից,այլ նաև Մուսթաֆա Քեմալի կողմից նշանակվել էին բարձրագույն պաշտոնների, այդպիսով ամեն ինչով պարտական էին լինելու Թուրքիայի Հանրապետության հիմնադիր և բռնակալ Մուսթաֆա Քեմալին:

Կարծում ենք, թե վերջինս, մեծ փորձառություն ունենալով տարբեր ինտրիգներում և դավադրություններում, այդ քայլին գնացել էր միանգամայն գիտակցաբար՝ հույս ունենալով, որ բարձր պաշտոններ ստացած երիտթուրք հանցագործները կպահպանեն անձնական հավատարմությունն իր նկատմամբ: Սակայն, ինչպես ցույց տվեցին 1926 թ. իրադարձությունները, այդ հանցագործներից մի քանիսը մասնակցեցին և ղեկավարեցին Քեմալի դեմ ուղղված դավադրությունը[2]:

---

[1] Nurhan Aydın, Milli Mücadele döneminde I. TBMM'nin Ermeni tehcirine bakışı, - Karadeniz, 2014 Sonbahar,Yıl 6, Sayı 25,s. 30-31.

[2] Տե՛ս այդ մասին Անուշյան Մելինե, Ճանաչում և դատապարտում. երիտթուրքերի դատավարությունները (1919 – 1921 թթ. և 1926 թ.). Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013, էջ 117-157:

Հաջորդ խնդիրը, որին անդրադառնալը կարևոր է՝ ավելի խորը հասկանալու համար քեմալականների իրական դիրքորոշումը հայ ժողովրդի նկատմամբ, հետևյալն է. ինչպե՞ս էին նրանք պատկերացնում հայերի գոյությունն իրենց ղեկավարած Թուրքիայում: Ակնհայտ է, որ նրանք դեմ էին հայ ժողովրդին ինքնավարության իրավունք շնորհելուն և խստորեն քննադատում էին կայսրության մայրաքաղաքում տեղակայված, Դամաթ Ֆերիդ փաշայի ղեկավարած կառավարության մոտեցումը, որը գտնում էր, որ հայերին կարելի է տրամադրել ինքնավարություն: Այդ մոտեցումը ձևակերպվեց արդեն 1919 թ. հունիսի 3-ին, այսինքն՝ քեմալական շարժման ծավալման առաջին օրերին, երբ Քեմալի կողմից համապատասխան հույժ գաղտնի ծածկագիր ուղարկվեց տարածաշրջանում տեղակայված բանակային ստորաբաժանումների հրամանատարներին և քաղաքացիական կառավարման մարմինների ղեկավարներին[1]:

Ուշագրավ են քեմալական շարժման ականավոր գործիչներից, Արևելյան ռազմաճակատի հրամանատար Քյազըմ Քարաբեքիր փաշայի հայացքները հայերի մասին:

Նրա ղեկավարած բանակը, որին միացել էին բազմաթիվ զինված ավազակախմբեր, ներս խուժեց Հայաստան՝ ամենուրեք տարածելով մահ ու ավերածություն: Այդ «հերոսությունների» համար Քարաբեքիրին շնորհվեց ֆերիքի (գեներալ-լեյտենանտի) զինվորական կոչում[2], իսկ պատերազմի ավարտից հետո նա պարգևատրվեց «Կանաչ և կարմիր ժապավեններով Անկախության մե-

[1] [Atatürk] Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: I. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 58.

[2] Erat Muhammed, Kâzım Karabekir Paşanın Ermeniler Üzerine Harekâtı (1920), – Kafkas Araştırmaları, II, 1996, s. 102.

դալով»[1] և մտավ հանրապետական Թուրքիայի պաշտոնական պատմության տարեգրության մեջ որպես «Արևելքի նվաճող»[2]: Իր անկախ հայացքներով աչքի ընկնող թուրք պատմաբան Ջեմալ Քութայը ժամանակին Քարաբեքիրի գործունեությանը տվել է ավելի իրական գնահատական՝ բնութագրելով այն որպես «Հայաստանի ոչնչացում»[3]:

Սակայն այդ փառամոլ թուրք փաշան չգոհացավ իր պետության կողմից ստացած պարգևներով: Նա որոշեց ուսումնասիրել իր իսկ կողմից սրի քաշած ժողովրդի պատմությունը և բացատրել նրան, թե նա «որտեղից է եկել և ուր է գնում»[4]: Ինքնավստահաբար հայտարարելով, որ ծանոթ է հայերի մասին գոյություն ունեցող համարյա ողջ գրականությանը[5], Քարաբեքիրը հանգեց մի «եզրակացության», որը նույնիսկ հայերի նկատմամբ թուրքական վերնախավի ամենատարբեր ներկայացուցիչների կողմից տասնամյակների ընթացքում արտահայտված տեսակետների շրջանակում աչքի է ընկնում բացառիկ ցինիզմով: Պատմության խորքերը «թափանցած» թուրք փաշան, պարզելով, որ «գոյություն ունեն ապա-

---

[1] Erat Muhammed, Halide Yılmaz, Kâzım Karabekir'in Hayatı ve Çanakkale Savaşlarındaki Rölü. - T.C. Çanakkale Onsekiz Mart Üniversitesi Eğitim Fakültesi Tarih Öğretmenliği, 4: Çanakkale Savaşı Semineri, 2003, s. 17.

[2] Turan Şerafettin , Türk Devrim Tarihi II: Ulusal Direnişten Türkiye Cumhuriyeti'ne. İstanbul, 1992, s. 202.

[3] Տե՛ս նրա գրչին պատկանող հետևյալ հետազոտությունը. Cemal Kutay, Karabekir Ermenistanı Nasıl Yok Etti? İstanbul, 1956.

[4] Քարաբեքիրը 1946թ., երբ հերթական անգամ արդիականացել էր Հայկական հարցը, ավարտեց հայերին նվիրված իր գրքի ձեռագիրը, որը այդպես էլ վերնագրված էր. "Հայերը որտեղի՞ց են եկել, ու՞ր են գնում": Այն լույս տեսավ տասնամյակներ անց՝ "Հայկական դոսյե" խորագրի ներքո: Տե ս Karabekir Kâzım, Ermeni Dosyası. Yayına Hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994.

[5] Kâzım Karabekir, Ermeni Dosyası. Yayına Hazırlayan Prof. Faruk Özerengin. İstanbul, 1994, s. 29.

ցույցներ հայերի՝ թուրքական ծագում ունենալու մասին»[1], պահանջեց. «Հայերը պիտի անեն հետևյալը. ... նրանք պիտի սեր տարածեն թուրքի նկատմամբ…»[2]:

Քեմալական շարժման առաջնորդը՝ Մուսթաֆա Քեմալը հայերին բնութագրում էր որպես ամբարտավան ժողովուրդի, որն օգտագործում է դրսի ուժերին թուրք իշխանությունների դեմ, և որին պետք է ցույց տալ իր տեղը[3]: Նա կատաղի պայքարում էր, որ Արևմտյան Հայաստանում չստեղծվի հայկական պետականություն, որը կլինի Անտանտի երկրների «նվերը»[4] հայ ժողովրդին: Քեմալը հավատացած էր, որ հայերն ընդհանրապես «ի վիճակի չեն ունենալու անկախ կառավարությամբ պետություն»[5]: Ամենակարևոր խնդիրը, որի լուծումը նա համարում էր իր ղեկավարած շարժման հիմնական նպատակներից մեկը, ՀՀ-ն պարտության մատնելն էր և նրա ոչնչացնում էր որպես անկախ պետություն:

Թուրքիան, ըստ էության, հասավ իր նպատակին. անկախ և ինքնիշխան Հայաստանի Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց, և նրա «խորհրդայնացված» հատվածը մաս կազմեց Խորհրդային Միության: Դրանից հետո նա ԹԱՄԺ ամբիոնից հայտարարեց. Հայկական հարցը «ամենաարդարացի» ձևով լուծված է[6]:

---

[1] Ibid., s. 40.

[2] Ibid., s. 42.

[3] [Atatürk], Atatürk'un Söylev ve Demeçleri. I: Türkiye Büyük Millet Meclisinde ve C. H. P Kurultaylarında (1919–1938). (Açıklamalı Dizin İle).5. Baskı.[Ankara],2006,s. 101.

[4] [Atatürk] Atatürk'ün Kurtuluş Savaşı Yazışmaları: I. Mustafa Onar. Ankara: T.C. Kültür Bakanlığı, 1995, s. 125.

[5] [Atatürk], Atatürk'un Tamim, Telgraf ye Beyannameleri. IV. Ankara: TTK Basımevi, 1991, s. 97.

[6] Տե՛ս ԹԱՄԺ պաշտոնական արձանագրություններում. Türkiye Büyük Millet Meclisi: I. Dönem, 3. Yasama Yılı Açış Konuşmaları, 1 Mart 1922, - Millet Meclisi Tu-

Եզրակացնենք: Հայկական հարցի արդարացի լուծումը, ըստ քեմալականների, հետևյալն էր. հայ ժողովրդի բնօրրանի մի հատվածի՝ Արևմտյան Հայաստանի հայաթափումը, նրա բռնակցումը Թուրքիայի Հանրապետությանը, հայ ժողովրդի բնօրրանի մեկ այլ հատվածում առաջացած Հայաստանի Հանրապետության՝ որպես անկախ և ինքնիշխան պետության «մեջտեղից վերացումը» և տարածքային տեսակետից խիստ աղճատված տեսքով «խորհրդայնացումը» և, ըստ էության, վերացումը որպես անկախ պետություն: Այդպիսով, նրանք հավատարիմ մնացին իրենց երիտթուրքական անցյալին՝ շարունակելով նրանց գործը և իրենց պատկերացմամբ՝ հասցնելով այն ավարտին:

ПРОГРАММА ГЕНОЦИДА АРМЯН КЕМАЛИСТСКОЙ ТУРЦИИ (1920г.)

Рубен САФРАСТЯН
Институт востоковедения НАН РА

Ключевые слова: Младотурки, Мустафа Кемаль, Турция, Республика Армения, Азербайджан, Национальный пакт, Кязым Карабекир, Великое Национальное Собрание.

В статье анализируются основные положения программы геноцида армянского народа, автором которого являлись руководители кемалистского движения. Ее положения были сформулированы в секретном приказе, полученном командующим вторгшимися в Армению турецкими войсками Кязымом Карабекиром из Анкары 8-го ноября 1920г. В приказе раскрывается истинная цель войны: уничтожить Армению. Он содержит также изложение целого комп-

tanak Dergisi D. 1, C. 18, Sa. 2, - https://www.tbmm.gov.tr/tarihce/ataturk_ko nusma / 1d3yy.htm

лекса мер, которые надлежало предпринять Карабекиру для реализации этой цели, а также для ее сокрытия и введения в заблуждение европейских держав.

В статье рассматривается предыстория создания этого документа. Особое место уделено рассмотрению деятельности Мустафы Кемаля по подготовке войны против Республики Армения, анализу его взглядов на Армянский вопрос. Показано, что кемалисты и сам Мустафа Кемаль являлись продолжателями политики младотурок.

В заключение автор приходит к выводу о том, что кемалисты фактически добились своей цели: независимая Армения перестала существовать, а ее «советизированная» часть была включена в состав Советской империи.

Статья содержит также полный перевод этого важного документа на армянский язык.

THE KEMALIST TURKEY PROGRAM OF ARMENIAN GENOCIDE (1920)

Ruben SAFRASTYAN
Institute of Oriental Studies NAS RA

Key words: Young Turks, Mustafa Kemal, Turkey, Republic of Armenia, Azerbaijan, National Pact, Kazim Karabekir, Grand National Assembly

The article analyzes the main provisions of the program of the genocide of the Armenian people, the author of which was the leader of the Kemalist movement Mustafa Kemal. Its provisions were formulated in a secret order received by the commander of the Turkish troops invading Armenia, Kazim Karabekir from Ankara on November 8, 1920. The order reveals the true goal of the war: to eliminate Armenia. This document contains a whole complex of measures to be taken by Karabekir to achieve

abovementioned goal, as well as to conceal it and mislead the European Powers.

The article discusses the background of the creation of this document. Special attention is paid to the consideration of the activities of Mustafa Kemal in the preparation of the war against the Republic of Armenia, analysis of his views on the Armenian Issue. It is shown that the Kemalists and Mustafa Kemal himself were the successors of the Young Turk policy.

The author concludes that the Kemalists actually achieved their goal: independent Armenia ceased to exist, and its “Sovietized” part was included in the Soviet Empire.

The article also contains a complete translation of this important document into Armenian.

ПРОДОЛЖЕНИЕ ГЕНОЦИДНОЙ ПОЛИТИКИ ТУРЦИИ В АЛЕКСАНДРОПОЛЬСКОМ УЕЗДЕ В 1918-1921гг.

Армен АЙРАПЕТЯН
Аркадий АКОПОВ
Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Ключевые слова: армяне, младотурки, Александропольский уезд, геноцид, кемалисты, революционный комитет.

В статье представлены погромы армянского народа в Александропольском уезде руками младотурок и их политических приемников - Кемалистской Турцией в 1918-1920 гг.. В результате пог-

ромов армян в 1918 г. в Александрополе и в селах Восточного Ширака было убито около 20 000 человек. В 1920-1921 гг. было истреблено более 60 000 армян, 32 000 погибло от голода, 30 000 искалечено. Политика кемалистов с ноября 1920 года по апрель 1921 года являлась прямым продолжением политики младотурок по геноциду армянского народа.

Весной 1918 г. военно-политическая обстановка на Кавказском фронте Первой мировой войны резко изменилась в ущерб армянскому народу. Возобновление турецко-закавказской войны 1 апреля обернулось триумфом турецких войск. После падения Карса, в ночь на 14 мая турки потребовали город Александрополь, а на следующее утро, не дожидаясь ответа, штурмом взяли город. Были взяты также села Восточного Ширака.

В оккупированном Александрополе погромов не было. Турки здесь провели «бескровную» политику истребления армян. Тысячи молодых людей были арестованы и отправлены в Карс по обвинению в службе в армянской армии[1]. По расчетам представителя МИД РА в Александрополе Г. Хоецяна, за шесть месяцев турецкого правления в Турцию было изгнано около 10 000 человек[2].

В другом случае турки под предлогом раздачи хлеба и паспортов пересчитали население уезда, а через несколько дней, группами собрав мужчин, отправили в Карс, Сарикамыш и в Эрзурум, якобы для работ[3]. По подсчетам Атрпета, из города и

---

[1] Յովսէփեան Մ., Ալեքսանդրապոլը՝ գրաւումէն ետք. (Ականատեսի պատմութիւնը), «Աշխատանք», թերթ,Եր., 1918, Գ տարի, 8 (26) յունիսի, շաբաթ, N 6(206),էջ 2:
[2] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թթ. 46-47:
[3] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 1, գործ 91, թ. 179:

близлежащих сел, собралось более 4000 человек[1]. Без вести пропали и оставшиеся в городе врачи, медсестры и 500 сестер милосердия. Вместо того чтобы отправить их в Б. Караклис, турки загрузили их в вагоны и отправили в Карс[2].

Совсем по другому противник относился к сельскому населению уезда. То, что сделали турки в селах Восточного Ширака и Памбака было прямым продолжением геноцида армян. Свыше 50 сел было полностью разрушено, а их население зарезано[3].

Получив отпор у подножия горы Арагац, турки собрали из сел Адияман, Пиртикян, Мастара, Муслуглы и Согютли около 3000 армян и 25 мая расправились с ними у села Дзитанков. Около 500 человек были заперты в Шахбазяновских сеновалах и сожжены. Еще 2 500 человек были убиты в окрестных горах. Около 200 армянских девушек спасая свою честь, покончили жизнь самоубийством в Дзитанковых озерах[4].

После сопротивления турецким войскам безлюдными остались села Махмуджуг и Килидж-Ятах (погибло около 2570 человек), почти полностью разрушено село Илли Караклис. Из 1700 жителей в живых осталось всего 200 человек[5]. То же самое произошло с селением М. Караклис (было убито 3000 человек)[6].

---

[1] Ատրպետ, Ալէքսանդրօպոլ քաղաքի 200 օրվայ գրաւումը Օսմանեան զօրքերից, «Մշակ» օրաթերթ, Թիֆլիս, 1918, N 265, 25 դեկտեմբերի, էջ 2:

[2] Յովսէփեան Մ., Ալեքսանդրապոլը՝ գրաւումէն ետք. (ականատեսի պատմութիւնը), «Աշխատանք», թերթ, Եր., 1918, Գ տարի, 8 (26) յունիսի, շաբաթ, N 6 (206), էջ 2:

[3] ՀԱԱ, ֆոնդ 200, ցուցակ 1, գործ 126, թ. 92:

[4] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 2, գործ 82, թ. 17:

[5] Геноцид армян в Османской империи: сборник документов и материалов. Под ред. М. Нерсисяна, 2-е, доп. изд. Ер., 1983, с. 536.

[6] ՀԱԱ ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 475, թթ. 130-137, 206-212:

По данным правления Александропольского Земляческого союза, практически безлюдными стали села Гюрджиел, Ортакилиса, Салут, Гуллибулаг, Кзилкилиса, Дузхараба, Чифтали, Бозёхуш, Кизилкоч, Казанчи, Титой-хараба и Корахпюр. Население этих сел было уничтожено, более тысячи женщин и девочек были схвачены, изнасилованы и насильно обращены в ислам. Напуганное население пыталось укрыться в Лори, но турки с ложными обещаниями вернули их и перебили. Например, агинцы сбежали всем селом, но, поверив лживым обещаниям врага, вернулись и были убиты (1100 человек)[1].

До основания были разрушены и езидские села Александропольского уезда. Население 15-и сел просто исчезло[2].

В результате политики геноцида, примененной к мирному населению Восточного Ширака, практически лишились мужчин селения Артик, Капс, Верх. Ганлиджа, Ниж. Ганлиджа, Чрахли, Дузкенд, Б.Кяпанак, Кипчах, Арахвали, Башгюх, Чловхан, Илхиаби, Томарташ, Дагарлы, Меджитли, Мал. Кяпанак, Гаджиназар, Джаджур, Агкилиса, Дарбанд, Самрли, 3-й Архвали. В одном только Артике было убито 1200 мужчин. Еше около 200 мужчин в качестве «жертвенных животных» зарезали в селах Капс, Верх. и Ниж. Ганлиджа[3].

Последний акт истребления армян произошел в Памбаке. 11-я турецкая дивизия вошла в Б. Караклис вечером 28 мая. Вопреки обещаниям Джемал Джавид Бея, той же ночью началась резня. Турецкие солдаты в сопровождении мусульман из деревень Сарал, Арджут и Джанджугаз напали на село Кышлаг. По словам очевидца

[1] ՀԱԱ ֆոնդ 56, ցուցակ 16, գործ 475, թթ. 130-137, 206-212:
[2] ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 61:
[3] ՀԱԱ ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 326, թթ. 58-59:

М. Казаряна, причина лютого зверства заключалась в том, что жители Кышлага приняли участие в Караклисской битве[1]. За Кышлагом последовал Б. Караклис. Солдаты, присоединившиеся к толпе фанатичных мусульман из селений Варданли и Халлавар, в части села "Верин Таг" за одну ночь убили 156 человек[2]. В целом только в ночь на 28 мая жертвами турецкой резни стали 1269 жителей.

29 мая все армянское население региона было объявлено военнопленным, а движимое и недвижимое имущество объявлено государственной собственностью. Обыскав дома и укрытия, турецкие солдаты собрали около 3500 человек в здании сельского управления. Через три дня их группами по 400-500 человек погнали в разные стороны. Первая группа заключенных была расстреляна у источника Бадал-оглу, вторая южнее Караклис, в местечке под названием «Ямы горячих источников», третья группа была убита недалеко от села Варданлу, возле «Карпичского завода», четвертая группа расстреляна в лесу «Вананц Дзор», пятая у подножия Майметха, а шестая у села Гаджикара[3].

Джавид-бей задумал «блестящую» программу по истреблению армян и избавлению от ярлыка преступника. Пленных расстреляли на высотах, где два дня назад стояли атакующие турки. Иными словами, была предпринята попытка показать, что резни мирных жителей не было, а непогребенные трупы оставили отступающие армянские войска. При этом пленных расстреляли таким образом, чтобы количество жертв с обеих сторон на позициях было равным.

---

[1] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 115:

[2] Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 91-92:

[3] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 120:

Другими словами, они создавали иллюзию жаркой битвы между равными сторонами[1].

Этот сценический спектакль мог бы получиться, если бы палачи не забыли развязать указательные пальцы, привязанные проволокой трупов, или расстрелять пленников в окопах, а не в сараях.

30 мая Джавид реализовал следующий пункт своего плана. В Б. Караклисе было объявлено, что железнодорожники обязаны в течение 24 часов зарегистрироваться. Около 500 человек поверив туркам пришли и зарегистрировались. На следующий день их группами вывозили на высоты Маймеха и Алтун-Тахта, заставляли копать ямы, а затем расстреляли. По свидетельствам современников, ставшие свидетелями этой сцены русские, польские и греческие рабочие сошли с ума[2].

На пятый день оккупации Памбака резня в дневное время суток прекратилась. Вместо этого большой размах приняли ночные атаки. Начали исчезать сельские жители возвращавшиеся с полей, огромные масштабы приобрели случаи похищения и изнасилования женщин и девочек. Многие села были «изнасилованы полностью». Например, в Налбанде мужчин изгнали из села, а женщин изнасиловали начиная с восьмилетнего возраста[3].

---

[1] Խանզադյան Խ., նշվ. աշխ., էջ 92-93:

[2] ՀԱԱ ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 33, թ. 52, ֆոնդ 240, ցուցակ 1, գործ 240, թ. 44:

[3] Թուրքերի հեռանալուց հետո Փամբակ գործուղված տարբեր հանձնաժողովների կողմից արձանագրվեցին նաև զամգվածային արվամոլության դեպքեր՝ օսմանյան բանակի հրամանատարական կազմի ու բուժ անձնակազմի (դիվիզիայի բժիշկ Քյամիլ-բեյ) մասնակցությամբ (Մանրամասն տե՛ս ՀԱԱ ֆոնդ 202, ցուցակ 1, գործ 1271, թթ. 48):

Сегодня, как и сто лет назад, невозможно выяснить масштабы этого чудовищного явления в Александропольском уезде, потому что население, как правило, скрывает случаи позора.

Незакопленные трупы вскоре начали гнить и в. Б. Караклисе стало невозможно оставаться. Захоронить их турки решили только в середине июня, а уже через неделю весь регион оказался в тисках брюшного тифа и холеры. К этому добавился повсеместный голод. Из-за отсутствия больниц только в июле-августе от эпидемии и голода умерло более 1000 человек. Число погибших в сентябре достигло угрожающих размеров[1].

После подписания Мудросского перемирия (30 октября 1918г.) Османская империя была признана потерпевшей поражение в мировой войне, а оккупированные территории были возвращены Армении. В декабре в Ширак-Памбак были направлены специальные комиссии для определения масштабов человеческого и материального ущерба, нанесенного турецкими войсками.

По официальным данным, во время шестимесячной турецкой оккупации в 150 селах Александропольского уезда было убито 12086 человек, 5566 человек взяты в плен и 352 человека вернулись из плена. В 122 селах Восточного Ширака погибло 5086 человек, 4680 человек попали в плен[2]. Еще 7000 человек погибло (в том числе 5530 из Ширака, 1470 из Памбака) и 886 захвачены в плен в 28 селах Памбака[3].

---

[1] Ղարաքիլիսայի 1918թ. հերոսամարտը, Փաստաթղթերի և նյութերի ժողովածու, էջ 134-135:

[2] ՀԱԱ, ֆոնդ 121, ցուցակ 1, գործ 91, թ. 179:

[3] ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 1271, թ. 47:

В октябре 1919 г. эти данные были опубликованы в газете «Арадж», но не были приняты современниками[1]. Дипломатический представитель РА в Александрополе Г. Хоецян, знакомый с проблемой изнутри, сообщил в МИД, что только в Александрополе и в селах Восточного Ширака было убито около 20 000 человек[2].

Относительно серьезную работу по выявлению следов турецкого владычества провел «Александропольский патриотический союз». В сотрудничестве с дипломатическим представительством РА и с администрацией города Александрополя Союз собрал и 16 декабря 1918 года «Представительству союзников на Кавказе» предоставил большой объем материалов, касающихся масштабов человеческого и материального ущерба, нанесенного уезду турками. Согласно этим документам, за шесть месяцев оккупации регулярными турецкими войсками и местными мусульманами, в городе Александрополе, в селах Восточного Ширака и Памбака были убиты около 20 000 человек. Еще 6000 человек умерли от голода и эпидемий. Под разными предлогами захвачены и угнаны вглубь Османской империи 15 000 человек (около 300-400 вернулись), более 5000 женщин были похищены и изнасилованы, 1000 были насильно обращены в ислам[3].

Два года спустя история повторилась. Воспользовавшись холодным безразличием Антанты, и реализовав решения «Первого собрания народов Востока», кемалисты не объявляя войны напали на дипломатически изолированную Армению. Война, начавшаяся

---

[1] Իրազեկ, Տաճկական վայրագությունները Ալեքսանդրապոլի գավառում, «Հառաջ» օրաթերթ, Երևան, 1919, 25 սեպտեմբերի, էջ 2:

[2] ՀԱԱ, ֆոնդ 221, ցուցակ 1, գործ 89, թթ. 60-61:

[3] ՀԱԱ ֆոնդ 227, ցուցակ 1, գործ 4, թթ. 1-12: ֆ. 240, ց. 1, գ. 240, թթ. 36-39, 44, 48-49:

23 сентября, с преступного разрешения Советской России, обернулась новым триумфом турецких войск. Через месяц противник захватил Карс, а 7 ноября во второй раз вошел в Александрополь. Администрация оккупированного уезда турецким командованием была «передана» освобожденным из местных тюрем большевикам. И пока большевики, потрясенные случайным успехом, выдавали себя за законное правительство всей Армении, кемалисты последовательно провели политику истребления армян, доставшихся им в наследство от младотурок.

С первых дней захвата Александрополя, турки начали грабить город. В одном из отчетов об ущербе 1920-1921 гг., причиненном турецкой оккупацией в Александрополе и зверствах совершенных турками, мы читаем: “7 ноября, согласно условиям прекращения огня, турки должны были занять только крепость и станцию Александрополь, город не подлежал оккупированию. Они гарантировали неприкосновенность жизни, чести и имущества, безопасность и порядок. Армянская армия должна была отойти на 10 км от Александрополя. 7-го ноября в 10 часов вечера, городской вокзал и крепость были заняты турками. Они в темноте ночи напали на спящее население, живущее возле станции. С самых первых минут были нарушены режим прекращения огня и основные принцыпы неприкосновенности личности, чести и имущества. С их первых шагов чувствовалось, что город оказался в руках разбойников” [1].

Назначенный Кязим Карабекир пашой городской комендант 9 ноября требует от городской автономии списки городских и правительственных складов. Начинается регулярное и плановое перемещение государственного имущества в Карс и глубины Турции.

[1] ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 3, գործ 45, թ. 6:

Полномочный представитель правительства Советской России Б.Легран известил об этом в телеграмме, адресованной Г.Чичерину 8 декабря: “Турки бесстыдно грабят склады Александропольских детских домов, все имущество, всех животных Александропольского уезда, огромные склады, запасы топлива”[1]. В отчете Комиссара железных дорог Александропольской губернии от 19 января 1921 мы читаем: “Вагоны отправляются в Турцию с грузом имущества, продуктов питания и производственного оборудования. Они берут все депо, после ломают машины и двигатели, которые не могут вывезти, забирают их”[2]. Не довольствуясь разграблением государственной собственности, турки с первого дня начинают грабить людей. В жалобе жителя улицы Бехбутова Сергея Саакяна революционному комитету Александрополя говорится, что в ночь на 7 ноября турки ворвались в его дом и забрали все его имущество[3]. Турецкие солдаты ломают двери и окна, врываются, грабят и убивают тех, кто сопротивляется. Каждую ночь происходит много насилия против мирных жителей, паралельно конфисковывается все ценное. Жительница Александрополя Нвард Мириманян в своей жалобе председателю революционного комитета от 21 января 1921 года пишет: “15-го числа сего месяца, в 5 часов вечера, пришли трое аскеров (турецких солдат – А.А., А.А.) и начали стучать в нашу дверь. Они потребовали, чтобы мы открыли дверь. Конечно, мы с испугу не открыли. Они открыли первую часть окна, но не смогли открыть вторую. Ночью более десятка солдат пришли со стороны двора. Мы звали на помощь соседей, но они, боясь, не смогли помочь нам.

[1] ՀԱԱ, ֆոնդ 4033, ցուցակ 2, գործ 115, թ. 2:
[2] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 321, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 353, թ. 9:

Аскеры окружили дом, разбили большие окна и вошли. Мы попытались бежать, но аскеры стояли у двери. Они грозили убить нас, если бы мы повысили наш голос или оказали сопротивление. Нас избили, девушку изнасиловали, забрали одежду и ценности”[1].

Турки грабили не только силой, но и хитростью. Выдавая поддельные документы, “квитанции”, они забирали ценные вещи у жителей, якобы при условии, что они будут возвращены позже. Но вернуть их было практически невозможно. В обмане участвовали не только солдаты и офицеры, но и высшее командование и чиновники. В заявлении инспектора коммерческого училища Арменака Бабаяна, военачальнику оккупационных войск Александрополя Осману Нури бею говорится: “В начале марта здание Торговой школы было оккупировано османскими войсками. Поскольку в здании было множество кабинетов, которые были очень важны для школы, такие как кабинеты физики и химии, я обратился к коменданту Кязим-бею с просьбой предпринять шаги для обеспечения полной безопасности имущества. Он запечатал двери всех комнат печатью начальника городской полиции и, пригласив офицера подразделения захватившего здание, приказал ему следить за неприкосновенностью этих комнат. Получив эту гарантию от Кязим-бея, я спокойно ушел. 8 марта мне сообщили, что воинское подразделение, занявшее здание, ушло, забрав с собой все имущество кабинета физики. Я немедленно обратился к начальнику полиции и новому коменданту Талаат-бею, но до сих пор я не получил предметы и не знаю, куда их забрали”[2].

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 3, ցուցակ 1, գործ 21, թ. 9:

[2] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 354, թ. 1-2:

Грабеж турок сопровождался убийствами. Турки убивали армян повсюду и скрывали трупы. Эти трупы обнаруживаются только после их ухода. В одном из докладов мы читаем: “По вашему приказу я начал свои поиски 25 апреля этого года и обнаружил два тела в квартале цыган, один труп в квартале турок. Последний был убит в ночь их отъезда. В тот же день около 14 трупов были обнаружены в Казачем посту. 27 апреля в колодце на станции были найдены три тела, в том числе две женщины. 2 мая я нашел ров в крепости, полный трупов, число которых было невозможно определить.

Излишне говорить, что турки убили их после многих пыток. Это подтверждается тем фактом, что многие из трупов не имеют носов, ушей, глаз или губ”[1]. В одном из рапортов городской думы о зверствах, совершенных турками, говорится, что особенно много людей было убито в подвалах домов градоначальника, начальника гарнизона, коменданта и начальника милиции[2].

Турки не стеснялись средств для ограблений и убийств армян, постоянно находили новые способы делать это. Был специальный секретный приказ приманивать армян любыми способами, даже, если надо, то подружиться с ними и тайно убить. Была организована специальная группа, которая через агентов, в основном через турок Агбабинского района, заранее подготовленными списками арестовывала более или менее состоятельных армян, бросала в подвалы, требовала от них крупные выкупы. Их убивали после выплаты выкупа. Турки Агбабы, хорошо зная город и его жителей, выдвигали против них необоснованные обвинения. Инкриминируемые армяне

[1] ՀԱԱ, ֆոնդ 131, ցուցակ 1, գործ 18, թ. 16:
[2] ՀԱԱ, ֆոնդ 131, ցուցակ 1, գործ 18, թ. 7:

арестовывались без суда и, после выплаты крупных сумм, с большим трудом освобождались. Были случаи, когда дело даже не доходило до коменданта, а заканчивалось при посредничестве татар, которые конечно получали свою долю. Об этом свидетельствуют многочисленные рапорты Александропольскому революционному комитету[1].

Еще один пример политики турок подтверждается ходатайством Егише Макаряна - гражданина Александрополя, адресованного в Александропольский областной революционный комитет: “19 февраля 1921 года, один из турецких солдат 9-й дивизии Рушти паши захватил моего сына Айка и оклеветал его, якобы мой сын в 1918 году находясь в Эрзуруме убил его отца и ограбил его дом. Когда мой сын попытался сопротивиться солдатам, турецкий офицер выступил посредником и отправил их обоих к маркиазу. Там нападавший забирает у моего сына два золотых кольца и пять тысяч рублей. Маркиаз отправляет моего сына к Рушти паше, откуда он отправляется в Карс, к Казим Карабекиру,а оттуда в Эрзурум.С тех пор от него нет вестей”[2].

В отчете начальника милиции Александрополя председателю административного управления Ревкома от 18 января 1921г. говорится: “10 января Гриша Каринян, житель 3-го городского участка Александрополя, был задержан турками на рынке и доставлен коменданту. 11 января он был у коменданта, а 12 января, когда его жена пошла навестить его, ей сказали, что его там нет. Пока Гриши Кариняна нет и неизвестно где он”[3].

---

[1] ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 3, գործ 138, թ. 13:
[2] ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 3, գործ 138, թ. 7:
[3] ՀԱԱ, ֆոնդ 3, ցուցակ 1, գործ 21, թ. 13:

Жители города написали тысячи жалоб в Александропольский революционный комитет, составив списки причиненного им ущерба. Александропольский революционный комитет информирует об этом правительство Советской Армении. Телеграмма председателя революционного комитета Григоряна на имя народного комисара иностранных дел Советской Армении Бекзадяна гласит: “Все продовольственные магазины пусты. Ситуация критическая. Двадцать тысяч голых мигрантов и советских рабочих умирают от голода и эпидемий. Если скорой помощи не будет, будут широко распространены смертельные случаи. Существует серьезный продовольственный кризис среди населения. В городе абсолютно нет дров. Нужно отправить масло, керосин, дрова и пшеницу. В больницы отправить молоко, лекарства и т.д. Каждая минута медлительности равносильна десяткам смертей”[1].

Правительство Советской Армении телеграммы, полученные от Александропольского революционного комитета пересылает в Москву, Баку, а также отправляет много записок правительству Анкары. Все это не препятствует туркам оказывать давление на армян, чтобы они направляли им благодарственные письма за то, что турецкое командование было хорошим защитником мирного населения.

Имеется подробная информация об ущербе Александропольской губернии в данных комиссии при правительстве Советской Армении. Из доклада члена комиссии Артавазда Эйрамджяна мы узнаем об ущербах сел 1-го участка: “1500 человек убито в селе Большой Кяпанак. Их тела находятся в колодцах, подвалах, болотах,

[1] ՀԱԱ, ֆոնդ 4033, ցուցակ 2, գործ 1162, թ. 13:

ущельях и полях. 1000 человек было убито в Малом Кяпанаке. Здесь произошло то же самое, что и в Большом Кяпанаке. В целом почерк одинаковый во всех селах. Все дома разрушены... Триста человек из села Дираклар было убито в деревне Чорли, куда они бежали во время турецкого нападения. В селе Гаджиназар убито 1500 человек. Пятьсот трупов было найдено в ущелье к северу от этого села, части тел детей и женщин, отрезанные уши, язык, глаза и т. д.. Сотни людей были убиты в Джаджуре во время нападения турок и бегства в Каракилису”[1]. Эти зверства были осуществлены турецкими подразделениями Кьясан-Табур, Авдом-Табур, азербайджанской конницей, 17-ой дивизией и полком Ахбика[2].

Большое количество трупов было обнаружено в Агбулагском районе – у Джаджурского перевала. Это были жители соседних сел, которых турки привели туда и истребили. Судя по ранам, они были зверски убиты штыками и и другими видами холодного оружия. Их число составляло 1200-1500 человек. Интересно то, что в числе убитых не было мужчин. Их отправляли на разные работы в Турцию, а после завершения работ – убивали. Женщин и детей убивали ради того, чтобы они показали места пшеницы, ячменя и т.д. После убийств, турки покрывали трупы землей, чтобы скрыть следы[3].

Много зверств было осуществлено в селах Карабоя, Калтахчи, Акбулах, Налбанд, Авдибег. Жители этих сел были истреблены самыми жестокими методами. 90% обнаруженых трупов были женскими. Большинство трупов обезглавлены, на каждом теле было по 10-15 штыковых ранений. Итого, в Акбулахе было убито 1186 чело-

[1] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 353, թ. 6:
[2] ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 1, գործ 134, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 353, թ. 10-11:

век, в Калтахчи – 2100, в Карабоа – 1100, а также 7500 бежанцев из Александрополя. Всего было убито 11186 человек[1].

Идентичная ситуация была на 2-м участке Александропольского уезда – убийства, грабеж, насилие. Интересно, что в селе Кавтарлу турки убивают также коммунистов. Этим турки показывают, что для них нет разницы между комунистами и представителями партии Дашнакцутюн, а их реальная цель – уничтожение армянского народа. Здесь, 26 декабря 1920 года, один из турецких солдат потребовал от комиссара рабочей силы для развертывания третьего турецкого отряда в деревне. Им дают девять человек, все коммунисты. Но, после окончания работ, они не возвращаются домой. На вопрос комиссара турецкий командир ответил, что после окончания работ они ушли в неизвестном направлении. Только через месяц, в хлеве Аршака Мурадяна, жители деревни заметили следы крови. Оказывается, турки штыками убили их, перевезли тела на телегах и возле моста на дороге в Голгат спрятали их под камнями. Турки также убили извозчика Степана Бояхчяна, избавившись от свидетеля. После того как солдаты ушли, трое из замученных - Игнатий Варданян, Мкртыч Мурадян и Петрос Манасян, которые все еще были живы, попытались доползти до села. Но другая группа солдат приближающихся в этот момент, добила их штыками и похоронила под камнями[2].

Считаем необходимым привести выдержку из доклада председателя революционного комитета 2-го участка Александропольского уезда, адресованного революционным комитетам Александро-

[1] ՀԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 10, թ. 85:
[2] ՀԱԱ, ֆոնդ 4033, ցուցակ 4, գործ 127, թ. 163:

поля и Еревана, где после описания упомянутого случая были сделаны очень правильные выводы о ситуации: “Как я уже неоднократно отмечал, турецкие солдаты ничего не делают без приказа командования. Из этого можно сделать вывод, что наши товарищи коммунисты были зверски убиты по приказу турецкого командования. Кемалистское движение, как и национальное движение, с самого начала открыло нам свою политическую цель - уничтожение Армении, уничтожение армян без каких-либо партийных различий. Тот факт, что они восстанавливают национальную целостность и власть, которую они потеряли в войне с революционерами, не нуждается в дополнительных доказательствах. Революция в Турции началась сверху, и, конечно, это буржуазная, узко-националистическая революция, и никакая примирительная политика с ними не принесет пользы нам - коммунистам.

Видимо, они поставили нас на место политической игрушки, а когда это необходимо, они уничтожают наших самых дорогих друзей одним прикосновением руки. Еда и промышленность полностью уничтожены, скот угнан, люди в страхе, села разрушены, люди умирают, богатство разрушается, приближается жестокий призрак голода, тем более, что в ближайшем будущем ничего хорошего не ожидается. Во всем виновата наша политическая ошибка работать с кемалистами в коалиции. Наша цель - только мировая политическая диктатура, - сказал наш самый влиятельный лидер. Но мы не применили этот принцип и совершили большую политическую ошибку, которая привела к истреблению целой нации. “Да здравствует борьба с коммунистами”, вот лозунг кемалистов. И это факт. Пожа-

луйста, предприньте необходимые меры. Держите этот доклад в секрете”[1].

О ситуации на 3-ем участке Александропольского уезда становится известно после того, как турки покидают регион. Турки в дни оккупации не разрешили ни ревкому, и ни милиции войти в участок. После грабежа и погромов турки большую часть населения перемещают в село Чифтали[2].

Большинство сел подверглись грабежу и разрушению. Число убитых достигало 4000-5000, а число голодающих – 1500-2000 человек. В селе Палутли зарезаны 450 человек, все дома разграблены и сожжены. Эти зверства были осуществлены татарами Акбабы и Сара Товчином из Трапизона. Особенно зверствами отличались татары. В селе Торос Акбабинской конницей и турецкими двумя батальонами было убито 150 человек. В селе Чизихляр было убито 300, в Большом Кети – 80, Малом Кети -100, Большом Бандиване 800, Малом Бандиване 150, Такналы – 100, Илли – 130, Джалаб Гечуте – 1400 человек. Похожая ситуация в селах Бозйогуш, Гюлибулах, Кизил-Килиса, Салут, Гайкули и Чифтали[3].

Аналогичная ситуация была в 4-ом участке Александропольского уезда. Из 39 сел участка наименее пострадали села Молла-Гекча, Ором и Маджутлу. Остальные села были полностью разграблены и сожжены[4]. По данным Государственной комиссии Советской Армении, в оккупированном Александропольском уезде были убито 30000 мужчин, 15000 женщин, 15000 детей. Получили ранения

[1] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 353, թ. 14-15:
[2] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 322, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 353, թ. 2-3:
[4] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 322, թ. 1:

20000 мужчин, 10000 женщин, 8000детей. Были изнасилованы 30000 женщин и 20000девочек.Умерли от голода 10000 мужчин, 5000 женщин, 7000 детей. Были взяты в плен 18000 мужчин, 5000 женщин и 3000 девочек. В общей сложности 60000 человек были убиты, 30000 были ранены, 32000 погибли от голода, 26000 были взяты в плен, 50000 женщин и девочек были изнасилованы, а материальный ущерб, нанесенный турками, составил 1974368 рублей золотом[1]. Председатель Совета Наркома Советской Армении А. Мясникян в июне 1921 года эти данные сообщил наркому иностранных дел Советской России Г. В. Чичерину[2].

Эти данные свидетельствуют о факте геноцида армян со стороны Кемалистов. В течение долгого времени после турецкой оккупации армянское население ощущало последствия во всех отношениях. Во-первых, турки держали в плену многих армян и не спешили отправлять их обратно. Более того, последние жили в ужасных условиях. В одном из архивных документов говорится о состоянии пленных железнодорожников, что дает представление о положении армянских пленников в целом: “По словам очевидцев, пленники живут в ужасных условиях, часто по 150 человек в бараке 30 квадратных метров. Больных не лечат, они недоедают и плохо одеты, их отправляют на работу в холодные дни. В то время в Эрзуруме насчитывалось 87 человек, 17 в Азизе, 14 в Свичли, 20 в Узунахмете, 45 в Гасан-Кале,14 в Кетике,22 в Орике, до 80 в Хорасане, 17 в Хдыр-Элазе, 20 в Дживане и 12 в Абульбарте, 12 в Саганлуге, 10 в Хаметире, до 200 в Сурбхаче. Бывший председатель села Пути Карского

[1] ՀԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 131, թ. 1:

[2] Սարգսյան Ե., Սահակյան Ռ., Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Եր., 1963, էջ 60.

района, инженеры Шермазанов, Пирадов и Мнацаканян теперь работают на них на станции Селим, в Саригамыше работает техник Долганов, а в Карсе – инженер Кочарян и другие", - говорится в архивном документе[1].

Подобной просьбой 13 июля 1921 г. Ревкому Александрополя обращается собрание семей армянских пленников. В частности говорится, что надо отправить телеграмму товарищу Ленину и Чичерину, с просьбой предпринять меры по освобождению армянских пленных[2]. Правительство Советской Армении несколько раз обращается к правительству Кемаля, однако безуспешно. В частности представитель Советской Армении в Анкаре Саргисян 1 сентября 1921 г. обращается к командующему Восточного фронта Кязиму Карабекиру, с просьбой встретиться с армянскими пленниками в Эрзуруме. В ответ Карабекир сообщает, что нет повода волноваться, и что армянские пленные довольны своим положением[3].

Говоря о дружбе, турки не предпринимали никаких практических шагов в вопросе армянских пленных. Многие армянские пленники так и не вернулись на родину, усугубив трагедию армянского народа. Кстати, турки держали в плену не только пленников, взятых из Армении, но и армян, живущих в Турции, обманув, что их переселяют в Армению. Об этом свидетельствует письмо коммуниста Аршака Товмасяна, адресованное в Центральный Комитет Коммунистической партии Армении, где он описывает трудное положение коммунистов в плену, а затем добавляет: "В дополнение к тюремному заключению коммунистов, армянское население близ-

[1] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 351, թ. 1:
[2] ՀԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 131, թ. 28:
[3] ՀԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 2, գործ 109, թ. 51:

лежащего села Чангли в Кагзване, около 800 человек, все женщины и дети, пожилые люди, были депортированы, обманув, что их отправят в Александрополь, но всех изгнали в Эрзурум, возможно, дальше. Существующие пленники содержатся в ужасных условиях, все они находятся на пути к уничтожению”[1].

Николай Киракосян, бывший председатель Александропольской городской Думы, подтвердил, что во время последней встречи Карабекир паша буквально сказал следующее: “Мы уходим, красные идут. Смотрите армяне, ведите себя хорошо. Если мы придем еще раз, мы не оставим в Александрополе камень на камне, не будет милости даже детям. То, что мы сделали на сей раз, считайте благословением. Бойтесь нашего третьего пришествия”[2].

Вот все факты, наличие которых сегодня позволяют утверждать, что в 1918-1920гг. турецкими властями в отношении населения Александропольского уезда дважды проводилась политика геноцида, что и привело к этническому обезображиванию населения ныне существующих областей Ширак и Лори.

[1] ՀԱԱ, ֆոնդ 114, ցուցակ 1, գործ 131, թ. 10:
[2] ՀԱԱ, ֆոնդ 144, ցուցակ 3, գործ 45, թ. 7:

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԱԼԵՔՍԱՆԴՐՈՊՈԼԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1918-1921 թթ.

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ,
Արկադի ԱԿՈՊՈՎ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կոնտրոն

Բանալի բառեր՝ հայեր, երիտթուրքեր, Ալեքսանդրապոլի գավառ, ցեղասպանություն, քեմալականներ, հեղափոխական կոմիտե:

1918թ. մայիսի կեսերին տիրելով Ալեքսանդրապոլի գավառի մեծ մասին, թուրքական կանոնավոր զորքերը՝ տեղական մահմեդականների աջակցությամբ, իրագործեցին արևելահայության ֆիզիկական բնաջնջման քաղաքականություն. ավելի քան 50 գյուղեր հիմնահատակ ավերվեցին, մոտ 26000 մարդ կոտորվեց, գերվեց և Օսմանյան կայսրության խորքերը քշվեց շուրջ 15000 մարդ, առևանգվեց ու բռնաբարվեց 50000 կին և օրիորդ:

Երկու տարի անց պատմությունը կրկնվեց: Իրագործելով «Արևելքի ժողովուրդների առաջին համագումարի» որոշումները՝ թշնամին առանց պատերազմ հայտարարելու հարձակվեց ՀՀ վրա և նոյեմբերի 7-ին երկրորդ անգամ մտավ Ալեքսանդրապոլ: Հաջորդ վեց ամիսների ընթացքում քեմալականները հետևողականորեն կենսագործեցին տեղի հայությանը բնաջնջելու երիտթուրքերից ժառանգած քաղաքականությունը. շուրջ 60.000 մարդ կոտորվեց, ևս 32.000-ը՝ զոհ գնաց սովին: Թուրքերը գերության քշեցին 18.000 տղամարդ, իսկ հեռանալիս իրենց հետ տարան 8.000 կին ու աղջիկ:

Թուրքերի հեռանալուց հետո Ալեքսանդրապոլի գավառում գյուղական ազգաբնակչության թիվը նախկին 152414-ի փոխարեն կազմեց 111648 մարդ: Եվ սա այն դեպքում, երբ գավառը 1922թ. նախկին 4 գավառամասերից զատ համալրվել էր Աղբաբայի, Թալինի և Ղայդուլի Ղազանչիի գավառամասերով (ընդհանուր 26432 մարդ): Բացի այդ 1921թ. վերջերին այստեղ էին հաստատվել նաև Մերձավոր Արևելքի երկրներից գաղթած 3000 հայերի զգալի մասը:

CONTINUATION OF TURKISH GENOCIDE POLICY IN ALEXANDROPOL UEZD IN 1918-1921YY.

Armen HAYRAPETYAN,
Arkadi AKOPOV
Shirak Center for Armenological Studies RA

Key words: armenians, young turks, Alexandropol uezd, genocide, kemalists, revolutionary committee.

Taking control of most of Alexandropol uyezd in mid-May 1918, the Turkish regular troops, with the support of local Muslims, pursued a policy of physical extermination of all Armenians. More than 50 villages were thoroughly destroyed, about 26,000 people were massacred, taken captive, about 15,000 people were driven into the depths of the Ottoman Empire, 5,000 women were abducted and raped. Two years later, history repeated itself. Implementing the decisions of the "First Congress of the Peoples of the East", the enemy attacked the Armenian republic without declaring war. On November 7, the enemy entered Alexandropol for the

second time. For the next six months, the Kemalists relentlessly pursued a policy of extermination of the local Armenians which had been inherited from the Young Turks. About 60,000 people were massacred, and 32,000 fell victim to starvation. The Turks took 18,000 men captive and took 8,000 women and girls with them when leaving.

After the departure of the Turks, the rural population in the uyezd of Alexandrapol was 111648 people instead of the previous 152414. And this is in the case, when in 1922 the uyezd apart from the previous 4 provinces, was replenished with the provinces of Aghbaba, Talin, and Ghayghul Ghazanchi (26432 people in total). Besides, most of the 3,000 Armenians who immigrated from the Middle East in late 1921 settled here.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՅՆԱՑՈՒՄԸ ՀԱՅ-ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ

Կարեն ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Վրաստան, Ադրբեջան, Հայաստան, անկախ պետություններ, Գ. Չիչերին, Վուդրո Վիլսոն, խորհրդային իշխանություններ, Անտանտի երկրներ

Անոտացիա: Հոդվածում արխիվային փաստաթղթերի ու նյութերի, պատմագիտական գրականության լայն հենքի վրա ուսումնասիրվում և լուսաբանվում է Հայաստանի Հանրապետության խորհրդայնացման գործընթացը 1920թ. երկրորդ կեսի հայ-ռուսական, հայ-թուրքական և ռուս-թուրքական ռազմաքաղաքական հարաբերությունների համատեքստում: Եզրակացվում է, որ ժամանակի միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված ռազմաքաղաքական բարդ իրավիճակում, քեմալա-բոլշևիկյան համագործակցության, Հայաստանի արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության պայմաններում Հայաստանի Հանրապետությունը ճակատագրական պարտության մատնվեց 1920 թ. աշնանը քեմալականների կողմից սանձազերծված թուրք-հայկական պատերազմում, իսկ այնուհետև խորհրդայնացվեց Խորհրդային Ռուսաստանի կողմից:

1917 թվականի ռուսաստանյան հեղափոխությունների արդյունքում միապետության անկումից և Ռուսաստանի խորհրդայնացումից հետո նախկին կայսրության փլուզման գործընթացը տարածվեց դեպի ծայրամասային շրջանները, այդ թվում՝ Անդրկովկաս: 1918 թ. ապրիլի 9 (22)-ին Անդրկովկասյան սեյմը երկրամասը հայտարարեց Ռուսաստանից անկախ դաշնային հանրապետություն, իսկ արդեն մայիսի վերջին այստեղ հռչակվեցին Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի անկախ պետությունները: Անջատվելով Ռուսաստանից՝ վերջիններս աստիճանաբար ներքաշվեցին Թուրքիայի և Արևմուտքի ազդեցության վիճաբանության ոլորտ: Բայց Ռուսաստանը, ցարական թե խորհրդային, չէր կարող հաշտվել իր համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող անդրկովկասյան տարածաշրջանի կորստի հետ, մի տարածաշրջանի,

որին տիրապետելու համար դեռևս 18-րդ դարից սկսած վճռական քայլեր էր գործադրել: Անդրկովկասը վերջնականապես կորցնելու դեպքում Ռուսաստանը վտանգում էր իր իսկ գոյությունը: Պանթուրքիզմի գաղափարախոսները աչալուրջ էին, նրանք գտնում էին, որ Անդրկովկասը Ռուսաստանից անջատելու դեպքում նոր հեռանկարներ կբացվեն «Մեծ Թուրանի» գաղափարը գործնականում իրականացնելու համար: Վերջինիս մեջ ընդգրկվելու էին մուսուլմանական բնակչությամբ բնակեցված Ռուսաստանի մի շարք տարածքներ: Կասկածից վեր է, որ «Մեծ Թուրանի» իրականացումը կործանարար հետևանքներ կունենար ռուսական պետության համար, իսկ «արյունակից քոչվոր ցեղերի» երազելիք թուրանական պետության ճանապարհին մխրճված հայկական պետությունն ընդհանրապես վերանալու էր, այդպես էին ծրագրել պանթուրքիզմի տեսաբանները:

Իրադարձությունների բերումով պատմական տվյալ ժամանակահատվածում միայն Ռուսաստանի վերադարձը Անդրկովկաս և նրա դիրքերի ամրապնդումը տարածաշրջանում կարող էին խափանել պանթուրքական ծրագրերի իրականացումը: «Հայաստանի ճակատագիրը պետք է կապված լինի Ռուսաստանի հետ..., - իրատեսորեն նշում է ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, - պանթուրքիզմի դեմ մղվող գոյատևման պայքարում հայ ժողովրդի բնական դաշնակիցը կարող է լինել միայն Ռուսաստանը, որովհետև պանթուրքիզմի հաղթանակը, Մեծ Թուրանի ստեղծումը անխուսափելիորեն հանգեցնելու են մի կողմից՝ Հայաստանի կործանմանը, մյուս կողմից՝ Ռուսաստանի մասնատմանը»[1]:

[1] Խուրշուդյան Լ.Ա., Հայոց ցեղասպանության պատճառները և պատմական դասերը, «Հայոց ցեղասպանությունը (ուսումնասիրություններ)»,Եր., 2001, էջ 29, 34:

Ռուսաստանի կենտրոնական մասերում խորհրդային իշխանությունն ամրապնդելուց հետո բոլշևիկյան վարչակարգը ձեռնամուխ եղավ նախկին կայսրության տարածքները, այդ թվում՝ Անդրկովկասը, սեփական ազդեցության ոլորտ վերադարձնելու գործին: Հյուսիսային Կովկասը հակախորհրդային ուժերից մաքրելուց հետո Խորհրդային 11-րդ կարմիր բանակը 1920 թ. գարնանն ընդհուպ մոտեցավ Անդրկովկասի սահմաններին: Այստեղ առաջինը 1920թ. ապրիլի 28-ին խորհրդայնացվեց մուսավաթական Ադրբեջանը, խորհրդայնացվեց խաղաղ: Դրանում Խորհրդային Ռուսաստանին մեծ աջակցություն էր ցուցաբերել Մուստաֆա Քեմալ փաշայի գլխավորած Թուրքիայի նորաստեղծ Ազգային մեծ ժողովի կառավարությունը, որը հորդորել էր մուսավաթականներին որևէ դիմադրության չդիմել: Ադրբեջանի խորհրդայնացումից մի քանի օր անց՝ 1920 թ. մայիսի 4-ին, Մոսկվա՝ Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետության (ՌՍԴԽՀ) կառավարության՝ Ժողկոմխորհի նախագահ Վլադիմիր Լենինին ուղղված զեկուցագրում Կովկասյան ռազմաճակատի ռազմահեղափոխական խորհրդի անդամներ Սերգեյ Կիրովը և Գեորգի (Սերգո) Օրջոնիկիձեն տեղեկացնում էին, որ «Բաքվում հեղափոխության օգտին բավականին ակտիվ դեր խաղացին թուրք ասկյարները և սպաները…»[1]: Այդ մասին է նշվում նաև ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմիսարիատի 1919-1920 թթ. տարեկան հաշվետվության մեջ. «Քեմալականները մեզ հետ կապի մեջ մտան Ադրբեջանի միջոցով, որտեղ նրանց համախոհների խումբն օժանդակել էր հեղաշրջմանը

[1] Хейфец А.Н., Влияние СССР на угнетенные народы Востока (Сб. Великий Октябрь и народы Востока), М., 1957, с. 56.

և այն բանին, աղրբեջանական հեղափոխական կառավարությունը հրավիրեր կարմիր զորքերին»[1]:

Նշենք, որ դեռևս 1920 թ. ապրիլի 26-ին Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության անունից Մ. Քեմալը նամակով դիմել էր Վ. Լենինին դիվանագիտական սերտ հարաբերություններ հաստատել երկու «հեղափոխական» երկրների միջև և ռազմական դաշինք կնքել ընդդեմ իմպերիալիզմի՝ կապիտալիստական Արևմուտքի: Նամակում խորամանկորեն նշվում էր, որ անհրաժեշտության դեպքում Թուրքիան պատրաստ է ռազմական գործողություններ ծավալել «իմպերիալիստական Հայաստանի դեմ»[2]:

Այսպիսով, նախանշվող քեմալաբոլշևիկյան համագործակցությունը պայմանավորվելու էին «հակաիմպերիալիստական պայքարի նշանաբանով»: Սակայն, եթե քեմալական Թուրքիայի հետ դաշինքը բոլշևիկներին անհրաժեշտ էր տարածաշրջանում սեփական ազդեցությունը տարածելու, համաշխարհային հեղափոխությունը դեպի Արևելք զարգացնելու, մուսուլմանական աշխարհը Արևմուտքի դեմ հանելու համար, ապա քեմալականներն այլ նպատակներ էին հետապնդում՝ բոլշևիկներից քաղաքական աջակցություն, ռազմական և նյութական օժանդակություն ստանալով, ամրապնդել սեփական իշխանությունը Թուրքիայում, փրկել կայսրությունը անխուսափելի թվացող կործանումից, իսկ այնուհետև՝ անցնել «պանթուրքական» զավթողական ծրագրերի իրականացմանը:

---

[1] Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), կազմողներ՝ Ջ.Ս. Կիրակոսյան, Ռ.Գ. Սահակյան,Եր.,1972 (այսուհետ՝ Հայաստանը… փաստաթղթերում), էջ 478:

[2] Документы внешней политики СССР (այսուհետ՝ ДВП СССР), т. II, М., 1958, с. 725-729.

Խորհրդայնացվելուց հետո Ադրբեջանը Խորհրդային Ռուսաստանի կողմից հայտարարվեց տարածաշրջանում «հեղափոխության առաջամարտիկ», որտեղից բոլշևիկները «գրոհելու էին» վրաց մենշևիկների և հայ դաշնակցականների «ազգային բուրժուական հակահեղափոխական կառավարությունները»[1]: Եվ իրոք, դժվար չէր կռահել, որ «Ադրբեջանում հաստատվելուց հետո,- նշում է ժամանակի հայ ազգային և պետական գործիչ Հովհաննես Քաջազնունին,- բոլշևիկների հետևյալ քայլը պիտի լիներ՝ մտնել նաև Վրաստան ու Հայաստան: Ժամանակի խնդիր էր սա»[2]:

Ադրբեջանի խորհրդայնացումից անմիջապես հետո 11-րդ կարմիր բանակի ռազմաքաղաքական ղեկավարությունը շտապում է վերջնագրեր ներկայացնել Հայաստանի կառավարությանը՝ Ղարաբաղից և Զանգեզուրից հայկական զորամիավորումները հեռացնելու պահանջով[3]: Վերջիններս Մոսկվայից խնդրում էին անհապաղ թույլատրել ռազմական միջամտությամբ խորհրդայնացնել Վրաստանը և Հայաստանը: Սակայն խնդրի վերաբերյալ ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի մայիսի 25-ի որոշման մեջ նշվեց տրամագծորեն հակառակի մասին. «Շարունակել բանակցությունները Հայաստանի կառավարության հետ, մեզ վրա չվերցնելով ռուսական զորքերի օգնությամբ (Հայաստանը - Կ.Խ.) անմիջապես խորհրդայնացնելու նախաձեռնությունը»[4]:

Սակայն դա բնավ չէր վերաբերում բոլշևիկների համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Ղարաբաղ – Զանգեզուր - Նախիջևան գծին: 1920 թ. ապրիլի վերջին տեղի ունե-

[1] Орджоникидзе Г.К., Избранные статьи, М., 1957, с. 56.
[2] Քաջազնունի Հ., Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլևս, Եր., 1994, էջ 35:
[3] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 200, ց. 1, գ. 427, թ. 274:
[4] ՀԱԱ, միկրոժապավենների հավաքածու (ՄԺՀ), № 1, գործ 2, թ. 43:

ցած 9-րդ համագումարում Ղարաբաղը Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս հռչակած երկրամասի հայությանը այլ ելք չէր մնում, քան արդեն մայիսի 25-ին հրավիրված 10-րդ համագումարում ընդունել խորհրդայնացումը՝ պատերազմից խուսափելու նպատակով:

Այսպիսով, Հայաստանի տարածքներից առաջինը խորհրդայնացավ Արցախը: 1920 թ. ամռանը խորհրդային զորքերը զինագրավեցին նաև Զանգեզուրն ու Նախիջևանը, հակառակ իր կամքին, Հայաստանը ներքաշվում է Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի հետ չհայտարարված պատերազմի մեջ: Եթե նկատի ունենանք, որ նման իրավիճակ էր հասունանում նաև Թուրքիայի հետ, որն իր ռազմական ներխուժման սպառնալիքի տակ էր պահում Հայաստանի արևմտյան սահմանները, ապա պարզ է դառնում, որ 1920թ. ամռանը Հայաստանի Հանրապետությունը հայտնվել էր օրհասական դրության մեջ, վտանգված էին նրա անկախությունն ու անվտանգությունը:

Խորհրդային Ռուսաստանի նախաձեռնությամբ Մոսկվայում 1920թ. մայիսից սկսված հայ-ռուսական բանակցություններում խորհրդային պատվիրակությունը, հանձինս ՌՍԴԽՀ արտաքին գործերի ժողկոմ Գեորգի Չիչերինի և նրա տեղակալ Լևոն Կարախանի, պատրաստակամություն է հայտնում պայմանագիր կնքելու և բարեկամական ամուր հարաբերություններ հաստատելու երկու պետությունների միջև: Լևոն Շանթի գլխավորած հայկական պատվիրակությունն իր հերթին ընդգծում է Ռուսաստանի կողմից Հայաստանի անկախությունը ճանաչելու անհրաժեշտությունը, առաջ քաշում նրա ներքին գործերին չմիջամտելու և այլ պահանջներ:

Ռուս-հայկական բանակցությունները, որոնց հաջող ընթացքի և ավարտի վրա բացասական ազդեցություն էին գործում Բաքվից

և Թուրքիայից, որևէ արդյունք չտալով, ընդհատվեցին: Հայաստանի իշխանությունների հետ կապեր հաստատելու նպատակով տարածաշրջան էր ժամանելու Հայաստանում Խորհրդային Ռուսաստանի կառավարության լիազոր ներկայացուցիչ նշանակված Բորիս Լեգրանը: 1920 թ. հուլիսի 19-ին տեղեկացնելով այդ մասին Հայաստանի արտգործնախարարին՝ Գ. Չիչերինը միաժամանակ նրան հուշում է, որ «Բացառապես խորհրդային կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք ազգայնականները դադարեցրին իրենց սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնելու հայ ժողովրդին»: Եվ դա իրոք այդպես էր. Թուրքիայի Ազգային մեծ ժողովում 1920 թ. օգոստոսի 14-ին ունեցած ելույթում անդրադառնալով քեմալականների արտաքին դրության հիմնահարցերին, Մ. Քեմալը թուրք պատգամավորներին տեղեկացնում է, որ Հայաստանի դեմ հունիսին նախատեսված թուրքական հարձակումը կասեցվեց խորհրդային կառավարության դիվանագիտական միջամտության միջոցով[1]:

Ինչ վերաբերում է խորհրդաքեմալական հարաբերությունների զարգացումներին, ապա Մ. Քեմալի ապրիլի 26-ի վերը նշված նամակին հետևում է ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի 1920թ. հունիսի 3-ի պատասխան նամակը: Ողջունելով քեմալականների՝ Ռուսաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու և իմպերիալիզմի դեմ ընդհանուր պայքար ծավալելու առաջարկությունը՝ Գ. Չիչերինը նամակում արծարծում է նաև թուրքհայկական հարաբերությունների հարցը, նա նշում է, որ Թուրքիայի և Հայաստանի միջև պետք է «հաստատել այնպիսի ճշտորոշ

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, խմբագրությամբ Գ.Ա. Գալոյանի և Վ.Ն. Ղազախեցյանի, Եր., 2000, էջ 250-251:

սահմանագծեր, որպիսիք պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»[1]:

Թուրքական կողմի պատասխանը չի հապաղում. Մ. Քեմալի և Ազգային մեծ ժողովի արտաքին գործերի գործադիր կոմիտեի անդամ Բեքիր Սամի բեյի՝ Գ.Չիչերինին ուղղած նամակներում վերջիններս հավաստում են, որ քեմալական կառավարությունը «ընդունում է Ռուսական Խորհրդային Հանրապետության միջնորդությունը և հետաձգում նախատեսված ռազմական գործողությունների սկիզբը Կարսի, Արդահանի և Բաթումի շրջաններում»[2]: Թուրքական կողմը տեղեկացնում է նաև, որ ռուս-թուրքական բանակցությունները շարունակելու նպատակով Մոսկվա է գործուղում թուրքական պատվիրակություն[3]:

Խորհրդաքեմալական բանակցությունները Մոսկվայում սկզբնական շրջանում անարդյունք էին. քեմալականների՝ Հայաստանի վրայով Ռուսաստանի հետ հաղորդակցության ուղիղ կապ հաստատելու անհրաժեշտության պահանջին խորհրդային պատվիրակությունը, հանձինս Գ. Չիչերինի և Լ. Կարախանի, դնում է Վանը, Բիթլիսը, Մուշը Հայաստանին վերադարձնելու հարցը:

Այսպիսով, 1920 թ. ամռան սկզբին ո՛չ հայ-ռուսական և ո՛չ էլ թուրք-ռուսական բանակցություններում կողմերի անզիջում դիրքորոշումների պատճառով առաջընթաց չէր արձանագրվում: Սակայն դա չէր կարող անվերջ շարունակվել, բանակցությունների ձգձգումը և փոխհամաձայնության չհասնելը ծանր էին անդրադառնում բոլ-

[1] Հայաստանը… փաստաթղթերում, էջ 447-448:

[2] Гарибджанян Г., Саркисян Е., К вопросу о характере национально-освободительной войны в Турции в 1919-1922 гг., «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1982, N 3, էջ 163:

[3] Հայաստանը… փաստաթղթերում, էջ 449:

շևիկների արտաքին քաղաքական նպատակների վրա, ուստի խորհրդային կողմը պետք է կողմնորոշվեր, վերջապես ընտրություն կատարեր «իմպերիալիստական» Հայաստանի, Խորհրդային Ադրբեջանի և «հեղափոխական» Թուրքիայի միջև: Իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ այդ ընտրությունը կատարվեց հօգուտ վերջինների:

Հայաստանի հետ տարածքային վեճերում Ադրբեջանին և Թուրքիային պաշտպանելու պահանջով հանդես եկան ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն և 11-րդ կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի առանձին անդամներ: Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի հետ համատեղ 1920 թ. հուլիսի 10-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմ ուղարկած նրանց նամակում պահանջվում է Ղարաբաղը և Զանգեզուրը հանձնել Խորհրդային Ադրբեջանին: Դա հիմնավորվում է նրանով, որ հակառակ դեպքում «կխափանվի հեղափոխության զարգացումը Թուրքիայում»[1]:

Ավելի վաղ՝ հուլիսի 8-ին, ՌՍԴԽՀ ազգությունների գործերի ժողովրդական կոմիսար Իոսիֆ Ստալինը Գ. Օրջոնիկիձեին ուղղված նամակում նշում է. «Իմ կարծիքն այն է, որ չի կարելի անվերջ լարախաղացություն անել կողմերի միջև, պետք է պաշտպանել կողմերից մեկին, որոշակիորեն, ներկա դեպքում (խոսքը Ղարաբաղի մասին է - Կ.Խ.), իհարկե՝ Ադրբեջանին, Թուրքիայի հետ միասին: Ես խոսել եմ Լենինի հետ, նա չի առարկում»[2]:

Նման պայմաններում Հայաստանի նկատմամբ իր դիրքորոշումն է փոխում ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինը՝ խորհրդային ղեկավար գործիչներից թերևս միակը, որ փորձում էր զսպել Հա-

[1] Нагорный Карабах в 1918–1923 гг.: Сборник документов и материалов, отв. ред. В.А. Микаелян, Ер., 1992, с. 529-531.

[2] Նույն տեղում, էջ 524:

յաստանի նկատմամբ Թուրքիայի, Ադրբեջանի և խորհրդային ազդեցիկ մի շարք գործիչների «հարձակողական քաղաքականությունը»: 1920 թ. հուլիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյին ուղղված «հատկապես գաղտնի» զեկուցագրում Գ. Չիչերինը նշում է. «Անհրաժեշտ է օգտվել ընկ. Սերգոյի (Գ. Օրջոնիկիձե – Կ.Խ.) ներկայությունից, որպեսզի լուծում ստանա Հայաստանի հարցը՝ կապված քեմալականների դրության հետ: Վերջիններս սպառազինության պակասի պատճառով մոտ են վախճանի: …Նրանց սպառազինություն ուղարկել հնարավոր է միայն տարանցիկ ճանապարհով Հայաստանի վրայով: …Ընկ. Սերգոյի խոսքերով՝ փորձել դաշնակներից Հայաստանի վրայով տարանցիկ ճանապարհի իրավունք ստանալ առանց որևէ վերահսկողության, ներկայումս անհնար է: Ընկ. Սերգոն պնդում է, որ Հայաստանի խորհրդայնացման համար պահանջվում են ոչ այնքան շատ զորամիավորումներ: …Այդ դեպքում՝ Հայաստանի խորհրդայնացումը հույժ անհրաժեշտ է: Առանց դրա մենք չունենք իրական շփում Թուրքիայի հետ: Քեմալականների վախճանն ուժգին հարված կհասցներ մեր դիրքերին Արևելքում»: Հաջորդ օրը՝ հուլիսի 31-ին, ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն քննարկում է Հայաստանի վերաբերյալ Գ. Չիչերինի նշված առաջարկությունը և որոշում ընդունել այն[1]:

Սակայն միջազգային իրադրությունը 1920 թ. ամռանն այնքան արագ էր փոփոխվում, որ Հայաստանը խորհրդայնացնելու որոշումը շուտով չեղյալ է համարվում: Օգոստոսի առաջին օրերին պատասխանելով խորհրդային կառավարության ղեկավար Վ. Լենինի՝ իրեն հասցեագրված հետևյալ երկտողին. «Ձե՞ր կարծիքը: Հետաձգե՞լ Հայաստանի խորհրդայնացումը», ՌԿ(բ)Կ Կենտկոմի քար-

[1] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ. 74–75:

տուղար և քաղբյուրոյի անդամ Ն.Կրեստինսկին նշում է, որ «Հայաստանի խորհրդայնացումը մենք արդեն հետաձգել ենք, հարկավոր է հետաձգել նաև Վրաստանի խորհրդայնացումը»[1]:

1920 թ. օգոստոսի սկզբին վերսկսված հայ-ռուսական բանակցությունները ավարտվում են օգոստոսի 10-ին Թիֆլիսում ստորագրված համաձայնագրով: Ռուսաստանը ճանաչում է Հայաստանի Հանրապետության անկախությունը և լիակատար ինքնուրույնությունը, իրավական ձևակերպում էր ստանում խորհրդային զորքերի կողմից հայ-ադրբեջանական «վիճելի տարածքներ» համարվող Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի «ժամանակավոր» զինագրավման փաստը[2]: ՀՀ ղեկավարությունը ստիպված էր գնալ այս համաձայնագրի կնքմանը, քանի որ պետությունը կանգնած էր իր համար կործանարար հայ-ռուսական պատերազմի վտանգի առաջ: Ուշագրավ է, որ հետագայում՝ 1920 թ. նոյեմբերի 1-ին, Հայաստանի պառլամենտի նիստում վարչապետ Հ. Օհանջանյանն այս ակտը անվանեց զինադադար[3]:

Համաձայնագրի ստորագրման կապակցությամբ օգոստոսի 23-ին Գ. Չիչերինը հեռագրում է Գ. Օրջոնիկիձեին. «Հաղորդում եմ Ձեզ ճշտորեն և անվերապահ ղեկավարվելու համար Հայաստանի վերաբերյալ Կենտկոմի հրահանգները. խորհրդայնացման որոշումը (նկատի ունի ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյի 1920 թ. հուլիսի 31-ի որոշումը – Կ.Խ.) չեղյալ է հայտարարվել, անհրաժեշտ է խստորեն

[1] Ленин В.И., Неизвестные документы. 1891–1922 гг., М., 1999, док. 241, с. 359.

[2] Нагорный Карабах в 1918–1923 гг., с. 574–575.

[3] Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ. 1918–1920 թթ., Եր., 2009, էջ 533:

խուսափել Հայաստանի հետ ամեն տեսակի ռազմական ընդհարումներից»[1]:

1920 թ. օգոստոսի 10-ի Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումը համընկավ նույն օրը Փարիզի արվարձան Սևրում Անտանտի ու նրա դաշնակից երկրների (այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության) և սուլթանական Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագրի հետ:

Սևրի պայմանագրով սուլթանական կառավարությունը ճանաչում էր Հայաստանը որպես ազատ և անկախ պետություն: Թուրք-հայկական սահմանն անցնելու էր Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի վիլայեթներով: Սահմանի վերջնական որոշումը հանձնարարվում էր ԱՄՆ-ի նախագահին, իսկ կողմերը պարտավորվում էին ոչ միայն անվերապահ ընդունել միջնորդական իրավարար որոշումը, այլև համաձայնել բոլոր այն միջոցառումներին, որոնք կառաջարկվեն՝ Հայաստանին դեպի Սև ծով ելք տալու և որոշվող սահմանագծին հարող օսմանյան ցանկացած տարածքների ապառազմականացման վերաբերյալ: Թուրքական կողմը պարտավորվում էր իրավարար որոշման հրապարակման օրից հրաժարվել Հայաստանին հանձնված տարածքների նկատմամբ բոլոր իրավունքներից: Նշենք, որ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնի 1920 թ. նոյեմբերի 22-ի իրավարար (արբիտրաժային) որոշման համաձայն՝ Միացյալ Հայաստանը պետք է ստանար Վանի և Բիթլիսի նահանգների երկու երրորդը, Էրզրումի գրեթե ամբողջ նահանգը, Տրապիզոնի նահանգի մեծ մասը՝ ելք ունենալով դեպի Սև ծով: Ինչ վերաբերում է Ադրբեջանի և Վրաստանի հետ Հայաստանի սահմաններին,

[1] Казанджян Р., К предыстории самоопределения Нагорного Карабаха (с приложением новых документов), М., 1997, с. 38.

ապա դրանք որոշվելու էին այդ պետությունների փոխհամաձայնությամբ, տարաձայնությունների դեպքում՝ սահմանագիծը նշելու էին գլխավոր դաշնակից տերությունները:

Այսպիսով, Առաջին համաշխարհային պատերազմում Անտանտի և Օսմանյան կայսրության միջև պատերազմի արդյունքներն ամփոփող և միջազգային հարաբերությունների Վերսալյան համակարգի մասը կազմող Սևրի պայմանագրով իր արդարացի լուծումն էր ստանում Հայկական հարցը՝ Արևմտյան Հայաստանի զգալի տարածքներ վերադարձվում էր իրական տիրոջը՝ հայերին: Ստեղծվում էր Միացյալ և անկախ հայկական պետություն, որի ընդհանուր տարածքը պետք է կազմեր ավելի քան 160 հազար քառ. կմ (Արևելյան Հայաստանում հռչակված Հանրապետության տարածքը 1920 թ. կեսերին կազմում էր շուրջ 70 հազար քառ. կմ):

Ինչպես Սևրի պայմանագիրը, այնպես էլ նրանից բխող ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնի իրավարար որոշումը հայ-թուրքական սահմանի վերաբերյալ, թեև չիրագործվեցին, այդուհանդերձ դա Արևմտյան Հայաստանի նկատմամբ հայ ժողովրդի իրավունքների միջազգային ճանաչումն էր, փաստ, որն անհնար է ջնջել պատմության էջերից:

Մյուս կողմից, Սևրի պայմանագրով էր պայմանավորված, որ Անտանտի երկրներում, պրոթուրքական և հակահայկական ճամբարներում իրարանցում առաջացրած Թիֆլիսի ռուս-հայկական համաձայնագիրը Հայաստանի իշխանությունները որակում էին «ձևական» և, կարծես արդարանալով՝ վստահեցնում էին Արևմուտքին, որ իրենք «շարունակում են մնալ հակաբոլշևիկ»[1]:

Հայկական պատվիրակության անդամ Համբարձում Տերտերյանը իր հուշերում վկայում է, որ «Սևրի առաջացրած խանդա-

[1] Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, ԲՀԱ, Եր., 1967, N 3, էջ 51-56:

վառ ոգևորության հետևանքով մեր պետական ու կուսակցական գործիչներից շատերը, թերագնահատելով Խորհրդային Ռուսաստանի դերը Հայ դատի լուծման մեջ, անտեսել էին կարմիր զորամասերի ներկայությունը Հայաստանի սահմաններում և չափազանց մեծ հույսեր էին կապել դաշնակից պետությունների հետ՝ գերագնահատելով նրանց ուժերն ու հնարավորությունները: Հայաստանի պատվիրակությունն այն կարծիքին էր, որ դաշնակիցները, ինչքան էլ բարյացակամ լինեն Միացյալ և Անկախ Հայաստանի դատի նկատմամբ, իսկ խորհրդային իշխանությունն էլ՝ ոչ բարյացակամ, ամենից առաջ նկատի պետք է առնվեր մերկ ու դառն իրականությունը: Մեր բարեկամ «Ալյանսը» (նկատի ունի Անտանտը – Կ.Խ.) շատ հեռու էր մեր երկրի սահմաններից, իսկ Խորհրդային Ռուսաստանի զորամասերն արդեն իսկ գտնվում էին Հայաստանի սահմանների մոտ և իրական սպառնալիք էին ներկայացնում Հայաստանի անկախության համար: Ուստի մեր պատվիրակությունն առաջարկում էր մեր կառավարությանը ամեն գնով ու զիջումներով լեզու գտնել խորհրդային կառավարության հետ, անգամ Սևրից հրաժարվելու պայմանով, որպեսզի կարողանանք արագացնել կարմիր զորամասերի հեռացումը մեր անվիճելի հողամասերից»[1]:

Իրավացի է Հովհաննես Քաջազնունին, երբ խոստովանում է, որ «Սևրի դաշնագիրը շլացրել էր բոլորիս աչքերը, կաշկանդել միտքը, մթնեցրել իրականության գիտակցությունը»[2]:

«Սևրի պայմանագրի նկատմամբ ունեցած «խանդավառ ոգևորությունը» Հայաստանի կառավարողներին մղել էր Ռուսաստանի դերի թերագնահատմանը Հայ դատի լուծման խնդրում»: «Խորհրդա-

[1] «Հայրենիք», Բոստոն, 1954, N 5, էջ 6:
[2] Քաջազնունի Հ., նշվ.աշխ., էջ 33:

յին Ռուսաստանը վճռականապես հանդես եկավ Սևրի պայմանագրի դեմ: Եվ դա ոչ թե այն պատճառով, որ պայմանագիրն ուղղված էր Թուրքիայի շահերի դեմ, այլ այն, որ արմատապես հակասում էր իր շահերին», և ոչ միայն Հայկական հարցում: Ռուսաստանը չէր կարող հանդուրժել, որ «հայերն իրենց անկախությունը ստանային Անտանտի տերությունների օգնությամբ և դրանով իսկ ընդմիշտ կախված լինեին նրանցից: Այդ Հայաստանը,- իրավացիորեն եզրակացնում է ակադեմիկոս Գ. Գալոյանը,- կխանգարեր «համաշխարհային հեղափոխության» ալիքների տարածմանը Արևելքում և Խորհրդային Ռուսաստանին ու «հեղափոխական» Թուրքիային կբաժաներ միմյանցից»[1]:

Թիֆլիսի համաձայնագրի և հատկապես Սևրի պայմանագրի հայանպաստ դրույթներն էլ ավելի բորբոքեցին քեմալական թուրքերի և ադրբեջանցի կոմունիստների թշնամական քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Նրանք միասնական ջանքերով Ռուսաստանի մայրաքաղաքում խորհրդային կառավարությանը դրդում էին համատեղ պայքար մղել Հայաստանի դեմ: 1920 թ. օգոստոսի 14-ին Բեքիր Սամի բեյի գլխավորած թուրքական պատվիրակությունը Մոսկվայում հանդիպում է Վ. Լենինի հետ, բողոքում Թիֆլիսի ռուս-հայկական համաձայնագրից, մասնավորապես, Նախիջևան-Շահթախթ երկաթուղու շահագործումը Հայաստանին թողնելու դրույթից: Թուրքերը հուշում են, որ դա է «միակ հուսալի ճանապարհը», որով Ռուսաստանը կարող է զենք և զինամթերք տեղափոխել քեմալականներին, հակառակ դեպքում՝ «իրենք կուլ կգնան Արևմուտքին»: Խորհրդային կառավարությունից թուրքերը պահանջում են «գոնե բանավոր» համաձայնություն տալ Շահթախթ-Սարի-

[1] Գալոյան Գ.Ա., Հայաստանը և Մեծ տերությունները (1917-1923), Եր., 1999, էջ 283, 286-287:

ղամիշ գիծն իրենց կողմից գրավելու համար՝ ռուսական և քեմալական բանակների միջև անմիջական շփում հաստատելու նպատակով: Թուրքական դիվանագիտական ճնշումներն ի վերջո ցանկալի արդյունք են ապահովում. Գ. Օրջոնիկիձեի հետ հարցի վերաբերյալ խորհրդակցելուց հետո, արտգործժողկոմ Գ. Չիչերինը խորհրդային կառավարության անունից դրական է արձագանքում թուրքերի պահանջին՝ պայմանով, որ նրանք նշված գիծը չանցնեն[1]:

Թուրքական կողմի նկրտումներն իրենց ձևակերպումներն են ստանում օգոստոսի 24-ին Մոսկվայում նախաստորագրած ռուս-թուրքական «Սրտագին և անկեղծ բարեկամության» պայմանագրի նախագծում: Դրա տարբերակներից մեկի համաձայն՝ կողմերը պարտավորվում են «փոխադարձ համաձայնությամբ և կարճ ժամանակում ձեռնարկել անհրաժեշտ բոլոր միջոցները՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև հաղորդակցության ճանապարհները բացելու համար»[2]:

Քեմալաբոլշևիկյան մերձեցումը, որ օգոստոսի 24-ի ռուս-թուրքական համաձայնություններից հետո նոր փուլ էր թևակոխել, առավել ամրապնդվեց 1920թ. սեպտեմբերի 1–8-ը Բաքվում հրավիրված Արևելքի ժողովուրդների առաջին համագումարում: Համագումարի կողմից ընտրված Քարոզչության և գործողության խորհրդի նախագահությունը սեպտեմբերի 18-ին հավանություն է տալիս խորհրդի կողմից սեպտեմբերի 17-ին ներկայացված «Մերձավոր Արևելքի քաղաքական ներկա պահի մասին» զեկուցագրին, որը մշակվել էր հակահայկական գործունեությամբ հայտնի ՌՍԴԽՀ արտգործժողկոմատի պատասխանատու աշխատակից Ա. Սկաչկո-

[1] Армянский вопрос. Энциклопедия, под ред. К.С. Худавердяна, Ер., 1991, с. 231–232.
[2] Նույնը:

յի կողմից: Փաստաթղթում առաջին հերթին խիստ քննադատվում է 1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը, այն դիտվում է որպես Ռուսաստանի «թուլության» նշան, ինչը կարող է ուժգին հարված հասցնել թուրք-ազգայնական (քեմալական) շարժմանը և խափանել Արևելքում համաշխարհային հեղափոխության զարգացումը: Դրանից խուսափելու համար առաջարկվում է գործողությունների հետևյալ ծրագիրը. հնարավոր բոլոր միջոցներով օգնել քեմալականներին, որ Հայաստանի վրա նրանց ռազմարշավի միջոցով լուծվի Հայաստանի խորհրդայնացման հարցը: Համաձայն ծրագրի՝ հաջորդ փուլում Ռուսաստանը պետք է քարոզչական «ահավոր աղմուկ բարձրացներ Եվրոպայում» և, «թուրք-հայկական նոր կոտորածները» կանխելու անհրաժեշտությունից ելնելով, որպես փրկարար ու հաշտարար մտներ Հայաստան և այնտեղ հաստատեր խորհրդային վարչակարգ՝ դրանով իսկ «փրկեր հայ ժողովրդին»: Դավադիր այս փաստաթուղթը՝ որպես Քարոզչության և գործողության խորհրդի նախագահության «Եզրակացություն», սեպտեմբերի 19-ին ուղարկվում է Կոմինտերնի գործկոմի նախագահություն և ՌԿ(բ)Կ Կենտկոմ, պատճենը՝ Խորհրդային Ռուսաստանի արտգործժողկոմատ[1]:

Պետք է ենթադրել, որ «Եզրակացությունն» արժանացել է խորհրդային ամենաբարձր ղեկավարության հավանությանը, այլապես ինչով բացատրել, որ նրա երևան գալուց ընդամենը մի քանի օր անց քեմալական Թուրքիան դավադրաբար, առանց պատերազմ հայտարարելու, լայնածավալ ռազմական գործողություններ սկսեց Հայաստանի դեմ: Օրինաչափ «զուգադիպությամբ»՝ 1920թ. սեպ-

[1] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 281–286, ՀԱԱ, ֆոնդ 113, ցուցակ 3, գործ 7, թ. 1–3:

տեմբերի 29-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշում է «Փողով և զենքով փաստացի օգնություն ցույց տալ քեմալականներին»[1]:

Թուրք-հայկական պատերազմի թեժ պահին՝ 1920 թ. հոկտեմբերի սկզբին, Վ. Լենինին ուղղված նամակում ՌՍԴԽՀ ազգությունների գործերի ժողկոմ Ի. Ստալինը նշում է. «Գտնում եմ, որ թուրքերի առաջխաղացումը (Հայաստանի տարածքում – Կ.Խ.) ջուր է լցնում մեր ջրաղացին»[2]: Իսկ նույն թվականի նոյեմբերի վերջերին Մոսկվա՝ Գ. Չիչերինին (պատճենը՝ Վ. Լենինին) ուղղված հեռագրում խոսելով Վրաստանի հնարավոր խորհրդայնացման հարցի շուրջ, Ի. Ստալինը միանշանակ է արտահայտվում. «Տարբերակներից լավագույնը՝ Թուրքիայի հաջող պատերազմն է Վրաստանի հետ, ինչը Ռուսաստանին հնարավորություն կտա միջամտելու միջնորդի և փրկարարի կեցվածքով»[3]:

Այդ «տարբերակի» մասին Ի. Ստալինը հուշում է նաև Գ. Օրջոնիկիձեին: Նոյեմբերի 28-ին վերջինիս ուղղված նամակում նա նշում է. «Պետք է նրանց (քեմալականներին – Կ.Խ.) հրահրել Վրաստանի դեմ և փորձել՝ կգնա՞ն նրանք արդյոք Վրաստանի դեմ»[4]: Իրադարձությունների հետագա զարգացումը հաստատում է, որ նշված «տարբերակը» խորհրդային ղեկավարության կողմից լավագույնը ճանաչվեց Հայաստանը խորհրդայնացնելու քաղաքականության համար:

Այդուհանդերձ, թուրք-հայկական պատերազմում քեմալականների ռազմական շոշափելի հաջողություններն անհանգստաց-

[1] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ. 106:

[2] Казанджян Р., Советско-кемалистские отношения в 1920 г. и вопрос Армении в свете секретных документов московских архивов, «Страны и народы Ближнего и Среднего Востока», Ер., 2002, вып. 21, с. 105:

[3] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ. 142:

[4] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 363:

նում էին Խորհրդային Ռուսաստանին: 1920 թ. հոկտեմբերի 14-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն որոշում է հաստատել ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինի առաջարկությունները Հայաստանի նկատմամբ խորհրդային քաղաքականության վերաբերյալ: Դրանք են. «1. Համաձայնել Հայաստանում խորհրդային իշխանություն հաստատելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտության մասին Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի կարծիքին, 2. նրան քաղաքական օգնություն ցույց տալ թուրքերի առաջխաղացումը կասեցնելու համար և 3. պաշտպանել նոր, խորհրդային կառավարությունը»[1]:

Քաղբյուրոյի այս որոշումը Հայաստանի առաջին Հանրապետության դատավճիռն էր, Հայաստանը պետք է խորհրդայնացվեր: Ուստի անիմաստ էին դառնում Երևանում ընթացող հայ-ռուսական բանակցությունները (Բորիս Լեգրանի ղեկավարած ՌՍԴԽՀ պատվիրակությունը Երևան էր ժամանել հոկտեմբերի 11-ին) և դրանց արդյունքում հոկտեմբերի 28-ին Ռուսաստանի և Հայաստանի պատվիրակությունների կողմից նախաստորագրված «Եզրափակիչ որոշման արձանագրությունը» ու նրան կից «Հաշտության պայմանագրի» նախագիծը[2]: Դրանք դատապարտված էին մնալու թղթի վրա, և մնացին, որովհետև արմատապես հակասում էին քաղբյուրոյի հոկտեմբերի 14-ի վերը նշված որոշմանը:

Նախաստորագրված հայ-ռուսական փաստաթղթերը 1920 թ. նոյեմբերի 4-ին քննարկվեցին և մերժվեցին Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի քաղբյուրոյի և ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի Բաքվում հրավիրված համատեղ նիստում: Վերջինիս մասնակցում էր նաև Ի. Ստալինը, որը ՌԿ(բ)Կ Կենտկոմի հատուկ հանձնարա-

[1] Հայաստանը… փաստաթղթերում, էջ 456:
[2] Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ., էջ 316–320:

րականով և մեծ լիազորություններով հոկտեմբերի վերջերին ժամանել էր տարածաշրջան՝ «կովկասյան հարցերին» ծանոթանալու և հրատապ լուծումներ գտնելու համար: Խնդրի կապակցությամբ նոյեմբերի 16-ին Մոսկվա՝ Գ. Չիչերինին (պատճենը՝ Վ. Լենինին) հղած հեռագրում Ի. Ստալինը բացահայտում է իր դիրքորոշումը. հոկտեմբերի 28-ի պայմանագրի նախագծի մասին «խոսելն ավելորդ է, այն ետ է մնացել իրադարձություններից այնպես, ինչպես ետ է մնացել (Հայաստանի վրայով – Կ.Խ.) տարանցման պահանջը»[1]:

Այո՛, Ի. Ստալինը իրավացի էր՝ մինչ Բ. Լեգրանը Բաքվում փորձում էր հավանության արժանացնել Հայաստանի հետ նախաստորագրած պայմանագիրը, թուրքական բանակը հոկտեմբերի 30-ին արդեն գրավել էր Կարսը:

Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի անհուսալի դրությունը Գ. Չիչերինին ստիպում է 1920 թ. նոյեմբերի 6-ին հերթական անգամ հեռագրել Ի. Ստալինին. «Անհրաժեշտ է փրկել Հայաստանը նրա խորհրդայնացման գնով»: Գ. Չիչերինը հույս է հայտնում, որ եթե այնտեղ գոնե մեկ ռուս զինվոր լինի, թուրքերը չեն համարձակվի շարժվել Հայաստանի խորքերը[2]:

Նման վտանգը չէր բացառվում: Նոյեմբերի 8-ին, երբ թուրքական զորքերն արդեն գտնվում էին Ալեքսանդրապոլում (Գյումրի), քեմալական Թուրքիայի արտգործնախարարության բարձրաստիճան պաշտոնյա Ահմեդ Մուխթարը հետևյալ դիմումն է հղում քեմալական բանակի Արևելյան ռազմաճակատի հրամանատար գեներալ Քյազիմ Կարաբեքիրին. «Հայաստանը գտնվում է խիստ լայնատարած մուսուլմանական մի հողատարածքի վրա, հետևապես՝ անհ-

[1] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ. 139:

[2] Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., էջ 346–347:

բաժեշտ է նրան ինչպես քաղաքականապես, այնպես էլ փաստակա-նորեն ոչնչացնել: Հարկ է հաշվի առնել, որ քաղաքական ընդհանուր իրադրությունն ու մեր հզորությունը բարենպաստ են այդ մտադ-րությունն իրականացնելու համար»[1]: Ինչպես ասում են՝ բացատ-րություններն ավելորդ են, և միայն այս փաստը բավարար է արձա-նագրելու համար, որ միանշանակ չեն այն պնդումները, թե թուրքե-րը, միևնույնն է՝ լիներ թե չլիներ Խորհրդային Ռուսաստանի գործո-նը, խնայելու էին Հայաստանը՝ այն սահմաններում, որ գծվել էին Բաթումում, իսկ այնուհետև նաև Ալեքսանդրապոլում:

1920 թ. նոյեմբերի 11-ին Խորհրդային Ռուսաստանի կառա-վարությունը հանդես էր եկել հայտարարությամբ, որում պատրաս-տակամություն էր հայտնել միջնորդի դեր ստանձնել պատերազմող կողմերի միջև և այդ նպատակով «ռազմական գործողությունների շրջան ուղարկել իր լիազոր ներկայացուցիչ Մդիվանիին»: Ժամանե-լով տարածաշրջան՝ Պ. (Բուդու) Մդիվանին նախ այցելում է Կարս և հանդիպումներ ունենում Կարաբեքիրի հետ, իսկ այնուհետև՝ Եր-ևան: Այստեղ, Հայաստանի Հանրապետությունում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի հետ միասին, նա նոյեմբերի 19-ին հանդիպում է վարչապետ Համո Օհանջանյանի և զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանի հետ: Բանակ-ցությունների ընթացքում Ռուսաստանի ներկայացուցիչները նշում են, որ խորհրդային ղեկավարության միջնորդությունը կարող է ի-րական արդյունքներ տալ միայն Հայաստանում ռուսական բանակի առկայության պայմաններում, և որ քեմալականները «Հայաստանի համար Ռուսաստանի հետ չեն պատերազմի»: Մդիվանին ավելաց-նում է նաև, որ «Հարկավոր է դա վերջապես գիտակցել և անմիջա-

[1] Սարգսյան Ե., Դավադիր գործարք. Հայաստան–Ռուսաստան–Թուրքիա, Եր., 1994, էջ 170–171:

պես ընդունել խորհրդայնացումը», այդ դեպքում՝ հայ ժողովուրդը կփրկվի «վերջնական ոչնչացումից»[1]:

Հայաստանի Հանրապետության արտաքին և ներքին ծանր դրությունը 1920թ. նոյեմբերի կեսերին Հայաստանի ներքաղաքական կյանքում առաջ բերեց քաղաքական որոշ վերաձևումների անհրաժեշտություն: Դրանք թեև իրականացվեցին, սակայն մեծ հաշվով արմատական որևէ փոփոխություն չմտցրին հանրապետության որդեգրած արտաքին քաղաքական կուրսում: ՀՀ Խորհրդարանի նոյեմբերի 23-ի արտակարգ նիստին քննարկվեց և ընդունվեց Հ. Օհանջանյանի կառավարության հրաժարականը, նոր նախարարապետ ընտրվեց Սիմոն Վրացյանը, նոյեմբերի 24-ին հաստատվեց նաև վերջինիս կողմից ներկայացված կառավարության կազմը: Նրանում թեև ընդգրկվեցին քաղաքական տարբեր կողմնորոշումներ ունեցող գործիչներ, որոնց մի մասը ներկայացվում է որպես «ռուսական կողմնորոշման ջատագովներ» (Դրաստամատ Կանայան (Դրո), Հ. Տերտերյան), սակայն Ս.Վրացյանի հայտարարությունները և ձեռնարկած քայլերը հուշում էին, որ ՀՀ արտաքին քաղաքական գիծը գրեթե ոչնչով չէր տարբերվելու Հ. Օհանջանյանի կառավարության գծից: Նորանշանակ կառավարության արտաքին քաղաքական առաջին քայլը հանդիսացավ՝ Թուրքիայի Ազգային մեծ ժողովին ուղղված նամակը՝ հաշտության երկկողմանի բանակցություններ սկսելու առաջարկությամբ: Թուրքերը հենց դրան էլ սպասում էին, նրանց կողմից առաջարկությունն ընդունվեց անմիջապես և նոյեմբերի 24-ին Ալեքսանդրապոլում սկսվեցին հայ-թուրքական հաշտության բանակցությունները:

[1] Բ. Լեգրանի միսիան, փաստաթղթեր, ԲՀԱ, Եր., 1967, N 3, էջ 85–92:

Այսպիսով, ընկնելով քեմալաբոլշևիկյան ռազմադիվանագիտական ուժգին ճնշումների տակ, Հայաստանի իշխանությունները ձգտում էին հայ-ռուսական և հայ-թուրքական բանակցությունների միջոցով ելքեր գտնել դժվարին կացությունից: Սակայն նրանք, կարծես չէին գիտակցում իրավիճակի ողջ լրջությունը, դրսում 1920թ. ամառը չէր, երբ Հայաստանի թե՛ քաղաքական և թե՛ ռազմական դրությունը համեմատաբար կայուն էր, և հնարավոր էր բանակցությունների միջոցով հասնել վիճելի խնդիրների լուծմանը: Ժամանակն անվերադարձ կորսված էր. թուրքական զորքերն իրենց մահաբեր ներխուժման սպառնալիքի տակ էին պահում Հայաստանի սիրտը՝ Արարատյան դաշտավայրը, վերջնականապես երես էր թեքել և իր անզորության մասին հայտնել «քաղաքակիրթ Եվրոպան»: Իսկ Խորհրդային Ռուսաստանը, հատելով իր համբերությունը և մի կողմ թողնելով Հայաստանի հետ անարդյունք և անվերջ թվացող բանակցությունների քաղաքականությունը, անցել էր գործնական «վճռական գործողությունների»:

Քեմալական զորքերի հաղթարշավը Հայաստանի տարածքով շարունակում էր անհանգստացնել խորհրդային իշխանություններին: Նրանց մոտ դեռևս մեծ էր այն մտավախությունը, որ «թուրքերը խորամանկում են, հետապնդում սեփական նպատակները»,- 1920 թ. նոյեմբերին այդ մասին Մոսկվա՝ Գ. Չիչերինին և Վ. Լենինին, հաղորդում էր Ի. Ստալինը: Վ. Լենինին ուղղված մեկ այլ հեռագրում Ի. Ստալինը հայտնում է, որ թուրքերի «ձգտումն է՝ ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ»[1]:

Իրադարձությունների նման զարգացումը կանխելու նպատակով Գ. Օրջոնիկիձեն նոյեմբերի երկրորդ կեսին Ի. Ստալինին հայտնում է իր, ՀԿ(բ)Կ Կենտկոմի և Ադրբեջանի հեղկոմի նախա-

[1] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ. 135, 150:

գահ Նարիման Նարիմանովի ընդհանուր կարծիքը. «Այլևս չսպասել և անմիջապես սեպով խրվել (թուրքերի և Ադրբեջանի միջև – Կ.Խ.)»: Օրջոնիկիձեն նշում է նաև, որ դա «միաժամանակ կարագացնի հաջորդ գործողության (խոսքը հավանաբար Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացման մասին է – Կ.Խ.) նախապատրաստումը»: Գ. Օրջոնիկիձեի կողմից առաջ քաշված ծրագրին ծանոթանալուց հետո Ի. Ստալինը խորհուրդ է տալիս նրան «դեռ մի փոքր հետաձգել» և սկսել «այն պահին, երբ մենք հնարավորություն կունենանք իրականացնելու առաջին ու նրանից անմիջապես հետո և երկրորդ գործողությունը»: Հրահանգ տալով Գ. Օրջոնիկիձեին՝ «Առայժմ պատրաստել հեղկոմը (Հայաստանի – Կ.Խ.), որպեսզի այն գտնվի զորքերում», Ի. Ստալինը հուշում է, որ պետք է խորհրդակցի «ծերուկի (Վ. Լենինի – Կ.Խ.) հետ»[1]:

Գ. Օրջոնիկիձեի հետ զրույցի բովանդակության մասին անմիջապես հաղորդելով Մոսկվա՝ Վ. Լենինին, Ի. Ստալինը հայտնում է նաև, որ անձամբ շատ հարցերում «միանգամայն համաձայն է Օրջոնիկիձեի հետ»: Վ. Լենինին տեղեկացնելով, որ ներկայումս առավել վտանգավոր է համարում այն փաստը, որ քեմալականները «ձգտում են ընդհանուր սահման ունենալ Ադրբեջանի հետ»,Ի.Ստալինը դարձյալ առաջարկում է հետաձգել Հայաստանը խորհրդայնացնելու գործողությունը և սկսել այն պահին, երբ հնարավորություն կստեղծվի ռազմական ուժեր կուտակելու նաև Վրաստանի սահմաններին: Այդուհանդերձ, Ի.Ստալինը կարծում է նաև, որ «արժե միգուցե հանդգնել և գործողությունն իրականացնել անհապաղ»: Խուսափելով որոշում ընդունելու ողջ պատասխանատվությունից՝ Վ. Լենինը առաջարկում է հարցը քննարկել քաղբյուրոյում, միաժա-

[1] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ. 144–147:

մանակ առաջարկում Ի.Ստալինին. կա՛մ գործել իրեն՝ Ստալինին, տրված լիազորությունների հիման վրա, կա՛մ էլ վերադառնալ Մոսկվա՝ «Կովկասյան հարցն ամբողջությամբ լուծելու համար»: Ի. Ստալինը նախընտրում է վերջին տարբերակը. Գ. Օրջոնիկիձեին տալով նախապատրաստական աշխատանք վարելու և Մոսկվայից կարգադրություններ սպասելու հանձնարարական, նա շտապում է Մոսկվա՝ քաղբյուրոյի նիստին մասնակցելու նպատակով[1]:

1920 թ. նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոյում Ի. Ստալինը հանդես է գալիս Կովկասի դրության մասին ընդարձակ զեկուցումով: Նույն օրը քաղբյուրոյի կողմից ընդունված որոշման մեջ, որի նախագիծը պատրաստել էր նիստը նախագահող Վ. Լենինը, նշվեց. «Ո՛չ Վրաստանի, ո՛չ Հայաստանի, ո՛չ Պարսկաստանի վրա արշավելու խնդիր չդնել»[2]: Պետք է նշել, որ քաղբյուրոյի որոշումն ուներ ավելի շուտ մարտավարական նշանակություն: Իսկ գործնականում, խորհրդային բարձրաստիճան ղեկավարությանը պետք է որ հայտնի լիներ, որ արդեն նոյեմբերի 25-ին Խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի ռազմահեղափոխական խորհրդի և Հայաստանի հեղկոմի միջև ձեռք բերված համաձայնությամբ, կարմիր բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատարությանն առաջարկվել էր առանց հապաղելու դիվիզիայի 60-րդ բրիգադան շարժել դեպի Դիլիջան, իսկ այնտեղից՝ Երևան[3]:

Խորհրդային իշխանությունները խուսափում էին Կովկասում մեծածավալ ռազմական գործողությունների մեջ ներքաշվելուց, ուստի ձգտելով տպավորություն ստեղծել, թե Հայաստանը խորհրդայնացվում է միմիայն հայ ժողովրդի ցանկությամբ և Հայ-

[1] ՀԱԱ, ՄԺՀ, № 1, գործ 2, թ.148–151:
[2] ՀԱԱ, ֆոնդ 1445, ցուցակ 1, գործ 6, թ. 1:
[3] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 8, գործ 330, թ. 1:

հեղկոմի ուժերով, վերջինիս տրամադրության տակ դրվեց ռուսական կարմիր բանակի շարքերից առանձնացված «Հատուկ խնդիր հետապնդող գունդ (Հայկական)՝… քաղաքական վերջին հրահանգների համաձայն օգտագործելու համար»[1]:

1920 թ. նոյեմբերի 29-ին «Հատուկ գնդի» ուղեկցությամբ ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի կողմից կազմավորված Հայաստանի ռազմահեղափոխական կոմիտեն, բոլշևիկ Սարգիս Կասյանի նախագահությամբ, Ադրբեջանից (Ղազախից) մտնում է Իջևան և «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ» երկիրը հռչակում խորհրդային հանրապետություն[2]:

Տարիներ շարունակ այսպես էր փաստագրում Հայաստանի խորհրդայնացումը խորհրդային պատմագրությունը: Իրականում՝ Հայաստանը հռչակվում էր խորհրդային ոչ թե «ժողովրդի կամքով ու ցանկությամբ», և իբր թե նրա կողմից բարձրացված ապստամբության, այլ՝ միայն Հայաստանի կոմունիստական կուսակցության և Հայհեղկոմի անունից: Վերջինիս ապացույցն է Հայհեղկոմի անդամ Ավիս Նուրիջանյանի նոյեմբերի 30-ի հեռագիրը Գ. Օրջոնիկիձեին. «Մեր ժամանելը (հեղկոմի և կարմիր բանակի մուտքը Հայաստան – Կ.Խ.) ճիշտ ժամանակին էր, որովհետև կազմակերպված գյուղացիները հաջորդ օրը (նոյեմբերի 30-ին – Կ.Խ.), մի խումբ ընկերների գլխավորությամբ, որոնց մենք նախօրոք ուղարկել էինք այդ շրջանում ծպտյալ աշխատանքի, պետք է ապստամբեին»: Ավիսը նշում է նաև, որ իրենք «Ամեն ինչ վերցնում են հաշվառման:

[1] Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի ժողովածու), խմբ. Ա. Մնացականյան, Եր., 1960, էջ 400:

[2] Հեղափոխական կոմիտեները Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու (1920 թ. նոյեմբեր – 1922 թ. հունվար), Եր., 1974, էջ 27:

Ամեն ինչի համար վճարում», խորհուրդ է տալիս՝ «փողը և միջոցները չխնայել»[1]:

Մինչ Մոսկվան երկմտում էր կարմիր բանակի մուտքը Հայաստան արտոնելու հարցում, Գ. Օրջոնիկիձեի կարգադրությամբ նրա զորամասերն արդեն շարժվում էին Հայաստանով: Նոյեմբերի 30-ին Գ. Օրջոնիկիձեն հրահանգավորում է 11-րդ բանակի 20-րդ դիվիզիայի հրամանատար Մ. Վելիկանովին. «Չմոռանաք առաջ շարժվել դեպի Ղարաքիլիսա (Վանաձոր) և գրավել այն, եթե, իհարկե, քաղաքը չի գրավվում թուրքերի կողմից: Մեր զորքերի հնարավոր հանդիպումը թուրքերի հետ կազմակերպեք հանդիսավորությամբ»»[2]:

Պարզ չէ, թե ինչպիսի ընթացք և հետևանքներ կունենար Հայհեղկոմի և կարմիր բանակի ոչ արտոնյալ մուտքը Հայաստանի հյուսիսային շրջանները, եթե այդ նույն ժամանակ Երևանում չընթանային բանակցություններ հայկական իշխանությունների և Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանի միջև: Դրանք Հայաստանը խորհրդային հռչակելու և իշխանությունն օրինական ճանապարհով Ռազմհեղկոմին փոխանցելու վերաբերյալ էին: Ձեռքին ունենալով Հայհեղկոմի և ռուսական զորքերի՝ Հայաստանում գտնվելու խաղաթուղթը՝ Բ. Լեգրանը շտապեց օգտագործել այն՝ հայկական իշխանություններին Հայաստանը խորհրդայնացնելու վերջնագիրն ընդունել տալու համար:

Նոյեմբերի 30-ին տեղեկանալով Բ. Լեգրանից, որ «Հայաստանի հեղկոմը ոտք է դրել Հայաստան և ձեռնարկել նրա խորհրդայնացումը», իսկ կարմիր բանակն էլ շարժվում է դեպի Երևան, հանրապետության կառավարությունը և Հայ հեղափոխական դաշ-

[1] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 5, գործ 367, թ. 1:
[2] Նույն տեղում, թ. 3–4:

նակցության բյուրոն դեկտեմբերի 1-ին ընդունում են վերջնագիրը և առաջադրում «որոշ պայմաններ»[1]: Նախարարներ Դ. Կանայանը և Հ. Տերտերյանը լիազորվում են համապատասխան համաձայնագիր ստորագրել Ռուսաստանի կառավարության ներկայացուցչի հետ:

Ի կատարումն Հայաստանի կառավարության հանձնարարականի՝ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվում է «Համաձայնագիր ՌՍԴԽՀ լիազոր ներկայացուցչի և Հայաստանի կառավարության միջև»: Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Հայաստանը հայտարարվում է «Սոցիալիստական Խորհրդային անկախ Հանրապետություն», նախկին կառավարությունը հեռանում է իշխանությունից, մինչև Ռազմհեղկոմի ժամանումը Երևան այն անցնում է զինվորական հրամանատարությանը՝ Դրոյի և ՌՍԴԽՀ կոմիսար Օ. Սիլինի համատեղ գլխավորությամբ[2]: Վերջիններս էլ, հիմք ընդունելով հայ-ռուսական համաձայնագիրը, նույն օրը՝ դեկտեմբերի 2-ին, ստորագրում են «Հրաման Հայաստանը խորհրդային հանրապետություն հայտարարելու մասին» փաստաթուղթը:

Այսպիսով, 1920 թ. դեկտեմբերի 2-ի Երևանի համաձայնագրով և դրան հետևած «Հրամանով» Հայաստանում տեղի ունեցավ իշխանափոխություն: Հայոց պետականության պատմության մեջ Հայաստանի առաջին Հանրապետությունն իր տեղը զիջեց Հայաստանի երկրորդ՝ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանը:

Դեկտեմբերի 2-ի հայ-ռուսական համաձայնագիրը հետխորհրդային հայ պատմագիտության կողմից թեև արժանացել է քննախույզ ուսումնասիրման և պատմաիրավական տարբեր գնա-

[1] ՀԱԱ, ֆոնդ 1022, ցուցակ 3, գործ 272, թ. 42, 44:

[2] Сборник действующих договоров, М., 1922, № 79, с. 14–15. Տե՛ս նաև՝ Ключников Ю., Сабанин А., Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, часть 3, М., 1928, с. 75–76.

հատականների[1], այդուհանդերձ, մեր կարծիքով, հիմնավոր ուշադրության չի արժանացել այն փաստը, որ համաձայնագիրը հանդիսացավ անդրանիկ միջազգային փաստաթուղթը, որում նշված է հայկական մի շարք տարածքների՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությանն (ՀՍԽՀ) «անվիճելի կերպով» պատկանելու մասին[2]:

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի մի շարք հիմնարար դրույթներ թեև մնացին թղթի վրա և հետագայում անտեսվեցին խորհրդային իշխանությունների կողմից, համաձայնագրի որոշակի նշանակությունը, այնուամենայնիվ, թերագնահատել չի կարելի: Ներքաղաքական տեսակետից դա արտահայտվեց նրանում, որ Հայաստանի կառավարությունն առանց որևէ դիմադրության խաղաղ ճանապարհով հեռացավ իշխանությունից: Դրանով իսկ կանխվեցին դեպի Երևան շարժվող Հայհեղկոմի և կարմիր բանակի զորամասերի հնարավոր բախումները Հայաստանի բանակային և զինված այլ կազմավորումների հետ: Պատահական չէ, որ երկրում հաշտ մթնոլորտը պահպանելու, Հայաստանում իշխանափոխության գործընթացին հանդիսավորություն հաղորդելու նպատակով Հայհեղկոմին դիմավորելու համար նրան «ընդառաջ ուղարկվեցին ավտոմեքենաներ»[3]:

---

[1] Զոհրաբյան Է.Ա., 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Եր., 1997, Գալոյան Գ.Ա., Հայաստանը և մեծ տերությունները 1917–1923 թթ., Խուրշուդյան Լ.Ա., Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Եր., 2002, Խաչատրյան Կ.Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թթ., Եր., 2007, Հմմտ.՝ Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին (Նորագույն ժամանակաշրջան. 1918–1945 թթ.), Եր., 2010, էջ 283–286:

[2] Մանրամասն տե ս Խաչատրյան Կ., Սուքիասյան Հ., Բաղալյան Գ., Հայկական տարածքների բռնակցումը Թուրքիային և Խորհրդային Ադրբեջանին 1920-1930-ական թվականներին, Եր., 2020, էջ 30-43:

[3] ՀԱԱ, ֆոնդ 4033, ցուցակ 2, գործ 1154, թ. 1:

Մեծ էր դեկտեմբերի 2-ի համաձայնագրի նշանակությունը նաև միջազգային արտաքին քաղաքական տեսակետից: Համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը և Հայաստանը դառնում էին դաշնակից պետություններ: Վերջինս լուրջ կռվան էր Հայաստանում գտնվող թուրքական բանակի հնարավոր առաջխաղացման դեռևս չվերացած վտանգը կանխելու, «Մեծ Թուրանի» ճանապարհին պատնեշ ստեղծելու համար: Ուստի ամենևին էլ պատահական չէ, որ Երևանի հայ-ռուսական համաձայնագիրը Թուրքիայի «հավանությանը» չարժանացավ[1]:

Երևանի հայ-ռուսական համաձայնագրի ստորագրումից և Հայաստանի խորհրդայնացումից մի քանի ժամ անց՝ դեկտեմբերի 3-ի գիշերը, այլևս գոյություն չունեցող Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված հայկական պատվիրակությունը նախկին վարչապետ Ալեքսանդր Խատիսյանի գլխավորությամբ Ալեքսանդրապոլում ստորագրում է հայ-թուրքական հաշտության պայմանագիր: Թուրքիայի կողմից ՀՀ-ին ռազմական սպառնալիքի ներքո պարտադրված պայմանագրի համաձայն՝ պետությունների սահմանն անցնելու էր Արփաչայ և Արաքս գետերի հունով, Հայաստանը կորցնում էր շուրջ 21.000 քառ. կմ տարածք. Կարսի մարզը և Սուրմալուի գավառը անցնում էին Թուրքիային, Նախիջևանը, Շարուրը և Շահթախթին հայտարարվում էին Թուրքիայի հովանավորության ներքո գտնվող տարածքներ, որտեղ հանրաքվեի միջոցով պետք է հաստատվեր հատուկ վարչություն: Կնքված պայմանագրով Հայաստանը զրկվում էր ընդհանուր պարտադիր զինվորական ծառայություն մտցնելու և բանակ պահելու իրավունքից, կրելու էր ներքին ինքնուրույնության զգալի սահմանափա-

[1] Ավետիսյան Հ.Ա., Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 353:

կումներ և այլն[1]: Ինչպես իրավացիորեն նշում է խորհրդային պատմաբան Ն. Ռուբինշտեյնը, Ալեքսանդրապոլի «պայմանագիրն ակնառու կերպով բնութագրում էր Անդրկովկասում քեմալականների թալանչիական, զավթողական նկրտումները»[2]:

Հայ ժողովրդի համար նվաստացուցիչ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ստորագրման իսկ պահից օրինական չէր և մնաց լոկ որպես դիվանագիտական փաստաթուղթ՝ պատմաբանների և մասնագետների կողմից տարբեր մեկնաբանությունների և հիմնականում խիստ բացասական որակավորումների արժանանալու համար:

Այսպիսով, քեմալաբոլշևիկյան ռազմաքաղաքական ուժգին ճնշումների տակ Հայաստանի առաջին Հանրապետությունը դադարեց գոյություն ունենալուց: Ժամանակի միջազգային հարաբերություններում և տարածաշրջանում ստեղծված քաղաքական բարդ իրավիճակում, Հայաստանի արևմտյան դաշնակիցների դատապարտելի անգործության, Խորհրդային Ռուսաստանի որդեգրած արևելյան քաղաքականության, որը հիմնված էր քեմալական Թուրքիայի հետ սերտ համագործակցության վրա, Խորհրդային Ադրբեջանի՝ թշնամական դիրքորոշման պայմաններում, Հայաստանի խորհրդայնացումն իրոք որ «ժամանակի խնդիր էր»: Եթե այն իրականություն չդարձավ դեռևս 1920 թ. մայիսին, իրականացվեց նոյեմբերի վերջին – դեկտեմբերի սկզբին: Չիրականացվեր այդ ժամանակ՝ անկասկած, հայ ժողովրդի համար ավելի մեծ կորուստներով իրականություն կդառնար որոշ ժամանակ անց: Նշվածի օգտին է վկայում նաև տարածաշրջանում ռազմաքաղաքական իրադար-

[1] Հայաստանը… փաստաթղթերում, էջ 683–687:

[2] Рубинштейн Н.Л., Внешняя политика Советского государства в 1921–1925 гг., М., 1953, с. 62.

ձությունների հետագա ընթացքը՝ 1921 թ. փետրվարի վերջին՝ Վրաստանի Հանրապետության, հուլիսի սկզբին՝ Զանգեզուրի, և դրանով իսկ ամբողջ Անդրկովկասի խորհրդայնացման փաստը:

СОВЕТИЗАЦИЯ АРМЕНИИ В КОНТЕКСТЕ АРМЯНО-РОССИЙСКО-ТУРЕЦКИХ ОТНОШЕНИЙ В 1920 ГОДУ

Карен ХАЧАТРЯН
Институт истории НАН РА

Ключевые слова: Грузия, Азербайджан, Армения, независимые государства, Г. Чичерин, Вудро Вильсон, советские власти, страны Антанты.

В статье на основе архивных документов и материалов, историографической литературы изучается и освещается процесс советизации Республики Армения в контексте армяно-российских, армяно-турецких и российско-турецких военно-политических отношений второй половины 1920 г.

Показывается, что в сложившихся в международных отношениях и в регионе сложных военно-политических условиях, в условиях большевистско-кемалистского сотрудничества, предосудительного бездействия западных союзников Республика Армения потерпела роковое поражение в развязанной осенью 1920 г. кемалистами турецко-армянской войне, а затем была советизирована Советской Россией.

SOVIETIZATION OF ARMENIA IN THE CONTEXT OF ARMENIAN-RUSSIAN-TURKISH RELATIONS IN 1920

Karen KHACHATRYAN
Institute of history of the NAS RA

Keywords: Georgia, Azerbaijan, Armenia, independent states, G. Chicherin, Woodrow Wilson, Soviet authorities, the Entente countries

The article studies and highlights the process of Sovietization of the Republic of Armenia in the context of the Armenian-Russian, Armenian-Turkish, and Russian-Turkish military-political relations of the second half of 1920 on the basis of archival documents and materials, as well as historiographical literature.

It is shown that in the complex military and political conditions prevailing in international relations and in the region, in the conditions of Bolshevik-Kemalist cooperation and the reprehensible inaction of the Western allies, the Republic of Armenia suffered a fatal defeat in the Turkish-Armenian war unleashed by the Kemalists in the autumn of 1920, and then was Sovietized by Soviet Russia.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՃԱՆԱՉԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՊԱՏՄԱԻՐԱՎԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Արմեն ՄԱՐՈՒՔՅԱՆ
ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, Թուրքիա, Արևմտյան Հայաստան, միջազգային ճանաչման գործընթաց, խորհրդարանական բանաձևեր:

Անոտացիա: Պետության կողմից որևէ էթնիկ, ռասայական կամ կրոնական խմբի նկատմամբ իրագործված ցեղասպանության հանցագործության ճանաչում կարող է համարվել ոչ միայն օրենսդիր մարմնի կողմից ընդունված բանաձևի, հայտարարության կամ օրենքի ընդունումը, այլև իշխանության մյուս ճյուղերի՝ գործադիր իշխանության կողմից կայացված որոշման կամ դատական իշխանության ատյանների կողմից կայացված դատական ակտի ընդունման եղանակով:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում կարևորելով տարբեր երկրների խորհրդարանների ընդունած բանաձևերն ու հայտարարությունները, այդուհանդերձ, պետք է փաստենք, որ դրանք տվյալ երկրների գործադիր իշխանության համար ունեն խորհրդանշական բնույթ և պարտադիր չեն: Այդ իսկ պատճառով հարկավոր է դիվանագիտական և լոբբիստական ուղղություններով շարունակել աշխատանքները, որպեսզի Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների խորհրդարանների բանաձևերն ու հայտարարությունները վերածվեն օրենքների՝ գործնա-

կան հիմք դառնալով այդ հարցում տվյալ երկրների կողմից վարվող քաղաքականության համար: Զուգահեռաբար հարկավոր է շարունակել Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու ուղղությամբ տարվող աշխատանքները, այնպես, ինչպես դա արդեն իսկ տեղի է ունեցել Շվեյցարիայում, Սլովակիայում, Հունաստանում, Կիպրոսում, Շվեդիայում և Բելգիայում:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման առաջին լուրջ քայլը պետք է համարել հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականության հենց իրագործման պահին Անտանտի տերությունների՝ Ռուսաստանի, Ֆրանսիայի ու Մեծ Բրիտանիայի գործադիր իշխանությունների կողմից կայացված միաժամանակյա որոշումը՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագիրը, որով հայերի զանգվածային սպանությունների պատասխանատվությունը դրվում էր թուրքական իշխանությունների վրա՝ դրանց տալով հանցագործություն որակումը, որն ուղղված էր «մարդկության և քաղաքակրթության դեմ»[1]: Հետագայում այս ձևակերպումը ՄԱԿ-ի կողմից նույնականացվեց ցեղասպանություն՝ «գենոցիդ» եզրույթի հետ:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսի զինադադարով Առաջին աշխարհամարտում Օսմանյան կայսրության պարտության ճանաչումից հետո՝ նոյեմբերի 4-ին, օսմանյան խորհրդարանը չեղյալ համարեց երիտթուրքական կառավարության կողմից ընդունված և ապօրինաբար գործադրված 1915 թ. մայիսի 30-ի «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը[2], որը երիտթուրքա-

[1] Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства, 1878-1917, М.-Л. 1931-1940, серия III, т. 7, ч. 2, с. 252.

[2] Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում

կան վարչակարգի համար «իրավական հիմք» ծառայեց հայերի զանգվածային բռնագաղթն ու բնաջնջումն իրականացնելու համար: Այնուհետև նոյեմբերի 18-ի նիստում հայերի զանգվածային կոտորածների նկատմամբ հստակ դիրքորոշում չհայտնելու և կրավորական կեցվածք որդեգրելու հետևանքով թուրքական նոր կառավարությունն իր պարտականությունների կատարմանն անցնելու համար չստացավ օսմանյան խորհրդարանի վստահության քվեն[1]: Ավելին՝ պատերազմի ընթացքում նախկին երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունները, այդ թվում՝ հայերի զանգվածային կոտորածները հետաքննելու նպատակով ստեղծվեց խորհրդարանական հատուկ Հինգերորդ հանձնաժողովը, որի կազմակերպած քննությունների արդյունքում կազմված նյութերը հետագայում փոխանցվեցին երիտթուրք պարագլուխների գործերը քննող թուրքական ռազմական տրիբունալներին[2]: Օսմանյան խորհրդարանի նոյեմբերի 4-ի և 18-ի նիստերում կայացված որոշումները, ինչպես նաև հայերի զանգվածային կոտորածները հետաքննող հատուկ հանձնախմբի ստեղծումն ու դրա գործունեությունը հստակ վկայում են այն մասին, որ այդ երկրի օրենսդիր մարմինն անուղղակիորեն ճանաչել է հայերի զանգվածային բնաջնջման՝ ցեղասպանության փաստը:

Օսմանյան խորհրդարանի կողմից 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին կայացրած այս որոշումներից հետո ստեղծված թուրքական ռազմական տրիբունալի 1919 թ. հուլիսի 5-ի դա-

(նյութերի ժողովածու), կազմող, պատ. խմբ., առաջաբանի հեղինակ Լ. Բարսեղյան,Եր., ՀՀ ԳԱԱ, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2005, էջ 148:

[1] Տատրեան Վ., Հայկական ցեղասպանութիւնը խորհրդարանային և պատմագիտական քննարկումներում, Ուտրրթաուն, «Պայքար»,1995, էջ 42:

[2] Տերնոն Ի., Անպատժելիություն, վրեժ և ժխտում. հայկական ցեղասպանությունը միջազգային ատյանների առջև, Եր., «Նահապետ», 2003, էջ 20:

տավճռով երիտթուրք պարագլուխները մեղավոր էին ճանաչվում պատերազմի ընթացքում հայերի զանգվածային կոտորածներ կազմակերպելու և այլ հանցանքների մեջ՝ հեռակա կարգով դատապարտվելով մահապատժի[1]: Այսպիսով, հայերի զանգվածային կոտորածների՝ ցեղասպանության փաստն, ըստ էության, թեև անուղղակիորեն, բայց ճանաչվում էր թուրքական պետության ոչ միայն օրենսդիր, այլև դատական իշխանության կողմից: Այս հանգամանքներից ելնելով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման համար մղվող քարոզչական աշխատանքներում մենք պետք է դադարենք ասել, թե պայքարում ենք, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչվի նաև հանցավոր պետության՝ Թուրքիայի կողմից, այլ շեշտենք, որ ներկայիս Թուրքիան պետք է վերահաստատի թուրքական պետության կողմից 1918-1919թթ. կատարված Հայոց ցեղասպանության ճանաչման փաստերը: Տեղեկատվական պատերազմի տրամաբանությունից բխող այս պնդումներով թուրքական կողմին կպարտադրվի պատասխանողի դերում տեղափոխվել Օսմանյան կայսրության խորհրդարանի ընդունած որոշումների և թուրքական ռազմական տրիբունալների կայացրած որոշումների տիրույթ և պարզաբանումներ տալ այդ փաստերի կապակցությամբ: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման պայքարում մարտավարական այս նոր մոտեցումը միջազգային հանրության համար աննկատ չի անցնի, քանզի ակնհայտ ի ցույց կդրվի այն իրողությունը, որ եթե նախկինում թուրքական պետությունը ճանաչել է հայերի զանգվածային բնաջնջման փաստը, ապա հետագայում այդ հան-

[1] Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1988, էջ 126:

ցագործության համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով որդեգրել է Հայոց ցեղասպանությունը ժխտելու և նենգափոխելու քաղաքականությունը:

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի 50-րդ տարելիցից՝ 1965 թվականից՝ Ուրուգվայի խորհրդարանի ընդունած որոշումով[1] մեկնարկեց հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործությունը ճանաչելու ու դատապարտելու միջազգային գործընթացի խորհրդարանական փուլը, որը դրսևորվեց տարբեր պետությունների օրենսդիր մարմինների կամ դրանց պալատների կողմից ընդունված հայտարարությունների և բանաձևերի միջոցով:

Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած պետություններին պայմանականորեն կարելի է բաժանել հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը պաշտոնապես և ոչ պաշտոնապես ճանաչած երկրների խմբերի: Պաշտոնապես ճանաչած պետությունները նրանք են, որոնց օրենսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ճանաչման գործընթացը ինչպես ընթացակարգային, այնպես էլ բովանդակային առումներով հասցված է իր տրամաբանական ավարտին: Ինչպես հայտնի է, որոշ երկրների խորհրդարաններ երկպալատ են, և եթե Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու որոշումը կայացրել է պալատներից միայն մեկը, ուրեմն՝ ընթացակարգային առումով գործընթացն անավարտ է, և գործ ունենք դեռևս ոչ պաշտոնական ճանաչման հետ: Կան նաև դեպքեր, երբ միապալատ

[1] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, Documents & Declarations compiled and with an introduction by H. Sassounian, Glendale, 2015, p. 72.

խորհրդարանների հանձնաժողովներում կայացվել են համապատասխան որոշումներ, սակայն խորհրդարանի լիագումար նիստում այն դեռևս չի հաստատվել:

Ընթացակարգային խնդիրներից բացի, առկա է նաև հարցի բովանդակային կողմը: Որևէ պետության օրենսդիր մարմնի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը չի կարող համարվել պաշտոնական, եթե հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը խորհրդարանի ընդունած բանաձևում հստակ չի որակվում որպես ցեղասպանություն, այլ փոխարենն օգտագործվում են այլ եզրույթներ կամ տրվում են ուրիշ բնութագրումներ:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետություններից դեռևս միայն երեք երկրների խորհրդարաններն են այդ փաստն ամրագրել օրենքով՝ Ֆրանսիան՝ 2001 թ.[1], Ուրուգվայը՝ 2004 թ.[2], և Արգենտինան՝ 2004 և 2007թթ.[3]: Շվեյցարիայի, Սլովակիայի, Հունաստանի ու Կիպրոսի խորհրդարաններն էլ, բանաձևերով ճանաչելով ու դատապարտելով Հայոց ցեղասպանությունը[4], այնուհետև ըն-

---

[1] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 818.

[2] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 73.

[3] Argentina Law, http://www.armenian-genocide.org/Affirmation.300/ current_ category.7/affirmation_ detail.html, տե՛ս նաև http://www.armenian-genocide.org /Affirmation.374/current_category.7/affirmation_ detail.html

[4] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, документы и комментарии. Составитель, отв. редактор, автор предисловия и комментария д.и.н., профессор Ю.Г. Барсегов, т. 2, ч. 2, М., 2005, с. 40, 61, տե՛ս նաև The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 54, Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, կազմող Վ. Քոչարյան, Եր., 2014, էջ 21; Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Եր., 2001, էջ 29; Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 221-222:

դունեցին օրենքներ, որոնցով իրենց երկրներում քրեականացրել են ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը[1]: Բելգիայում և Շվեդիայում նույնպես մարդկության դեմ կատարված հանցագործությունների և ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության, ժխտման համար 45 հազար եվրոյից մինչև մեկ տարվա ազատազրկման պատասխանատվություն է սահմանված[2]: Ֆրանսիայի խորհրդարանը երեք անգամ՝ 2006 թ., 2012 թ. և 2016 թ. ընդունեց ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքներ[3], սակայն երկրի Սահմանադրական խորհուրդը դրանք ճանաչեց հակասահմանադրական[4]: Ռուսաստանի Պետդումայում նույնպես օրինագիծ պատրաստվեց Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու վերաբերյալ, որն օրենսդիր մարմնի քննարկման չներկայացվեց[5]:

Միջկառավարական ու ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումների հետ մեկտեղ տարբեր պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերը հանդիսանում են հայ ժողովրդի

---

[1] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., 2015, էջ 187-189, 195:

[2] Վարդանյան Վ., Հայոց ցեղասպանության ճանաչման, դատապարտման և հետևանքների վերացման իրավական հիմնախնդիրները, Եր., 2017, էջ 22:

[3] Մարուքյան Ա., Պատմություն և իրավունք, Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ ուղղված Պիեռ Նորայի փաստարկները, «Վէմ» համահայկական հանդես, 2013, 2(42), էջ 12-13:

[4] Մարուքյան Ա., Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, էջ 186-194:

[5] Նույն տեղում, էջ 73:

նկատմամբ իրագործված այդ հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի հիմքը: Այս առումով չափազանց կարևոր է, թե տարբեր պետությունների օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերը Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից զատ ինչ բովանդակություն են պարունակում: Տարբեր երկրների խորհրդարանների կողմից ընդունված փաստաթղթերում պատմական փաստերի ստույգ ներկայացումը, կատարված իրադարձությունների ճիշտ գնահատականներն ու որակումները, ինչ խոսք, բարձրացնում են դրանց կշիռն ու նշանակությունը: Հակառակ պարագայում դրանք նմանվում են հերթական ձևական փաստաթղթերի, որոնք թեև քանակական առումով ավելացնում են Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների թիվը, սակայն որակական առումով չեն նպաստում այդ հանցագործության պատշաճ դատապարտմանը և առավել ևս՝ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնմանը:

Ցավոք, խորհրդարանների ընդունած հայտարարություններում ու բանաձևերում կարելի է հանդիպել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության տարբեր որակումների, պատմական փաստերի ոչ ճշգրիտ գնահատականների, երբեմն նկատվում են վիճելի ձևակերպումներ և հակասական դատողություններ: Այդ հանգամանքից ելնելով՝ անհրաժեշտություն է առաջանում որոշակի չափանիշների հիման վրա համալիր բովանդակային և համեմատական վերլուծության ենթարկել Հայոց ցեղասպանության ճանաչման խորհրդարանական փաստաթղթերը՝ վեր հանելով դրանց առավելություններն ու թերությունները:

Քանի որ խոսքն այնպիսի ծանր միջազգային քրեական հանցագործության մասին է, ինչպիսին ցեղասպանությունն է, ապա չափազանց կարևոր է, որ ճանաչող փաստաթղթերում հստակեց-

ված լինեն այդ հանցագործության հանցակազմի տարրերը՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Հայոց ցեղասպանությունը ճանաչող յուրաքանչյուր փաստաթղթի արժեքն ու նշանակությունը պարզ է դառնում հետևյալ հարցերին տրված պատասխանների առկայությունից կամ բացակայությունից՝ ո՞վ է հանցագործության զոհը, ի՞նչ բնույթի հանցագործություն է կատարվել, և ի՞նչ հետևանքներ է այն ունեցել տուժող կողմի վրա, ու՞մ կողմից է իրականացվել հանցագործությունը և ի՞նչ շարժառիթներով ու նպատակներով է առաջնորդվել հանցագործություն կատարող կողմը: Խորհրդարանական փաստաթղթերը գնահատելիս նաև ուշադրության պետք է դարձնել, թե արդյո՞ք անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության այնպիսի փաստական հանգամանքներին, ինչպիսիք են հանցագործության կատարման վայրը, ժամանակը և զոհերի թիվը:

Այս տեսակետից չափազանց կարևոր է այն փաստի ամրագրումը, որ ցեղասպանությունն իրագործվել է զոհ ժողովրդի հայրենիքում՝ Արևմտյան Հայաստանում, ինչի հետևանքով հայերը զրկվել են իրենց բնօրրանի մեծագույն մասից:

Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածի հստակեցումը կարևոր է այնքանով, որ այդ հանցագործության իրագործման ժամանակը չսահմանափակվի միայն Մեծ եղեռնի խորհրդանշական 1915 թվականով: Ինչ խոսք, 1915 թ. հայերի բնաջնջման քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին, սակայն դա բնավ չի նշանակում, որ այդ թվականով հանցագործությունն ավարտվեց և շարունակություն չունեցավ: Հանցագործության կատարման ժամանակահատվածը 1915 թ. սահմանափակելով՝ հանիրավի սահմանափակվում են նաև հանցագործության ծավալները, իսկ հայերի ցեղասպանությունը դիտարկվում է

լոկ Առաջին աշխարհամարտի իրադարձությունների հոլովույթում և այդպիսով առնվազն լղոզվում թուրքական իշխանությունների պատասխանատվությունը, եթե ոչ արդարացվում պատերազմական հանգամանքներով: Հայոց ցեղասպանության իրագործման ժամկետը 1915 թվականով կամ Առաջին աշխարհամարտի տարիներով չսահմանափակելով ամրագրվում է այն իրողությունը, որ տվյալ հանցագործությունը 1918-1923թթ. շարունակվել է նաև երիտթուրքերին փոխարինած քեմալական վարչակարգի կողմից:

Հայոց ցեղասպանության ճանաչման փաստաթղթերում զոհերի թվին անդրադառնալու պարագայում չափազանց կարևոր է, որ նշվի ընդհանուր ընդունելություն ստացած 1.5 մլն. թիվը: Այս հանգամանքը կարևոր է այնքանով, որ, զոհերի այլ թիվ նշելով և այդ հարցում խառնաշփոթ առաջացնելով, պարարտ հող չստեղծվի պատմության կեղծարարների ու Հայոց ցեղասպանության ժխտողների գործունեության համար:

Հանցագործության փաստական հանգամանքների հստակեցումից բացի, խորհրդարանական փաստաթղթերը պետք է գնահատվեն նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցադրումների պատասխանների տեսանկյունից: Ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի ժառանգներին յուրաքանչյուր ընդունված բանաձևում հետաքրքրում են հետևյալ հարցադրումների պատասխանները՝ արդյո՞ք Հայոց ցեղասպանությունը ճանաչող պետությունը բավարարվում է միայն ճանաչումով, թե՞ նաև դատապարտում է այդ հանցագործությունը և թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունը, արդյո՞ք կոչ է արվում Թուրքիային՝ որպես Օսմանյան կայսրության ինքնությունը շարունակող պետության, ճանաչել այդ հանցագործությունը և առերեսվել սեփական պատմության հանցավոր էջերին, և

արդյո՞ք ընդունվում է հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման, այսինքն՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը:

Վերը նշված չափանիշներից ելնելով՝ Հայոց ցեղասպանությունը ճանաչող տարբեր երկրների խորհրդարանների բանաձևերի բովանդակությունների համեմատական վերլուծությունը հնարավորություն է ընձեռում վեր հանելու դրանց միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքների հստակեցման տեսակետից կարևոր է խորհրդարանական բանաձևերում հանցագործությունն իրագործած սուբյեկտների հիշատակումը: Փաստաթղթերից շատերում նշվում է, որ հանցագործությունն իրագործվել է Օսմանյան կայսրության կամ օսմանյան կառավարության կողմից (Լիբանան[1], Կանադա[2], Բելգիա[3], Սլովակիա[4], Չիլի[5], Բոլիվիա[6]): Որոշ պետությունների խորհրդարանների բանաձևերում էլ որպես հանցագործության սուբյեկտ մատնանշվում են ոչ թե թուրքական պետությանը, այլ երիտթուրքական վարչակարգը կամ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը (Գերմանիա[7], Վենեսուելա[1]):

---

[1] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, М., 2003, с. 736:

[2] Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 298:

[3] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 740:

[4] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 61.

[5] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 46:

[6] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 37.

[7] Նույն տեղում, էջ 49:

Թեև հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականության «ցեղասպանություն» որակումով այդ հանցագործության կանխամտածված բնույթն արդեն իսկ ենթադրվում է, այդուհանդերձ որոշ երկրների օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերում լրացուցիչ ընդգծվում է հայերի դեմ կատարված հանցագործության նախապես ծրագրված և ազգայնամոլ գաղափարախոսության՝ պանթուրքիզմի հիման վրա կատարված լինելու հանգամանքը (Արգենտինա[2], Շվեյցարիա[3], Շվեդիա[4], Բոլիվիա[5]):

Խորհրդարանների փաստաթղթերում հանցագործության կատարման վայրին անդրադառնալիս գործածվում են տարբեր աշխարհագրական եզրույթներ: Հիմնականում նշվում է, որ Հայոց ցեղասպանությունն իրագործվել է Օսմանյան կայսրության տարածքում (Շվեյցարիա[6], Շվեդիա[7], Լիտվա[8], Իտալիա[9], Վենեսուելա[10], Ավստրիա[11], Լյուքսեմբուրգ[12]): Որոշ երկրների խորհրդարանների բանաձևերում որպես հայերի ցեղասպանության իրագործման տարածքի անվանում գործածվում է «Անատոլիա» արհեստական

---

[1] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

[2] Նույն տեղում, էջ 31:

[3] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 68.

[4] Նույն տեղում, էջ 62-63:

[5] Նույն տեղում, էջ 37:

[6] Նույն տեղում, էջ 68:

[7] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 793.

[8] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

[9] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 817.

[10] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

[11] Austria Parlament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation. 538/ current_category.7/ affirmation_detail.html

[12] Grand Duchy of Luxembourg Chamber Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation. 459/ currentcategory.7/affirmation_detail.htm

աշխարհագրական անվանումը (Կանադա[1], Գերմանիա[2], Բոլիվիա[3], Դանիա[4]): Նման ձևակերպումների կողքին հանդիպում են այլ պետությունների խորհրդարանների ընդունած փաստաթղթեր, որոնցում հայերի ցեղասպանության իրագործման տարածք է նշվում «Արևմտյան Հայաստան» կամ «Հայաստան» անվանումը (Հայաստան[5], Ռուսաստան[6], Սլովակիա[7], Չիլի[8]):

Որպես հանցագործության կատարման ժամկետ՝ խորհրդարանական բանաձևերում հիմնականում նշվում է Հայոց ցեղասպանության խորհրդանշական տարեթիվը՝ 1915 թ.: Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում էլ հանցագործության կատարման ժամկետի մասին հիշատակումն առհասարակ բացակայում է և միայն ապրիլի 24-ն է նշվում որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Իտալիա[9], Վենեսուելա[10], Հունաստան[11]): Կան պետություններ, որոնց օրենսդիր մարմինների

---

[1] Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 858.

[2] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 49.

[3] Նույն տեղում, էջ 37:

[4] Denmark Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.597/current_ category.7/affirmation_detail.html

[5] ՀՀ Գերագույն խորհուրդ, Հայաստանի Հանրապետության գործող օրենքների ժամանակագրական ժողովածու (1990-1995թթ.), Եր., 1995, էջ 10:

[6] Տե՛ս Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах” от 14 апреля 1995 года, Собрание законодательств РФ, М., 1995, N 17, с. 1497.

[7] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 60 .

[8] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43, 46:

[9] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 56.

[10] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 43:

[11] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 734.

ընդունած փաստաթղթերում Հայոց ցեղասպանության իրագործման ժամկետը սահմանափակվում է Առաջին աշխարհամարտի տարիներով (Շվեյցարիա[1], Լեհաստան[2], Ավստրիա[3]): Միայն Լիբանանի[4], Արգենտինայի[5], Չիլիի[6] և Սլովակիայի[7] խորհրդարանների ընդունած փաստաթղթերում է նշված 1915-1923 թթ., իսկ Ռուսաստանի Պետդումայի 1915թ. ապրիլի 14-ի բանաձևում՝ 1915-1922 թթ.[8]:

Փաստաթղթերում անդրադարձ է կատարվել նաև ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի վրա այդ հանցագործության ունեցած հետևանքներին: Գրեթե բոլոր բանաձևերում ցեղասպանության իրագործումով զոհված հայերի թիվը նշվում է մեկ ու կես միլիոն: Մի քանի երկրների խորհրդարանական փաստաթղթերում ընդգծվում է, որ ցեղասպանության իրագործմամբ հայերը զրկվեցին իրենց նախնիների հողերից, հայրենիքից, ինչպես նաև ունեցվածքից (Կիպրոս[9], Արգենտինա[10], Կանադա[1]): Հատկա-

---

[1] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 68.

[2] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 62.

[3] Austria Parlament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.538/ current _category.7/ affirmation_detail.html

[4] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 736.

[5] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 33.

[6] Հայոց ցեղասպանությունը միջազգային իրավական փաստաթղթերում, էջ 46:

[7] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 61.

[8] Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации “Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах” от 14 апреля 1995 года.

[9] Հայոց ցեղասպանություն. Աշխարհի տերությունները, ազգային խորհրդարանները և միջազգային կազմակերպությունները դատապարտում են և ճանաչում, էջ 221:

[10] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 34.

նշական է, որ որոշ երկրների խորհրդարաններ իրենց ընդունած բանաձևերում ոչ միայն ընդունել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունը, այլև սատարել են հայ ժողովրդին այդ իրավունքների վերականգնման պայքարում (Կիպրոս[2], Արգենտինա[3], Վենեսուելա[4], Չիլի[5], Բոլիվիա[6]):

Եվրամիության անդամ որոշ պետությունների խորհրդարանների ընդունած բանաձևերում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման անհրաժեշտությունը դիտարկվում է Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու հարցի համատեքստում (Իտալիա[7], Շվեդիա[8], Նիդերլանդներ[9]): Որոշ երկրների խորհրդարաններ էլ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտարկվում է հայ-թուրքական հարաբերությունների հաստատման ու զարգացման համատեքստում (Բելգիա[10], Շվեյցարիա[11], Գերմանիա[12]): Դրանից ելնելով՝ վերը նշված

---

[1] Геноцид армян. Ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 858.

[2] Բարսեղյան Լ., Հայոց ցեղասպանության հրապարակայնորեն դատապարտման և ճանաչման ժամանակագրություն (1915-2000 թթ.), Եր., 2001, էջ 29:

[3] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 23.

[4] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 76.

[5] Նույն տեղում, էջ 44:

[6] Նույն տեղում, էջ 38:

[7] Նույն տեղում, էջ 56:

[8] Նույն տեղում, էջ 67:

[9] Նույն տեղում, էջ 55:

[10] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 1, с. 740:

[11] Նույն տեղում, т. 2, ч. 2, с. 42.

[12] Նույն տեղում, էջ 62:

եվրոպական երկրների խորհրդարաններն իրենց բանաձևերն ավարտում են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Թուրքիային ուղղված կոչերով:

Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում դատապարտվում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը և պատմական փաստերի նենգափոխման գործելաոճը՝ ընդգծելով, որ դա կարող է հանգեցնել նման հանցագործությունների կրկնությանը (Արգենտինա[1], Կանադա[2], Շվեյցարիա[3], Սլովակիա[4], Գերմանիա[5], Բոլիվիա[6], Դանիա[7]):

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների անցկացումից հետո էլ հայ ժողովրդի դեմ իրագործված հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ տարվող աշխատանքները չդադարեցին: Սփյուռքի համայնքները և հայկական լոբբիստական կազմակերպությունները շարունակեցին տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերի ընդունման ուղղությամբ իրենց աշխատանքները: Այդ աշխատանքների արդյունքում որոշ երկրների խորհրդարաններ երկրորդ անգամ բանաձևեր ընդունեցին Հայոց ցեղասպանության վերաբերյալ, 2016 թ. հունիսի 2-

---

[1] Argentina Senate Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation. 335/ current_category.7/ affirmation_detail.html

[2] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2,ч. 1, с. 832-833.

[3] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 68.

[4] Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества, т. 2, ч. 2, с. 61.

[5] Նույն տեղում, էջ 65:

[6] The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 39:

[7] Denmark Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.597/ current_category.7/affirmation_detail.html

ին Գերմանիայի Բունդեսթագը[1], իսկ 2019 թ. ապրիլի 10-ին Իտալիայի Պատգամավորների պալատն ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող ու դատապարտող երկրորդ բանաձևերը[2], որոնց բովանդակությունը շահեկանորեն տարբերվում էր նախկինում ընդունված փաստաթղթերի տեքստերից: Այս ժամանակահատվածում հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը դատապարտեցին նաև նոր երկրների խորհրդարաններ, որոնց թվում՝ 2017 թ. հունվարի 26-ին Դանիայի[3], իսկ ապրիլի 25-ին Չեխիայի Սենատի[4] ընդունած բանաձևերն էին Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման վերաբերյալ: 2018 թ. փետրվարի 22-ին[5] և 2019 թ. հունիսի 6-ին[6] Նիդերլանդների խորհրդարանը Հայոց ցեղասպանության վերաբերյալ երկու բանաձևեր ընդունեց: 2019 թ. ապրիլի 24-ին հայ ժողովրդի նկատմամբ կատարված հանցագործությունը ճանաչվեց և դատապարտվեց նաև Պորտուգալիայի խորհրդարանի կողմից[7]:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման պայքարում խոշոր հաջողություն պետք է համարել

---

[1] Germany Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.528/current_category.7/affirmation_detail.html

[2] Italy Chamber of Deputies Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.651/current_ category.7/affirmation_detail.html

[3] Dutch Parliamentary Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.714/current_category.7/affirmation_detail.html

[4] Czech Republic Senate Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.789/current_ category.7/affirmation_detail.html

[5] Dutch Parliamentary Resolution, February 22, 2018, https://www.armenian-genocide.org/Affirmation. 713/current_ category.7 /affirmation_detail.html

[6] Dutch Parliamentary Resolution, June 6, 2019, https://www.armenian-genocide.org/Affirmation. 714/current_category.7/affirmation_detail.html

[7] Portugal Parliamentary Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.657/current_category.7 /affirmation_detail.html

2019 թ. հոկտեմբերի 29-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի թիվ 296[1] և դեկտեմբերի 12-ին՝ Սենատի թիվ 150[2] բանաձևերի ընդունումը, ինչի հետևանքով աշխարհի գերտերություններից ԱՄՆ-ը նույնպես միացավ հայ ժողովրդի դեմ կատարված հանցագործությունը դատապարտած երկրների շարքին: Հատկանշական էր, որ 2020թ. փետրվարի 13-ին Հայոց ցեղասպանությունը ճանաչեց նաև քաղաքացիական պատերազմի մեջ գտնվող Սիրիայի խորհրդարանը[3]: Անշուշտ, Հայոց ցեղասպանության այս վերջին ճանաչումները պայմանավորված էին ոչ միայն Սփյուռքի համայնքների ու լոբբիստական կառույցների գործունեությամբ, որքան տվյալ պետությունների քաղաքական շահերով, Թուրքիայի հետ ունեցած բարդ հարաբերություններով: Այդուհանդերձ, այս բանաձևերի ընդունումով ավելի սահմանափակվեցին Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական պետական քարոզչության հնարավորությունները:

Թեև տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչումները չեն հանգեցնում Թուրքիայի կողմից այդ հանցագործության ճանաչմանը, այդուհանդերձ դրանց ընդունումով ոչ միայն բարոյական ու քաղաքական ճնշում է գործադրվում թուրքական իշխանությունների վրա՝ սահմանափակելով նրանց ժխտողական քաղաքականության հնարավորությունները, այլև իրավաքաղաքական հիմքեր են նախապատրաստվում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղ-

[1] United States House of Representatives Resolution 296, https://www.armenian-genocide.org/Affirmation. 780/current_category.7/affirmation_detail.html

[2] United States Senate Resolution 150, https://www.armenian-genocide.org/Affirmation. 783/current_category.7/ affirmation_detail.html

[3] Syrian People's Assembly Resolution, https://www.armenian-genocide.org /Affirmation.790/current_ category.7/affirmation_detail.html

թահարման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Թերևս այս գիտակցությունից ելնելով է, որ թուրքական իշխանությունները մեծ ջանքեր են գործադրում ամեն մի նոր երկրի կողմից խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումը թույլ չտալու համար:

Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական մակարդակով ոչ պաշտոնապես ճանաչած պետություններ են համարվում այն երկրները, որոնց օրենսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ճանաչման գործընթացը ընթացակարգային կամ բովանդակային պատճառներով տրամաբանական ավարտին դեռևս չի հասցվել: Ընթացակարգային պատճառներով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետությունները երկպալատ օրենսդիր մարմին ունեցող այն երկրներն են, որոնց խորհրդարանների պալատներից միայն մեկն է ընդունել համապատասխան բանաձև: Ընթացակարգային պատճառով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած Հարավային Ամերիկայի երկպալատ օրենսդիր մարմնով պետություններից են Բրազիլիան և Պարագվայը, իսկ Եվրոպայի երկրներից՝ Չեխիան:

Բովանդակային տեսակետից Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետություններն այն երկրներն են, որոնց խորհրդարանների ընդունած բանաձևերում հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը հստակ և միանշանակ «ցեղասպանություն» չի որակվում: Կարելի արձանագրել, որ բովանդակային առումով Հայոց ցեղասպանության ճանաչումը դեռևս ավարտին չեն հասցրել Բուլղարիայի, ինչպես նաև Դանիայի խորհրդարանները:

2015 թ. Բուլղարիայի խորհրդարանի ընդդիմադիր «Ատակա» կուսակցությունը խորհրդարան ներկայացրեց բանաձևի նոր նախագիծ, որում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունը կրկին ցեղասպանություն էր որակվում: Նախագծի շուրջ խորհրդարանում կրկին բուռն քննարկումներ ծավալվեցին, և արդյունքում ընդունվեց երկրի վարչապետ Բոյկո Բորիսովի «ցեղասպանություն» եզրույթը «զանգվածային սպանություն» ձևակերպմամբ փոխարինելու առաջարկը: Ընդունված բանաձևում ապրիլի 24-ը հռչակվում էր Օսմանյան կայսրությունում հայերի զանգվածային սպանությունների զոհերի հիշատակի օր: Փաստաթղթում հայերի դեմ իրագործված հանցագործության կատարման վայր նշելով Օսմանյան կայսրությունը, իսկ ժամանակահատվածը՝ 1915-1922թթ., բուլղար խորհրդարանականները շտապում են ընդգծել, որ Բուլղարիան Օսմանյան կայսրության պատմական անցյալը սահմանազատում է Թուրքիայի Հանրապետության պատմությունից, և դրանից հետո ողջունում են պատմական ճշմարտությունը պարզելու շուրջ Թուրքիայի և Հայաստանի միջև երկխոսությունը[1]: Օսմանյան կայսրության պատմական անցյալը սահմանազատելով նրա իրավական ինքնության շարունակող Թուրքիայի Հանրապետության պատմությունից, փորձ է կատարվում ժամանակակից Թուրքիայից հեռացնել հայերի ցեղասպանության համար պատասխանատվությունը: «Թուրքիայի և Հայաստանի միջև պատմական ճշմարտությունը պարզելու շուրջ երկխոսություն» ձևակերպմամբ, ըստ էության, ակնարկվում է Հայոց ցեղասպանության իրողությունը պարզելու շուրջ պատմաբանների հանձնաժողով ստեղծելու թուրքական հայտնի թեզը, որը վերախմբագրված

[1] Bulgaria National Assembly, http://www.armenian-genocide.org/Affirmation.523/ current_category.7/ affirmation_detail.html

ձևով իր արտահայտությունն էր գտել նաև հայ-թուրքական ցյուրիխյան արձանագրությունների տեքստում: Փաստաթղթի ընդունումից հետո «Ատակա» կուսակցության խմբակցության անդամները նշեցին, որ խորհրդարանում ներկայացված մյուս կուսակցությունները տուրք տվեցին Թուրքիայի դեսպանատան ու Բուլղարիայի թուրքական համայնքի թելադրանքին: Բուլղարիայի խորհրդարանի բանաձևում հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունը ցեղասպանություն չորակելու հանգամանքը այդ երկիրը դասում է Հայոց ցեղասպանությունը ոչ լիարժեք ճանաչած երկրների շարքին:

Դանիայի խորհրդարանի՝ ֆոլքետինգի կողմից 2017 թ. հունվարի 19-ին Հայոց ցեղասպանության մասին ընդունված բանաձևը նույնպես բովանդակային առումով խնդրահարույց է, քանզի հայ ժողովրդի դեմ իրագործված հանցագործությունը միանշանակ չի որակվում որպես «ցեղասպանություն»: Դանիական խորհրդարանում այս հարցի շուրջ առաջին քննարկումները տեղի էին ունեցել դեռ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին՝ 2015 թ. մայիսի 19-ին, իսկ 2016թ. հոկտեմբերի 5-ին շրջանառության մեջ դրվեցին բանաձևերի երկու նախագծեր, ինչից անմիջապես հետո Դանիայի թուրքական կազմակերպությունները լայնամասշտաբ արշավ սկսեցին այդ նախաձեռնությունները տապալելու ուղղությամբ: Ընդհանուր առմամբ նախագծերն ունեին գրեթե միևնույն բովանդակությունը, սակայն տարբերվում էին սկզբունքային հարցերի նկատմամբ ունեցած մոտեցումներով: Նախագծերից մեկում հայերի զանգվածային բնաջնջումը բնութագրվում էր «ջարդեր և հարկադիր տեղահանումներ» ձևակերպմամբ, իսկ հանցագործության կատարման վայր նշվում էր Օսմանյան կայսրությունը: Մյուս նախագծում «ջարդեր և հարկադիր տեղահանումներ» ձևակերպման

փոխարեն գործածվում էր «ողբերգական և արյունալի իրադարձություններ» բառակապակցությունը, իսկ Օսմանյան կայսրության փոխարեն նշվում էր «Արևելյան Անատոլիա» արհեստական աշխարհագրական անվանումը: Երկու նախագծերում էլ կրկնվում էին երկու երկրների երկխոսության և երկու ժողովուրդների հաշտեցման եվրոպական կառույցների փաստաթղթերում անընդհատ շրջանառվող դրույթները:

Դանիայի արտգործնախարար Անդերս Սամուելսենը, խորհրդարանում ներկայացնելով կառավարության դիրքորոշումը, նշեց, որ այն, ինչ բանաձևի հեղինակներն անվանում են «հայերի ցեղասպանություն», պատմական, քաղաքական և իրավական համալիր հարց է, որը պետք է քննարկվի ոչ թե Դանիայի խորհրդարանի կամ կառավարության կողմից, այլ Հայաստանի և Թուրքիայի միջև: Նախարարի ելույթը ոգևորեց դանիական խորհրդարանում բանաձևի ընդունման հակառակորդներին, որոնք առաջարկում էին այդ հարցի վերաբերյալ առհասարակ որևէ բանաձև չընդունել: Հնչեցին նաև ելույթներ, որոնցում թեև չէր հերքվում հայերի ցեղասպանության պատմական փաստը, սակայն կասկածի տակ էր դրվում բանաձևի ընդունման նպատակահարմարությունը: Պատգամավորների մի խումբն էլ, ոգևորվելով Գերմանիայի Բունդեստագի ընդունած որոշումով, պնդում էր, որ 1915 թ. հայերի հետ տեղի ունեցածը ցեղասպանություն է, և վաղուց հասունացել է իրերն իրենց անունով անվանելու ժամանակը: Բանաձևի ընդունման օգտին ելույթ ունեցող դանիացի խորհրդարանականները նշում էին նաև, որ չի կարելի թույլ տալ Թուրքիայի անդամակցությունը ԵՄ-ին, քանի դեռ թուրքական իշխանությունները նման ժխտողական վարքագիծ են որդեգրել և իրենց երկրում հետապնդում են խոսքի և արտահայտման ազատությունը:

Քննարկումների արդյունքում 89-ը՝ «կողմ», 9-ը՝ «դեմ» և 11-ը՝ «ձեռնպահ» ձայների հարաբերակցությամբ երկու նախագծերից ընդունվեց «վատթարագույն» տարբերակը: Դանիայի խորհրդարանի ընդունած բանաձևում բացակայում է «ցեղասպանություն» եզրույթը և դրա փոխարեն օգտագործվում է «ողբերգական և արյունալի իրադարձություններ» ձևակերպումը, իսկ որպես հանցագործության կատարման վայր նշվում է «Արևելյան Անատոլիան»: Այդուհանդերձ, Գերմանիայի Բունդեստագի 2005 թ. առաջին բանաձևի օրինակով Դանիայի խորհրդարանը նախընտրեց «ցեղաս-պանություն» եզրույթը գարծածել միջնորդավորված: Բանաձևում ափսոսանք էր հայտնվում, որ թուրքական օրենսդրությամբ քաղաքացիներին և ԶԼՄ-ներին արգելվում էր այդ իրադարձությունների կապակցությամբ «ցեղասպանություն» եզրույթի կիրառումը, ինչը համարվում է խոսքի և գիտական ազատության անհիմն սահմանափակում[1]: Փաստորեն, դանիացի օրենսդիրները Թուրքիային հանդիմանում են «ցեղասպանություն» եզրույթի օգտագործումն արգելելու համար, մինչդեռ հենց իրենք խուսափում են բանաձևի տեքստում տվյալ եզրույթի գործածումից: Բանաձևում տեղ գտած վիճելի որակումներն ու կրավորական ձևակերպումները Դանիայի օրենսդիր մարմինը փորձում էր արդարացնել պատմական փաստերի մասին դատողություններ չանելու իր ավանդույթին հավատարիմ մնալու հանգամանքով: Իրականում Դանիայի օրենսդիր մարմնի ընդունած բանաձևի հակասական բովանդակությունը պայմանավորված էր Թուրքիայի հետ առևտրատնտեսական և այլ ոլորտներում համագործակցությանը չվնասելու հանգամանքով:

[1] Denmark Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.597/current_ category.7/affirmation_detail.html

Այսպիսով, խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործությունը պաշտոնապես ճանաչվել է 27 (Ուրուգվայ, Կիպրոս, Արգենտինա, Հայաստան, Ռուսաստան, Կանադա, Հունաստան, Լիբանան, Բելգիա, Ֆրանսիա, Շվեդիա, Վատիկան, Իտալիա, Շվեյցարիա, Սլովակիա, Նիդերլանդներ, Լեհաստան, Գերմանիա, Վենեսուելա, Լիտվա, Չիլի, Բոլիվիա, Ավստրիա, Լյուքսեմբուրգ, ԱՄՆ, Պորտուգալիա, Սիրիա), իսկ ոչ պաշտոնապես՝ 5 (Բրազիլիա, Պարագվայ, Չեխիա և Բուլղարիա, Դանիա) պետությունների կողմից:

Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչման աշխարհագրությունը հիմնականում սահմանափակվում է Եվրոպայի և Հարավային Ամերիկայի պետություններով, Հյուսիսային Ամերիկայում էլ այն ճանաչվել է միայն Կանադայի խորհրդարանի և ԱՄՆ-ի Կոնգրեսի երկու պալատների կողմից: Ավստրալիայում ճանաչման գործընթացը դեռևս նահանգային օրենսդիր մարմինների մակարդակում է գտնվում: Ասիայում Հայոց ցեղասպանությունը փաստացի ճանաչվել է միայն Լիբանանի կողմից, իսկ Աֆրիկայի պետություններից Եգիպտոսի խորհրդարանը հանդես է եկել Հայոց ցեղասպանությունը ճանաչող ոչ պաշտոնական հայտարարությամբ:

Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման աշխարհագրությունը որոշակի ազդեցությունն է ունենում նաև տարբեր պետությունների խորհրդարանների ընդունած բանաձևերի բովանդակության վրա: Եվրոպական երկրները, աշխարհագրորեն ավելի մոտ գտնվելով Թուրքիային, սերտորեն համագործակցում են վերջինիս հետ առևտրատնտեսական ու

ռազմաքաղաքական ոլորտներում, ուստի Հայոց ցեղասպանությունը ճանաչող այդ պետությունների խորհրդարանների բանաձևերում նկատելի են անորոշ ձևակերպումներն ու փաստերի զգուշավոր ներկայացումը: Ի տարբերություն եվրոպական երկրների՝ Հարավային Ամերիկայի պետություններն այդ աստիճան սերտ հարաբերություններ չունեն Թուրքիայի հետ, կաշկանդված չեն վերջինիս հետ համագործակցությունը վտանգելու հարցում, ուստի այդ երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերում հանցագործության փաստական հանգամանքները ներկայացվում են ավելի հստակ և ճշգրիտ, իսկ որակումներն ու ձևակերպումներն ավելի անաչառ են ու օբյեկտիվ: Այս լույսի ներքո միանգամայն բնական պետք է համարել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հայտարարություն կամ բանաձև ընդունելիս ցանկացած պետություն, այդ թվում՝ Հայաստանին բարեկամ երկրները, նման քաղաքական որոշումներ կայացնելիս նախևառաջ առաջնորդվում են իրենց ազգային-պետական շահերով և հետո միայն ձգտում ընդառաջել հայկական համայնքի ձգտումներին:

Ամփոփելով տարբեր երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման պաշտոնական ու ոչ պաշտոնական ոչ նորմատիվային բնույթ ունեցող փաստաթղթերի՝ բանաձևերի և հայտարարությունների ընդունման գործընթացը, պետք է փաստենք, որ դրանք տվյալ երկրների իշխանության մյուս ճյուղերի համար պարտադիր ուժ չունեն: Ինչպես հայտնի է, պետության արտաքին հարաբերությունների համար պատասխանատու է ոչ թե օրենսդիր, այլ գործադիր իշխանությունը, իսկ Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական բանաձևերով ճանաչած երկրների գործադիր մարմինները, որպես կանոն, այդ հարցի վերաբերյալ

դիրքորոշում չեն արտահայտում, իսկ որոշ դեպքերում՝ նույնիսկ օրենսդրի որոշմանը հակառակ տեսակետ են արտահայտում: Դժվար է ակնկալել, որ նման երկրները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ գործուն քայլեր կձեռնարկեն: Իսկ Հայոց ցեղասպանության փաստը օրենքով ճանաչած երկրներում այդ որոշումը պարտադիր է դառնում նաև իշխանության գործադիր ու դատական մարմինների համար և իր արտահայտությունն է գտնում նաև այդ երկրի արտաքին քաղաքականության մեջ: Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացումն էլ գործնականում դժվարեցնում է տվյալ պետության տարածքում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության կասկածի տակ դնելը, քանզի ժխտողների համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում:

ИСТОРИКО-ПРАВОВОЙ АНАЛИЗ ДОКУМЕНТОВ ПРИНЯТЫХ ПАРЛАМЕНТАМИ ГОСУДАРСТВ О ПРИЗНАНИИ ГЕНОЦИДА АРМЯН

Армен МАРУКЯН
Институт истории НАН РА

Ключевые слова: Геноцид армян, Османская империя, Турция, Западная Армения, процесс международного признания, парламентские резолюции.

Признанием каким-либо государством геноцида, совершенного в отношении той или иной этнической, расовой или религиозной группы, может считаться не только принятие законодательным органом соответствуюшей резолюции, заявления или закона, но и решение исполнительной власти, или же акт, вердикт судебной власти.

Законодательные органы около трех десятков государств приняли заявления и резолюции, признающие и осуждающие Геноцид армян. Эти документы, однако, для исполнительной власти этих стран не имеют императивного значения и, фактически, не могут влиять на политику данных государств по вопросу Геноцида армян. Исходя из этого, необходимо продолжать дипломатическую и лоббистскую деятельность в странах, признавших преступление, совершенное в отношении армянского народа, в том смысле, чтобы принятые резолюции и заявления были переведены в практическую, прикладную плоскость.

Необходимо добиться того, чтобы принятые парламентами резолюции и заявления превратились в законы и, таким образом, стали обязательными для исполнительных органов этих стран. Кроме этого, необходимо продолжать работу в парламентах признавших и осудивших Геноцид армян в направлении принятия законов об уголовной ответственности за отрицание Геноцида армян, как это уже имело место в законодательных органах Швейцарии, Словакии, Греции, Кипра, Швеции и Бельгии.

HISTORICAL AND LEGAL ANALYSIS OF DOCUMENTS ADOPTED BY THE PARLIAMENTS OF STATES ON RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE

Armen MARUKYAN
Institute of History NAS RA

Key words: Armenian Genocide, Ottoman Empire, Turkey, Western Armenia, international recognition process, parliamentary resolutions.

The recognition by any state of genocide committed against this or that ethnic, racial or religious group can be considered not only the

adoption by the legislature of the relevant resolution, statement or law, but also a decision of the executive branch, or an act, a verdict of the judicial branch.

Legislative bodies of about three dozen states adopted statements and resolutions recognizing and condemning the Armenian Genocide. These documents, however, are not of imperative importance for the executive power of these countries and, in fact, cannot influence the policy of these states on the Armenian Genocide issue. Based on this, it is necessary to continue diplomatic and lobbying activities in the countries that have recognized the crime committed against the Armenian people, in the sense that the adopted resolutions and statements are translated into a practical, applied plane.

We need to ensure that the resolutions and statements adopted by the parliaments become laws and, thus, become binding on the executive bodies of these countries. Besides, it is necessary to continue working in the parliaments that recognized and condemned the Armenian Genocide towards the adoption of laws criminalizing the Armenian Genocide denial, as has already happened in the legislative bodies of Switzerland, Slovakia, Greece, Cyprus, Sweden and Belgium.

1918 – 1920 թթ. ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐՇԱՎԱՆՔՆԵՐԸ ՇԻՐԱԿՑԻՆԵՐԻ ԲԱՆԱՎՈՐ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Կարինե ԲԱՋԵՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ պատմական հիշողություն, թուրքական արշավանք, Շիրակ, ցեղասպանություն, հուշարձան:

Անոտացիա: 1918 թ. հռչակված Հայաստանի առաջին Հանրապետությունը թեև գոյատևեց ընդամենը երկուս ու կես տարի, բայց բացառիկ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի կյանքում: Պատմական այդ կարճ ժամանակահատվածով ոչ միայն եզրափակվեց հայոց 600 տարվա պետականությունից զուրկ անցյալը, այլև ուրվագծվեց հայ ժողովրդի ապագայի տեսլականը: Պատահական չէ, որ Հայաստանի առաջին Հանրապետության հռչակումից հարյուր տարի անց այդ պատմությունը դեռևս լուրջ ուսումնասիրությունների կարիք ունի՝ լուսաբանելու համար մինչ օրս չբացահայտված, չուսումնասիրված էջերը, կարծրատիպերի վերածված դատողությունները և տարընկալումները: Այս ամենը հատկապես վերաբերում է Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցած պատմական իրադարձություններին:

Չնայած այն հանգամանքին, որ հայ պատմագրության մեջ Արևելյան Հայաստանում թուրքերի գործողությունները համարվում են ցեղասպանության քաղաքականության շարունակականություն, սակայն դեռ լիովին բացահայտված և հասարակության կողմից գիտակցված չեն: Ալեքսանդրապոլի գավառում 1918-1921

թթ. դեպքերը քննության առնելիս հայ պատմագրության մեջ հաշվի չեն առնված դրանց նախորդած իրադարձությունները, շարունակող ցեղասպանությունը, թուրքական ժխտողական ռազմավարությունը, արևմտահայ գաղթականության և որբերի հոծ խմբերի առկայությունը, 1917 թ. ռուսական հեղափոխությունները, բանակի բարոյալքումը, Անդրկովկասում ստեղծված նոր իշխանությունների գործելակերպը, սոցիալ-տնտեսական ծանր դրությունը, մեծ տերությունների երեսպաշտությունը, հայ քաղաքական մտքի ոչ ճկունությունը և այլն: Հիշյալ իրողություններն իրենց ազդեցությունը թողեցին մարդկանց ճակատագրերի, տրամադրությունների, ապրելակերպի վրա և պայմանավորեցին բնակչության սոցիալական պրակտիկաներն ու առօրյա կյանքը՝ իրենց հետքը թողնելով գավառի բնակչության աշխարհընկալման վրա, արժեհամակարգում, ինչն էլ ամրագրվեց նրանց պատմական հիշողության մեջ:

Ինչպես հայտնի է կարծրատիպերը արդյունք են բազմակողմանի, ամբողջական ինֆորմացիայի պակասի: Դրանք կշարունակեն իրենց գոյությունը քանի դեռ պատմական իրողությունները քննության կառնվեն առանց հաշվի առնելու դրանց նախորդող իրադարձությունները, քանի դեռ հանրայնացված չեն բազմաթիվ արխիվային նյութերը, քանի դեռ ըստ արժանվույն և անաչառ գնահատված չեն պետական քաղաքական բազմաթիվ գործիչները և տեղայնացված չեն համահայկական նշանակություն ունեցող դեպքերը: Վերոհիշյալ և շատ այլ հարցերի ուսումնասիրությունը առավել ամբողջական կդառնա, երբ կօգտագործվեն և գիտական շրջանառության մեջ կդրվեն նաև բանավոր պատմություններն ու հիշողությունները:

Արդի պատմագիտության մեջ բանավոր պատմությունները դիտարկվում են որպես սկզբնաղբյուր, իսկ հիշողությունը՝ որպես

պատմական երևույթ, քանի որ անցյալի մասին գիտելիքները ապահովում են բարոյական ու գաղափարական արժեքների փոխանցումը՝ կողմնորոշելով պատմական կոնկրետ ժամանակաշրջանի և սոցիալական տարածության մեջ: Ի լրումն գրավոր պատմության՝ կա նաև կենդանի պատմություն, որը պահպանում և թարմացնում է ինքն իրեն ժամանակի միջով ու այդպիսով թույլ է տալիս վերականգնել բազմաթիվ հին իրողություններ,որոնք թվում է, թե անհետացել են: Եթե «պատմությունը» պատմական գիտելիքն է,ապա «հիշողությունը» հիմնված է ազգային արժեքների վրա: «Պատմական հիշողությունը» պատմական գիտելիքների կիրառական գործածումն է, պատմության շարժումը դեպի սոցիալական հիշողության հարցապնդումներն ու պահանջները[1]:

Կոլեկտիվ և պատմական հիշողությունը փոխանցվում է ինչպես բանավոր (ավագներից՝ կրտսերներին), այնպես էլ գրավոր աղբյուրներով, որոնք մատուցվում են ընտանիքում, դպրոցում, բուհում, հասարակության լայն շրջանակներին նաև զանգվածային լրատվության միջոցներով: Պատմական հիշողությունը, լինելով սոցիալական հիշողության մաս, բարդ կատեգորիա է ու բաղկացած է սեփական ժողովրդի պատկերացված պատմությունից, նրա իրական, ռեալ պատմությունից, ինչպես նաև պատմության մասին ընդհանուր պատկերացումներից:Բարոյական նորմերը, որոնք մատուցվում են պատմական իրադարձությունների մեկնաբանություններում, սեփական ժողովրդի պատմության հիմնական գործող անձանց ու հերոսների վարքի նորմերը մոդելավորում են ան-

[1] Красильников С.А., Аблажей Н.Н., История и память: Потенциал и взаимодействие, XII Конгресс антропологов и этнологов России: сб. материалов. Ижевск, 3–6 июля 2017 г. / Отв. ред.: А.Е. Загребин, М.Ю. Мартынова. – Москва; Ижевск: ИЭА РАН, УИИЯЛ УрО РАН, 2017, с. 96. http://static.iea.ras.ru/books/Materialy_XII_KAER.pdf

հատի, անհատների խմբերի ու ամբողջության մեջ վերցրած ժողովրդի վարքի նորմերը:

Այս համատեքստում էլ կարևորվում է սոցիալական հիշողության դերը, որը հասարակության և անհատի նույնականացման ու կողմնորոշման հիմնական միջոցն է: Կարևոր է նաև այն, որ պատմական հիշողությունը սերունդների մշակութային ժառանգորդման և ազգային-քաղաքացիական ինքնության հիմքն է կազմում: Կոլեկտիվ և պատմական հիշողությունը «ազգ, ազգային ինքնություն» եզրերը բնորոշող կարևորագույն տարրերից է: Այն հենված է իրենց ազգի իրական կամ պատկերացրած պատմական անցյալի ամբողջական կամ առանձին դրվագների շուրջ մարդկանց գիտելիքների և վերաբերմունքի վրա: Անցյալի ամենացավոտ հարցերի վերաբերյալ բնակչության մեջ առկա ինքնակենսագրական, կոլեկտիվ ու պատմական հիշողությունը անցյալը դարձնում է իրական արժեք, հարստություն, մեր կյանքի նշանակալի մաս:

Թերևս հենց սա նկատի ունենալով է, որ տարիներ շարունակ գրավոր ու բանավոր ձևով, նպատակային ու ծրագրավորված հավաքվել են հայոց Մեծ Եղեռնի ականատեսների հիշողություններն ու պատմությունները, որոնք համարվում են թուրքական եղեռնագործությունների կարևորագույն վկայություններ: Ցավոք նույնը չենք կարող ասել արևելահայության ջարդերի ու Արևելյան Հայաստանում թուրքերի կատարած ոճրագործությունների, դրանց տնտեսական ու սոցիալ-մշակութային հետևանքների մասին հիշողությունները գրանցելու վերաբերյալ, ինչը դուրս է մնացել մասնագետների ուշադրությունից:

Այս հանգամանքը նկատի ունենալով ՇՀՀԿ գիտաշխատողների խումբը (ղեկ. պ.գ.թ. Կ. Բազեյան, անդամներ՝ պ.գ.թ. Կ. Ալեքսանյան և երիտասարդ հետազոտող Ա. Շահինյան) 2018թ. դիմեցին

ՀՀ Գիտության պետական կոմիտեի մրցույթին և ստացան դրամաշնորհ՝ «1918-1921թթ. իրողությունները Շիրակի բնակչության պատմական հիշողության համատեքստում» թեմայի իրականացման համար, որի շրջանակներում հատուկ կարևորություն էր տրվում բանավոր պատմությունների գրանցմանը՝ վեր հանելու այն դեպքերն ու իրողությունները, որոնք վերագնահատման կարիք ունեն: Պատմության այս կամ այն դրվագի, իրադարձության մասին պատկերացումների վերականգնումը բարենպաստ հող է նախապատրաստում պատմազգագրական ամբողջական ուսումնասիրությունների համար, քանի որ հնարավորություն է տալիս «ներսից» հասկանալու մշակութային նախընտրությունների և արժեքային կոնֆլիկտների աշխարհը:

Արդի Շիրակի մարզի տարածքում 1918-1921թթ. իրողությունների մասին տեղի բնակչության մեջ պահպանված բանավոր ու գրավոր հիշողությունները գերազանցապես վերաբերում են թուրքական երկու՝ 1918 և 1920թթ. արշավանքների ու դրանց հետևանքների նկարագրությանը: Կարևոր ենք համարում փաստել, որ գրանցված նյութերը, ցավոք, ականատեսների ու դեպքերի անմիջական մասնակիցների վկայությունները չեն, այլ նրանց սերունդների,որոնք լսել են իրենց մեծերի պատմությունները՝ սկսած մանուկ հասակից մինչև երիտասարդության տարիները: Անշուշտ, ինչպես նշում են հենց բանասացները, շատ մանրամասներ մոռացվել են, շատերը դրվագային բնույթ ունեն, բայց դա չի նվազեցնում դրանց փաստական, աղբյուրագիտական արժեքը[1]:

[1] Ծրագրի շրջանակում հավաքված բանավոր, գրավոր և արխիվային նյութերը գտնվում են ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ արխիվում:

Գրանցված հիշողությունները ապացույցն են թուրքական ցեղասպանության շարունակականության Արևելյան Հայաստանում, ինչը տասնամյակներ շարունակ արգելված թեմա է եղել խորհրդային իշխանության տարիներին: Սրա պատճառն այն էր, որ Խորհրդային պետությունը փորձում էր հասարակության ինքնությունը կառուցել գաղափարական հենքի վրա՝ զոհաբերելով ինքնության մյուս հիմնական (էթնիկական, կոնֆեսիոնալ, մշակութային, համայնքային, ընտանեկան) ձևերը: Դրա արդյունքներից մեկը դարձավ դեֆորմացված, «կտրատված» տրավմատիկ պատմական հիշողության առաջացումը: Ինքնության որոնման հաջորդ շրջափուլում իշխանությունները սկսեցին օգտագործել պատմական անցյալի ներուժը՝ հիշողության «կառավարման» միջոցով,որը դարձավ պատմական հիշողության պետական քաղաքականություն[1]:

1920-ական թթ. հետո, համաձայն այդ քաղաքականության, Խորհրդային Միության և Թուրքիայի միջև բարեկամական հարաբերություններով պայմանավորված, ցեղասպանության թեման փակվեց ու դուրս մղվեց պատմագրությունից, իսկ Խորհրդային Միությունում ապաստան գտած Եղեռնից մազապուրծ հայերի նկատմամբ կիրառվեց մի քաղաքականություն, որը կարելի է անվանել «հրամայված է մոռանալ»: «Եղեռնի» թեման դարձավ հիշողությունը խեղդելու քաղաքականության օբյեկտ, երբ արգելվում էր վշտի զգայական դրսևորումը փախստականների խմբերում, կենդանի մնացած հարազատների մեջ, ընտանիքների ներսում[2]:

---

[1] Красильников С.А., Аблажей Н.Н., История и память, с. 96.

[2] Харатян Г.С., Политика покорения памяти, или «приказано забыть»: Превращение памяти в социальную и семейную «тайну» (На примере армянского геноцида), Историческая память и российская идентичность / под. ред. В.А. Тишкова, Е.А. Пивневой. М.: РАН, 2018, с.103.http://static.iea.ras.ru/news/Istoricheskaya_pamyat%27_i_rossiiskaya_identichnost%27.pdf

Թերևս սրանով է պայմանավորված այն, որ Շիրակի մարզի մի շարք գյուղերում արդեն հիշողության կրողներ չկան, քանի որ մարդիկ հատկապես 1930-1950-ական թվականներին, ուղղակի վախենում էին այդ մասին խոսել, որովհետև դա համարվում էր ծայրահեղ ազգայնականություն, ինչը խիստ մեղադրանք էր, որի հետևանքով կարող էր մարդը ոչ միայն ձերբակալվել, այլև աքսորվել: Մեր բանասացներից շատերը, որոնք 1940-1960-ական թվականների ծնվածներ են, վերհիշում էին իրենց ծնողների կամ տատիկ-պապիկների պատմությունները, որոնք լսել էին 1960-1970-ական թվականներին, ինչի մասին բազմիցս ասում էին այն պարագայում, երբ ուզում էինք ճշգրտել ներկայացրած դեպքերի մանրամասները:

Հարկ է նշել, որ թուրքերի կողմից Շիրակում իրականացված ջարդերի մասին հիշողությունների ակտիվացման երեք էտապ կարելի է առանձնացնել, որոնք արտահայտվում են դրանց հուշարձայնացման ձևով: Այսպես. առաջին էտապը կապված է Հայոց Մեծ Եղեռնի 50-ամյակի և հանրապետությունում ընթացող իրադարձությունների ու ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Ծիծեռնակաբերդի հուշարձանի կառուցման հետ, որին զուգահեռ, 1962թ.-ին, ցեղասպանության զոհերի հուշարձան կառուցվեց նաև մարզի Ջրառատ գյուղում, այն իրականում 1920թ.-ին թուրքերի կողմից բարբարոսաբար սպանված համագյուղացիների հիշատակին էր նվիրված, քանի որ կանգնեցվել էր այն վայրում (Համբարենց օդայի տեղում), որտեղ կենդանի այրվել էր գյուղի բնակչության մի մասը: Այնուհետև, 1968 թ.-ին, դարձյալ թուրքերի կողմից 1920թ.-ին իրականացրած զանգվածային կոտորածի վայրում՝ Հերհերի կամ Հզազի ձորում (Ջարդի ձոր), կառուցվեց աղբյուր-հուշակոթող, որն այնուհետև Շիրակի բնակչության համար դարձավ

Ցեղասպանության զոհերի մարզային հուշարձան, որին այցելում են յուրաքանչյուր տարի ապրիլի 24-ին:

Երկրորդ փուլը պայմանավորված էր հետպատերազմյան տարիներին, մասնավորապես 1970-1980-ական թթ. երկրում իրականացվող լայնածավալ գյուղատնտեսական ու շինարարական տարբեր աշխատանքներով, երբ մարզի որոշ գյուղերի տարածքներում ու մերձակայքում հողի տակից դուրս էին գալիս մարդկանց ոսկորներ, կամ բացվում էին զանգվածային թաղումներ: Դրա օրինակը 1980 թ.-ին Բասեն գուղում կանգնեցված 1920 թ.-ի զոհերի հիշատակին նվիրված հուշաքարի կառուցումն է, որի մասին այսպես է հիշում Մնացյան Մհերը. «Երբ սկսեցին հուշարձանը սարքել (Հայրենական պատերազմի –Կ.Բ.), տարածքը մաքրեցին, այդ ժամանակ մարդկանց ոսկորներ, գանգեր դուրս եկան, ու էդ պատմությունը բացվեց: Դա էլ առիթ դարձավ, որ հուշաքարը դրվի»:

1918-1920 թթ. թուրքական կոտորածների ու դրանց զոհերի մասին հիշողությունների նկատմամբ հետաքրքրությունների երրորդ ալիքը բարձրացավ Արցախյան շարժման, Արցախյան պատերազմի ու հատկապես դրա ընթացքում թուրք-ադրբեջանցիների կողմից իրականացրած նոր ջարդերի ու տեղահանությունների ազդեցության տակ:[1] Այս համատեքստում 1920 թ. ջարդերի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթող կանգնեցվեց վերը հիշատակված Հերհերի ձորում 1990 թ., 1990-1991 թթ. Ձիթհանքով գյուղում դրվեց խաչքար-հուշակոթող գյուղի մարագներում թուրքերի կողմից այրված անմեղ զոհերի հիշատակին և 1997 թ.-ին՝ Արփենիում

[1] Արցախյան շարժման տարիներին հայոց ազգային ինքնության մեջ հայերի ցեղասպանության հիշողության գործոնի դերակատարության մասին ուշագրավ ուսումնասիրություն է կատարել Հ. Մարությանը: Տե ս Հայ ինքնության պատկերագրությունը, հ.1, Ցեղասպանության հիշողությունը և ղարաբաղյան շարժումը, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2009, 432 էջ:

Հովսեփ Ենգոյանի կողմից խաչքար կանգնեցվեց՝ «Ի հիշատակ Արփենի գյուղում թուրքերի ձեռով բարբարոսաբար սպանված համագյուղացիների»:

Պետք է նշել, որ միակ հուշարձանը, որը նվիրված է ոչ թե սպանությունների ու կոտորածների զոհերին, այլ ընդհակառակը՝ շիրակցիների դիմադրական շարժմանը, կանգնեցվել է Սառնաղբյուր գյուղի մոտ 2016 թ. և խորհրդանշում է սառնաղբյուրցիների ու հարևան հինգ գյուղի բնակիչների հերոսական ինքնապաշտպանությունը: Այս հուշակոթողը կառուցվեց «1918 թ. մայիսյան գոյապայքարի նոր էջ» խորագրով 2003 թ. գիտաժողովի արդյունքում, որը անցկացվեց Սառնաղբյուրում ԳԱԱ պատմության ինստիտուտի, Ռուս-հայկական սլավոնական համալսարանի և Շիրակ հայրենակցական միության կողմից, որտեղ քննարկվեցին նաև 1918թ. մայիսի 16-22-ին կազմակերպված ինքնապաշտպանական կռիվները՝ հիմնված գերազանցապես մասնակիցների հիշողությունների վրա: Այդ ժամանակ էլ որոշվեց ընդհանուր ջանքերով կառուցել այդ իրադարձությունը խորհրդանշող հուշարձան:

Մասնագիտական գրականության մեջ բազմիցս ընդգծվում է, որ հիշողությունը սոցիալական տրավմայի դեպքում առանձնահատուկ բնույթ է ստանում, և որքան խորն է տրավման, այնքան անցյալի հիշողություններն ավելի ուժեղ են ազդում ներկայի ընկալման վրա: Հիշողության հարցերին նվիրված ուսումնասիրություններում «տրավման» դարձել է կենտրոնական տերմիններից մեկը, բայց միևնույն ժամանակ այն պրոբլեմատիկ հասկացություն է:[1] Ինչպես գրում է Վ. Շնիրելմանը, «Այս երևույթը նկարագրելու համար Ջ. Վուրչը նույնիսկ ներմուծել է «մտավոր ցավեր» հատուկ

[1] Մարության Հ., Նշվ. աշխ., էջ 59:

տերմինը, որը ցույց է տալիս, որ երկար ժամանակ խորքային տրավմա ապրող հասարակությունը չի կարող ազատվել ծանր հիշողություններից և ոչ միայն նորից ու նորից դառնում է նրանց, այլև կարծես վերապրում է վաղուց տեղի ունեցած իրադարձությունները»[1]:

Ընդ որում անձամբ ապրած անցյալը շատ ավելի գունավորված է էմոցիաներով, քան սերտած անցյալը: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, մանկության և երիտասարդության հիշողություններն ավելի լավ են տպավորված հիշողության մեջ, քան հետագա իրադարձությունները: Թերևս սրանով կարելի է բացատրել այն, որ մեր բանասացների մի մասը արտասվում էր, երբ վերհիշում էր թուրքերի դաժանությունների այն պատմությունները, որոնք իրենք լսել էին ծնողներից ու հարազատներից, ու որոնք ուղեկցել էին իրենց տարիներ շարունակ: Մեր կողմից գրանցված պատմությունների գրեթե կեսը հենց մանկական ու պատանեկան տարիքում (ինչպես իգական, այնպես էլ արական սեռի 6-ից 16 տարեկան) տեսածի ու վերապրածի հիշողություններ են: Այս առումով կարելի է ասել, որ ցեղասպանական գործողությունների վերապրողները նույնպես զոհեր են, քանի որ նրանք վկան են եղել բազմաթիվ դաժանությունների, իրենց հարազատների կորստյան, տեսել են տասնյակ ու հարյուրավոր դիակներ և այլն: Այդ ճանապարհով ձևավորված զոհի կարծրատիպը ժամանակի ընթացքում այս կամ այն չափով անցնում է նաև վերապրողների այն ժառանգներին, որոնք լսել են այդ պատմություններն

[1] В.А. Шнирельман, Социальная память: вопросы теории, Историческая память и российская идентичность/под. ред. В.А. Тишкова, Е.А. Пивневой/, М., РАН, 2018, с. 20.

իրենց մեծերից և կամ էլ պարզապես տեղյակ են եղել նրանց բաժին հասած դառնություններին[1]:

Դաշտային հավաքչական աշխատանքներն անցկացվել են 2019-2020 թթ. Շիրակի մարզի Ամասիայի, Աշոցքի, Ախուրյանի, Անիի տարածաշրջանների 40-ից ավելի գյուղերում և Գյումրի քաղաքում, որի արդյունքում գրանցվել է շուրջ 60 հիշողություն: Դրանք ներկայացնում են ինչպես ընդհանուր համայնքին վերաբերող պատմություններ ու դեպքեր, այնպես էլ կոնկրետ անձանց առնչվող պատմություններ: Պետք է նշել, որ հիշողությունները ներկայացնում են ոչ միայն Շիրակի մարզի, այլև նրանից դուրս գտնվող այլ բնակավայրերում (Կարս, Մուշ, Ջավախք) թուրքերի կողմից իրականացված վայրագությունները, քանի որ հատկապես մեծ թիվ են կազմում այստեղ 1918 թ. Կարսի անկումից հետո հաստատված Արևմտյան Շիրակի բնակիչները: Այսպես. հետաքրքիր ու արժեքավոր տեղեկություններ են ստացվել բնակչության թալանին ու կոտորածին տեղի թյուրքալեզու բնակչության (հիմնականում ղարափափախների) մասնակցության, կաթոլիկ (ֆրանկ) և ուղղափառ (ուռում) հայերի նկատմամբ թուրքերի քաղաքականության, օկուպացիոն իշխանությունների հետ տեղի բնակչության հարաբերությունների և հատկապես թուրքական վայրագությունների ու եղեռնագործությունների մասին (զանգվածային սպանությունների, մարագներում կանանց, երեխաներին ու ծերերին փակելու ու այրելու, ոսկիների տեղն իմանալու կամ տալու համար խոշտանգումների և այլն):Բավականին կարևոր փաստեր ու պատմություններ են գրանցվել, որոնք յուրովի են մեկնաբանում բավական խնդրահարույց այնպիսի իրողություններ,ինչպիսիք են 1918թ.

[1] Մարության Հ., Նշվ. աշխ, էջ 58:

թուրքական արշավանքի և 1920թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Ալեքսանդրապոլի գավառի բնակչության չկռվելը, որոշ բացառություններով դիմակայության բացակայությունը, թուրքերի հետ համագործակցելը, նրանց «աղ ու հացով դիմավորելը», և այլն: Բանասացների կողմից պատմական իրադարձությունների մեկնաբանություններում անդրադարձ կա նաև այդ պատմությունների ականատեսների ու մասնակիցների, հիմնական գործող անձանց ու հերոսների վարքի նորմերին և բարոյական արժեքներին, մասնավորապես տղամարդկանց փախչելու ու թաքնվելու դեպքերի, բարոյական արժեքների երկակի բնույթի՝ համագյուղացիների դավաճանության ու միևնույն ժամանակ նրանց փրկելու, կանանց ու աղջիկների՝ մի կողմից տարբեր միջոցներով թուրքերից թաքնվելու, նրանց ձեռքը չընկնելու համար զանազան միջոցներ կիրառելու, մյուս կողմից՝ «փաշաների» սիրուհի դառնալու ու նրանց նկատմամբ տարաբնույթ վերաբերմունքի մասին և այլն: Հետաքրքիր բազմաթիվ այլ պատմություններ ևս փաստագրված են գրանցված հիշողություններում, որոնք վերաբերում են արևմտահայ գաղթականությանը, Անդրանիկին, հայ քաղաքական կուսակցություններին, ռուսական գործոնին (առանձին իրադարձությունների հետ կապված), խորհրդային իշխանությանը, թուրքերին դիմադրելու ու խորամանկությամբ սպանելու դեպքերին, բնակչության նկատմամբ որոշ թուրքերի բարյացակամ վերաբերմունքին կամ «բարի թուրքերին», թուրքերի հեռանալուց հետո ավերածությունների, սովի ու համաճարակային հիվանդություններին և այլն:

Հիշողության պահպանման գործում որոշակի դեր են խաղում պատմական լանդշաֆտները, ինչպես նաև պատմական տա-

բածքների սահմանների վերաբերյալ գաղափարները[1]: Հատկանշական է, որ մեր բոլոր բանասացները հստակ հիշում ու ցույց էին տալիս այն վայրերը, որտեղ իրականացվել էին մարդկանց սպանությունները, անկախ այն բանից խոսքը գնում է մեկ մարդու, թե մարդկանց խմբի մասին (տան, բակի, գյուղի, որ մասում և գյուղից դուրս որ ձորում): Այս հանգամանքը նկատի ունենալով՝ խումբը յուրաքանչյուր գյուղում, ձայնագրություններին զուգընթաց, իրականացրել է նաև վերոհիշյալ դեպքերին առնչվող տեղավայրերի արձանագրում:

Հարկ է նշել, որ դաշտային հավաքչական աշխատանքների ընթացքում ձեռք են բերվել նաև հուշային և բանահյուսական որոշ նյութեր առանձին անհատներից, որոնք ներկայացնում են 1918-1920 թթ. թուրքական արշավանքների մասին հիշողություններ և երգային-չափածո ստեղծագործություններ՝ թուրքերի վայրագությունների ու հայ ժողովրդի ծանր դրության վերաբերյալ, ինչպես նաև Շիրակի առանձին բնակավայրերին նվիրված հայրենագիտական բնույթի աշխատություններ՝ հիշողությունների հիման վրա գրված հարուստ տեղեկություններով:

Փորձենք ամփոփ ներկայացնել հավաքված նյութերի մեջ առկա այն սյուժեները, որոնք առավել կրկնվող են: Այսպես, ամենաշատ հիշողություններն անհատների, խմբերի ու զանգվածային սպանությունների մասին են, որոնք ներկայացված են ինչպես թռուցիկ՝ ընդհանրական ձևով, այնպես էլ հնարավորինս մանրամասն, երբեմն սահմռկեցուցիչ մանրամասներով: Հաջորդը կազմում են կանանց, հարսների ու աղջիկների մասին պատմություն-

[1] Шнирельман В.А., Социальная память, с.18.

ները, որոնք, սյուժետային առումով ընդհանրական լինելով հանդերձ (թե ինչպես էին թուրք «փաշաներն» ու ասկյարները փախցնում, բռնաբարում (ինչպես պատմողն է ասում՝ «խայտառակ էին էնըմ») նրանց կամ ինչպես էին աղջիկներին ու հարսներին փորձում տգեղացնել, այլանդակել կամ թաքցնել), ներառում են նաև կոնկրետ՝ անվանական դեմքերին ու նրանց գործերին վերաբերող հիշողություններ, այդ թվում նաև թուրքերի դեմ կռվելու կամ սպանելու դեպքեր: Այս առումով հետաքրքիր են Սառնաղբյուրի ինքնապաշտպանությանը կանանց մասնակցության մասին պատմությունները[1]:

Բավականին մեծ թիվ են կազմում ավարառության ու թալանի մասին հիշողությունները, որոնք ևս կարելի է բաժանել երկու մասի՝ հենց թուրքերի կողմից մարդկանց ունեցվածքը (խոսքը վերաբերում է ոչ միայն ոսկուն, այլև անասուններին ու հացահատիկին) թալանելու նկարագրությունների ու նրանց ուղեկցող կամ ավելի հետո գյուղ մտած մահմեդական խմբերի՝ ղարափափախների, քրդերի ու թաթարների (որոնց բանասացները կոչում էին խուժան) կողմից իրականացրած ավերածությունների ու թալանի նկարագրությունների: Այս առումով կարևոր է նշել, որ հիշողության կրողները հատկապես շեշտում էին վերջիններիս անմարդկային ու դաժան էությունը՝ հաճախ ասելով, թե դրանք թուրքերից վատն էին, նրանց ագահությունն ու անհագուրդ տեսակը, թվարկելով, թե ինչեր են տարել իրենց հետ (մասնավորապես դուռ, լուսամուտ, ձիթհանի փայտե մասեր և այլն):

[1] Այս մասին տե ս. Ռ. Գևորգյան, 1918թ. մայիսյան հերոսամարտերի մի նոր նոր էջ՝ Սոգյութլուի գոյամարտը,«1918թ. մայիսյան գոյապայքարի պատմության նոր էջ», 1918թ. մայիսյան հերոսամարտերի և Հայաստանի Առաջին Հանրապետության 85-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, Եր. 2005, էջ 36-37:

Գրանցված պատմությունների մեջ ոչ պակաս չափով անդրադարձ կա նաև Շիրակի բնակիչների կողմից թուրքերին «աղուհացով դիմավորելու» թեմային: Այս մասին հիշողություններ պահպանվել են գերազանցապես տղամարդկանց մեջ, դրանց տրվել են նաև որոշակի մեկնաբանություններ: Այս դեպքում էլ երկու բացատրություն է տրվում. առաջինն, անշուշտ, անպաշտպան բնակչության ինքնապաշտպանական բնազդն է, երբ դեմառդեմ եկող թշնամուն սիրաշահելու ու գյուղը ավերածությունից և բնակչությանը կոտորելուց փրկելու հույսով ու հավատով էր արվում: Երկրորդը հետապնդում էր թուրքերին մոլորության մեջ գցելու, նրանց ներս հրավիրելու ու հետո հաշվեհարդար տեսնելու նպատակ:

Ընդհանուր առմամբ կարելի է ասել, որ Շիրակի բնակչության մեջ պահպանված հիշողություններն ու մասնավորապես մեր կողմից գրանցված պատմություններն ինչպես ամբողջական սյուժեներով, այնպես էլ առանձին դրվագներով շատ նմանություններ ունեն արևմտահայության նկատմամբ թուրքերի իրականացրած ցեղասպանության սյուժեներին ու առանձին դեպքերի նկարագրություններին: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ հայերին բնաջնջելու թուրքերի ձեռագիրը չի փոխվել, այն էթնիկ բնույթ ունի ու չի փոխվելու նաև հետագայում, ուստի գրանցված նյութերը՝ որպես փաստական վավերագրեր, աղբյուրագիտական մեծ արժեք են ներկայացնում:

Այդ պատճառով հայ-թուրքական արշավանքների ուսումնասիրությունն առանց օգտագործելու այն ոչ պաշտոնական պատմական տեղեկությունները, որոնց կրողները այդ իրադարձությունները վերապրած մարդիկ են, անխուսափելիորեն հանգեցնելու է պատմաբանների համար շատ կարևոր ինֆորմացիոն դաշտի սահմանների նեղացմանը: Վերը շարադրվածը թույլ կտա մաք-

սիմալ ճիշտ սահմանել պատմական իրադարձության իրական ծավալները և ապագա իրադարձությունների վրա դրա ազդեցության աստիճանը:Ըստ այդմ, «բանավոր պատմությունների» տվյալները՝ որպես ժողովրդի պատմական հիշողության փաստեր, հնարավորություն են տալիս ձևավորելու պատերազմական ժամանակաշրջանի իրական կյանքի ու իրողությունների այսպես կոչված «ժողովրդական» ներկայացման պատկերը և էապես լրացնելու պատերազմի հետահայաց կերպարը[1]:

НАШЕСТВИЯ ТУРОК 1918-1920 гг. В УСТНЫХ ВОСПОМИНАНИЯХ ШИРАКЦЕВ

Карине БАЗЕЯН
Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Ключевые слова: историческая память, турецкое нашествие, Ширак, геноцид, памятник.

В современной историографии устные рассказы рассматриваются как первоисточник, память же - как историческое явление, поскольку познание прошлого обеспечивает передачу нравственных и идеологических ценностей, ориентируя в конкретном историческом периоде и социальном пространстве.

Коллективная и историческая память - одна из важнейших элементов, определяющих понятия «нация, национальная идентичность». Она основана на знании и отношении людей к целым или отдельным эпизодам реального или воображаемого исторического прошлого своей нации. Именно поэтому на протяжении многих лет целе-

[1] Никулина Т.В., Киселева О.А., Советско-финляндская война в памяти гражданского населения Карелии (По материалам устных опросов),Военно-историческая антропология. Ежегодник. 2003/2004. Новые научные направления /Отв. ред. и сост. Е.С.Сенявская. М., 2005, с. 317-318. http://www.iriran.ru/?q=node/277

направленно и планомерно собирались и записывались воспоминания очевидцев, которые стали наиболее важными доказательствами Геноцида армян со стороны Турции. Однако, к сожалению, вне внимания исследователей остались сведения о массовых убийствах восточных армян и об экономических и социально-культурных последствиях зверств, совершенных турками в Восточной Армении.

Исследования по данной теме были проведены в последние два года. В результате записаны воспоминания около 60 жителей более 40 сел Амасийского, Ашоцкого, Ахурянского, Анийского районов Ширакской области и города Гюмри. Это истории и события, касающиеся как всего сообщества, так и рассказы об отдельных личностях.

В статье обобщены собранные материалы, в которых рассказывается о грабежах и массовых убийствах армянского населения в 1918-1920 гг., об отношении местного населения к оккупантам, что свидетельствует о политике геноцида, проводимой турками и в Восточной Армении.

TURKISH INVASIONS OF 1918-1920 IN THE ORAL MEMOIRS OF SHIRAKIANS

Karine BAZEYAN
Shirak Center for Armenological Studies RA

In modern historiography oral histories are considered as the main sources, and memories as a historical phenomenon, since knowledge about the past provides the transmission of moral and ideological values

from generation to generation, focusing on a specific historical period and social distance. Collective and historical memory is one of the most significant elements that characterize terms, such as "nation and national identity". It is based on the knowledge and attitudes of people around real or imagined historical episodes of the past.

Perhaps this is what is meant by the fact that over the years, the memories and stories of the Armenian Genocide witnesses, which are considered the most significant evidence of Turkish atrocities, have been collected purposefully and in a programmed way in written and oral forms. Unfortunately, the same cannot be said about the massacres of Eastern Armenians and about the crimes committed by the Turks in Eastern Armenia, as well as about their economic and socio-cultural consequences, which has not been thoroughly researched by experts. Over last two years much has been done in this direction, as a result of which more than 60 memories were written from the people living in Amasia, Ashotsk, Akhuryan, Ani and Gyumri. They contain both stories and events related to the General community, as well as stories about individuals.

The article briefly presents the collected materials, relating to the looting and massacre of the population in 1918-1920, the relations of the local population with the occupation authorities, especially the Turkish atrocities and slaughter that testify the genocidal policy implemented by the Turks in Eastern Armenia.

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 1920-1922 ԹԹ.

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Բանալի բառեր՝ Արտաքին գործեր, ժողովրդական կոմիսարիատ, բաժին, կառուցվածք, գործունեություն, անձնակազմ, վարիչ, զեկուցագիր, փաստաթուղթ:

Անոտացիա: 1920 թ. դեկտեմբերին խորհրդայնացած Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարության հիմքի վրա ստեղծված Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը 1920-1922 թթ. իր գործունեությունը կազմակերպում էր հյուպատոսական, քաղաքական, տեղեկատու և ընդհանուր բաժինների միջոցով: Հոդվածը վերաբերում է բաժինների գործունեության շրջանակների, ունեցած դերակատարության բացահայտմանը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին ՀՀ խորհրդայնացումից հետո նոր իշխանություններն անմիջապես ձեռնամուխ եղան նախկին՝ դաշնակցական կառավարության իշխանության կենտրոնական ու տեղական մարմինների լուծարմանը կամ վերակառուցմանը և նորերի ձևավորմանը: Ասվածը վերաբերում է նաև նախկին կառավարության օրոք արտաքին հարաբերություններն իրականացնող վարչական մարմնին՝ Արտաքին գործերի նախարարությանը:

ՀՀ գոյության վերջին օրերին վարչապետ Սիմոն Վրացյանը միաժամանակ Արտաքին գործերի նախարարն էր: Դեկտեմբերի 2-

ին Ս. Վրացյանի ղեկավարած կառավարության հրաժարականից հետո թափուր մնաց նաև արտգործնախարարի պաշտոնը: 1920թ. դեկտեմբերի 3-ից մինչև 10-ը Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) արտաքին գործերի նախարարության ժամանակավոր վարիչի պարտականություններն իրականացրեց նախարարի օգնական Մովսես Պետրոսյանը: ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը փաստացի կազմավորվեց 1920 թ. դեկտեմբերի 10-ին: Այդ օրվանից է Ալեքսանդր Բեկզադյանը սկսել ժողկոմի պարտականություններ իրականացնել, իսկ դեկտեմբերի 12-ին Հայաստանի հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի հրամանով պաշտոնապես հաստատվել այդ պաշտոնում[1]:

Նշանակվելով Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական կոմիսար՝ Ա. Բեկզադյանը ժառանգություն ստացավ ՀՀ արտաքին գործերի նախարարության գոյություն ունեցող կառուցվածքը և անձնակազմը: Հայաստանի խորհրդայնացման պահին ՀՀ արտգործնախարարությունն ուներ 28 աշխատակից և հետևյալ կառուցվածքը՝ քաղաքական բաժին (վարիչ՝ Պողոս Յակուլյան), արտասահմանյան հաստատությունների բաժին (վարիչ՝ Միհրան Խոջամիրյան), տեղեկատու բաժին (վարիչ՝ Մուշեղ Արզումանյան), գաղութային բաժին (վարիչ՝ Ներսես Բաբայան), դիվանապետը Վահան Սարպեյանն էր[2]:

ՀՍԽՀ իշխանությունները գրեթե ամբողջությամբ պահպանեցին ՀՀ-ից ժառանգած պետական վարչական համակարգը՝ են-

---

[1] Մանրամասն տե՛ս Սուքիասյան Հ.Կ., ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կազմավորման պատմությունից, «Բանբեր Երևանի համալսարանի, հասարակական գիտություններ. Միջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն», Եր., 2010, N 130.6, էջ 54-60:

[2] Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 37, ց. 1, գ. 11, թ. 18:

թարկելով մասնակի փոփոխությունների: Չմոռանանք, որ Հայաստանում իշխանության եկած բոլշևիկները կադրային մեծ բազա չունեին և հաճախ այլընտրանք չունեին, քան նախկին պաշտոնյաներին (հատկապես միջին օղակին) պահելը: Ասվածը վերաբերում է նաև արտաքին գործերի ժողկոմատին: Մ. Արզումանյանի՝ այլ աշխատանքի տեղափոխվելուց հետո տեղեկատու բաժնի վարիչի պաշտոնը մնաց թափուր մինչև Մ. Պետրոսյանի՝ բաժնի վարիչ նշանակվելը, իսկ արտասահմանյան հաստատությունների բաժինը վերակառուցվեց հյուպատոսական բաժնի: Լուծարվեց միայն գաղութային բաժինը:

Ի դեպ, արտգործնախարարության կազմում գաղութային բաժին հիմնելու մասին ՀՀ կառավարությունը որոշում էր կայացրել 1920 թ. օգոստոսի 27-ին: Բաժինը ստեղծվել էր հայկական գաղութների վիճակն ուսումնասիրելու, նրանց Մայր հայրենիքի հետ կապելու և գաղութահայերի նյութական ու բարոյական ուժերը Հայաստանի օգտին օգտագործելու նպատակով[1]: Բաժնի վարիչի պաշտոնում Ն. Բաբայանը նշանակվել էր սեպտեմբերի 10-ին[2]: 1921թ. փետրվարյան ապստամբությանը նախորդող շրջանում բոլշևիկների կողմից ձերբակալվեցին նախկին շատ պաշտոնյաներ, որոնք բանտարկությունից ազատվեցին փետրվարի 18-ի իշխանափոխության արդյունքում: Դրանց թվում էր նաև Ն. Բաբայանը: Մարտի 4-ին «արտաքին գործերի նախարարության վարիչ» Ս.Վրացյանին ուղղված դիմումում արդեն «պարենավորման նախարարության գործերի վարիչ» Ն. Բաբայանը տեղեկացնում էր, որ բանտարկվել և «մինչև վերջին կոպեկը» թալանվել է բոլշևիկյան

[1] Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ. 1918-1920 թթ., Եր., 2014, էջ 546:

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 30, թ. 2:

իշխանությունների կողմից, ինչպես նաև չի ստացել 1920 թ. դեկտեմբեր ամսվա համար իրեն հասանելիք աշխատավարձը: Նա խնդրում էր տալ չվճարված աշխատավարձը[1]: Մեզ հայտնի չէ, թե ինչ հետևանք ունեցավ Ն. Բաբայանի դիմումը:

Չնայած ՀՀ արտգործնախարարության գաղութային բաժնի լուծարմանը՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները կարևորում էին հայկական գաղթավայրերի հանգամանքը: Ասվածի վկայությունն է խորհրդայնացումից օրեր անց՝ 1920 թ. դեկտեմբերի 13-ին, Մովսես Պետրոսյանի հեղինակած «Արտասահմանյան գաղութներ» խորագրով զեկուցագրի ի հայտ գալը: Նշյալ զեկուցագրում մանրամասն անդրադարձ էր կատարվում հայկական գաղթավայրերի դրությանը, Հայկական հարցի առնչությամբ գաղթավայրերում տիրող մտայնությանը և գաղութահայ կազմակերպություններին: Հեղինակը կարևոր խնդիր էր համարում արտասահմանի հայությանը ներկայացնել խորհրդայնացման օգտակարությունը Հայաստանի հետագա զարգացման տեսակետից: Նա ՀՍԽՀ ղեկավարությանն առաջարկում էր գաղթավայրերն օգտագործել քաղաքական և ֆինանսատնտեսական առումներով օգուտներ ստանալու համար[2]: Իսկ արդեն 1921 թ. հունվարին, արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի համար Մ. Պետրոսյանի կողմից պատրաստված կանոնադրության նախագծի համաձայն, բաժնի կազմում նախատեսվում էր ունենալ արտասահմանի հայկական գաղութների ենթաբաժին, որը պետք է հարաբերություններ հաստատեր հայկական գաղթավայրերի հետ, նրանց տեղեկություններ

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 177, թ. 5:

[2] Սուքիասեան Հ., Հայ գաղթավայրերի եւ Արեւելքի երկրների հանդէպ Խորհրդային Հայաստանի քաղաքականութեան խնդիրը 1920-ի վերջ-1921-ի սկզբին, «Հայկազեան հայագիտական հանդէս», հ. ԼԱ, Պէյրութ, 2011, էջ 555-558:

փոխանցեր Խորհրդային Հայաստանի վերաբերյալ, վերլուծություններ պատրաստեր գաղթավայրերի մասին, զբաղվեր ներգաղթին առնչվող խնդիրների կանոնակարգմամբ և այլ հարցերով[1]:

Եթե հարևան երկու ոչ խորհրդային պետություններում և խորհրդային հանրապետություններում կենտրոնացած հայության հետ կապը պահվում էր տվյալ երկրներում գործող ՀՍԽՀ ներկայացուցչությունների միջոցով, ապա այլ պետություններում բնակվող հայության հետ կապեր հաստատելու և ՀՍԽՀ տնտեսական վերաշինության գործում նրանց աջակցությունը ստանալու համար կարևոր նշանակություն ունեցան ՀՍԽՀ իշխանությունների կողմից տարբեր երկրներ ուղարկված առաքելությունները:

1920 թ. դեկտեմբերից մինչև 1922 թ. հուլիսը արտգործժողկոմատի կազմում հիշատակվում են հյուպատոսական, քաղաքական, տեղեկատու (ինֆորմացիոն) և ընդհանուր բաժինները: Որոշ փաստաթղթերում ժողկոմատի կազմում նշվում է նաև տնտեսական բաժին:

Արտաքին հարաբերություններ իրականացնող վարչական մարմնի համար առանձնահատուկ կարևորություն պետք է ունենար արտերկրում սեփական ներկայացուցչությունների հետ կապի ապահովումը: Այս տեսակետից կարևոր էր հյուպատոսական բաժնի դերը: Այն կազմակերպվել էր դեռևս ՀՀ օրոք: Խորհրդայնացմանը նախորդող օրերին բաժինը կոչվում էր «Արտասահմանյան հաստատությունների բաժին»[2]: Այս անվանումով էլ բաժինը ժառանգություն անցավ ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատին:

---

[1] Սուքիասեան Հ., նշվ. աշխ., էջ 564-565:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 2, թ. 5, գ. 617, թ. 89, ֆ. 37, ց. 1, գ. 11, թ. 18:

Արդեն 1921 թ. հունվարի 5-ին արտասահմանյան հաստատությունների բաժինը վերանվանվել էր հյուպատոսական բաժնի[1]: Այս անվանումով բաժինը գործեց մինչև ժողկոմատի լուծարումը: Բաժնի վարիչ Միհրան Խոջամիրյանն իր աշխատանքային գործունեությունը սկսել էր ՀՀ արտգործնախարարությունում՝ 1919թ. հունիսի 1-ին[2], ապա անցել ՀՍԽՀ արտգործժողկոմատ, իսկ Փետրվարյան ապստամբության շրջանում՝ Հայրենիքի փրկության կոմիտեի արտգործնախարարություն: Մ. Խոջամիրյանը միաժամանակ իրականացնում էր նաև ժողկոմատի քարտուղարի գործառույթները[3]: Գերազանց տիրապետելով ֆրանսերենին՝ նա ընդգրկվեց նաև թուրքերի հետ պայմանագիր ստորագրելու նպատակով 1921թ. սեպտեմբերին Կարս ուղարկված հայկական պատվիրակության կազմում:

Արտգործժողկոմատի բաժինների գործառույթների մասին մեզ եզակի տեղեկություններ է տալիս անթվակիր, սակայն, բովանդակությունից դատելով, 1921թ. ապրիլի երկրորդ կեսին կամ մայիսի սկզբին ժողկոմատի կողմից պատրաստված փաստաթղթերից մեկը: Վերջինը հավանաբար ստեղծվել է Հայհեղկոմի կողմից բոլոր ժողկոմատներին ուղղված 1921թ. ապրիլի 13-ի և 29-ի հանձնարարականների հիման վրա, ուր պահանջ էր դրվում կոմիսարիատների դրության վերաբերյալ զեկուցումներ պատրաստել[4]:

Վերոհիշյալ փաստաթղթում կարևոր տեղեկություններ կան հյուպատոսական բաժնի վերաբերյալ: Նշվում էր, որ բաժնի հիմնական խնդիրը «հյուպատոսական հաստատությունների ցանցի

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 40, թ. 5:
[2] Նույն տեղում, գ. 30, թ. 2, գ. 191, թ. 15:
[3] Նույն տեղում, գ. 160, թ. 178:
[4] Նույն տեղում, գ. 15, թ. 5, 14:

կազմակերպումն է այնտեղ, որտեղ պահանջում են պետության և Հայաստանի քաղաքացիների շահերը, և այդ հաստատությունների գործունեության ղեկավարությունը»: Հիշատակելով, որ մինչև Հայաստանի խորհրդայնացումը դիվանագիտական ներկայացուցչությունների և հայկական հյուպատոսական հաստատությունների ընդարձակ ցանց էր գործում Եվրոպայի, Ամերիկայի, Աֆրիկայի և Ասիայի շատ քաղաքներում, նշվում էր, որ Խորհրդային Հայաստանը ևս դժվարությամբ ձեռնամուխ է եղել հարևան խորհրդային երկրներում ներկայացուցչությունների կազմակերպմանը: Մատնանշվում էր, որ կապերի բացակայության հետևանքով այդ աշխատանքները և տվյալ հաստատությունների գործունեությունը տեղի են ունենում բացարձակապես անկախ կերպով, առանց կենտրոնից եկող ցուցումների, «ինչը կարող է շատ անցանկալի հետևանքներ ունենալ»: Բաժնին վերաբերող առաջիկա ծրագրերի առնչությամբ նշվում էր, որ հյուպատոսությունների ցանցի անհապաղ կազմակերպումը կենսական խնդիր է, ինչը բխում է աշխարհով մեկ սփռված հայության շահերից[1]: Հայկական գաղթավայրերն առանձնապես կարևորվում էին նյութական ռեսուրսներով ու փորձառու մասնագետներով աղքատ Հայաստանն ապահովելու տեսակետից: Պատահական չէ, որ 1921թ. մայիսից սկսած՝ ՀՍԽՀ իշխանությունները ձեռնամուխ եղան լիազոր ներկայացուցչությունների և հյուպատոսությունների ցանցի ընդլայնմանը:

Բաժինը կարևոր դեր ուներ և ակտիվ գործունեություն էր իրականացնում արտերկրում ՀՍԽՀ ներկայացուցչությունների հետ փոխհարաբերությունների ապահովման: Պատահական չէ, որ արտգործժողկոմատի կողմից պատրաստված փաստաթղթերում 4

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 31, թ. 73:

բաժինների շարքում գրեթե միշտ առաջինը հիշատակվում է հյուպատոսականը: Չնայած այս իրողությանը՝ բաժնի գործունեությունն արտացոլող արխիվային նյութերը շատ չեն: Նշենք, որ բաժնի միակ աշխատակիցը նույն բաժնի վարիչն էր: Հյուպատոսական բաժինը կապեր էր պահպանում արտերկրում գործող ՀՍԽՀ լիազոր ներկայացուցչությունների և հյուպատոսությունների հետ, մանդատներ տրամադրում ներկայացուցչություններ գործուղվող արտգործժողկոմատի պաշտոնյաներին: Բաժինը զբաղվում էր նաև Հայաստանից արտերկիր մեկնող քաղաքացիներին անցագրերով ապահովելու գործով[1]:

Հյուպատոսական բաժինը հարաբերություններ էր պահպանում նաև հանրապետությունում գտնվող օտարերկրյա ներկայացուցչությունների հետ, անհրաժեշտության դեպքում վերջինների մասին տվյալներ հաղորդում պետական մյուս հաստատություններին: Այսպես՝ 1922 թ. ապրիլին և մայիսին տարբեր առիթներով բաժինը ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովին տեղեկություններ փոխանցեց Երևանում գտնվող պարսկական և թուրքական հյուպատոսարանների, ինչպես նաև իտալական տնտեսական ներկայացուցչության, Ամերկոմի և Անգլկոմի վերաբերյալ[2]:

Բնորոշ է, որ տարբեր պետություններում ՀՍԽՀ ներկայացուցչությունների հետ հարաբերություններն արտգործժողկոմատը հաճախ իրականացնում էր ընդհանուր բաժնի միջոցով[3]: Բացառված չէ, որ այստեղ կարող էր դերակատարություն ունենալ սուբյեկտիվ գործոնը, այն է՝ Ա. Մռավյանի և Մ. Խոջամիրյանի անձնական փոխհարաբերությունը: Մասնավորապես արտգործժողկոմա-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 22, թ. 248:
[2] Նույն տեղում, գ. 147, թ. 40, 62:
[3] Նույն տեղում, ց. 1, գ. 275, թ. 2:

տի նախկին աշխատակից Հարություն Թուրշյանը վկայում է, որ «Մռավյանը նրան (այսինքն՝ Մ. Խոջամիրյանին-Հ.Ս.) չէր սիրում ամենից առաջ նրա համար, որ նա Ալ. Բեկզադյանի ընկերն էր եղել արտասահմանյան էմիգրացիայում, չէր սիրում նաև նրա համար, որովհետև Միհրան Խոջամիրյանը չէր հետևել իր մյուս մենշևիկ ընկերներին և դիմում չէր տալիս կոմկուսի շարքերն ընդունվելու համար»[1]:

ՀՍԽՀ արտգործժողկոմատի բաժիններից առանձնահատուկ դեր էր նախատեսված քաղաքական բաժնի համար: Ինչպես տեսանք, այս բաժինը ևս ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատը ժառանգել էր ՀՀ արտգործնախարարությունից: Բաժինը ստեղծվել էր դեռևս 1918թ.: Հայաստանի խորհրդի կողմից 1918թ. դեկտեմբերի 24-ին հաստատված ՀՀ արտգործնախարարության կառուցվածքի և հաստիքների ցանկում նշվում է նաև քաղաքական բաժինը[2]: Մեզ ճշգրիտ հայտնի չէ, թե երբ է Պողոս (Պավել) Յակուլյանը նշանակվել բաժնի վարիչ: ՀՍԽՀ արտգործժողկոմատի հաստիքացուցակներից մեկում նրա աշխատանքային ստաժի սկիզբ նշված է 1919թ. ապրիլի 10-ը, իսկ մեկ այլ փաստաթղթում՝ 1919թ. հունիսի 1-ը[3]: Հավանական է, որ Պ. Յակուլյանն աշխատանքի է անցել որպես բաժնի վարիչ: Նա ևս, Հայաստանի խորհրդայնացումից հետո շարունակելով պաշտոնավարումը, բաժնի վարիչի պաշտոնում մնաց մինչև ժողկոմատի լուծարումը: Նա ևս պաշտոնավարել է նաև Հայրենիքի փրկության կոմիտեի արտգործնախարարությունում:

---

[1] Թուրշյան Հ., Հուշեր և խոհեր, «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 1990, N 3, էջ 186:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 136, թ. 15, գ. 349, թ. 1 շրջ.:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 30, թ. 2, գ. 191, թ. 15:

1921թ. ապրիլին կամ մայիսի սկզբին պատրաստված, ՀՍԽՀ արտգործժողկոմատի դրությանը վերաբերող, մեր կողմից վերը հիշատակված փաստաթուղթը կարևոր տեղեկություններ է հաղորդում քաղաքական բաժնի գործառույթների մասին: «Ճիշտ է, խոսք անգամ լինել չի կարող Խորհրդային Հայաստանի ինքնուրույն քաղաքական ուղղության մասին, բայց մեր ժողովրդի կյանքի սահմանափակ պայմաններն առաջ են քաշում բազում սուր և մեզ համար մեծ կարևորության հարցեր, որոնց լուսաբանումը, եթե ոչ հենց դրանց լուծումը, պետք է ելնի Երևանից: Քաղաքական բաժինը պետք է գրանցի և պատրաստի այդ հարցերը, այսինքն՝ ունենա քաղաքական հստակ ծրագիր: Ներկայումս մենք միայն արձագանքում ենք հաճախ մեզ հանկարծակիի բերող քաղաքական բնույթ ունեցող այս կամ այն իրադարձությանը: Այդ ծավալով աշխատանքի համար, իհարկե, հատուկ քաղաքական բաժին ունենալու անհրաժեշտություն չկա», – կարդում ենք փաստաթղթում[1]: Հետագայում քաղաքական բաժնի գործունեության բնագավառն էականորեն չընդարձակվեց:

Քաղաքական բաժնի վարիչ Պ. Յակուլյանը սկզբնական շրջանում կատարում էր հեռագրերի ծածկագրումը և ժողկոմատում ստացված ծածկագրերի վերծանումը: Այսպես՝ արտաքին գործերի ժողկոմի ժամանակավոր պաշտոնակատար Ա. Մռավյանը Պ. Յակուլյանին էր հանձնել ժողկոմատի նախկին աշխատակից Ա. Տեր-Հակոբյանի կողմից պարենավորման և արտաքին գործերի ժողկոմատների համար պատրաստված 1921 թ. հունվարի 7-ով թվագրվող զեկույցի ծածկագրումը: Զեկույցը նվիրված էր Խորհրդային Հայաստանի տնտեսական դրությանը վերաբերող

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 31, թ. 72 շրջ.:

խնդիրների քննությանը[1]: Հ. Թուրշյանը ևս վկայում է, որ Պ. Յակուլյանը զբաղվում էր ծածկագրերի վերծանմամբ: 1921 թ. հուլիսին՝ արտգործժողկոմատում աշխատանքի անցնելուց հետո, Ա. Մռավյանը Պ. Յակուլյանի փոխարեն նրան է հանձնել ծածկագրերի վերծանման գործը՝ չնայած Թուրշյանը խոստովանում է. «Իմ ռուսերենը շատ աննախանձելի էր (մանավանդ Յակուլյանի ռուսերենի համեմատությամբ) և ինձ միանգամայն անծանոթ էր դիվանագիտական տերմինոլոգիան»[2]:

Քաղաքական բաժնի գործունեության վերաբերյալ սուղ տեղեկություններ են պահպանվել արխիվային փաստաթղթերում: Եղած վավերագրերից դատելով՝ արտգործժողկոմատի կողմից սահմանային խնդիրների վերաբերյալ նյութերի հավաքումը կատարվում էր քաղաքական բաժնի կողմից, խնդրի շուրջ Պ. Յակուլյանը գրագրություններ էր իրականացնում այլ պետական մարմինների հետ[3]:

Բաժնի գործունեության վերաբերյալ որոշակի պատկերացում է տալիս Պ. Յակուլյանին տրված մանդատների ուսումնասիրությունը (բաժնի միակ աշխատակիցը նույն բաժնի վարիչն էր): Այդ մանդատներից դատելով՝ Պ. Յակուլյանը հաճախ կատարում էր արտգործժողկոմի հատուկ կարգադրությունները: 1921 թ. հուլիսի 26-ին արտաքին գործերի ժողկոմի և հյուպատոսական բաժնի վարիչի ստորագրությամբ Պ. Յակուլյանին տրված մանդատում նշվում էր, որ նրան հանձնարարված է Թիֆլիս հասցնել ժողկոմատի դիվանագիտական փոստը: Արտգործժողկոմատը Խորհրդային Հայաստանի և մյուս խորհրդային հանրապետությունների զինվո-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 69, թ. 1-5:
[2] Թուրշյան Հ., նշվ. աշխ., էջ 187:
[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 172, թ. 3-5, ց. 2, գ. 21, թ. 73, գ. 156, թ. 1 և շրջ.:

րական և քաղաքացիական իշխանություններին խնդրում էր ուղևորության ընթացքում օժանդակել Պ. Յակուլյանին: Խնդիրն այն է, որ փոխադրվող դիվանագիտական գրագրությունները, փաթեթները և ծանրոցները բացման ու ստուգման ենթակա չէին[1]: Նույն հուլիսի 26-ով թվագրվող մեկ այլ փաստաթղթում, որը արտգործժողկոմատի ընդհանուր բաժնի վարիչի գրությունն է Երևանի կոոպերատիվների վարչությանը, նշվում էր, որ ժողկոմատի քաղաքական բաժնի վարիչ Պ. Յակուլյանը Թիֆլիս է մեկնում «իբրև դիվանագիտական սուրհանդակ»[2]: Նույն օրը Թիֆլիսում ՀՍԽՀ լիազոր ներկայացուցիչ Հ. Սուրխաթյանին ուղղված գրությամբ Ա. Մռավյանը տեղեկացնում էր. «Արտգործժողկոմատի քաղաքական բաժնի վարիչ Պողոս Յակուլյանին հանձնարարում եմ աչքի անցնել Ձեզ հանձնված ներկայացուցչության արխիվը, պատճենները հանելու համար այն փաստաթղթերից, որոնք բացակայում են կոմիսարիատիս արխիվում»[3]: 1921 թ. նոյեմբերին արտգործժողկոմատի հյուպատոսական բաժնի կողմից Պ. Յակուլյանին տրված մանդատում նշվում էր, որ վերջինս կոմիսարիատին վերաբերող գործերով մեկնում է Թիֆլիս, Բաքու և Վլադիկավկազ՝ իր հետ տանելով նաև անձեռնմխելի դիվանագիտական փոստը[4]: 1922 թ. փետրվարի 24-ին Պ. Յակուլյանին տրված նույնանման մի մանդատից տեղեկանում ենք, որ նա կոմիսարիատի գործերով կրկին Թիֆլիս և Բաքու էր մեկնում[5]:

Ի տարբերություն հյուպատոսական և քաղաքական բաժինների՝ արտաքին գործերի ժողկոմատի տեղեկատու բաժինը (փաս-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 238:
[2] Նույն տեղում, թ. 239:
[3] Նույն տեղում, ց. 2, գ. 36, թ. 132:
[4] Նույն տեղում, ց. 1, գ. 209, թ. 6:
[5] Նույն տեղում, ց. 1, գ. 237, թ. 72:

տաթղթերում բաժինը հանդես է գալիս նաև «ինֆորմացիոն» անունով) դժվար է միանշանակ ՀՀ արտգործնախարարության տեղեկատու բաժնի ժառանգորդը համարել: Թեև ՀՍԽՀ արտգործժողկոմատն այլ աշխատանքի ուղարկեց նախկին նախարարության տեղեկատու բաժնի վարիչ Մ. Արզումանյանին, սակայն գիտակցվում էր ժողկոմատի համար տեղեկատու բաժնի կարևորությունը՝ հատկապես բազմաբնույթ տեղեկատվություններ, մամուլի տեսություններ պատրաստելու և կոմունիստական գաղափարների քարոզչության ասպարեզում:

Առանձնահատուկ նշանակություն տալով արևելյան երկրների և մասնավորապես Թուրքիայի մասին տեղեկատվության հավաքագրմանը (մասնավորապես թուրքերի հետ կայանալիք կոնֆերանսին նախապատրաստվելու տեսակետից)՝ Խորհրդային Հայաստանի իշխանությունները կարևորեցին արտգործժողկոմատի կազմում արևելյան բաժնի կազմակերպումը: Ի պատասխան Արարատյան նահանգի հեղկոմի վարչական բաժնի 1921 թ. հունվարի 3-ի պահանջի՝ հունվարի 5-ին վերջինին ուղղված արտգործժողկոմատի պատասխան գրությանը կից ժողկոմատի աշխատակիցների ցանկում փորձառու Մովսես Պետրոսյանը հիշատակվում էր որպես արևելյան բաժնի վարիչ[1]: Դեռևս 1920 թ. դեկտեմբերի 23-ին պատրաստած «Զեկուցում Խորհրդային Հայաստանի Արևելքի քաղաքականության մասին» վերնագրված փաստաթղթում վերջինս անդրադարձել էր խորհրդային հանրապետությունների արևելյան քաղաքականության մեջ Խորհրդային Հայաստանի ունենալիք դե-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 40, թ. 5:

րին և հիմնավորել ՀՍԽՀ արտգործժողկոմատի կազմում արևելքի բաժին ստեղծելու կարևորությունը[1]:

Բացի 1921 թ. հունվարի 5-ով թվագրվող ներկայացված վավերագրից, մեզ հանդիպած այլ փաստաթղթում տեղեկություն չի հանդիպում արտգործժողկոմատի արևելյան բաժնի մասին: Ամենայն հավանականությամբ, դրա պատճառն այն է, որ շատ շուտ բաժինը վերանվանվել է տեղեկատու և արևելյան բաժնի, իսկ այնուհետև՝ տեղեկատու բաժնի: Մ. Պետրոսյանի կողմից պատրաստված «Նախագիծ Խ[որհրդային] Հայաստանի արտաքին գործերի կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի ներքին կազմակերպության» վերնագրված փաստաթղթի տակ հեղինակը ստորագրել է իբրև «Արտ[աքին] գործ[երի] կոմիսարիատի ինֆորմացիոն և արևելյան բաժնի վարիչ»: Ըստ նախագծի՝ բաժինն ունենալու էր երեք ենթաբաժին՝ ընդհանուր ինֆորմացիայի, արևելյան երկրների, արտասահմանյան հայ գաղութների: Վերջին երկու ենթաբաժինները, ինչպես տեսնում ենք, իրագործելու էին նախկինում արևելյան և գաղութային բաժիններին վերապահված գործառույթները[2]:

Չնայած այս ջանքերին, այդուհանդերձ ներկայացված նախագիծն ամբողջությամբ կյանքի չկոչվեց, իսկ տվյալ ստորաբաժանումը, ինչպես երևում է արխիվային վավերագրերից, սկսեց կոչվել պարզապես տեղեկատու (ինֆորմացիոն) բաժին: 1921 թ. փետրվարյան ապստամբության ավարտից հետո կրկին մեջտեղ եկավ Մ. Պետրոսյանի կողմից պատրաստված տեղեկատու բաժնի նախագիծը, իսկ հետագայում որոշակի լրացումներից ու խմբագրումից հետո՝ 1922 թ. օգոստոսի 2-ին, ՀՍԽՀ ժողովրդական կոմիսար-

[1] Խաչատրյան Կ. Հ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Եր., 2007, էջ 112-113: Սուքիասեան Հ., նշվ. աշխ., էջ 559-563:

[2] Սուքիասեան Հ., նշվ. աշխ., էջ 563-566:

ների խորհրդի (ժողկոմխորհ) նախագահ Սարգիս Լուկաշինի կողմից հաստատվեց իբրև ժողկոմխորհի տեղեկատու բաժնի կանոնադրություն[1]:

Բացի մեր կողմից վերը նշված մեկ դեպքից, երբ Մ. Պետրոսյանը հիշատակվում է որպես արևելյան բաժնի վարիչ, և տեղեկատու բաժին կազմակերպելու նախագծից, որի տակ Մ. Պետրոսյանը ստորագրել է որպես «ինֆորմացիոն և արևելյան բաժնի վարիչ», 1921 թ. հունվար-փետրվար ամիսներին (մինչև փետրվարի 18-ի իշխանափոխությունը) բաժինը հիշատակվում է տեղեկատու անունով: Կարևորելով բաժինն ամուր հիմքերի վրա դնելը՝ 1921 թ. հունվարի 15-ին բաժնի վարիչի օգնական նշանակվեց կոմունիստ, Բաքվի «Կոմունիստ» թերթի խմբագրակազմի նախկին անդամ Գեղամ Անտելեպյանը[2]: Այս հանգամանքը պայմանավորված էր բաժնի կարևորությամբ: Փետրվարի 18-ի իշխանափոխությունից հետո Գ. Անտելեպյանն ազատվեց զբաղեցրած պաշտոնից[3]:

Արտաքին գործերի ժողկոմի պաշտոնակատար Աշոտ Հովհաննիսյանի կողմից փետրվարի 17-ին Հայհեղկոմին ուղղված մի գրությունից տեղեկանում ենք, որ փետրվարի 15-ի գիշերը ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովի (չեկա) կողմից ձերբակալվել է ժողկոմատի «անփոխարինելի աշխատակից» տեղեկատու բաժնի վարիչ Մ. Պետրոսյանը (նա ՀՅԴ անդամ էր): Ժողկոմը խնդրում էր պարզել ձերբակալման պատճառները և հնարավորության պարագայում միջոցներ ձեռք առնել ձերբակալվածին ազատ արձակելու համար[4]: Մ. Պետրոսյանը բանտից ազատվել է 1921 թ. փետրվարի

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 91, թ. 3-6 շրջ.:
[2] Նույն տեղում, ց. 1, գ. 191, թ. 15, գ. 192, թ. 1-21:
[3] Նույն տեղում, գ. 7, թ. 77 և շրջ.:
[4] ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 4, թ. 37, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 69:

18-ին տեղի ունեցած իշխանափոխության արդյունքում, որից հետո նրան տեսնում ենք Ս. Վրացյանի գլխավորած Հայրենիքի փրկության կոմիտեի արտգործնախարարությունում: Մ. Պետրոսյանն այստեղ պաշտոնավարել է մինչև մարտի 15-ը: Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Երևանում վերահաստատված ՀՍԽՀ արտգործժողկոմատի հաստիքացուցակներում նրա անունը բացակայում է: Բանն այն է, որ Մ. Պետրոսյանը Պարսկաստան էր անցել: Դաշնակցության վարած քաղաքական գծին համաձայն չլինելու պատճառաբանությամբ՝ 1921 թ. ամռանը հեռացել է ՀՅԴ-ից[1]:

1921 թ. մայիսին Գ. Անտելեպյանը տեղեկատու բաժնի վարիչի օգնականի փոխարեն նշանակվեց բաժնի վարիչ[2]: Հուլիսին ժողկոմատում աշխատանքի ընդունվեց Հարություն Թուրշյանը, որը բաժնի վարիչի օգնական աշխատեց մինչև դեկտեմբերի սկիզբը, երբ արտգործժողկոմ Ա. Մռավյանի կարգադրությամբ ազատվեց զբաղեցրած պաշտոնից[3]: Գ. Անտելեպյանը բաժնի վարիչ մնաց մինչև արտգործժողկոմատի լուծարումը, իսկ դրանից հետո նշանակվեց Ժողկոմխորհի քաղաքական բաժնի վարիչ:

Տեղեկատու բաժինը զբաղվում էր ինչպես արտգործժողկոմատի, այնպես էլ ՀՍԽՀ հեղկոմի, իսկ այնուհետև նաև Ժողկոմխորհի համար բազմաբնույթ տեղեկագրեր, զեկուցագրեր, բյուլետեններ պատրաստելու գործով: Պայմանավորված այս ամենի կարևորությամբ՝ արտգործժողկոմատի լուծարման շրջանում արդեն Ժողկոմխորհի տեղեկատու բաժինը ստանձնեց ներքին օգտագործման համար բյուլետեններ, տեսություններ պատրաստելու գործը:

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 77, «Ռանջբար Իրանի», Թեհրան, 27 օգոստոսի 1921, N 6:
[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 118:
[3] Նույն տեղում, գ. 192, թ. 1-21, գ. 7, թ. 208-209, գ. 160, թ. 183:

Այս փաստաթղթերի որոշ մասի վրա հատուկ նշվում էր, որ դրանց «ժողովրդայնացումն արգելվում է»[1]:

Արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի պատրաստած նյութերի հիմնական մասը վերաբերում էր Թուրքիային: Ասվածը հատկապես վերաբերում է 1921 թ. հունվարից մինչև փետրվարի 18-ը պատրաստված տեղեկանքներին: Այս իրողությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ Խորհրդային Հայաստանի իշխանություններն ակտիվ կերպով պատրաստվում էին Մոսկվայում գումարվելիք կոնֆերանսին, որից մեծ ակնկալիքներ ունեին: Թուրքիայի մասին տեղեկատվություններ պատրաստելու գործը ղեկավարում էր Մ. Պետրոսյանը: Այս շրջանում բաժնի պատրաստած զեկույցներում քննության էին առնվում քեմալական Թուրքիայի ներքին կյանքը, քեմալական կառավարության և ժողովրդական զանգվածների փոխհարաբերությունները, Փոքր Ասիայում ու Արևմտյան Հայաստանի տարածքում մեծ ծավալներ ընդունած թուրքական ազգայնական շարժմանն առնչվող հարցերը, Կ. Պոլսի և Անկարայի թուրքական կառավարությունների փոխհարաբերությունները, ԹԱՄԺ-ում տիրող իրավիճակը, այստեղ ներկայացված հոսանքների փոխհարաբերությունները, ձգտումներն ու գործունեությունը: Անդրադարձ էր կատարվում նաև Ալեքսանդրապոլի և Ղարաքիլիսայի շրջաններում թուրքերի կատարած բռնություններին, ջարդերին ու թալանին: Առանձնապես կարևոր ուշադրություն էր դարձվում Հայաստանի և կոմկուսի մասին թուրքական մամուլի հրապարակումներին, թարգմանաբար քաղվածքներ էին ներկայացվում թուրքական մամուլից[2]: Հաջորդ ամիսներին ևս

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 81, թ. 136-145 շրջ., 149-180 շրջ., գ. 86, թ. 85-88 շրջ.:

[2] Նույն տեղում, ց. 1, գ. 225, թ. 1-13, 19-23, ց. 2, գ. 86, թ. 3-5 շրջ., 9-13 շրջ., ֆ. 1022, ց. 3, գ. 329, թ. 1-5 շրջ.:

բաժնի պատրաստած զեկույցներում զգալի ծավալ էր կազմում Թուրքիայի մասին նյութը:

Տեղեկատու բաժնի պատրաստած բյուլետեններում անդրադարձներ էր կատարվում նաև եվրոպական երկրների ներքաղաքական վիճակին, նրանց արևելյան քաղաքականությանը, խորհրդային հասարակարգի և բոլշևիկյան կուսակցության նկատմամբ տարբեր պետություններում եղած վերաբերմունքին: Ուշադրությունից չեն վրիպել նաև գաղութահայությանն ու այստեղ գործող քաղաքական կուսակցություններին առնչվող հարցերը, Հայկական հարցի զարգացումները, Հայկական հարցին գաղութահայության վերաբերմունքը, կովկասյան վտարանդիական կազմակերպությունների փոխհարաբերությունները և բազում այլ հարցեր[1]: Այս տեղեկատվությունները պատրաստվում էին ռուսական, եվրոպական և գաղութահայ մամուլի հիման վրա, որոնք ժողկոմատը ձեռք էր բերում տարբեր ճանապարհներով:

Բաժինը տեղեկատվություններ, վերլուծություններ էր պատրաստում նաև Թիֆլիսում բնակվող Հովսեփ Պարսամյանի (Բարսամյան) միջոցով: Բաժնի վարիչ Գ. Անտելեպյանը 1921 թ. հունիսի 12-ին Հ. Պարսամյանին ուղղված գրության մեջ տեղեկացնում էր, որ նա համարվում է բաժնի արտահաստիքային աշխատակից և առաջարկում որոշակի վարձատրության դիմաց զեկուցումներ պատրաստել Մերձավոր Արևելքի քաղաքական դրության, եվրոպական երկրներում տիրող իրավիճակի, եվրոպական պետությունների և ԱՄՆ-ի փոխհարաբերությունների մասին[2]: Պատրաստած տեսություններում Հ. Պարսամյանը մանրամասն անդրա-

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 3, թ. 58-74, 89-96, գ. 40, թ. 48-49, գ. 81, թ. 1-133, գ. 84, թ. 43-46 շրջ., գ. 93, թ. 7-23 շրջ., գ. 192, թ. 14-29:

[2] Նույն տեղում, գ. 91, թ. 12:

դարձել է մասնավորապես Անտանտի երկրների հետ քեմալական Թուրքիայի համագործակցության խնդրին և հակախորհրդային քաղաքականությանը[1]:

Բաժինը հարաբերություններ էր պահպանում կուսակցական և պետական կառույցների, հանրապետական և արտերկրի մամուլի օրգանների հետ, պատրաստի նյութեր ուղարկում «Խորհրդային Հայաստան» թերթին, ՀՍԽՀ ղեկավարների մասին կենսագրական տվյալներ ուղարկում արտերկրի մամուլում տպագրելու համար[2]:

Մեր կողմից վերը հիշատակված արտգործժողկոմատի դրության մասին փաստաթղթում 1921 թ. գարնանը տեղեկատու բաժնի առջև ծառացած խնդիրների առնչությամբ մասնավորապես նշվում էր. «Մի կողմից արտաքին գործերի կոմիսարիատը բացարձակապես զրկված է վկայություններից այն մասին, թե ինչ է կատարվում այլ երկրներում և հայկական գաղութներում, իսկ մյուս կողմից այդ գաղութները, հայրենի երկրի մասին նորությունների ծարավ լինելով, սնվում են պատահական, եվրոպական մամուլի հաճախ սուտ տեղեկություններով»[3]: Ահա թե ինչու, ներքին օգտագործման համար տեղեկանքներ պատրաստելուն զուգահեռ, արտգործժողկոմատը 1921թ. հունիսից ձեռնամուխ եղավ սեփական պարբերականի հրատարակմանը:

«Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի ինֆորմացիոն բաժնի բյուլետեն»-ում, արտաքին հարաբերությունն-

[1] ՀԱԱ, ֆ. 114, թ. 27 և շրջ., գ. 86, թ. 129-138:

[2] ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 122, թ. 96, ֆ. 114, ց. 1, գ. 242, թ. 6, ֆ. 117, ց. 1, գ. 20, թ. 95, «Խորհրդային Հայաստան», 10 սեպտեմբերի 1921, N 169, 6 հունվարի 1922, N 5:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 31, թ. 73:

րին վերաբերող հարցերին զուգահեռ, պարբերականում անդրադարձ էր կատարվում ժողկոմատի գործառույթներին չվերաբերող խնդիրների՝ կարմիր բանակ, գյուղատնտեսություն, սոցիալական, կրթամշակութային կյանք և այլն, հրատարակում Հ. Յ. Դաշնակցության դեմ ուղղված գաղափարաքարոզչական նյութեր: 1921 թ. հունիսից մինչև 1922 թ. մարտը հրատարակվել է պարբերականի ընդամենը 10 համար[1]:

Արտաքին գործերի ժողկոմատի ամենածանրաբեռնված ստորաբաժանումն ընդհանուր բաժինն էր: Հայաստանի խորհրդի կողմից 1918 թ. դեկտեմբերի 24-ին հաստատված ՀՀ արտգործնախարարության կառուցվածքի և հաստիքների ցանկում քաղաքական բաժնի հետ միաժամանակ հիշատակվում է ընդհանուր բաժինը[2]: 1920թ. հուլիսի 23-ին ՀՀ արտգործնախարարության կառուցվածքում հիշատակվում է նաև դիվանը կամ ընդհանուր բաժինը: Դիվանապետ Վ.Սարպեյանը Հայաստանի խորհրդայնացումից հետո շարունակեց պաշտոնավարել ՀՍԽՀ արտգործժողկոմատում:

Արտգործժողկոմատի կազմում ընդհանուր բաժինը մեզ հանդիպած արխիվային փաստաթղթերում առաջին անգամ հիշատակվում է 1921թ. փետրվարյան ապստամբության նախօրեին (փետրվարի 12-ին). աշխատանքի ժողկոմատի վիճակագրական բաժնին ուղղված գրությունը ստորագրել է «ընդհանուր բաժնի վարիչ»-ը[3]: Փաստաթուղթը տեղեկություններ է պարունակում արտգործժողկոմատի գտնվելու վայրի (Գուբերնսկայա 39) և աշխատակիցների թվի (18) վերաբերյալ: Ամենայն հավանականությամբ, ընդհանուր

[1] Մանրամասն տե՛ս Սուքիասյան Հ. Կ., ՀՍԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնի բյուլետենը (1921-1922 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև՝ ԼՀԳ), Եր., 2008, N 3, էջ 87-93:

[2] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 136, թ. 15:

[3] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 47, թ. 8:

բաժնի վարիչի գործառույթներն իրականացնում էր նախկին դիվանապետ Վ. Սարպեյանը: Վերջինս՝ որպես դիվանապետ, պաշտոնավարել է նաև Փրկության կոմիտեի արտգործնախարարությունում: 1921թ. ապրիլի 2-ին Երևանում խորհրդային կարգերի վերականգնումից հետո նա ՀՍԽՀ արտգործժողկոմատ այլևս աշխատանքի չի վերադարձել, ինչի հետևանքով ընդհանուր բաժնի վարիչ-դիվանապետի պաշտոնն առժամանակ թափուր է մնացել՝ մինչև մայիսին ժողկոմատում Ալեքսանդր Մելյանի աշխատանքի անցնելը[1]: Ասվածով է պայմանավորված, որ ժողկոմատի դրության մասին պատրաստված, մեր կողմից վերը հիշատակված տեղեկանքում նշվում է, որ թափուր է նաև ընդհանուր բաժնի կամ դիվանի վարիչի պաշտոնը[2]:

Նշենք, որ միշտ չէ, որ ընդհանուր բաժնի վարիչը և դիվանապետը նույն գործառույթն են իրականացրել: Սա առավելապես վերաբերում է ժողկոմատի գործունեության սկզբնական շրջանին, երբ կառավարման ասպարեզում առավել ակնառու էր Հայաստանի Հանրապետության շրջանից եկող ավանդույթը: 1922 թ. մարտի 3-ին արտգործժողկոմ Ա. Մռավյանին ուղղված ընդհանուր բաժնի վարիչ Ա. Մելյանի զեկուցագրից տեղեկանում ենք, որ նախկին գործավարի հաստիքը անվանափոխված է դիվանապետի: Ա. Մելյանը ժողկոմին առաջարկում էր մինչ այդ գործավար Եվգենիա Տեր-Խաչատրյանին նշանակել դիվանապետ[3]: Վերջինը մինչ այդ ևս ժամանակավորապես դիվանապետի գործառույթներ է կատարել:

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 7, թ. 134, 143:
[2] Նույն տեղում, գ. 31, թ. 72:
[3] Նույն տեղում, գ. 237, թ. 95:

Ա. Մելյանի՝ ընդհանուր բաժնի վարիչ նշանակվելուց հետո բաժնի աշխատանքների շրջանակները և ծավալն էականորեն մեծանում են: Դա պայմանավորված էր ինչպես ժողկոմատի բաժինների շարքում նշյալ բաժնի ու նրա վարիչի առանձնակի մեծ դերակատարությամբ,այնպես էլ այն հանգամանքով, որ արտգործ-ժողկոմատի գործունեության մեջ նշանակալի ծավալ էին կազմում ընթացիկ գրագրությունները և առօրյա տարբեր խնդիրները, որոնց լուծում էր տրվում բաժնի կողմից: Բացի այդ՝ ընդհանուր բաժնում էր կենտրոնացված նաև հյուպատոսական և քաղաքական բաժինների գործավարությունը:

Ընդհանուր բաժինը ժողկոմատին առնչվող հարցերի շուրջ վերջինի անունից գրագրություն էր վարում կուսակցական մարմինների, պետական տարբեր գերատեսչությունների, մասնավոր անձանց հետ, զբաղվում ժողկոմատի ամենատարբեր խնդիրների լուծմամբ, նաև նոր աշխատակիցների ընդունման հարցերով:

Բաժնի վարիչի պարտականությունները կատարելուն զուգահեռ՝ Ա. Մելյանը միաժամանակ իրականացնում էր ժողկոմատի «կոլեկտիվի նախագահի» գործառույթները, ժողկոմատը ներկայացնում տարբեր գերատեսչությունների ներկայացուցիչների խորհրդակցություններում[1]: Նա իր պաշտոնում մնաց մինչև արտգործ-ժողկոմատի լուծարումը:

1921թ. աշնանից սկսած՝ որոշ փաստաթղթերում արտգործ-ժողկոմատի կազմում հիշատակվում է տնտեսական բաժնի վարիչի պաշտոն: Այսպես՝ 1921 թ. հոկտեմբերի 5-ին Հայկ Բաբախանյանին տրված մանդատում նշվում է, որ նա հանդիսանում է ժողկոմատի «տնտեսական մասի վարիչը», սակայն երկու օր անց՝ հոկտեմբերի 7-ին, արտգործժողկոմատի աշխատակիցների ցանկում

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, թ. 5, գ. 7, թ. 180:

վերջինս նշված է որպես մատենավար[1]: Իսկ ժողկոմատի աշխատակից Արամ Տեր-Գրիգորյանը տարբեր առիթներով նշվում է ինչպես տնտեսական բաժնի վարիչ, այնպես էլ՝ տնտեսապետ: 1922 թ. հունվարի 25-ին արտգործժողկոմատի աշխատակիցների ցուցակում նա հանդես է գալիս որպես տնտեսապետ, իսկ ժողկոմատի կողմից 1921 թ. նոյեմբերի 14-ին և 1922 թ. փետրվարի 9-ին իրեն տրված մանդատներում՝ իբրև տնտեսական բաժնի վարիչ[2]: Ժողկոմատի տնտեսական խնդիրներով զբաղվող այս բաժինը կարճ ժամանակ է գոյություն ունեցել և ակտիվ գործունեություն չի իրականացրել՝ քանի որ բաժնին առնչվող հարցերի գերակշիռ մասին լուծում էր տրվում ընդհանուր բաժնի կողմից:

Ինչպես տեսնում ենք, Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողկոմատը գործում էր չորս (հյուպատոսական, քաղաքական, տեղեկատու, ընդհանուր) բաժինների միջոցով: Բաժինները պահպանվեցին մինչև Հայաստանի կենտգործկոմի 1922թ. հուլիսի 3-ի՝ արտգործժողկոմատը լուծարելու մասին որոշման ընդունումը:

Ժողկոմատի հյուպատոսական բաժինը կապեր էր պահպանում արտերկրում ՀՍԽՀ ներկայացուցչական հաստատությունների և հանրապետությունում գործող օտարերկրյա ներկայացուցչությունների հետ, զբաղվում վերջիններին առնչվող խնդիրներով, մանդատներ տրամադրում արտերկիր մեկնողներին: Բաժնի վարիչ Միհրան Խոջամիրյանը միաժամանակ կոմիսարիատի քարտուղարն էր: Քաղաքական բաժնի խնդիրը ժողկոմատի համար առանձնահատուկ քաղաքական նշանակություն ունեցող հարցերի

[1] ՀԱԱ, ֆ. 114, ց. 1, գ. 160, թ. 116, 119-120:
[2] Նույն տեղում, գ. 237, թ. 28-29, 53, 54:

վերհանումն ու արտաքին քաղաքական ուղղությանն առնչվող խնդիրների ճշգրտումն էր: Բաժնում էր կենտրոնացված մասնավորապես ՀՍԽՀ սահմանային խնդիրներին առնչվող նյութերի հավաքումը: Բաժնի վարիչ Պողոս Յակուլյանը կատարում էր նաև ժողկոմի հատուկ հանձնարարականները: Ինչ վերաբերում է սկզբում Մովսես Պետրոսյանի, ապա Գեղամ Անտելեպյանի գլխավորած տեղեկատու բաժնին, այն զբաղվում էր ՀՍԽՀ իշխանությունների համար տեղեկանքներ, տեսություններ պատրաստելով և սեփական պարբերականի («Բյուլետենի») հրատարակմամբ: Ժողկոմատի բաժիններից ամենածանրաբեռնվածն Ալեքսանդր Մելյանի ղեկավարած ընդհանուր բաժինն էր, որը զբաղվում էր ժողկոմատին առնչվող առօրյա խնդիրների լուծմամբ: Բաժնում էր կենտրոնացված ժողկոմատի ողջ ընթացիկ գործավարությունը:

СТРУКТУРА НАРОДНОГО КОМИССАРИАТА ИНОСТРАННЫХ ДЕЛ СОВЕТСКОЙ АРМЕНИИ В 1920–1922 гг.

Амо СУКИАСЯН

Институт Истории НАН РА

Ключевые слова: Иностранные дела, Народный комиссариат , Управление, Структура, Деятельность, Аппарат, Начальник, Отчет, Документ.

В 1920-1922 годах Народный комиссариат иностранных дел Советской Армении, созданный в декабре 1920 года на базе Минис-

терства иностранных дел Первой Республики Армении, организовывал свою деятельность через консульский, политический, информационный и общий отделы.

Консульский отдел Наркомата поддерживал контакты с уполномоченными представительствами и консульствами Советской Армении за рубежом, а также с иностранными представительствами, действующими в стране, решая связанные с ними вопросы, предоставляя мандаты выезжающим за границу.

Задача политотдела заключалась в выявлении вопросов особого политического значения для Наркомата и выяснении вопросов, связанных с внешней политикой. Информационный отдел занимался подготовкой справок, обзоров прессы для властей Армении, издавал собственный периодический журнал («Бюлетень»). Функции Главного управления заключались в решении повседневных вопросов, связанных с Наркоматом, и в надлежащем осуществлении текущего управления.

STRUCTURE OF PEOPLE'S COMMISSARIAT OF FOREIGN AFFAIRS OF SOVIET ARMENIA IN 1920–1922

Hamo Sukiasyan
Institute of History NAS RA

Keywords - Foreign Affairs, People's Commissariat, Department, Structure, Activities, Staff, Head, Report, Document.

In 1920-1922 People's Commissariat of Foreign Affairs of Soviet Armenia, established in December 1920 on the basis of the Ministry of Foreign Affairs of the First Republic of Armenia, organized its activities through consular, political, information and general departments.

The Consular department of the People's Commissariat maintained contacts with the authorized representations and consulates of Soviet Armenia abroad, as well as foreign missions operating in the country, dealing with issues related to the latter, providing mandates to those traveling abroad.

The task of the political department was to identify questions of special political significance for the People's Commissariat and to clarify issues related to foreign policy. The information section was engaged in preparing references, press reviews for the Armenian authorities, publishing its own periodical ("Bulletin"). The function of the General Department was to settle the evetyday issues related to the People's Commissariat and to carry out the current administration properly.

ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ ՊԵՏԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԸ 1918-1920ԹԹ.

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ Ալեքսանդրապոլ, գավառ, պետական գործիչ, գաղթականներ, պետականաշինություն, թուրքական ռազմակալում, քաղաքագլուխ, քաղաքային վարչություն:

Անոտացիա: Հոդվածը նվիրված է Հայաստանի առաջին հանրապետության շրջանում Ալեքսանդրապոլի գավառում գոր-

ծող պետական քաղաքական գործիչներին, որոնց գործունեությունը մեծապես նպաստել է հայ բնակչության ֆիզիկական գոյության պահպանմանը և հայոց պետականաշինությանը:

Ալեքսանդրապոլի գավառի պետական-քաղաքական գործիչների գործունեությունը պայմանավորված է մի շարք գործոններով և որոշակի հանգամանքներով, այն է՝ թուրքական տեղական իշխանության մարմինների ստեղծման ռազմավարությամբ, ՀՀ պետական կառավարմանը հատուկ պետական կենտրոնական և տեղական ինքնավարության մարմինների լիազորությունների վերաբերյալ պայքարով, ինչպես նաև պետական և կուսակցական սկզբունքների բախմամբ:

19-րդ դարի վերջին և 20-րդի սկզբին հայ ժողովուրդն ապրում էր իր բազմադարյան պատմության ամենածանր օրերը:Թուրքական ցեղասպան քաղաքականության հետևանքով դատարկվել էր Արևմտյան Հայաստանը, ցեղասպանությունից մազապուրծ գաղթական դարձած արևմտահայությունը ապաստանել էր Արևելյան Հայաստանում, թուրքական յաթաղանը կախվել էր Հարավային Կովկասի հայության գլխին: Թուրքական արշավանքների բովում ծնված Հայաստանի Հանրապետության պետականաշինության փորձերն ուղեկցվելով սովի, հիվանդությունների դեմ մաքառումներով, թուրքական նոր արշավանքներին դիմագրավելով, ի վերջո ավարտվում են հայոց պետականության կորստով:

1918-1920 թթ. Հայաստանի առաջին հանրապետության պետականաշինության ուսումնասիրությունը գիտական և քաղաքական մեծ կարևորություն ունի հայոց պետականության պատմության համար: 1918-1920թթ. Հայաստանի Հանրապետության պատմության ուսումնասիրության համար, բացի տնտեսական, քաղաքական և հոգևոր-մշակութային գործոններից, կարևոր նշանակու-

թյուն ունի նաև պետական, քաղաքական, հոգևոր-մշակութային գործիչների գործունեության ուսումնասիրումը: Մինչդեռ հայ պատմագիտությունը ավելի շատ կարևորել է պատմական իրադարձությունների ուսումնասիրությունը՝ ավելի քիչ ուշադրություն դարձնելով ժամանակի գործիչների գործունեությանը, որոնք ազդեցիկ դեր են ունեցել տվյալ ժամանակաշրջանի պատմական իրադարձությունների վրա: Մասնավորապես, խոսքը վերաբերում է Ալեքսանդրապոլի գավառի պետական քաղաքական գործիչների գործունեության ուսումնասիրմանը:

Ալեքսանդրապոլի գավառը Հայաստանի Հանրապետության կարևոր տարածաշրջաններից էր, այն ուներ առանձնահատուկ դեր թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական և թե՛ մշակութային կյանքում՝ պայմանավորված մի շարք հանգամանքներով: Նախ՝ Ալեքսանդրապոլի գավառը 20-րդ դարի սկզբի Արևելյան Հայաստանի ամենահոծ հայկական բնակչություն ունեցող գավառն էր, որտեղ 1897 թվականից մինչև 1916 թվականը բնակչության թիվն անշեղորեն աճում էր: Այսպես. 1897 թվականին 165503-ից 1916 թվականին գավառի բնակչության թիվն հասել էր 227115-ի[1]: Ալեքսանդրապոլ քաղաքում ապրում էին 51800 մարդ, որից հայեր էին 45646-ը[2]:

Ալեքսանդրապոլում և գավառում մեծ թիվ էին կազմում գաղթականները: Առաջին համաշխարհային պատերազմի սկզբից մի քանի ամիս անց Ալեքսանդրապոլի գավառը ապաստան էր դարձել եղեռնից մազապուրծ հազարավոր արևմտահայերի համար, որոնց մեջ մեծ թիվ էին կազմում նաև մտավորականներ, զին-

[1] Кавказский календарь, Тифлис, 1916:

[2] Саркисян Г.Г., Население Восточной Армении в XIX – начале XXв., Ер., 2002. Кавказский календарь, Тифлис, 1917.

վորականներ, քաղաքական, հոգևոր գործիչներ[1]: Հայաստանի կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919թ. տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառն ուներ 152414 բնակչություն /ծխերի թիվը 18220 էր/, որից բնիկներ էին միայն 118053-ը, իսկ 34361-ը՝ գաղթականներ /31989 թուրքահպատակ և 2372-ը՝ ռուսահպատակ/[2]:

Ալեքսանդրապոլում մեծ թիվ էին կազմում արտասահմանում կրթություն ստացած և տարբեր լեզուների տիրապետող մտավորականները:

Ալեքսանդրապոլի գավառի պետական, քաղաքական գործիչների գործունեությունը պայմանավորված է մի շարք գործոններով և որոշակի հանգամանքներով, այն է՝ թուրքական տեղական իշխանության մարմինների ստեղծման ռազմավարությամբ, ՀՀ պետական կառավարմանը հատուկ պետական կենտրոնական և տեղական ինքնավարության մարմինների լիազորությունների վերաբերյալ պայքարով, ինչպես նաև պետական և կուսակցական սկզբունքների բախմամբ:

Սույն հոդվածում անդրադառնալու ենք 1918 թվականի թուրքական ռազմակալման և Հայաստանի անկախության շրջաններում գործող պետական, քաղաքական գործիչների գործունեությանը:

---

[1] Ալեքսանյան Կ, Ալեքսանդրապոլի գավառում հաստատված գաղթականությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, Հանրապետական գիտական նստաշրջան, Նյութերի ժողովածու, Գյումրի, 2007, էջ 144-147: Նույնի, Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին (փաստաթղթերի հավաքածու), Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), Եր., 2008, թիվ 2, էջ 40-56:

[2] ՀԱԱ, Ֆ.127, ց.1, գ. 2976, թ. 20:

1918-1920թթ. ընթացքում Ալեքսանդրապոլի գավառը երկու անգամ պատմական տարբեր պայմաններում գրավվել և վեցական ամսով ռազմակալվել է թուրքական զորքերի կողմից: Այն իր ազդեցությունն է թողել նաև տեղական իշխանության մարմինների՝ մասնավորապես քաղաքային իշխանությունների՝ վարչության և խորհրդի ձևավորման ու գործունեության վրա:

Շարունակելով հայերի նկատմամբ իրականացվող ցեղասպանության քաղաքականությունը և հաշվի առնելով միջազգային նոր իրադրությունը՝ թուրքերն իրենց կատարած գործողություններին օրինական տեսք տալու համար օգտագործում են տեղական իշխանության կառույցները[1]: 1918թ. մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը գրավելուց հետո, նրանք այստեղ չեն մտցնում օսմանյան կայսրության մեջ գործող օրենքներն ու հիմնարկությունները, այլ օգտագործում են տեղական ցարական կառավարությունից մնացած օրենքներն ու վարչական կառույցները: Քանի որ թուրքական ներխուժման ժամանակ Ալեքսանդրապոլի տեղական իշխանություններն ամբողջ կազմով հեռացել էին՝ քաղաքը մատնելով անիշխանության, Ալեքսանդրապոլում մնացած բնակիչները թուրքերի համաձայնությամբ ձևավորում են տեղական իշխանության նոր մարմիններ[2]:

1918թ մայիսի 17-ին Օսմանյան զինվորական իշխանության կարգադրությամբ քաղաքացիների ընդհանուր ժողովը ընտրում է 29 հոգուց բաղկացած քաղաքային խորհուրդ, որն իր հերթին ընտ-

[1] Ալեքսանյան Կ., Տեղական կառույցների օգտագործման թուրքական քաղաքականությունը Ալեքսանդրապպի գավառում 1918-1921թթ, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», հ. 8, Գյումրի, էջ 49-52:

[2] Ալեքսանյան Կ., Փաստաթղթեր 1918թ.մայիսին թուրքական բանակի կողմից Ալեքսանդրապոլի գրավման և քաղաքային ինքնավարության նոր մարմինների ստեղծման մասին, ԲՀԱ, Եր., 2011, թիվ 1, էջ 24- 37:

ռում է 15 հոգուց բաղկացած վարչություն[1]: Քաղաքային ինքնավարությունը անմիջապես ենթարկվում է Տեղական իշխանության նախագահին, վերջինս իր հերթին՝ Կարսի ռազմաճակատի հրամանատար Շնքի փաշային: Գավառը ժամանակավորապես բաժանվում է գյուղախմբերի (հին սահմաններով): Գավառի վարչական պաշտոնյաները ենթարկվում են քաղաքային ինքնավարությանը[2]:

1918թ. հունիսի 4-ին, Բաթումի պայմանագրի համաձայն, Ալեքսանդրապոլի գավառը, բացառությամբ Ղարաքիլիսայի գավառամասի, անցնում է թուրքական տիրապետության ներքո: 1918թ. հունիսի 22-ին Հայոց Ազգային խորհուրդը Արամ Մանուկյանի նախագահությամբ լուծարում է Թուրքիային անցած տարածքների պետական հաստատությունները[3]: Մինչև 1918թ. սեպտեմբերի 8-ը, երբ Ալեքսանդրապոլում հաստատվում է Հայաստանի Հանրապետության ներկայացուցչությունը, թուրքերի հետ հարաբերությունները կարգավորվում էին բացառապես տեղական իշխանության վերոհիշյալ մարմինների միջոցով:

Թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլի գավառում գործող պետական գործիչներից հատկապես հարկ ենք համարում առանձնացնել քաղաքային խորհրդի և վարչության նախագահ Լևոն Սարգսյանին և վարչութան անդամ Մկրտիչ Ղազարյանին, ինչպես Լոռու և Փամբակի շրջանի մյուդիր/նայոդ/ Գեղամ Խան Սարգսյանին և Ալեքսանդրապոլում ՀՀ ներկայացուցիչ Գեվորգ Խոյեցյանին:Վերոհիշյալ գործիչները, գործելով թուրքական ռազմակալման պայմաններում, կարողացել են պետական գործչի

[1] ՀԱԱ, Ֆ. 105, ց. 1, գ. 2711, թ. 3-4:
[2] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 106-109:
[3] Ասրյան Ա., Արամ Մանուկյան. Կյանքը և գործը (Ազատագրական շարժման և անկախ պետականության վերականգնման ուղիներում), Եր., 2005, էջ 211:

ճկունությամբ և դիվանագիտական կարողություններով հնարավորինս զերծ պահել հայ բնակչությանը ֆիզիկական բնաջնջումից:

1918թ. թուրքական ռազմակալման շրջանում ամենահայտնի գործիչը թերևս Լևոն Սարգսյանն էր, որը, ղեկավարելով թուրքերի նախաձեռնությամբ ստեղծված քաղաքային ինքնավարությունը, դրսևորեց դիվանագիտական հմտություններ, պետական գործչին վայել խուսանավելու կարողություն՝ հայոց կործանվող նավը հասցնելով փրկության ափերին:

Լևոն Սարգսյանի ամենակարևոր գործերից մեկը Ալեքսանդրապոլի բանկչության կրած վնասների ցուցակագրումն էր և թուրքերի կատարած վայրագությունների արձանագրումը: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությունը Լևոն Սարգսյանի գլխավորությամբ դեռևս 1918թ. նոյեմբերի 8-ին ձեռնամուխ էր եղել Փամբակի, Լոռիի և Ալեքսանդրապոլի շրջաններում օսմանյան զորքի և թաթար խուժանի կողմից կրած վնասների արձանագրություններին, որի նպատակով գյուղերն են ուղարկվել առանձին գործակալներ պատրաստի բլանկներով[1]: Այդ բլանկներից երևում է, որ թուրքերն այստեղ կոտորել են հայ բնակչությանը մարդկությանը հայտնի բոլոր սարսափելի մահերով և թալանել մինչև վերջին հնարավորությունը:

Ավելի ուշ՝ 1918թ. դեկտեմբերին, Առաջին համաշխարհային պատերազմից կրած վնասները քննող հանձնաժողովի նախագահ Հ. Թումանյանը, Ալեքսանդրապոլի քաղաքային վարչության պետ Լ. Սարգսյանին ուղղված նամակում տեղեկացնելով ստեղծված բյուրոյի մասին, առաջարկում է նույն աշխատանքը չկատարելու համար տեղում կազմակերպել գործը: «Մեզ հաստատ աղբյուրներից,-նշված էր Հ. Թումանյանի գրության մեջ,-հաղորդեցին, որ դուք

[1] ՀԱԱ, Ֆ. 221, ց. 1, գ. 92, թթ. 99:

Ալեքսանդրապոլ քաղաքի և գաւառի համար պատրաստել եք նիւթեր: Ի նկատի ունենալով, որ մեր նպատակները մի են, մենք ուղարկում ենք ձեզ մեր բլանկներից որպես օրինակ և խնդրում ենք ձեզ յայտնել, թէ կարող եք արդէօք դուք տեղումդ կազմակերպել այս գործը»[1]:

Վիճակագրական նյութեր հավաքել է նաև Գեղամ խան Սարգսյանը, որին ևս բարձր է գնահատել Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետութեան կառավարության ներկայացուցիչ Խոյեցեանը՝ ՀՀ Արտաքին Գործերի նախարարին ուղղված 1918 հոկտեմբերի 4-ի գրության մէջ, որտեղ վերջինս առաջարկում է վիճակագրական տեղեկութիւններ հաղորդել Լոռու և Փամբակի շրջանների վերաբերեալ, տեղեկացվում է, որ այդ տվյալները տրամադրվել է Գեղամ խան Սարգսեանի կողմից: «Գեղամ խան Սարգսեանը,- ասուած է այդ գրութեան մէջ,-Աւդիբէգ գիւղացի, որը շնորհիւ արաբ, ֆարս, թուրք լեզուներին ծանօթ լինելուն օսմանեան կառավարութեան կողմից նշանակուած է Փամբակի եւ Լոռիի շրջանների նայող միւդիր եւ ամէն կերպ աշխատում էր, ըստ հնարաւորութեան, թեթեւացնել այդ շրջանների ժողովրդի դրութիւնը»[2]: Մասնավորապէս Ղոլղաթում 1918 թվականին սպանվել են ընդամենը երկու հոգի: Ըստ գիւղացիների հիշողութիւնների՝ նրանց փրկել է անխուսափելի մահից հենց Գեղամ փաշան: Թուրքերն անցնելով գյուղի տներից մէկի մօտով, լսել են Անդրանիկի անունը եւ մտածելով, որ Անդրանիկն այդ գիւղում է, որոշել են սպանել գիւղի ողջ բնակչութեանը: Մինչդեռ ղոլղաթցի Տէր-Սարգսեանը կանչելիս է եղել իր որդուն, որի անունը Անդրանիկ է եղել: Գեղամ

[1] ՀԱԱ, Ֆ. 221, ց. 1, գ. 38, թթ. 13:
[2] ՀԱԱ, Ֆ. 221, ց. 1, գ. 125, թ. 18:

փաշայի միջնորդությամբ են միայն գիւղի բնակիչները փրկվել անխուսափելի մահից:

Թուրքերի բռնակալման շրջանում ստեղծված քաղաքային ինքնավարության մարմինները քաղաքային վարչության նախագահ Լևոն Սարգսյանի գլխավորությամբ ոչ միայն փորձում են մեղմել թուրքական բռնությունները, այլև սաստել տեղական մանր իշխանությունների՝ մուխտարների և բաշմուխտարների կամայականությունները, որոնցից շատերը, միանալով թուրքերին, հանցագործություններ էին կատարում սեփական ժողովրդի նկատմամբ: Այդ մասին են վկայում քաղաքային վարչությանն ուղղված բազմաթիվ բողոքներ: Մասնավորապես, 1918թ. հոկտեմբերին Ղազարապատ գյուղի բնակիչները, բողոքելով իրենց գյուղի մուխտար Ալեքսան Հակոպովի և Եփրեմ Թաթոսովի դեմ, մեղադրում են նրանց բնակչությունից ավելի շատ հարկեր պահանջելու և ճնշելու համար և խնդրում են հեռացնել նրանց գյուղից՝ հակառակ դեպքում սպառնալով լքել գյուղը[1]:

Քաղաքային վարչության անդամները, հատկապես Մկրտիչ Ղազարյանը, անտեսելով կյանքից զրկվելու իրական վտանգները, համարձակորեն հարցեր է բարձրացրել թուրքական զինվորական իշխանությունների առջև, փորձել աջակցել հայրենակիցներին: Հատկապես նա մեծ գործ է կատարել հարկերի և տուրքերի սահմանաչափերի նվազեցման, անօրինականությունները վերացնելու համար:

Քաղաքային ինքնավարությունը խոշոր օգնություն է ցույց տվել նաև զանազան շրջաններից փախած գաղթականներին, որոնք ապաստանել են քաղաքում՝ նրանց համար բանալով որբանոցներ, հանրակացարաններ և այլն:

[1] ՀԱԱ, ֆ. 105, ց.1, գ.2768, թ.265-266:

Տեղական իշխանությունների առաջնային խնդիրներից էին փախստականների հետվերադարձն ապահովելը և կյանքը բնականոն հունի մեջ դնելը: Թուրքերն իրենց առաջխաղացումը պայմանավորելով իբր թե խաղաղություն կարգուկանոն պաշտպանելու պատրվակով և հանդես գալով տարածաշրջանում քաղաքակրթություն տարածողների դերում, արտաքնապես չէին խրախուսում գաղթը: Սակայն իրականում նրանք թույլ չեն տվել փախստականներին վերադառնալ իրենց բնակության վայրերը: Այսպես, երբ Ալեքսանդրապոլը գրավելու ժամանակ քաղաքից փախած բնակչությունը Արտակ վարդապետի գլխավորությամբ պատվիրակություն է ուղարկում փաշայի մոտ՝ խնդրելով իրենց վերադառնալու հնարավորություն տալ, վերջինս, մեղադրելով նրանց քաղաքից փախչելու համար, մերժում է՝ խոստանալով երեք օրից միայն թույլատրել: Սակայն նման մտադրություն թուրքերը բնավ չեն ունեցել, ընդհակառակը պատրաստվել են հարձակվելու Ղարաքիլիսայի վրա: Հասկանալով, որ Ղարաքիլիսայում գտնվողները հիմնականում ունևոր խավը և երիտասարդներն էին, նրանք փորձում էին համոզել վերջիններիս, որ չփախչեն:

Հատկապես Բաթումի պայմանագրի կնքումից հետո, երբ թուրքերը հայտարարել էին փախստականների՝ իրենց բնակության վայրերը վերադառնալու մասին, Լ.Սարգսյանը ամեն ինչ անում էր փախստականների վերադարձը ապահովելու համար: Այդ վերադարձը հեշտացնելու նպատակով քայլեր էր անում փախստականների բնակարանները և ունեցվածքը ապահով վիճակում պահելու համար: Փախստականները նույնիսկ իրենց բնակարանները վարձով տալու հնարավորություն ունեին:

Քաղաքային իշխանությունները մեծ ծավալի աշխատանքներ են իրականացնում գյուղական բնակչությանը անխուսափելի

սովից փրկելու համար: Մասնավորապես, քաղաքային վարչությունը դիմում է Ռեջեբ բեյին՝ խնդրելով ձրի հաց տալ այն գյուղացիներին, որոնք, վերադառնալով իրենց տները, գտել էին այն լիովին թալանված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վեհիբ փաշան առաջարկել էր քաղաքից ներկայացուցիչներ ընտրել Ռուսաստան մեկնելու և հաց գնելու, քաղաքային վարչությունը որոշում է խնդրել օսմանյան իշխանություններից, որ այդ ներկայացուցիչներին ուղարկեն հարևան Ելիզավետպոլի նահանգ՝ մթերային գնումների համար:Նկատի առնելով հարցի կարևորությունը՝ որոշվում է այն դնել Խորհրդի քննարկմանը: Օգոստոսի 27-ին Ալեքսանդրապոլի քաղաքային խորհրդի որոշմամբ խորհրդի նախագահ Սարգսյանը գործուղվում է Թիֆլիս՝ իրականացնելու քաղաքային խորհրդի հանձնարարությունը՝ վերադարձնելու հին քաղաքային վարչությունից քաղաքային և հասարակական գումարները, որոնք նրանք տարել էին իրենց հետ թուրքերի քաղաք մտնելուց առաջ: Նույն օգոստոսի 27-ին Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը որոշում է քաղաքի համար հաց գնելու նպատակով պատգամավորներ Գ. Փեշտմալջյանին և Յուսուֆ Զադեին Ելիզավետպոլի նահանգ գործուղել:

Հարկ է նշել, որ քաղաքային վարչության բոլոր դիմումները որոշ գյուղերից մուբայան ու աշարը չվերցնելու վերաբերյալ, Շնքի փաշայի կտրուկ հրամանով, մնում էին անհետևանք: Ավելին, կարգադրվում է հավաքել այդ երեք ութերոդից մեկ ութերոդն էլ հասարակական ամբարների համար, սակայն քաղաքային վարչության դիմումի համաձայն՝ դա ներվում է: Սկզբում գյուղացիները փորձում են թաքցնել բերքը, սակայն դաժան ծեծի են ենթարկվում, գրավվում է նրանց ամբողջ բերքը: Կարկուտի խփած տեղերում հարկի երեք ութերոդը որոշում են ծղոտի չափով: Բոլորովին բերք

չունեցողներից վերցնում են դրամով: Բերքի այս հավաքման մեջ մեծ դեր են կատարել հայ մուխտարներից և բաշմուխտարներից շատերը, որոնք, միանալով և պայմանավորվելով ասկյարների հետ, շատ դեպքերում վերցրել են հայ գյուղացիներից ամբողջ բերքը, լցրել իրենց ամբարները կամ ծախել: Գյուղացիները ստիպված են եղել կաշառք տալ նրանց, շաբաթներով կերակրել նրանց անասուններին: Շատ դեպքերում քաղաքային վարչության դիմումները մնացել են անպատասխան, և միայն քաղաքական դրության փոփոխության հետ ներվել է մուբայան և հետո այն գյուղերի աշարը, որոնք մինչ այդ դրանք չեն տվել: Հայաստանի Հանրապետության արտգործնախարարությանն ուղղված զեկուցման մեջ ներկայացնելով այս ամենը՝ Գ. Խոյեցյանը բարձր է գնահատել քաղաքային վարչության ներկայացուցիչ Մկրտիչ Ղազարյանի դերը՝ գրելով, «Այս կարգադրությունից յետոյ շատ տեղերում զապութներն ու ժանդարմները փորձում են հաւաքել մուբայան, սակայն ամէն անգամ դիմել եմ Տեղական իշխանութեան նախագահին, նրա համապատասխան կարգադրութիւնն ուղարկել տւել այդ գիւղերը և ազատել մուբայան, որը տանելուց յետոյ վերադարձնել չէր լինի: Այսպիսով ազատուել է միայն Մաստարա գիւղում ամբարած երեսուն հազար փութ հացահատիկը: Անգնահատելի է այս խնդրում քաղաքային վարչութեան անդամ Մկրտիչ Ղազարեանի դերը: Նա շարունակ դիմել է, խնդրել, շրջել գիւղերը, քննել ապօրինութիւնները, հեռացնել տւել ապիկար պաշտօնեաներին»[1]:

Ալեքսանդրապոլում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանը արտգործնախարարությանն ուղղված իր զեկուցագրում, անդրադառնալով քաղաքային իշխանությունների գործունեությանը, գրում է.

[1] ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 125, թ. 8:

«Քաղաքային ինքնավարութիւնը միջնորդութիւններ է հարուցում, շատ անգամ բարեհաջող հետևանքով, այնպիսի խնդիրների վերաբերմամբ, որոնք, ունենալով պետական լայն նշանակութիւն, իր իրավասութեանը ենթարկվել չեն կարող, ինչպես օրինակ գերիների, պետական հիմնարկութիւնների, էվակուացիայի, փախստականների վերադարձի, հարկերի եւ այլն, եւ այլն»[1]:

Թուրքական բռնազավթումների շրջանի հայտնի գործիչներից էր Ալեքսանդրապոլում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ Գևորգ Խոյեցյանը: ՀՀ ներկայացուցչությունը Ալեքսանդրապոլում բացվել է 1918 թ. սեպտեմբերի 4-ին և գործել մինչև 1919թ. հունվարի 25-ը, իսկ փետրվարի 1-ից՝ վերացվել[2]:

Մինչև 1919թ. փետրվարի 1-ը՝ ներկայացուցչության լուծարումը, այն շարունակել է տեղի թուրք ներկայացուցչի միջոցով հարաբերություններ պահպանել ու բանակցությունների մեջ լինել օսմանյան կառավարության հետ՝ փաստորեն հանդիսանալով բոլոր մինիստրությունների տեղական ներկայացուցիչը: Ներկայացուցչի պաշտոնում նշանակված Գ.Խոյեցյանի զեկուցագրերը տալիս են թուրքական ռազմակալման շրջանում Ալեքսանդրապոլի գավառում տեղի ունեցած դեպքերի ամբողջական պատկերը և իրական կյանքն Ալեքսանդրապոլում՝ թուրքական ռազմակալման շրջանում:

Թուրքերի հեռանալուց հետո Հայաստանի իշխանությունների առաջնահերթ խնդիրն է դառնում Ալեքսանդրապոլի գավառում տեղական իշխանության մարմինների ստեղծումը: Դեռ մինչ թուրքերի հեռանալը անիշխանությունը վերացնելու, գավառում մնացած մահմեդականների, նաև իրենց հայրենակիցների հանդեպ

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 70:
[2] Նույն տեղում թ. 74:

հանցագործություններ կատարած հայերի նկատմամբ ինքնադատաստանի դեպքերը կանխելու նպատակով, կառավարությունը ձեռնամուխ է լինում գավառային իշխանությունների ստեղծմանը: Մինչ նոր իշխանությունների ստեղծումը ՀՀ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը գավառային կոմիսարի պաշտոնը հանձնարարում է Ալեքսանդրպոլում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանին: «Նկատի առնելով Ալէքսանդրապօլի շրջանի առաջիկայ պարպումը տաճիկ զօրքերի կողմից,-գրում է Արամ Մանուկյանը Խոյեցյանին,-Հայաստանի Կառավարութիւնը արդէն կազմակերպել է յիշեալ շրջանի ադմինիստրացիան նշանակելով ամբողջ պաշտօնէութիւնը, բացի գաւառական կոմիսարից, որի պարտականութիւնները յանձնարարում եմ Ձեզ՝ Ալէքսանդրապօլի գավառի ադմինիստրացիայի և միլիցիայի պատասխանատու ղեկավար գաւառական կոմիսարի լիազօրութիւններով»[1]:

Փաստորեն Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմինները, Լևոն Սարգսյանի գլխավորությամբ, օգտվելով տեղական իշխանության մարմիններ ձևավորելու թուրքական ռազմավարության ընձեռած հնարավորություններից, 1918թ. թուրքական բռնակալման ամբողջ վեց ամիսների ընթացքում, միջնորդ հանդիսանալով հայ բնակչության և թուրք զինվորականների միջև, փորձել են հնարավորության սահմաններում պաշտպանել խաղաղ բնակչության շահերը, ապահովել նրա ֆիզիկական գոյությունը, զսպել թուրքական բռնություններն ու կամայականությունները:

Հայաստանի Հանրապետության շրջանում գործող ամենահայտնի պետական գործիչը թերևս Ալեքսանդրապոլի քաղաքապետ Հովհաննես Մելքոնյանն էր, որն առանձնապես աչքի էր ընկ-

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 74:

նում իր պետական մտածողությամբ: Նրա գործունեության վրա իր կնիքն էր դրել ՀՀ կառավարման համակարգին հատուկ պետական և հեղափոխական սկզբունքների բախումը, ինչպես նաև ՀՀ կենտրոնական և տեղական իշխանության մարմինների պայքարը լիազորությունների համար: Շատ հաճախ նա ստիպված էր բախվել ինչպես կենտրոնական իշխանության մարմինների, այնպես էլ դաշնակցական խմբապետների հետ: 1919 սեպտեմբերին Մելքոնյանն ընտրվում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխի պաշտոնում և գործում մինչև 1920թ մարտը, ապա իր դիմումի համաձայն հեռանում է այդ պաշտոնից:

Նա իր կառավարման ընթացքում ձեռնամուխ է լինում Ալեքսանդրապոլի գավառի տնտեսական վիճակի կայունացմանը, որը թուրքական վեցամսյա ռազմակալման շրջանում հասել էր ծայրահեղ ծանր վիճակի: Առաջին հերթին Մելքոնյանը պայքարում էր Ալեքսանդրապոլի գավառի վարչական տարածքների մեծացման և բնակչության թվի շատացման համար՝ համարելով դրանք գավառի տնտեսական զարգացման կարևոր պայմաններ, փորձում էր վերականգնել գավառի մինչև ռազմակալումը եղած տարածքներն ու բնակչությունը:

1918թ. թուրքական բռնազավթման հետևանքով ոչ միայն նվազել էր բնակչության թիվը, այլ նաև փոխվել՝ բնակչության կազմը: Գավառի բնակչության մի ստվար զանգված, թուրքական սպառնալիքից փրկվելու նպատակով, դարձել էր փախստական: 1918թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ արտգործնախարարությանը գրած զեկուցման մեջ Ալեքսանդրապոլում ՀՀ ներկայացուցիչ Գ. Խոյեցյանը

վկայում էր, որ Ալեքսանդրապոլի գավառից փախստականների թիվը 45 հազար էր[1]:

Մեկ այլ զեկուցման մեջ, ներկայացնելով գավառի բնակչության շարժը, Խոյեցյանը գրում է. «Թուրքական օկուպացիայի շրջանում նկատվում է բնակչության հոսք գյուղից քաղաք: Դա բացատրվում է նրանով, որ քաղաքում չեկով հաց են տալիս: Բացի այդ՝ գյուղում կամայականությունները մեծ չափերի են հասնում: Իսկ քաղաքից նկատվում է հոսք դեպի Թիֆլիս: Այստեղից Թիֆլիս են գնում բարձր, միջին և նույնիսկ չունևոր դասերը:

Ինչու են գնում՝ չեմ կարող բացատրել: Ժողովուրդը կարծես գլուխը կորցրել է: Գնում են Թիֆլիս, տեսնում կյանքի թանկությունը, նորից վերադառնում Ալեքպոլ, մի քանի ժամանակից նորից են գնում Թիֆլիս: Այդ շարժը բացատրել չեմ կարող: Բազմաթիվ թաթար գաղթականներ գրավել են քաղաքի ռուսական թաղամասը և ամենահարմար ու գեղեցիկ շենքերը, որոնց տերերը քաղաքի երևելի դասը փախել է քաղաքից»[2]:

Ալեքսանդրապոլի գավառի սահմանները ևս 1918թ. թուրքական արշավանքից հետո չեն վերականգնվում: Մասնավորապես Ղարաքիլիսայի գավառամասն 54078 բնակչությամբ (1915թ. տվյալներով) արդեն Ալեքսանդրապոլի գավառի մաս չէր կազմում, այլ 1918թ. հոկտեմբերից դարձել էր ինքնուրույն գավառ: ՀՀ տարածքի նոր վարչական բաժանման արդյունքում ձևավորված Ալեքսանդրապոլի գավառը բաժանվում է 4 գավառամասերի: Հայաստանի կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919թ. տվյալների

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 85:
[2] ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 125, թ. 27: ՀԱԱ, Ֆ. 200, ց. 1, գ. 126, թ. 109:

համաձայն՝ գավառն ուներ 129 գյուղ, 25 գյուղական հասարակություն[1]:

1918թ. Ալեքսանդրապոլի գավառի թուրքական ռազմակալման շրջանում տեղի ունեցած վարչաքաղաքական կառուցվածքի, բնակչության կազմի և թվի փոփոխությունները մեծապես ազդում են գավառի սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի հետագա ընթացքի վրա:

Հետևաբար տեղական իշխանությունները ձգտում էին լուծել գավառի սահմանների ընդլայնման և բնակչության քանակի ավելացման խնդիրները: Հովհաննես Մելքոնյանն առանձնապես նախանձախնդիր էր մի շարք պետական հիմնարկություններ Երևանից Ալեքսանդրապոլ տեղափոխելու հարցում:

ՀՀ կառավարությունը, ելնելով այն հանգամանքից, որ 1919 թվականին Երևանում բնակչության թիվը շատացել էր, թեև դրա համար նպաստավոր բնակարանային պայմաններ չուներ, որոշում է մի շարք հիմնարկություններ տեղափոխել Ալեքսանդրապոլ, որտեղ մեծ թվով ազատ բնակարաններ կային: Հայաստանի կենտրոնական վիճակագրական բյուրոյի կողմից 1919 թվականին կատարված հաշվումներով, Ալեքսանդրապոլի գավառում մինչև պատերազմը բնակարանների թիվը 154958 էր, պատերազմից հետո՝ 152324[2]: Կառավարությունը, ելնելով Երևանում բնակարանների սղությունից, որոշ հիմնարկություններ փորձում էր տեղափոխել Ալեքսանդրապոլ: Մասնավորապես՝ 1919թ. նոյեմբերի 20-ին ՀՀ Ներքին գործոց նախարարը Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ.Մելքոնյանին գրում է, որ երկաթուղային վարչությունը գտնվում է Ալեքսանդրապոլում, և մտադրություն կա տեղափոխել փոստ-

[1] ՀԱԱ, ֆ. 127, ց. 1, գ. 4, թ. 20:
[2] ՀԱԱ, ֆ. 201, ց.1, գ.135, թ. 29:

հեռագրատան բաժինը[1]: Կառավարությունը նախատեսում է տեղափոխել նաև գլխավոր ինժեներական վարչությունը Ալեքսանդրապոլ: Գլխավոր ինժեներական վարչության պետը 1919 թ. նոյեմբերին գրում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին, թե հնարավոր է բնակարաններ ճարել այդ նպատակի համար[2]:

Ինչպես բնակչության թվի աճի, այնպես էլ գավառի տնտեսական զարգացման համար կարևոր նշանակություն կարող էր ունենալ համալսարանի բացումը Ալեքսանդրապոլում: 1919 թվականի հոկտեմբերի 16-ին ՀՀ հանրային կրթության նախարարությունը դիմում է Ալեքսանդրապոլի քաղաքագլխին,խնդրելով պարզել, թե հնարավոր է Ալեքսանդրապոլի ուսումնարանների շենքերում ժամանակավորապես տեղավորել համալսարանը, նպաստավոր պայմաններ ստեղծել համալսարանի գոյության համար: «Խնդրում եմ պարզել,-ասված էր այդ գրության մեջ,-և շտապ հայտնել մինիստրությանս, արդյոք հնարավոր է Ալեքսանդրապոլի ուսումնարանների շենքերում հատկացնել ժամանակավորապես՝ 1 տարի ժամանակով, Երևանի համալսարանին 8 սենյակ, որոնցից 4-ը՝ գրասենյակային պետքերի և պրոֆեսորական կազմի համար, և 4 լսարան, նաև հնարավոր է քաղաքում գտնել թեկուզ ռեկվիզիցիայի միջոցով 6 բնակարան, յուրաքանչյուրը 3 կամ 2 սենյակով, և 5 հատ առանձին սենյակ ուսուցչապետների կարիքների համար: Ուսանողությունը կարող է քաղաքում գտնել հարմար բնակարան, թե ոչ»[3]:

Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը, ելնելով վերը նշված հանգամանքներից, 1919թ. հոկտեմբերի 30-ին ՀՀ մինիստրների խորհրդի նախագահին գրում է, որ ոչ միայն հնարա-

[1] ՀԱԱ, ֆ. 127, ց. 1, գ. 4, թ.20:
[2] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2778, թ.14:
[3] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, թ. 1:

վոր է, այլ անհրաժեշտ է համալսարանը բացել Ալեքսանդրապոլում: Ավելին, նա առաջարկում է Ալեքսանդրապոլ տեղափոխել մի շարք այլ հաստատություններ ևս, ինչպես, օրինակ, փոստ-հեռագրատունը, երկաթուղային, ջրային և գյուղատնտեսական վարչությունները: «Վերջին ժամանակներս,-գրում է քաղաքագլուխը,- պարբերական մամուլում հաճախակի արծարծվում է այն հարցը, թե շնորհիվ բազմաթիվ հանգամանքների Երևանի բնակչությունը բազմացել է, մի հանգամանք, որ չի համապատասխանում քաղաքում գոյություն ունեցած բնակարանների հարմարություններին: Բնակչության խտացումը հասել է ծայրաստիճանի, որից այն կողմ արդեն անհնարին է դարձել: Իրոք, Երևանը գտնվում է ճգնաժամային վիճակում բնակարանների տեսակետից: Երևանում բոլոր մինիստրությունների ու դրանց ճյուղերի կենտրոնացման պատճառով, ստեղծել է մի վերին աստիճանի ծանր կացություն, որը թե՛ քաղաքացիներին և թե՛ ծառայողներին հիմք է տալիս դժգոհելու: Բնակչության խտացումը Երևանում, բացի անհարմարություններից, քաղաքացիներին սպառնում է ա/ վարակիչ հիվանդությունների առաջանացման և տարածման վտանգով և ազդում է մթերքների գնի բարձրացման վրա: Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել, կան մի շարք հիմնարկություններ, որոնց անհրաժեշտ գոյությունը հատկապես Երևանում ոչնչով չի ապացուցվում: Մեզ թվում է, որ այնպիսի հաստատություններ, ինչպիսիք են համալսարանը, երկաթուղին, ջրային, գյուղատնտեսական, փոստ-հեռագրատան վարչությունները, առանց գործին վնասելու կարելի է փոխադրել մի ուրիշ քաղաք, Ալեքսանդրապոլ, որը աշխարհագրական դիրքով հանդիսանում է Հայաստանի սկիզբը, իսկ առողջապահական և մթերքների էժանության տեսակետից ավելի բարեհաջող դրության մեջ է գտնվում և կարող է տեղավորել վերոհիշյալ բոլոր հիմնարկ-

ները: Առաջարկում ենք կազմակերպել համալսարանի աշխատանքները Ալեքսանդրապոլում: Մեր առաջարկի ընդունման դեպքում շնչասպառ Երևանը կթեթևանա, և Ալեքսանդրապոլին կտրվի առաջ գալու և զարգանալու հնարավորություն»[1]: Իսկ երբ 1920թ. հունիսի 21-ին Նախարարների խորհուրդը որոշում է համալսարանը տեղափոխել Երևան, Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը, նրա լիազոր ներկայացուցիչները, հանդես գալով դրա դեմ, հանրային կրթության նախարար Գ. Ղազարյանին ներկայացնում են մի զեկուցագիր, որում այդ քայլը համարում են վնասակար՝ գրելով. «Ամբողջ երկրի նյութերը քամել և խտացնել մի կետում, և զավառը արյունաքամ անել, համարում ենք մեծապես վնասակար հայրենիքի համար»: Նույնիսկ առաջարկվում է Ալեքսանդրապոլում գտնվող նախկին ռուսական զորանոցի տարածքը՝ 56 մասնաշենք, տրամադրել համալսարանի ֆակուլտետներին, այն դարձնել ուսանողական ավան:

1919 թվականին Ալեքսանդրապոլի բնակչության թիվն կարող էր աճել նաև ի հաշիվ Ադրբեջանից և Վրաստանից բռնազաղթածների: ՆԳՆ-ի հանձնարարությամբ 1919թ. դեկտեմբերի 4-ին քաղաքագլուխ Հ. Մելքոնյանը Ալեքսանդրապոլի Առևտրական դպրոցի տեսուչին ուղղված գրությունում հրահանգում է երեք օրվա ընթացքում ցուցակագրել քաղաքի բոլոր բնակարանները՝ ընդունելու համար Բաքվից և Թիֆլիսից աքսորված 100 հազար հայ բնակչությանը:

Ինչպես նշված հիմնարկությունների տեղավորման, այնպես էլ Ադրբեջանից և Վրաստանից աքսորվածներին ընդունելու համար Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը ՀՀ ՆԳՆ-ին խնդրում է

[1] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2798, թ. 3:

Ալեքսանդրապոլի վրա տարածել 1918թ. հոկտեմբերի 3-ի և 28-ի բնակարանների բռնագրավման մասին ՀՀ օրենքը՝ դրա իրականացումը դնելով քաղաքագլխի գլխավորությամբ ստեղծված հանձնաժողովի վրա[1]: Գաղթականներին, տեղափոխված հիմնարկությունները և պաշտոնատար անձանց տեղավորելու համար քաղաքային վարչությանը կից ստեղծվում է բնակարանների բռնագրավման բաժին: 1919թ. հուլիսի 3-ին ՀՀ նախարարների խորհուրդը օրենք է ընդունում «Պաշտոնական անձանց և պետական հիմնարկությունների համար Հայաստանի Հանրապետության քաղաքներում բնակարաններ և կացարաններ բռնագրավելու կանոնների և բռնագրավման հանձնաժողովներ կազմելու մասին»:

Բռնագրավման հանձնաժողովի մեջ մտնում էին քաղաքային ինքնավարության նախագահը, դատավորը, գավառային կոմիսարը և ռազմական կառույցի ներկայացուցիչը: Առաջնորդվելով այս օրենքով՝ Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարությանը կից ստեղծվում է բնակարանների բռնագրավման հանձնաժողով: 1919թ. հուլիսի 22-ի նիստում Ալեքսանդրապոլի քաղաքային խորհուրդը որոշում է բնակարանների բռնագրավման հանձնաժողովի նախագահ ընտրել վարչության անդամ Ա. Մարգարյանին, իսկ խորհրդի կողմից՝ Գ. Միքայելյանին: Բռնագրավման հանձնաժողովի մեջ էին մտնում նաև քաղաքային ինքնավարության նախագահը, դատավորը, գավառային կոմիսարը և ռազմական կառույցի ներկայացուցիչը:

Համաձայն բռնագրավման մասին օրենքի՝ բնակարանները բռնագրավման են ենթարկվում միայն պաշտոնական անձանց և հիմնարկությունների համար և ոչ թե մասնավոր անձանց. բնակարաններում գտնվող գույքը չէր բռնագրավվում:Սակայն միշտ չէ, որ

[1] ՀԱԱ, ֆ. 105, ց. 1, գ. 2778, թ. 14:

բնակարանների տերերը համաձայնում էին կամավոր դուրս գալ իրենց բնակարանից: Նման դեպքերում միջնորդում էր միլիցիան:

Հովհաննես Մելքոնյանի պետական մտածողության կարևոր դրսևորումներից էր գաղթականության հարցի լուծումը՝ գաղթականներին Կարսի մարզ տեղափոխելու միջոցով:

Գաղթականները, խմբեր կազմելով Ալեքսանդրապոլի գավառում, անկարգություններ էին անում, փորձում սեփական միջոցներով լուծել պարենավորման հարցը: Ալեքսանդրապոլի քաղաքային վարչությանն ուղղված քաղաքային միլիցիայի պետ Տեր-Սահակյանի՝ 1919թ. ապրիլի 19-ի զեկույցից իմանում ենք, որ նույն թվի դեռևս ապրիլից Ալեքսանդրապոլում հաստատվել էր ռազմական դրություն: 1919թ. սեպտեմբերին I գավառամասի կոմիսարը խնդրում էր ՆԳ մինիստրին՝ Գևորգ Փանոսյանին, հաստատել առաջին գավառամասի կոմիսարի օգնական, քանի որ գավառամասում գաղթականության պատճառով անկարգությունները լայն ծավալ են ստացել:

Կարսի քաղաքացիական նահանգապետ Ղորղանյանը 1919թ. նոյեմբերի 23-ին ՆԳ մինիստրությանը գրում էր, որ ավելի քան 500 զինված նախկին թրքահայեր մեծ սպառնալիք են իրավակարգի համար, և առաջարկում է նրանց որևէ աշխատանքի հետ կապել, թեկուզև սահմանապահ բանակում:

Ընդ որում, Հայաստանի Հանրապետության ոչ մի շրջանում անօրինականություններն ու թալանը չէին ընդունել այդպիսի համատարած բնույթ, ինչպես Ալեքսանդրապոլում և նրա շրջաններում: Այստեղ օրը ցերեկով զինված հորդաները հարձակվում են և քշում այս ու այն գյուղի անասունները,թալանում մարդկանց: Գյուղից քաղաք կամ գյուղից գյուղ գյուղացիները ճանապարհորդում

էին մեծ խմբերով: Գյուղերում գյուղացիների կողմից նշանակվում էին գիշերապահներ, որոնք հսկում էին գյուղի հանգիստը:

Մեծ թվով գաղթականներ ապրում էին Պոլիգոնի հանրակացարաններում սոսկալի պայմաններում: 1920թ. սկզբին Ալեքսանդրապոլում բռնկված տիֆը բազմաթիվ կյանքեր է խլում՝ հատկապես տարածվելով Պոլիգոնի հանրակացարաններում, որտեղ օրական 25-26 մահվան դեպքեր են արձանագրվում: 1920 թ. հունվարի 7-ին Ալեքսանդրապոլի Բաշխիչ կոմիտեի նախագահ Միհրան Գրիգորյանը ՀՀ խնամատարության նախարարին ուղղված գրության մեջ տեղեկացնելով ստեղծված հուսահատական դրության մասին, առաջարկում է կտրուկ միջոցների դիմել: Նախատեսված էր նրանց մինչև ապրիլի 25-ը տեղափոխել գյուղերը: Ապրիլի 26-ին խնամատարության և վերաշինության մինիստրության Ալեքսանդրապոլի ներկայացուցիչ Սմբատ Մխիթարյանը ստիպված հեռագրում է խնամատարության նախարար Բաբալյանին, որ դադարեցնեն Ալեքսանդրապոլ գաղթականներ ուղարկելը:

ՀՀ խնամատարության և վերաշինության նախարարությունը որոշում է հանրակացարաններում ապրող գաղթականներին տեղափոխել Կարսի շրջանի լքված գյուղերը: Սակայն այդ հարցը ձգձգվում էր ՄԱՆի Կոմիտեի տեղի ներկայացուցչի կողմից: Իրենց հերթին գաղթականները ևս չէին ուզում տեղափոխվել՝ վախենալով ցրտից և սովից: Նրանք վախենում էին նաև, որ անցեալը կարող է կրկնվել: Մասնավորապես, «1920 յունուարի 13-ին խնամատարութեան նախարարին ուղղուած հեռագրում նրանք խնդրում էին հետաձգել վերադարձը մինչև եղանակների տաքանալը: ՄԱՆ Կոմիտէի գնդապետ Դ. Ռոբինսոնը Կոմիտէի Երևանի շրջանի կառավարչին գրում է, որ գաղթականները համառում են, ձյուների մեջ են պառկում և հրաժարվում են կայարան գնալուց: Ամերիկա-

ցիները դիմում են կտրուկ միջոցների՝ սպառնալով համառողներին զրկել հացից»:

Խնամատարության նախարարի հանձնարարությամբ արևմտահայ գաղթականների մեջ մեծ հեղինակություն վայելող Սեպուհը մեկնում է Պոլիգոն, հանդիպում գաղթականների հետ, համոզում նրանց, որ տեղափոխվեն Կարսի շրջան, խոստանում, որ պայմանները նույնը կլինեն, ինչ Պոլիգոնում:

Ձեռնարկված աշխատանքների շնորհիվ հունվարի 21-ին հազար հոգի ցանկություն է հայտնում մեկնել Կարս: Հունվարի 25-ին Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հայկ Մելքոնյանը, գնդապետ Ռոբինսոնին ուղղված գրության մեջ ներկայացնելով Պոլիգոնի գաղթականների դրությունը,խնդրում է արտակարգ միջոցներ ձեռնարկել կանխելու համար անխուսափելի աղետը: Առաջարկվում է նաև Ալեքսանդրապոլի քաղաքային ինքնավարության օգնությունը[1]: Հունուարի 26-ին մեկնում են առաջին 500 հոգին[2]:

Գաղթականների փոխադրությունը կազմակերպելու նպատակով փետրվարի 18-ին Ալեքսանդրապոլ է ուղարկվում խնամատարության և վերաշինության նախարարության Կարս-Ալեքսանդրապոլ շրջանի հատուկ ներկայացուցիչ Սմբատը: Նա կազմակերպչական լուրջ աշխատանքներ է տանում՝ հաճախ դիմելով նաև արտակարգ և կտրուկ միջոցների: Հնարավորություն չունենալով անձամբ տեղում ուսումնասիրելու այն գյուղերը, որտեղ պետք է տեղափոխվեն գաղթականները, Սմբատը հավաքում է Պոլիգոնում գտնվող գաղթականների հայրենակցական համայնքներից 3-5 հոգուց կազմված ներկայացուցչական խմբեր, նրանց ու-

[1] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, թ. 36:
[2] ՀԱԱ, ֆ. 205, ց. 1, գ. 801, մաս 1, թ. 42:

դարկում Կարս-Ալեքսանդրապոլի շրջանի այն գյուղերը, ուր հավանաբար կարող էին տեղավորվել գաղթականները: Կազմակերպում է հատուկ գրասենյակ Պոլիգոնում, առանձին ներկայացուցիչներ ուղարկում լքված գյուղերը, խորհրդակցություններ է իրականացնում զինվորական իշխանության, քաղաքային վարչության և քաղաքագլխի հետ: Շարունակաբար հետևելով նախարարութեան հրահանգներին՝ փետրվարի 24-ից Սմբատը սկսում է կանոնավորապես դատարկել Պոլիգոնը գաղթականներից: Տեսնելով, որ գաղթականների տեղափոխման գործը դանդաղում է փոխադրամիջոցներ չլինելու պատճառով, Սմբատը դիմում է բռնագրավումների: Կարճ ժամանակամիջոցում, Ալեքսանդրապոլի և շրջանի գյուղերից բռնագրավելով 1800 սայլեր, նա իրականացնում է գաղթականության տեղափոխումը: Սմբատի ջանքերի շնորհիվ նաև Ալեքսանդրապոլի երկաթուղային վարչութունը վագոններ է տրամադրում՝ գաղթականներին տեղափոխելու համար:

Այս ընթացքում, մի շարք լքված գյուղերում գաղթականների տեղավորման հարցի հետ կապված,բավականին սրվում են Սմբատի հարաբերությունները Ալեքսանդրապոլի քաղաքագլխի և զինվորական կայազորի պետի հետ: Խոսքը վերաբերում է հատկապես Շահնազար, Ղարախաչ, Ինչելուր, Բեկյուղ գյուղերին, որտեղ քաղաքագլուխը ուզում էր տեղավորել Ալեքսանդրապոլի ուննոր բնակիչներին: Այս շրջանները համարելով ռազմագիտական կարևոր վայրեր՝ քաղաքագլուխը գտնում էր, որ այստեղ պետք է բնակվեն մարտական ուժեղ տարրեր: Այդ նպատակի համար նա 100 ալեքսանդրապոլցիների համոզում է, որ տեղափոխվեն և բնակվեն այս գյուղերում: Սակայն երբ այդ մարդիկ գնում են նշված գյուղերը, տեսնում են, որ դրանք արդեն զբաղեցրել են գաղթականները, և իրենք մնում են բաց երկնքի տակ: Հայտնվելով շատ ծանր

դրության մեջ՝ քաղաքագլուխը մարտի 9-ին ՀՀ խնամատարութեան նախարարին,Կարսի նահանգապետին եւ Փիրումովին ուղղված իր հեռագրերով խնդրում է դատարկել Շահնազար գյուղը գաղթականներից, փրկելու իրեն այն մարդկանցից, ում ինքը ստիպել էր հաստատվել այդ գյուղում: Սակայն Սմբատը ոչ մի զիջման չի գնում: Նա պնդում է, որ այս գյուղերում միայն գաղթականներին պետք է բնակեցնեն. քաղաքագլխի արարքը համարում է շահադիտական նպատակներով արված քայլ: Այս կապակցությամբ քաղաքագլխի և Սմբատի միջև լուրջ բախում է տեղի ունենում: Սմբատը նույնիսկ վիրավորում է քաղաքագլխին, երբ վերջինս հրաժարվում է փոխադրամիջոցներ տրամադրել գաղթականներին տեղափոխելու համար: Ալեքսանդրապոլի քաղաքագլուխ Հայկ Մելքոնյանը խնամատարության նախարարին գրում է, որ այդ գյուղերում կարգ ու կանոնի, ինչպես նաեւ ինքնապաշտպանության կազմակերպման հանձնումը մասնավոր անձի և ոչ թե պետական գործչի հղի է մեծ բարդություններով և առաջարկում է հարցը լուծել՝ նշելով, որ հակառակ դեպքում իր վրայից կվերցնի հետագա անցանկալի երևույթների համար պատասխանատվությունը: Իր հերթին Սմբատը հեռագրում է նախարարին, որ ինքը պատասխանատու չէ քաղաքագլխի և կայազորի պետի գործողությունների հետևանքով գաղթականների շրջանում առաջացաղ հուզումների համար: Ի դեպ, քաղաքագլխի հետ համամիտ էր նաև Ալեքսանդրապոլի կայազորի պետ գեներալ Խաչատուրովը:

Մարտի 8-ին քաղաքային վարչությունը որոշում է ոչ մի գործ չունենալ գաղթականության տեղափոխման հարցերում, քանի դեռ չի վերացել երկիշխանությունը, և Սմբատը չի հեռացվել այդ գործից:Ստեղծված իրավիճակն ի վերջո հանգեցնում է նրան, որ Ալեքսանդրապոլի քաղաքագլուխը,իր դիմումի համաձայն,ապրիլի 3-ին

ազատվում է պաշտոնից: Նրան փոխարինած Պարույր Գյոնջյանը ևս բարձրացնում է այս հարցը՝ առաջարկելով հստակեցնել պարտականությունները և վերացնել երկիշխանությունը:

Ի դեպ, Հայաստանի Հանրապետության ներքաղաքական կյանքին բնորոշ գծերից մեկն էր տեղական ինքնակառավարման մարմինների և կենտրոնական իշխանությունների միջև եղած հակասությունները իրավասության սահմանների վերաբերեալ: Տեղական իշխանության մարմինները Հայաստանի Հանրապետության գոյության ամբողջ ընթացքում պայքարում էին իրենց իրավասությունների սահմանների համար: Եվ չնայած Ալեքսանդրապոլի պետական քաղաքական գործիչների ջանքերին՝ այդ մարմինները չկարողացան հանդես գալ որպես մեկ միասնական օրգանիզմ: Այս հանգամանքը զգացնել տվեց թե՛ մայիսյան իրադարձությունների և թե՛ հատկապես 1920թ. թուրք- հայկական պատերազմի ժամանակ: Ի վերջո, չկարողանալով կասեցնել թուրքական արշավանքը Ալեքսանդրապոլի գավառը երկրորդ անգամ վեց ամսով հայտնվեց թուրքական ռազմակալման պայմաններում, իսկ Հայաստանի Հանրապետությունը անկում ապրեց:

ГОСУДАРСТВЕННЫЕ ДЕЯТЕЛИ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО УЕЗДА 1918-1920 гг.

Карине АЛЕКСАНЯН
Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Ключевые слова: Александрополь, уезд, государственный деятель, мигранты, государственное строительство, турецкая оккупацыя, мэр, городская администрация.

Статья посвящена государственным политическим деятелям, действующим в Александропольском уезде Первой Республики Армения, деятельность которых во многом способствовала сохранению физического существования армянского населения и строительству армянского государства.

Деятельность государственных, политических деятелей Александропольского уезда обусловлена рядом факторов и определенными обстоятельствами, а именно стратегией создания местных органов власти Турции, борьбой о полномочиях центральных государственных органов и органов местного самоуправления, а также столкновением государственных и партийных принципов.

STATE POLITICIANS OF PROVINCE ALEXANDROPOL IN 1918 – 1920

Karine ALEXANYAN

Shirak Center for Armenological Studies RA

The following article is dedicated to state politicians who carried out their activity in Alexandropol (province of the first RA), which greatly influenced on physical existence of Armenians, as well as creation of Armenian State.

The activity of state politicians of Alexandropol is conditioned by a range of factors and circumstances, those of the strategy of creating Turkish local government bodies, the struggle for powers of central and local self-government bodies, specific to state administration of RA, as well as the clash of state and party principles.

ՀԱՅ ԶԻՆՎՈՐԻ ԲԱՐՈՅԱՀՈԳԵԿԵԲԱՆԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԱՐԴԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

Բանալի բառեր՝ զինվոր, կարգապահություն, պատասխանատվություն, հայրենասիրություն, ազգային գաղափար, Արցախյան պատերազմ, Գարեգին Նժդեհ, Սուրբ Էջմիածին:

Անոտացիա: Հոդվածում անդրադարձել ենք հայ զինվորի կերպարի՝ մեր ժամանակին հատուկ, նորովի դրսևորումներին, ինչպե՛ս է նա ընկալում հայրենիքի գաղափարը, արդարության ու ազգային-ազատագրական գաղափարի համար իր գոյամարտը արդի մարտահրավերների պայմաններում:

Զինվորի հոգեկերտվածքի ձևավորումը հիմնվելու է հետևյալ դրույթների վրա. ա) ինքնուրույնության ապահովում, բ) բարոյական սկզբունքների՝ կամքի, վճռականության ձևավորում, գ) հայրենաճանաչություն, դ) հայրենասիրության խթանում, ե) կարգապահության ու պատասխանատվության զգացման ձևավորում, զ) որոշումների ինքնուրույն ընդունում:

Ազգային ոգին լավագույնս արտահայտվում է զինվորի հոգեբանական կերտվածքի, հուզական դրսևորման մեջ: Սահմանային իրավիճակներում այն ավելի վառ ու ընդգծված է դառնում՝ ուժեղացնելով նրա հուզական կապը հայրենիքի հետ: Այսպես՝ պատերազմների ժամանակ զինվորի վարքագծում ու բնավորության մեջ գերակա են դառնում այնպիսի հատկանիշներ, որոնք առնչվում են նրա հայրենասիրական ոգուն: Եվ դա բնական է,

քանի որ հայրենիքը արժեքային համակարգի ամենավեհ արժեքն է, այն սիմվոլը, որի հետ անձը ապահով է զգում իրեն: Հետևաբար հայ զինվորի հոգեկերտվածքի ձևավորման համար կարևոր է իր էթնոսի մշակույթին իրազեկ լինելը, քանի որ ազգի ոգին առավելապես դրսևորվում է առասպելներում, էպոսում, երաժշտության և սիմվոլների մեջ[1]:

Մեր ժամանակներում կարևորվում է զինվորի ենթագիտակցության վրա մշակույթով ներազդելու գաղափարը: Սիրել տալ հոգևոր և նյութական հայրենիքի ամեն մի մասունք: «Հայության հավաքում» կամ «հայության կազմակերպում» գաղափարական իմաստով. այս է հոգևոր Հայաստանը….: Մի Ռաֆֆի, մի Արծրունի, մի Նալբանդյան, մի Դուրյան նույնպես ասպետներ են, գուցե ավելի մեծ հերոսներ են, քան նրանք, որ կռվի դաշտում են զոհաբերում իրենց կյանքը…. Եթե հիրավի պարզված է հայության սիրտը դեպի ապագա, ապա իր հայացքը ոչ միայն Վան կամ Էրզրում պիտի ուղղե, այլ իր ներսը, իր հոգու խորքը՝ տեսնելու համար, թե կա արդյոք իր մեջ այն ամենը, որ կենդանություն է ներշնչում մեր նյութական հայրենիքին»[2]:

Հայրենիքի սերը պետք է սերմանել ի սկզբանե նախակրթարաններում, դպրոցներում, հատկապես մայրական դպրոցում, որ ապագա զինվորը մեծանա այն մտայնությամբ, որ ինքն է երկրի աղը, ինքն է այս երկրի տերը, և իրենից է սկսվում հայրենիքը: Դաստիարակությունն սկսելով օրորոցից՝ հայ մայրերը երեխային օրորելիս երգում էին.

Դու պստիկ ես, բարով մեծնաս,

---

[1] Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն,Եր., 2001, էջ 251:
[2] Տերյան Վ., Երկեր, Եր., 1989, էջ 348:

Բարով մեծնաս, զինվոր դառնաս,

Ռուրի, ռուրի, ռուրի ջան:

Մայրական օրորին միախառնվում է ցանկության մի բանաձև, որտեղ երեխայի բարով մեծանալու և հայրենիքի զինվոր դառնալու պահանջը վերաճում է գոյապահպանական արժեքի:

Զինվորի կամ հայրենյաց պաշտպանի երգերի մի խումբ հորինվել է ավանդական օրորների նմանությամբ, միայն հակառակ նպատակադրմամբ՝ արթնացնել, ոտքի հանել լաոյին, զենքի կոչել[1]: Դրանց հեղինակները մեծ մասամբ ազատագրական շարժմանը մոտ կանգնած անհատներ են, որոնք իրենց երգերի կիրառական կողմով՝ համախմբվելու կոչով ու զինված պայքարի ելնելու հորդորով, մշտապես զգոն են պահում հայ մարդուն: Նախընտրելի է, որ երիտասարդ մայրերը երգեն ևս մեր հին օրորոցայինները որոնց մեջ անսքող է մարտական ոգին:

Այսօր, առավել քան երբևէ, անհրաժեշտ է, որ արվեստը՝ իր բոլոր դրսևորումներով, մտնի բանակ: Ոչ միայն ազգային-ազատագրական կամ ռազմի երգերը, այլև հայ ազգային պարերը մարտի գնալուց առաջ բարձրացնում են զինվորի մարտական ոգին, նրանում արթնացնում հայականության զգացում՝ թափանցելով ենթագիտակցության ու նրա բոլոր կազմավորումների մեջ: Բնականաբար, որտեղ ոգի, կարգ ու կանոն, այնտեղ հաղթանակ: Հին Հռոմում զինվորին տրվող առաջին հրամաններից մեկն է պահել շարքը, այսինքն՝ ոգին պահել. մեկն ընկավ, մյուսը պիտի փոխարինի նրան: Պարը ևս ոգեկանության արթնացող խմբային պատկերացումների համակարգ է, ունի համախմբող նշանակություն,

[1] Հայ ժողովրդական ռազմի և զինվորի երգեր, աշխատասիրությամբ Ա.Ղազիյանի, Եր., 1989, էջ 34:

թմբուկների, գալարափողերի, ռիթմի համադրությամբ զինվորին մղում է ինքնավեհացման…:

Մեր նպատակն է զինվորի հոգեբանության մեջ ամրապնդել ազգի հոգեկան կերտվածքի առանձնահատկությունները և մշակույթից եկող առաջնային ազդակները:

Ինչպե՞ս է ձևավորվում հայ զինվորի ես-կոնցեպցիան[1], և ինչպիսի՞ն է նրա էթնոնկարագիրը: Այս կոնցեպցիայի ձևավորումը տարողունակ և երկարատև գործընթաց է, որն արտահայտվում է տվյալ ազգի ավանդույթներում, ծեսերում և վարքի խմբային կարծրատիպերում, հոգեկան գործունեության և հարաբերությունների մեջ: Թեև ազգային գաղափարախոսությունը անհատականացվում և դրսևորվում է յուրաքանչյուր զինվորի ես-կոնցեպցիայի մեջ՝ *ես հայ եմ* լեզվական արտահայտությամբ, այնուհանդերձ ազգի համար սահմանային իրավիճակներում *ես*ու *մենքը* ժամանակավորապես միաձուլվում են: Սա, անտարակույս, ունի գործառական նշանակություն՝ որոշակի խնդիրներ լուծելու և ազգի ինքնակարգավորման համար:

Բանակը հասարակության մանրակերտն է, և հասարակության մեջ իշխող գաղափարները, երբեմն նաև փողոցի արատավոր բարքերն ու հոռի մտայնության դրսևորումները տեղափոխվում են բանակային կյանք, որտեղ միշտ չէ, որ պահպանվում են զինվոր-զինվոր, զինվոր-սպա կանոնակարգային փոխհարաբերությունները:

Հայ զինվորի համար առաջնային է անձնական արժանապատվությամբ ծառայությունը. խաթարված արժանապատվությամբ նա չի կարող լիարժեք ծառայել հայրենիքին: Հետևաբար

[1] Նալչաջյան Ա., Էթնիկական հոգեբանություն, Եր., 2001, էջ 49:

հրամայական է դառնում նրա ինքնության գաղափարականության, հպարտության ու ազնվության, բարեխղճության ու պատասխանատվության համալիրի պահպանումը՝որպես զինվորի ոգեղենության կայացում, որն էլ հենց հարգանքն է բանակային կարգ ու կանոնին, օրենքին: Ամեն դեպքում օրենքը պետք է լինի զենք, իսկ եթե զինվորը չունի այդ օրենքի իմացությունը, փողոցային արատավոր երևույթները անարգել թափանցում են բանակային հասարակության մեջ՝ ծնելով տարաձայնություններ ու բախումներ:

Այսօրվա բանակի հիմնախնդիրներից մեկն էլ այն է, որ չի ապահովվում զինվորի զբաղվածությունը: Ազատ մնալով՝ նա ինչոր ձևով ինքնադրսևորվում է:Սպաները երբեմն թերանում են դաստիարակչական աշխատանքում: Լավ կառավարման պահանջներից է, որ հրամանատարներն ըստ էության իմանան իրենց զինվորների հոգեբանությունը, բնավորության գծերը, թափանցեն նրանց մտքերի ու զգացմունքների ոլորտ, նրանց մեջ ընկերության և միասնության ոգի ձևավորեն: Այսպես, օրինակ՝ կարելի է սովորական շարային վազքը, որի նպատակն է զինվորի ուժի և դիմացկունության ամրապնդումը, զուգակցել պատմամշակութային արժեքների իմացությամբ, այսինքն՝ վազքը կազմակերպել այնպիսի ուղերթով, որի վերջնակետում պատմական հուշարձանն է, դրանով իսկ ապահովել հայրենաճանաչումը:

Զորավար Նժդեհի հայրենապաշտ լինելու գաղափարները ևս բյուրեղանում են պատմական ժամանակի մեջ և այսօր էլ հնչում են արդիական, քանի որ ինչպես ինքն է ասում. «Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը. այն ձեռք է բերվում ամեն մի սերնդի ու նրա առանձին անդամի կողմից,ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի լինելու ձգտումով… Արարչի կամքով հայ տղամար-

դը հայր է ու զինվոր, սիրով ու սրով նա պիտի կռվի և ապա երբեք իր ամբողջ կյանքում այդ սուրը պատյան չպիտի դնի նույնիսկ աղոթքի ու սիրո պահին, հայ տղամարդը պիտի պատերազմի, խաղա մահի հետ, հաղթի կամ հաղթվի. սա է կոչումը հայ ռազմիկի»[1]:

Այսօր դաստիարակչական բոլոր օղակներում (տուն, դպրոց, բուհ, բանակ) անհրաժեշտ է, որ գերիշխող դառնա այրական դաստիարակությունը: Սա կարող է նպաստել ապագա զինվորի՝ հայրենիքի պաշտպանի հոգեկերտվածքի ձևավորմանը: Առանցքային պետք է լինի ազգային գաղափարի սերմանումը, որը կարող է դրսևորվել ազգային լեզվի, պատմության, մշակույթի և այլ արժեքների վերաիմաստավորմամբ:

Մենք այսօր պատերազմող ժողովուրդ ենք: Թշնամին մեզ զգոն ու շրջահայաց դարձրեց: Պետք է միշտ նկատի ունենալ, որ պայքարը կարող է լինել գերակա ուժ ունեցող հակառակորդի դեմ: Մշտական կոնֆլիկտները նրա հետ հանգեցնում են հայ էթնոսի ինքնագիտակցության ուժեղացմանը, խորացնում յուրայինների բախտի համար պարտքի ու պատասխանատվության զգացումը, սեփական անցյալն ու ցեղային արմատներն իմանալու ցանկությունը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության համակարգում կարևորը զինվորի ոգին ամրապնդելն է, նրա անձնականությունը հզորացնելը՝ քաջազունների գործունեությունը ներկայացնելով, անհրաժեշտ է նրան ոգեկոչել պատմական անցյալի հերոսական դրվագներով: Ավարայրի դաշտում Վարդան Մամիկոնյանի ուղերձը իր քաջ նիզակակիցներին այսօր էլ կարող է սրտեր թնդացնել. «Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ սրի դեմ թիկունքներս դարձնենք, որպեսզի եթե Տերը

[1] Նժդեհ Գ., Ասույթներ, Եր., 2012, էջ 37:

հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որ բարձրանա ճշմարտությունը: Իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք»[1]:

Ինչ խոսք, անձի ներքին փորձառությունը մշտապես առնչվում է մահվան հետ: Բայց հայրենիքի համար պատրաստ լինել անձնվիրումի, զոհաբերման, սուրբ մահով մեռնելու, սա արդեն կյանքի ու կյանքից այն կողմ իմացյալ անմահության ձգտելու փորձառություն է:

Կարծում ենք՝ հանրակրթական դպրոցների դասագրքերը, հատկապես հայ ժողովրդի պատմության ու ռազմագիտության դասընթացները, պետք է նոր սերնդի մեջ հայրենասիրություն արթնացնեն, հատկապես ապագա զինվորի ներքին փորձառության սահմաններն ընդլայնեն կենդանի ու թրթռուն օրինակներով: Կյանքի կոնցեպտուալ ընկալումն ու հայրենիքի հանդեպ սերն սկսվում են ոչ միայն նրա սահմաններից ու խրամատներից, այլև հայրենաճանաչումից, հետևաբար դասագրքերում ներառված բնագրերը՝ հայոց գիր ու նշան զինվորներով, պետք է պահեն մեր ոգեղենության սյուները: Միշտ հիշենք, որ քրիստոնեական կրոնն ու վարդապետությունը պետականորեն առաջինն ընդունած ժողովուրդ ենք, մեր մտախառնվածքում բացառիկ արտահայտություն է գտել պատմական արդարության վերականգնման պահանջը. ոչ միայն ապրել, այլև ապրել հաղթանակած: Սահակ-մեսրոպյան ժամանակներից սկսած՝ մեր ոսկեձեռիկ գրիչների ծաղկած մատյանները, քերթողահայր Խորենացու պատմության դասերը /ճանա-

[1] Եղիշե, Վարդանի և հայոց պատերազմի մասին, Եր.,1989, էջ 205:

չենք ազգային արժանապատվությունը՝ հեռու մնալով ազգային սնապարծությունից և այլն/, թևավոր մտքերը /Քաջերի սահմանը նրանց զենքն է, որքան կտրում է, այնքան էլ գրավում է/[1], «Սասնա ծռեր» դյուցազնավեպի սրբազան բնագիրը՝ որպես մեր հոգևոր կեցության գաղափարագիր, Նարեկացու՝ առ Աստված ուղղված խռովակոծ աղոթքը, Շնորհալի քերթողի աղոթական խոսքի ավետաբեր բխումները և մեր ժամանակներն ի վեր հայ ոգու համասփյուռ դրսևորումները դարձյալ ու դարձյալ վկայում են, որ գոյի պահպանության և արժեքի կռվում պետք է հաղթի ազատությունը՝ որպես աշխարհայացք ու կենսակերպ, որպես բնածին պահանջ:

Ազգային արժանապատվությունն ու նեմեսիսի ոգին հայրենիք են պահում, բայց զինվորի մեջ ոչ թե շարունակական ատելություն պետք է սերմանել թշնամու հանդեպ, այլ սեր առ հայրենիքը, առ ընտանիքն ու ազգային արժեքները, նրան մշտապես կանգնեցնել հայկական ոգու հայտնության ճանապարհին: Իրականում հաղթանակը բարությամբ է լինում: Կրոնն ու հավատը մեր ազգային գաղափարախոսության հիմքում են, որ միաժամանակ պետք է ծառայեն որպես պետական գաղափարախոսություն: Ժողովրդի կյանքում նույնքան կարևոր է հզոր հոգևորականի դերակատարումը, որն իր կենսագրությամբ կարող է աննկունության, ընդվզուն ոգու օրինակ տալ, դաստիարակել: Հատկանշական է հայրենիքի համար օրհասական վտանգի ժամին Գևորգ 5-րդ Սուրենյանցի կոչը ժողովուրդին. «Ա՛զգ հայոց, թուրքը՝ մեր բանական հոտի դարավոր թշնամին, նվաճել է Ալեքսանդրապոլը, շարժվում է դեպի սիրտը մեր երկրի, մեր հավատի, մեր կենսագրության: Գալիս է Արարատյան Երկրի վրա: Թուրքը, կոտորած ու ավեր փռելով, գալիս է,

[1] Խորենացի Մ., Պատմություն Հայոց, Եր., 1968, էջ 83:

և մեր զորապետներն էլ այլ ելք չեն գտնում այդ աղետից, քան հայոց հայրապետին փախուստի մղել: Նրանք ինձ առաջարկում են ոսոխի բերանին թողնել Մայր Աթոռ Սբ Էջմիածինը, մեր սրբարանը, հայ ժողովրդի վերջին կտորը: Ո՛չ և ո՛չ: Հազար անգամ ո՛չ: Ես չեմ լքի մեր սուրբ նախնիներից ավանդ մնացած Մայր Աթոռը: Եթե հայ ժողովուրդը չի կարող թշնամու առաջխաղացումը կասեցնել, եթե ի զորու չէ փրկելու մեր սրբությունները, ապա ես ինքս սուր կվերցնեմ և կընկնեմ Մայր Տաճարի գավիթում, բայց չեմ հեռանա պապերից ավանդ մնացած Սուրբ աթոռից: Իսկ եթե եկել է վերջը, ապա այն ինչո՞ւ չընդունենք պատվով ու քաջությամբ, և ո՛չ թե ողորմելի ստրուկի պես ոսոխի առաջ սողալով: Մեր պատմության անցյալ դարերը լիքն են քաջությամբ ներկված նահատակների արյամբ: Դրանով չի սպառվել մեր արյունը և ուժը: Դարեր շարունակ հայ ազգն ապրել է ինքնության համար պայքարելով: Դրա համար է, որ կոտորածներով հարուստ մեր կենսագրությունը չի ունեցել և չի ունենա վերջին վերջակետ: Ուրեմն էլ ինչո՞ւ ազգովին չբարձրանանք թշնամու դեմ, որը գալիս է ծարավ մեր վերջին արյունին»[1]:

Կարևորը պատմությունը ճանաչելու և ճանաչել տալու խնդիրն է, ապագա զինվորին մտցնել իր պատմական անցյալի հերոսականության մեջ, նրա մեջ արթուն պահել ցեղի ոգին, գենը, արյան հիշողությունը, որ զորացնում են էթնոպաշտպան համակարգերը: Հայրենասիրության նվիրական զգացումը զարգանում է աստիճանաբար: Սկզբում բնազդական է, զարգանալով դառնում է իմացական, ոգիանում է: Եթե մարդուն ներարկում ես այն գաղափարը, որ այս կամ այն արժեքները քոնն են, ինքը դրա տերն է զգում և սկսում

[1] https://www.facebook.com/photo.php?fbid=443757685719592&set=a.364021740359854.82177. 364006190361409&type=1&theater

է պաշտպանել դրանք՝ որպես ինքնության առհավատչյաներ, ինչ-պես՝ Արցախի օրինակով տեսանք:

ՀՀ Ազգային հերոս, սպարապետ Վազգեն Սարգսյանի՝ մեր ժամանակի նվաճումների մասին տված գնահատականը հայ հասարակական-քաղաքական մտքի ինքնօրինակ խտացում է, ապագա զինվորի ենթագիտակցության վրա ազդող ու նրա ճանապարհը կանխորոշող պատգամ: «Ես ուզում եմ ասել, որ ոչ ոք խաղաղության գինն այնքան լավ չգիտի, որքան ես, ոչ ոք այնքան շատ խաղաղություն չի ուզում, որքան ես: Պատերազմի ընթացքում ես կորցրել եմ իմ լավագույն ընկերներին: Ես այս պատերազմին տվել եմ, ինչ որ կարող էի՝ ձեռք եմ բերել հպարտություն: Հանեք այդ հպարտությունը, հանեք այդ գաղափարը, տակը բան չկա: Ես կռվել եմ, ես կռվում եմ, կռվելու եմ գաղափարի համար, նպատակի համար, և իմ նպատակի ճանապարհին ոչ ոք ինձ լռեցնել չի կարող»[1]:

Ապագայի դիտակետին մոտենալու համար մենք պետք է հետահայաց նետենք անցյալի և ոչ հեռու անցյալի իրադարձություններին, հերոսական դեպքերին ու դեմքերին, նոր սերնդին դաստիարակենք կոնկրետ հերոսի, անհատի օրինակով, նրանց կերպարներում գնահատենք կազմակերպչական ջիղը, հասարակ ժողովրդին, զինվորներին համախմբելու և իրենց հետևից տանելու ունակությունը, վճռորոշ պահերին հաղթանակի հասնելու կամք ու անձնվիրում դրսևորելը: Հերոսների չապրած կյանքը ապրողների կյանքի գրավականն է: Հերոսական մտքի սխրանքի անմոռաց արտահայտություն է Անդրանիկ Օզանյանի մարտակոչը հայ տառապած ժողովրդին. «...Մենք կեցած ենք հայկական պատմության

[1] Ոգու փորձություն, խմբ. Ս.Աթյանի, Եր., 2000, էջ 321:

այնպիսի փոթորկուն էջի վրա, ուր մեր ժողովուրդը կապրի կամ իր վերջին օրերը և կամ կգտնվի վաղվան ազատության նախօրյակին: Վայրկյանը, ներկա օրերը մեզ չեն ցուցեր միջին ճանապարհ: Վաղվան պատասխանը հայ ժողովրդին պիտի ըլլա՝ այո՛ կամ ո՛չ: Դարեր ի վեր բռնեցինք հավաքական ազատության ճանապարհը, որ պսակեցավ մեր արյունով և հայ երիտասարդության անասելի ոգևորումներով: Հասած է ժամը վերջին մարտնչումի…. Կոչ կընեմ բոլոր զենքի ընդունակ՝ առանց դասակարգերու խտրության, գյուղացիեն, արհեստավորեն մինչև բարձր դասու մտավորականությունն ու հարուստը: Ես կոչ կընեմ բոլոր չափահաս դպրոցականներուն, որոնք կը բաղձան ծաղկավետ տեսնել վաղվան մշակույթի դաշտը, թող դիմեն զենքի, թող վազեն դեպի ճակատ: Ուղղելով իմ խոսքս մեր բոլոր մայրերուն և քույրերուն՝ կը հորդորեմ, որ չընդունեն իրենց սրբազան հարկի տակ հուդաներն ու դավաճանները, թող թքեն անոնց երեսին և ղրկեն դեպի զորանոց: Դավաճան է այն մայրը, որ կքաջալերե իր զավակը, ամուսինը կամ եղբայրը մընալու տունը, իբրև կորովազուրկ, որբացած ազատության սերեն….»[1]:

Անշուշտ, հայ կնոջ առաքելությունը ոչ միայն ընտանիքի, օջախի կրակը պահպանելն է, այլև այդ կրակով այն ոգեղեն մթնոլորտի ստեղծումն է, որում ծնվում են իր զավակները ոչ թե իր համար, այլ ազգի:Հիշարժան է զոհված հայ լեգեոնականի սգակիր մոր խոսքը, երբ նա, արցունքն աչքերին, ասում էր՝ զավակիս ես ծնեցի, բայց նա առավել ազգինն էր, քան թե իմը: Մեր պատմության հերոսական ժամանակներում և մեր օրերում էլ բարձրանում է հայ կնոջ նվիրական կերպարը, նրա նկարագիրը՝ որպես անձնդիր, հայրենիքի համար զոհագործումի ընդունակ՝ սկսած Եղիշեի՝ Հայոց աշխարհի փափկասուն տիկնանց անձնվիրումից, հայ լեգեոնական-

[1] http://erik-hay.blogspot.com/2012_11_01_archive.html

ների մարեներից մինչև նրանց ոգեղենությունը շարունակող այն հայուհիների սխրանքն ու նվիրումը, որոնք Արցախյան գոյամարտի տարիներին եղան իրենց զինվորյալ եղբայրների և որդիների կողքին՝ որպես գթության քույրեր ու հոգեկիցներ:

Այս թվարկումներով մենք չենք սպառում հայոց մեջ հերոսական ոգու դրսևորումների նկարագրությունը. մեր գոյամարտը շարունակվում է՝ երկնելով նոր հերոսներ…

Այսպիսով՝ դիտարկելով հայ զինվորի հոգենկարագրի դրսևորումները պատմական մեծ ժամանակի ծիրում՝ կարելի է ասել, որ դարերի ընթացքում երբևէ չի եղել, որ նա, զենքը ձեռքին, մտնի օտարի տարածք, գրավի, թալանի, ասպատակի. հայ զինվորն ընդամենն իր երկրի տերն է և նրա սահմանների պահապանը: Հայ իրականության մեջ զինվորը միայն ինքնապաշտպանական գործառույթ է իրականացրել.երբեք զավթողական, նվաճողական պայքար չի մղել:

Վերջին ժամանակներում ընդլայնվել են հայ զինվորի առաքելության շրջանակները: Նա միջազգային խաղաղապահ ուժերի զորքերում, հատկապես վիճելի տարածքներում խաղաղության պահպանման գործառույթ է իրականացնում: Նա արդարության գաղափարն է պաշտպանում տարբեր բանակներում: ՀՀ-ն իր փոքրաթիվ ուժերով ու հնարավորություններով, շնորհիվ հայ զինվորի, մասնակից է դառնում համընդհանուր խաղաղության պահպանմանը. ազգայինը դրսևորվում է մարդասիրության ու ազգասիրության համատեքստում: Պատմության բեկբեկուն ժամանակներում հայ նշանավոր զորավարներն ու հերոսները կռվել են այլ երկրների զորքերում, որոնք ևս ունեցել են ազգապահպանման համանման խնդիրներ, և ժամանակին շատ բարձր են գնահատվել:

Սրանով հանդերձ, մեր ժամանակներում եթե նույնիսկ հաշվի առնենք, որ բանակում հայ զինվորի մեջ որոշ բացասական վերաբերմունք կա այս կամ այն երևույթի հանդեպ, դա ամենևին էլ բնորոշ գործոն չի դառնում իր հիմնական կողմնորոշումները փոխելու իմաստով: Այդ մասին են վկայում նաև Ադրբեջանում գերի ընկած մեր զինվորները, որոնք հարցաքննությունների ժամանակ, նույնիսկ խոշտանգման ու բիրտ ուժի կիրառման պայմաններում երբեք հակահայկական որևէ տեղեկություն չեն հայտնում հակառակորդին:

Բոլոր դեպքերում նորակոչիկային տարիքի տղաներին պետք է նախապատրաստել հայրենիքի պաշտպան դառնալու ոգով, քանի որ մեր ամենախոցելի տեղը նրանց հետ տարվող հոգեբանական աշխատանքի բացակայությունն է կամ թերությունը: Նորակոչային տարիքի տղաների հետ զբաղվում են զինկոմիսարիատները և դպրոցի զինղեկները, որոնց աշխատանքը հաճախ ձևական բնույթ է կրում: Բացի այդ, նորակոչիկներին չեն նախապատրաստում ինքնուրույն կյանքի, քանի որ մինչ բանակ գնալը նա գերխնամքի մեջ է եղել: Ուշանում է նրա՝ բանակային կյանքին հարմարվելու գործընթացը, որը հանգեցնում է բացասական հետևանքների: Շատ հաճախ նորակոչիկը սխալ դաստիարակության պատճառով իրեն այնքան արտոնյալ է զգում, որ արդեն ծառայության ընթացքում ամեն ինչ նրա համար դառնում է պրոբլեմային ու խնդրահարույց: Այս տարիքի տղաներին կարելի է նախապատրաստել իսկական զինվորական ծառայության, եթե արդյունավետ աշխատանք ծավալենք զինկոմիսարիատի ու դպրոցի զինղեկների հետ:

Նորակոչիկին զինկոմում գրանցելուց հետո դպրոցում նրա համար բացվում է հոգեբանական դիտարկման կամ ուսումնասիրման քարտ, որտեղ մանրամասնորեն գրանցվում են նրա բարոյա-

կամային հատկանիշները, հոգեկերտվածքը կոփող անհրաժեշտ անհատական մոտեցումները՝ ելնելով հայրենասիրական դաստիարակության ընդհանուր ծրագրից: Զինվորի հոգեկերտվածքի ձևավորումը հիմնվելու է հետևյալ դրույթների վրա. ա) ինքնուրույնության ապահովում, բ) բարոյական սկզբունքների՝ կամքի, վճռականության ձևավորում, գ) հայրենաճանաչություն, դ) հայրենասիրության խթանում, ե) կարգապահության ու պատասխանատվության զգացման ձևավորում,զ) որոշումների ինքնուրույն ընդունում:

Այս ամենի իրականացման համար անհրաժեշտ է տարբեր դպրոցների աշակերտների ամառային ճամբարի ու հավաքների կազմակերպում, որտեղ նրանք ստիպված կլինեն իրենք իրենց սպասարկել՝ վրաններ տեղադրել, տարածքներ հարթել, առօրյա կենցաղը կազմակերպել: Հետևաբար առաջնահերթ է դառնում մանկավարժական պրակտիկայի արդիականացման խնդիրները թե՛ դպրոցում, թե՛ զինված ուժերում:

ФОРМИРОВАНИЕ ПСИХИКИ БУДУЩЕГО СОЛДАТА В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ ИДЕОЛОГИИ

Карине СААКЯН

Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Ключевые слова: солдат, дисциплина, ответственность, патриотизм, национальная идея, Арцахская война, Гарегин Нжде, Святой Эчмиадзин.

Было много сказано об образе армянского солдата, как носителя идеи патриотизма, так как национальный дух наилучшим

образом выражается в психологическом описании солдата, в его психике и эмоциональной выраженности.

В статье рассмотрены новые проявления образа армянского солдата, в частности, его восприятие идеи родины и его борьба за идеи справедливости и свободы. Особое значение уделено концепции влияния культуры на подсознание солдата.

FORMATION OF THE PSYCHE OF A FUTURE SOLDIER IN THE CONTEXT OF NATIONAL IDEOLOGY

Karine SAHAKYAN
Shirak Center for Armenological Studies of NAS RA

Key words: soldier, discipline, responsibility, patriotism, national idea, Artsakh war, Garegin Nzhdeh, Holy Etchmiadzin.

Many appeals have been to the image of the Armenian soldier as the bearer of patriotic ideas, because the national spirit is best expressed in the soldier's psychological description, mentality and emotional manifestation.

In the article we have examined the image of an Armenian soldier in a new way, in particular his active participation in peacekeeping forces, the fact how he perceives the idea of Motherland and his struggle for freedom and justice. Especially particular importance is attached to the idea of affecting the soldier's subconsciousness.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԸ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼ-ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1914-1930-ական թթ.

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
Շիրակի երկրագիտական թանգարան

Բանալի բառեր՝ ցեղասպանություն, ծնելիություն, մահացություն, բնական աճ, ներգաղթ, արտագաղթ, էթնոս, մարդահամար, գաղթական, տարաբնակեցում:

Անոտացիա: Սույն հոդվածում ներկայացվել է Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի ժողովրդագրական գործընթացները Առաջին և Երկրորդ աշխարհամարտերի միջև ընկած ժամանակահատվածում: Հոդվածում ուշադրություն ենք դարձրել բնակչության թվի և էթնիկական կազմի շարժընթացի, բնական վերարտադրության և բնակչության տեղաշարժերի ընթացքի վրա: Տրվել է գավառի բնակչության թվի և էթնիկական կազմի փոփոխության վրա ազդող գործոնների գնահատականը: Վերլուծել ենք բնակչության մեխանիկական շարժի ընթացքը:

XX դ. սկզբի ժողովրդագրական գործընթացները Հայաստանում, այդ թվում՝ Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառում պայմանավորված էին սոցիալ-տնտեսական և քաղաքական մի շարք գործոններով:Այդ ժամանակահատվածն աչքի է ընկնում բարդ քաղաքական իրադարձություններով, որոնք, հաջորդելով միմյանց, էական ազդեցություն թողեցին Հայաստանի էթնոժողովրդագրական իրադրության վրա: Նախ՝ Առաջին աշխարհամարտը և հայոց

ցեղասպանությունը, ապա՝ 1917թ. փետրվարյան և հոկտեմբերյան հեղափոխությունները 1918թ. Առաջին հանրապետության կազմավորումը, թուրք-հայկական պատերազմն ու խորհրդային կարգերի հաստատումը որոշակի ազդեցություն ունեցան Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչության թվի շարժընթացի վրա:

1915-1919թթ. գավառի բնակչության թիվը պակասել է թուրքական կոտորածների, պատերազմի դաշտում զոհվածների, սովի ու համաճարակների զոհ դարձածների և արտագաղթածների հաշվին: Ա. Մռավյանը տվյալներ է բերում Ալեքսանդրապոլի հանձնաժողովի գործունեության արդյունքներից: Ըստ դրանց՝ գավառում թուրքերը կոտորել էին 60 հազար մարդ, վիրավորների թիվը 38 հազար էր, գերիներինը (բացառապես տղամարդիկ)՝ 18 հազար, քաղցից մահացածներինը՝ 32 հազար: 1921թ. գավառը թողնելիս թուրքերն իրենց հետ տարել էին 8 հազար կին ու աղջիկ: Գերության մեջ գտնվող 10 հազար մարդուց կենդանի էր մնացել ընդամենը 2000-ը[1]:

Թուրքերն առաջին անգամ Ալեքսանդրապոլի գավառ մտան 1918թ. գարնանը՝ մայիսի 15-ին, և մնացին մինչև դեկտեմբեր: Օկուպացման յոթ ամիսների ընթացքում գավառի բնակչության թվաքանակը կտրուկ նվազեց: Հայաստանի կենտրոնական վիճակագրական բյուրոյի 1919թ. տվյալների համաձայն՝ Ալեքսանդրապոլի գավառն ուներ 152414 բնակիչ, որից բնիկ էին 118053-ը, իսկ մնացած 34361-ը՝ գաղթական (31989-ը՝ արևմտահայեր և 2372-ը՝ կայսրության այլ նահանգներից գաղթած հայեր)[2]: Համեմատու-

[1] Ղազախեցյան Վ, Հայաստանը 1920-1940թթ., Եր., 2006, էջ 128:

[2] Ալեքսանյան Կ., Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունն Ալեքսանդրապոլի գավառում, Բանբեր Հայաստանի արխիվների (այսուհետև՝ ԲՀԱ), , Եր., 2005, N 1(105) էջ 18:

թյան համար նշենք, որ 1915թ. Ալեքսանդրապոլի գավառում առկա բնակչության թիվը 245980 է, որից 22818-ը՝ արևմտահայ գաղթականներ[1]: Այսինքն՝ չորս տարիների ընթացքում գավառի բնակչության բացարձակ թվաքանակը պակասել է 93566 մարդով կամ 38%-ով:

1920թ. նոյեմբերի 7-ին թուրքերը երկրորդ անգամ են մտնում Ալեքսանդրապոլի գավառ և մնալով մինչև 1921թ. ապրիլը՝ շարունակում են հայերի ցեղասպանությունը: Այդ օրերին գավառի իշխանավորները լքել էին իրենց պաշտոնները, բնակչությանը թողել բախտի քմահաճույքին և հայկական բանակի հետ հեռացել: Դաշնակները հեռանալուց առաջ քաղաքի հասարակական պահեստները լրիվ դատարկել էին, ինչի հետևանքով տասնյակ հազարավոր գաղթականներ և տեղաբնիկներ մատնվեցին սովի[2]: Թուրք-հայկական պատերազմում Հայաստանի կրած ծանր պարտության հետևանքով 1920թ. դեկտեմբերի 2-ին դաշնակցական կառավարության և քեմալական Թուրքիայի միջև հայերի համար ստորացուցիչ պայմանագիր կնքվեց:

Ցեղասպանությունից փրկված հայերն իրենց փրկությունը գտան արտասահմանյան երկրներում և Արևելյան Հայաստանում, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառում: Գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում անընդհատ տեղաշարժվել են, և նրանց իրական թվաքանակը որոշելը գրեթե անհնար է: Այսպես, 1915թ. գավառի 139 բնակավայրերում գաղթականների թիվը 22818 է, ինչը կազմել է գավառի ամբողջ բնակչության շուրջ 10%-ը: Գաղթական-

[1] Բանբեր Երևանի արխիվների, Եր., 1989, N 1, էջ 165-175:

[2] Աբրահամյան Հ., Ալեքսանդրապոլի իրադարձությունների շուրջ /1920թ. նոյեմբեր1921թ.ապրիլ/, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), Եր., 2007, N 2 /619/, էջ 123-125:

ների 30%-ը կամ 6844 մարդ տեղավորվել է Ալեքսանդրապոլ քաղաքում[1]: Մինչև 1917թ. Ալեքսանդրապոլի գավառն ընդունում և ճանապարհում է 85-95 հազար գաղթականներ, իսկ համանուն քաղաքում նրանց թիվը հասնում էր 25754-ի[2]: Այսինքն՝ քաղաքի առկա բնակչության թիվը կազմել է շուրջ 75-80 հազար մարդ:

Խորհրդային Հայաստանի պետական հանձնաժողովի տվյալներով մինչև Ալեքսանդրապոլի գավառից դուրս գալը՝ 1921թ. ապրիլը, գավառում թուրքական բանակը սպանել է 30 հազար և գերեվարել 26 հազար մարդ[3]: Ալեքսանդրապոլի ու Սուրմալուի գավառներում և Կարսի մարզում 1920-1921թթ. թուրքական օկուպանտներն ավերել և թալանել էին 30 հազար գյուղացիական տնտեսություն՝ ավելի քան 200 հազար բնակչությամբ: Կրած վնասը գնահատվել է 60 մլն ռուբլի ոսկով, իսկ քաղաքային բնակչության կորուստները կազմել են 30 հազար, թալանվել է Ալեքսանդրապոլ քաղաքի երկաթուղային դեպոն: Քաղաքային բնակչությանը և քաղաքային տնտեսությանը պատճառվել է 50 մլն ռուբլու վնաս[4]: Ալեքսանդրապոլի գավառից թուրքերն իրենց երկիրը քշեցին 240 հազ. գլուխ խոշոր եղջերավոր անասուն[5]:

Ալեքսանդրապոլի գավառի բնակչության վերարտադրության վրա ժողովրդագրական ավելի երկարատև ազդեցություն ուներ 1915-1921թթ. ծնելիության ցածր և մահացության բարձր մակարդակը: Լրիվ ոչնչացել կամ քայքայվել էին բազմահազար հայ-

[1] Աբրահամյան Հ., նշվ. Աշխ., էջ 186-189:

[2] Ալեքսանյան Կ.,Արևմտահայ գաղթականներն Ալեքսանդրապոլի գավառում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին,ԲՀԱ,Եր.,2008,N 2(112),էջ 41:

[3] Ալեքսանյան Կ., 1919-1921թթ. Ալեքսանդրապոլի գավառի վարչատարածքային կառուցվածքի և բնակչության հարցի շուրջ, ՇՊՄԺ հանրապետական 6-րդ գիտաժողովի նյութեր, Գյումրի, 2004, էջ 50:

[4] Ղազախեցյան Վ., նշվ. աշխ., էջ 129:

[5] Туманян О., Развитие экономики Армении в XIX и начале XXвв. Ер., 1947, с. 281.

կական ընտանիքներ: Հայաստանում (կարծում ենք՝ նույնը կարելի է ասել նաև Ալեքսանդրապոլի գավառի համար) 1915թ. ծնված 1000 երեխայից մինչև խորհրդային կարգերի հաստատումը կենդանի է մնացել միայն 530-ը, իսկ 1918թ. ծնվածներից՝ 630-ը[1], ինչը նշանակում է, որ այդ տարիները եղել են զանգվածային մահացության տարիներ: Այդ մասին վկայող ցնցող փաստեր են բացահայտվել Ալեքսանդրապոլի գավառի բնակչության՝ Ռ. Սիֆմանի կողմից կատարված հատուկ հետազոտության ժամանակ: Օրինակ, Դուզքյանդի գավառակից (ներկայիս՝ Ախուրյանի տարածաշրջան) Մինասյան Սիրանուշը հաղորդել է, որ 1918թ. մեռել են իր հինգ երեխաները. նույն թվականին սովից մահացել են Մուրադյան Խաթունի վեց երեխան, 1920թ. մահացել են Հաջանյան Ջավահիրի երեք երեխան: Թալինի գավառակից Ասատրյան Զարուհու չորս երեխան մեռել են 1918թ. և երեքը՝ 1919թ.:

Գյուղատնտեսական ու արհեստագործական արտադրության կազմալուծման և պարենի ներմուծման ծավալների աննախադեպ կրճատման պատճառով գավառում առաջնային անհրաժեշտության սննդամթերքների սուր կարիք էր զգացվում: Բնակչությունը հազիվհազ քարշ էր տալիս իր կիսաքաղց գոյությունը՝ հաճախ չճարելով նույնիսկ մի կտոր հաց, տասնյակ հազարներով սովից մեռնում էին: Գավառում 1920-1921թթ., ըստ Հ. Թումանյանի տվյալների, սովից մահացել է 32 հազար մարդ[2]: 1920ական թվականների սկզբներին Հայաստանում, հատկապես գյուղական բնակավայրերում, տարածված են եղել սիբիրախտը, քոսը, թոքախտը, խոլերան և վարակիչ ու տարափոխիկ այլ հիվանդություններ,

[1] Դավթյան Լ., Սովետական Հայաստանի բնակչության վերարտադրությունը, Եր., 1965, էջ 49:

[2] Туманян О., Экономическое развитие Армении, Ер., 1954, стр. 342.

որոնք հիմնականում մահվան պատճառ էին դառնում[1]: Վիճակագրական նյութերը և փաստերը ցույց են տալիս այն ահավոր ճշմարտությունը, որ Հայաստանի, հատկապես Ալեքսանդրապոլի գավառի բնակչության վրա կախված էր ֆիզիկական բնաջնջման վտանգը: Եթե ևս 2-3 տարի երկարաձգվեր այդ մղձավանջային շրջանը, Հայաստանը կդառնար անմարդաբնակ:

1914-1926թթ. ընկած ժամանակամիջոցում բացարձակ թվաքանակով ամենաշատը պակասել է Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչությունը՝ 10410 մարդով կամ 19,7%-ով, իսկ տոկոսային հարաբերությամբ ամենաշատը՝ Ղզըլղոչի (ներկայիս՝ Աշոցք) գավառակինը՝ համապատասխանաբար՝ 50,1%-ով կամ 4767-ով մարդով: Հ. Գևորգյանի բերած տվյալներով՝ Ղզըլղոչ ու Ճզիվլար (ներկայիս՝ Ցողամարգ) գյուղերի մարագների մեջ թուրքական բարբարոսներն այրել ու սրախողխող են արել 4200 հայ[2]: Չնայած արտագաղթի մեծ ծավալներին՝ Խլի Ղարաքիլիսա (ներկայիս՝ Ազատան) գյուղում 1918թ. գարնանը բնակվել է 8000 մարդ, որոնց կեսից ավելին գաղթականներ էին: Նույն տարվա հունիսի 2-ին թուրքերը հրաման արձակեցին, որ 18-40 տարեկան տղամարդիկ ներկայանան հաշվառման, իսկ ովքեր հրաժարվեն՝ նրանց տուն-տեղը կհրդեհվի: Անսալով թշնամու խոսքին՝ 800 ազատանցիներ հավաքվեցին, որոնց գերեվարեցին, ուղարկեցին Թուրքիա՝ տաժանակիր աշխատանքի: Նրանցից երեք տասնյակին հաջողվեց վերադառնալ հարազատ բնակավայր: 1920թ. նոյեմբերի սկզբին թուրքական բանակը երկրորդ անգամ գրավեց Ալեքսանդրապոլի գավառը: Թուրքա-

[1] Թամրազյան Բ., Սովետական Հայաստանում գյուղատնտեսական մտավորականության կազմավորման պատմությունից (1921-1925թթ.), ԼՀԳ, Եր., 1988, N 6 (546), էջ 29:

[2] Գևորգյան Հ., Լեռնային շրջանի նոր դեմքը, Եր., 1985, էջ 4:

կան օկուպացիոն բանակը 300-ից ավելի ազատանցի երիտասարդների բռնեց և ուղարկեց Կարս ու Կարին՝ հարկադիր աշխատանքի, նույնքան էլ սրախողխող արվեցին: Մոտավոր հաշվով, թուրքերը գյուղից տարել են 100000 փութ հացահատիկ և կարտոֆիլ, 5000 գլուխ մանր և խոշոր եղջերավոր անասուն, 200 սայլ, հրկիզել են 300-ից ավելի տուն ու մարագ[1]: 1911-1926թթ. ընկած ժամանակամիջոցում Ազատանի բնակչության բացարձակ թվաքանակը պակասել է 1529-ով կամ 38,1 %-ով՝ 4010 –ից հասնելով 2481 մարդու:

Նշված ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլ քաղաքի բնակչության թիվը նվազել է 19,7%-ով, Դուզքյանդի գավառակինը՝ համապատասխանաբար 33,1%-ով, Քյավթառլուինը՝ 12%-ով, Ղզըլղոչինը՝ 42,4%-ով և Մոլլա-Գյոկչայինը՝ 27%-ով: Ալեքսանդրապոլի գավառի մարդկային կորուստների հիմնական պատճառներից մեկը, կարծում ենք, պայմանավորված էր Առաջին հանրապետության ծանր տնտեսական իրադրությամբ և իշխանության անկարողությամբ՝ կարճ ժամանակահատվածում լուծելու սոցիալական և ժողովրդագրական հիմնախնդիրները:

1920-ական թթ. խորհրդային Հայաստանի, այդ թվում՝ Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչությունն աստիճանաբար ավելացավ. բնակչության աճի հիմնական աղբյուրներն էին բնական ընդլայնված վերարտադրությունը, հայրենադարձությունը և ԽՍՀՄ հանրապետություններից բնակչության ներգաղթը:

1921թ. հունիսի 20-ին հրապարակվեց Հայկական ԽՍՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի դեկրետը գյուղական, գավառային և գավառակային հեղկոմների մասին, որն օրենսդրական կարգով հաստատեց վարչատարածքային կառավարման տեղա-

[1] Իկիլիկյան Վ., Ազատանն ու ազատանցիները, Գյումրի, 2007, էջ 18, 43-45:

կան օրգանների գոյությունը[1]: Մեկ ամիս անց անհրաժեշտություն զգացվեց իրականացնելու վարչական նոր բաժանում: ՀԽՍՀ Ժողկոմխորհը դեկրետ ընդունեց «ՀԽՍՀ վարչական վերաբաժանումների մասին», ըստ որի՝ հանրապետությունում կազմավորվեցին Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի գավառները, որոնք էլ բաժանվեցին գավառակների: Ինը գավառների մեջ մտնում էին 39 գավառակներ: Ալեքսանդրապոլի գավառը բաժանված էր 7 գավառակների[2]: Դրանք էին Աղբաբայի, որի սահմանները համընկնում է նախկին Ամասիայի վարչական շրջանին,Դուզքյանդի (Ախուրյան), Թալինի,Հաջիխալիլի (Արագածի), Ղզըլղոչի (Աշոցքի), Մոլլա-Գյոկչայի (Անի) և Քյավթառլուի (Արթիկ) գավառակները: 1930-ական թվականների սկզբներին ՀԽՍՀ գավառները իբրև վարչական միավորներ վերացվեցին, և կազմավորվեցին վարչական շրջաններ: Մոլլա-Գյուկչայի և Քյավթառլուի գավառակների միավորմամբ կազմավորվեց Արթիկի շրջանը, իսկ Աղբաբայի և Ղզըլղոչի գավառակների միավորումից առաջացավ Ամասիայի շրջանը: Հաջի-Խալիլի գավառակը մտավ Ապարանի շրջանի մեջ: Դուզքյանդի գավառակի սահմաններում կազմավորվեց Լենինականի շրջանը, որը հետագայում վերանվանվեց Ախուրյանի շրջան:

1922թ. Հայկական ԽՍՀ-ում անցկացվեց գյուղատնտեսական մարդահամար, որի արդյունքները հրատարակվեցին 1924թ.: Ըստ այդ մարդահամարի Ալեքսանդրապոլի գավառն ունեցել է 156 304 բնակիչ (76618 տղամարդ, 79686 կին)[3]: 1926թ. այդ ցուցանիշը

[1] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 194:
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 194:
[3] Հայաստանի ազգաբնակչությունը, ըստ սեռի, տարիքի, գրագիտության, ազգության (1922թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութեր), Եր.,1924, էջ 92-93:

կազմել է 171841 և 1931թ.՝ 219780 մարդ (109276 տղամարդ, 110504 կին): Այսինքն՝ 1922-1931թթ. ընկած ժամանակամիջոցում գավառի բնակչության թվաքանակն ավելացել է 63476-ով կամ 40,6%-ով, այդ թվում՝ Ալեքսանդրապոլ-Լենինական քաղաքինը ավելացել է համապատասխանաբար 14419 մարդով կամ 32,3%-ով, իսկ գավառի մյուս բնակավայրերի բնակչության թվաքանակը՝ 49057-ով կամ 42,1%-ով: Նշված ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչության աճը պայմանավորված է եղել հայրենադարձությամբ, ինչպես նաև ծնունդների շեշտակի աճով, որը ժողովրդագրության մեջ ընդունված է անվանել «կոմպենսացիոն աճ»: Օգտվելով 1922, 1926 և 1931թթ. մարդահամարի նյութերից՝ 1-ին աղյուսակում տանք Ալեքսանդրապոլի գավառի բնակչության թվի շարժընթացը /ըստ գավառակների/ խորհրդային իշխանության առաջին տարիներին: Աղյուսակ 1-ից երևում է, որ Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչության աճի տարեկան միջին տեմպը կազմել է 4,5 %, ինչը հանրապետության նույն ցուցանիշը գերազանցում է[1]: Ալեքսանդրապոլի բոլոր գավառակներում, բացառությամբ Մոլլա-Գյոկչայի, գրանցվել է բնակչության թվաքանակի շեշտակի աճ,իսկ վերջինիս գավառակի բնակչության թվաքանակի նվազումը բացատրվում է բնակչության արտագաղթով և գյուղական բնակավայրերի նվազմամբ: Երբ համեմատում ենք Մոլլա-Գյոկչայի գավառակի 1931թ. բնակչության թիվը 1926թ. հետ, տեսնում ենք, որ գրանցվել է բնակչության թվի ավելացում:

[1] Դավթյան Լ., նշվ. աշխ., էջ 64:

Աղյուսակ 1 . Ալեքսանդրապոլի գավառակների բնակչության թվի աճի փոփոխությունը 1922-1931թթ. [1]

Գավառակ	Բնակավայրերի թիվը	Բնակչության թիվը 1922թ.	Բնակչության թիվը 1926թ.	Բնակչության թիվը 1931թ.	Բնակչության աճի միջին տարեկան տեմպը 1922-1931թթ. (տոկոսներով)
ք. Ալեքսանդրապոլ	1	44656	42312	59075	+3,6
Դուզքյանդ /I գավառակ/	39	24881	32256	37704	+5,7
Քյաֆթառլու/IIգավառակ/	24	19667	26507	30236	+6,0
Ղզըլղոչ /III գավառակ/	26	11779	11260	14577	+2,6
Մոլլա-Գյոկչա/IV գավառակ/	26	28488	17575	19624	-3,4
Աղբաբա/V գավառակ/	32	6252	9160	13130	+12,2
Թալին /VI գավառակ/	56	8401	15759	25014	+21,9
Հաջի-Խալիլ /VII գավառակ/	27	12180	17012	20420	+7,5
Ընդամենը	231	156304	171841	219780	+4,5

Առաջին աշխարհամարտի տարիներին շեշտակի ավելացավ Արևմտյան Հայաստանից գաղթականների հոսքն Արևելյան Հայաստան, այդ թվում՝ Ալեքսանդրապոլի գավառ: 1915թ. Ալեքսանդրապոլի գավառում արևմտահայ գաղթականների թիվը 22815 է (5205 տղամարդ, 7565 կին, 10045 երեխա), ինչը կազմել է գավառի ամբողջ բնակչության թվաքանակի 10,1%-ը: Գաղթականներից 6844-ը տեղավորվել է Ալեքսանդրապոլ քաղաքում, 15971-ը՝ գավա-

[1] Պոտոսյան Ա., Հայաստանի Հանրապետության գյուղական տարաբնակեցումը, Եր.,1999, էջ 183-187, 193-201: Հայաստանի ազգաբնակչությունը՝ ըստ սեռի, տարիքի,գրագիտության, ազգության (1922թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութեր), Եր. 1924, էջ 92-93: ՀՍԽՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը 1935թ. նոր սահմաններում և ըստ 1931թ. մարդահամարի, Եր., 1936, էջ 9-37 նյութերը:

ռի 139 բնակավայրերում, այդ թվում 9836-ը՝ Դուզքյանդի, 2820-ը՝ Քյավթառլուի, 1373-ը՝ Ղզըլղոչի և 1942-ը մնացած չորս (Մոլլա-Գյոկչայի, Աղբաբայի, Հաջի-Խալիլի և Թալինի) գավառակներում ու Փամբակի տեղամասում: 1915-1917թթ. ընթացքում Ալեքսանդրապոլում բացվում են ութ որբանոցներ, որտեղ ապաստանում են ավելի քան 500 արևմտահայ որբ երեխաներ[1]:

Ըստ 1926-1927թթ. հաշվառման՝ Լենինականի յոթ գավառակներում տեղավորվել են 13,8 հազար արևմտահայ գաղթականներ, ընդ որում, չորսում տեղավորվել է 1584 ծուխ (7722 շունչ) կամ այդ յոթ գավառակներում հաստատված գաղթականների ամբողջ թվի 55,9%-ը, իսկ մնացյալ երեք գավառակներում՝ 6608 մարդ, որոնցից 323ը՝ եզդի-քուրդ, իսկ մնացածը՝ հայեր: Լենինականի գավառի 40 բնակավայրերում տեղավորվել է ավելի քան 3,5 հազար մշեցի, 37-ում՝ 1,5 հազար բուլանըխցի, 40-ում՝ 1,1 հազար կարսեցի, 31-ում՝ 3,4 հազար բիթլիսցի, 28-ում՝ 828 էրզրումցի, 18-ում՝ 514 խնուսցի, 14-ում՝ 515 բասենցի, 16-ում՝ 503 ալաշկերտցի, որոնց զումարը կազմում է գավառի գաղթական բնակչության 86%-ը[2]: Թալինի գավառակի Ահազչի (Զովասար), Մեծ Փիրթիկյան (Ծաղկասար), Վերին և Ներքին Ղարաղոյմազ (Վերին և Ներքին Սասունաշեն), Այնալի (Դավթաշեն), Ներքին Թալին (Դաշտադեմ), Սաբունչի (Հացաշեն) և Աշնակ գյուղերը հիմնադրել են գաղթականները: Դուզքյանդի գավառակի Վերին Ղանլիջա (Վահրամաբերդ), Յասաուլ (Հովունի), Մոլամուսա (Ոսկեհասկ) գյուղերի բնակչության կեսից ավելին և Ղզըլղոչի՝ Կուրդուբուլաղ (Կրասար) ու Մոլլա-Գյոկչայի՝ Բագրևանդ գյուղերի բնակչության 1/3-ից ավելին

[1] Ալեքսանյան Կ., Արևմտահայ գաղթականներն..., էջ 40:

[2] Վարդանյան Լ., Սարգսյան Հ., Շիրակի 1926-1927թթ. գաղթականության որոշ հարցեր (ըստ Ստ. Լիսիցյանի արխիվային նյութերի), Եր., 1995, էջ 2:

1926թ. արևմտահայ գաղթականներ էին: 1924-1925թթ. ընթացքում Լոռու գյուղական բնակավայրերից Լենինականի գավառ են տեղափոխվել 920 հողազուրկ գաղթականներ[1]:

Լենինականում գաղթականները բնակություն են հաստատել կայարանամերձ գոտում և 1926թ. երկրաշարժից հետո ձևավորված, այսպես կոչված, Բարաքներ թաղամասում: 1928թ. տեղական տնտեսական բաժնի բարաքների ստուգման տետրում հաշվառված 400 բնակիչների կեսից ավելին արևմտահայ գաղթականներն էին՝ գաղթած Կարս և Սվազ քաղաքներից, Դերսելա, Բաշքյադիքլար գյուղերից: Թաղամասի մնացած բնակիչները եկել են Լենինականի գավառի՝ Օրթաքիլիսա (Մայիսյան), Փոքր Ղարաքիլիսա (Ազատան), Արմթլու (Տուֆաշեն), Մեծ Քեթի, Մոլլա Մուսա (Ոսկեհասկ), Տապշվանդշլաղ (Շիրակավան), Չորլի (Լեռնագյուղ), Ղափլի (Գուսանա), Ղոնաղռան (Շիրակ), Բայանդուր, Արթիկ, Մեծ Քյափանակ (Բասեն), Աղքիլիսա (Կրաշեն), Ախուլա (այժմ գոյություն չունի), Իլխիաբ (Այգաբաց), Բաջողլի (Հայկավան), Սվանվերդի (Լուսաղբյուր), Հաջի-Խալիլ (Ծաղկահովիտ), Թորոսգյուղ, Հաջի Նազար (Կամո), Բոզդողան (Սարակապ) և այլ բնակավայրերից[2]:

Հայերը Խորհրդային Միության այն եզակի ազգերից էին, որ այդ տարիներին ունեին ձևավորված սփյուռք: Եվ խորհրդային իշխանություններն ակտիվ քարոզարշավ էին կազմակերպում արտասահմանյան այն երկրներում, որտեղ կար հայկական մեծ սփյուռք: Այդ երկրներում բնակվող հայերին կոչ էր արվում հայրենադարձվել: 1921-1936թթ. հայրենադարձվել են 42286 սփյուռքա-

[1] Թևոսյան Բ., Աշխատուժի զբաղվածության հարցի լուծումը Սովետական Հայաստանում /1921-1929թթ./, ԼՀԳ, Եր., 1984, N 3 /495/, էջ 23:

[2] ՀԱԱ, Շիրակի տարածքային մասնաճյուղ, ֆ. 7, ց.1 գ.16 :

հայեր[1], որոնց մի զգալի զանգված բնակվեց Լենինականի գավառի գյուղական բնակավայրերում և գավառային կենտրոնում: Ըստ վիճակագրական տվյալների, արխիվային նյութերի և այդ խնդրին առնչվող գիտական հոդվածների՝ կարելի է ենթադրել, որ ուսումնասիրվող ժամանակահատվածում գավառի բնակչության մեխանիկական աճի հաշվեկշռում հայրենադարձների թվաքանակը կազմել է մոտ 7,8%, իսկ 1926-1939թթ. Լենինական ներգաղթած բնակչության շուրջ 24,4%-ը հայրենադարձներն էին, 67,5%-ը եկել են հանրապետության գյուղական բնակավայրերից, իսկ 8,1%-ը՝ Միության այլ հանրապետություններից, հատկապես Վրաստանից:

1922-1931թթ. ընկած ժամանակամիջոցում Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչության էթնոժողովրդագրական գործընթացում գրանցվել են էական տեղաշարժեր: Աղյուսակ 2-ից երևում է, որ գավառում բնակվող հայերի, ռուսների և ուկրաինացիների, թուրքերի ու քրդերի և եզդիների թվաքանակը շեշտակի ավելացել է: Չունենալով հավաստի և ստույգ տվյալներ՝ կարծում ենք՝ այդ տարիներին ռուսների, մասնավորապես թուրքերի և քրդերի և եզդիների բարձր աճը կարող է պայմանավորված լինել բնական ընդլայնված վերարտադրությամբ և ներգաղթով: Բացառված չէ, որ 1922թ. և 1931թ. բնակչության ազգային կազմի հաշվառումը կատարվել է թերություններով: Նշված ժամանակամիջոցում գավառում բնակվող հայերի թիվն ավելացել է 33,4%-ով, իսկ Լենինական քաղաքում՝ 16,9%-ով, թուրքերինը՝ համապատասխանաբար 32,7%-ով և 6,7 անգամ: Աճի ամենաբարձր ցուցանիշ գրանցվել է ռուսների և ուկրաինացիների մոտ:

[1] Մելիքսեթյան Հ., Հայրենիք-Սփյուռք առնչությունները և հայրենադարձությունը, Եր., 1985, էջ 115:

Աղյուսակ 2. Գավառի բնակչության ազգային կազմի շարժընթացի ցուցանիշները 1922-1931թթ.[1]

Գավառակներ	հայ		թուրք		Ռուս և ուկ-բաինացի		Քուրդ և եզդի		Այլ ազգեր		ընդամենը	
	1922թ.	1931թ.	1922թ.	1931թ.	1922թ.	1931թ.	1922թ.	1931թ.	1922թ.	1931թ.	1922թ.	1931թ.
Ալեքսանդրապոլ	43658	51033	47	316	667	6613	23	146	251	967	44656	59075
Դուզքյանդ	24708	37590	39	-	6	1	115	-	13	113	24881	37704
Քյաֆթառլու	19647	30181	-	-	-	43	-	1	20	11	19667	30236
Ղզըլղոչ	11768	14577	2	-	-	-	9	-	-	-	11779	14577
Մոլլա-Գյոկչա	28452	19462	-	2	3	123	33	24	-	13	28488	19624
Աղբաբա	105	4633	6129	8201	6	74	12	49	-	173	6252	13130
Թալին	7792	20327	32	1	2	72	574	4466	-	148	8401	25014
Հաջիխալիլ	7484	13717	170	-	-	-	4526	6697	-	6	12180	20420
Ընդամենը	143614	191520	6419	8520	684	6927	5292	11383	285	1431	156304	219780

Թուրքերը կոմպակտ բնակվել են Աղբաբայի, իսկ քրդերը և եզդիները՝ Հաջի Խալիլի և Թալինի գավառակներում: Ալեքսանդրապոլ-Լենինական գավառի 1931թ. թուրքաբնակ գյուղերն էին Աղբաբայի գավառակի թվով 19 գյուղեր, որոնցից խոշորներն են Գյուլլիբուլաղը (Բյուրակն), Դուզքյանդը (Ալվար), Յենի-յոլը (Աղվորիկ), Գյոլլին (Արդենիս), Ազիզբեկով (Արեգնադեմը), Մաղարաջուղը (Ծաղկուտը) և Օխչոլին (Ողջին): Հաջի-Խալիլի գավառակի քրդաբնակ գյուղերի թիվը 12 է, իսկ խոշոր գյուղերն են եղել Քարվանսարան (Ամրե Թազա), Չոբանմազը (Ավշեն), Ջառջառիսը (Դերեկ), Մեծ Միրաքը, Ղոնդաղսազը (Ռյա-Թազա): Թալինի գավառակի եզ-

[1] Աղյուսակը կազմելիս օգտագործվել են. Հայաստանի ազգաբնակչությունը. ըստ սեռի, տարիքի, գրագիտության, ազգության (1922թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութեր), Եր., 1924, էջ 92-93: ՀՍԽՀ շրջանները, կենտրոնական քաղաքներն ու բնակավայրերը 1935թ. նոր սահմաններում և ըստ 1931թ. մարդահամարի, Եր., 1936, էջ 9-37 նյութերը:

դիաբնակ գյուղերի թիվը 18 է, որից խոշորներն են Սաբունչին (Հացաշեն), Հակտոը, Թլիկը:

Սոցիալիզմի զարգացման պայմաններում բնակչության միգրացիոն գործընթացներն ըստ իրենց ուղղության և նշանակության լինում են տարբեր: Մեր հետազոտության համար առավել հետաքրքրություն են ներկայացնում հետևյալ ուղղությունները.

1. բնակչության հոսքը գյուղից քաղաք,
2. բնակչության միջհանրապետական միգրացիան:

Նշված կետերը քննարկենք առանձին-առանձին: 1920-ական թվականների ինդուստրացումը և 1930-ական թվականների կոլեկտիվացումը գործուն ազդեցություն թողեցին Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչության տեղաշարժի վրա:

Գավառի գյուղական բնակչության հոսքը քաղաք պայմանավորված էր աճող Լենինական և Արթիկ քաղաքների արագ զարգացող արդյունաբերությանը կադրերով ապահովելու անհրաժեշտությամբ: Բացի դրանից՝ կոլեկտիվացումը նույնպես նախադրյալներ ստեղծեց գյուղից քաղաք բնակչության հոսքի մեծացման համար: Կոլեկտիվացումից ավելի շատ տուժեցին մենատնտեսները, որոնք, հայտնվելով իրենց համար անբարենպաստ սոցիալ-տնտեսական և քաղաքական միջավայրում, սեփական ունեցվածքը վաճառելով կամ ստիպողաբար հանձնելով կոլտնտեսությանը, տեղափոխվեցին քաղաքային բնակավայրեր: Կարելի է ասել, որ կոլեկտիվացման ավարտին մենատնտեսները որպես սոցիալական շերտ, վերացան: Զրկվելով իրենց հողակտորներից ու անասուններից՝ մենատնտեսները բռնել են արտագաղթի ճամփան: Կոլեկտիվացման առաջին տարիներին Լենինականի շրջանի մենատնտեսների թիվը կտրուկ նվազում է: Երկու գյուղերի (Առափի և Բայանդուր) օրինակով փորձենք ցույց տալ 1932-1933թթ. ժողո-

վրդագրական փոփոխությունները: Այդ երկու գյուղերում 1932թ. բնակչության թիվը կազմել է 1582 մարդ (կոլտնտեսականներ՝ 834 և մենատնտեսներ՝ 748), 1933թ.՝ 1371 մարդ (կոլտնտեսականներ՝ 775 և մենատնտեսներ՝ 596): Ինչպես տեսնում ենք, երկու տարիների ընթացքում Առափի և Բայանդուր գյուղերի բնակչության թիվը պակասել է 211 մարդով, ինչը կազմում է այդ գյուղերի ամբողջ բնակչության 13,3%-ը, այդ թվում՝ կոլտնտեսականների թիվը պակասել է 59-ով, և մենատնտեսներինը՝ 152-ով[1]:

ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղի արխիվային ֆոնդերում պահպանվում են Լենինական քաղաքի և համանուն շրջանի բնակչության միգրացիային վերաբերող բավականին հետաքրքիր տեղեկություններ: Լենինական քաղաքի կենտրոնական վիճակագրական վարչությունն ամեն ամիս հաշվարկել է շրջանի և շրջանային կենտրոնի բնակչության մեխանիկական շարժը: Նշենք, որ բնակչության մեխանիկական աճի հաշվարկումը կատարվել է թերություններով, ինչը վկայում են բազմաթիվ արձանագրությունները[2]: Խորհրդային կառավարությունը կապիտալիզմից սոցիալիզմին անցման ժամանակաշրջանում աշխատունակ բնակչության զբաղվածության հարցի լուծումը և գործազրկության վերացումը դիտում էր որպես սոցիալիզմի կառուցման հիմնական պայմաններից մեկը: Լենինականի գավառի գյուղական բնակավայրերից 1924-1925 տնտեսական տարում արտագնա աշխատանքի մեկնողների թիվը կազմել է 3784 մարդ, իսկ հաջորդ տնտեսական տարում՝ 4337 մարդ: Մեր հանրապետության գյուղական բնակավայրերից արտագնա աշխատանքի հինգ մեկնողներից մեկը եղել է Լե-

[1] ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 7, ց. 1, գ. 42, թ. 12-24, 15 թերթ:
[2] ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 9, ց. 2, գ. 188, թ. 26:

նինականի գավառից[1]: Որպեսզի հստակ պատկերացում կազմենք, թե Լենինական քաղաքում բնակչության մեխանիկական աճի ցուցանիշներն ինչպիսին են եղել, դիտենք աղյուսակ 3-ը:

Աղյուսակ 3. Լենինական քաղաքի բնակչության մեխանիկական աճի ցուցանիշը 1935թ.[2]

1934թ	եկածներ		մեկնածներ		մեխանիկական աճ	
	Ընդ.	մինչև 16տ.	Ընդ.	մինչև 16տ.	Ընդ.	մինչև 16տ.
հունվար-մայիս	740	149	830	216	- 90	- 67
հունիս	630	155	570	118	+ 60	+ 37
հուլիս	632	163	528	135	+ 104	+ 28
օգոստոս	441	136	506	113	- 65	+ 23
սեպտեմբեր	337	73	410	44	- 73	+ 29
հոկտեմբեր	505	142	453	98	+ 52	+ 44
նոյեմբեր	582	199	493	162	+ 89	+ 37
դեկտեմբեր	618	174	549	156	+ 69	+ 18
Ընդամենը	4485	1191	4339	1042	+ 146	+ 149

1934թ. Լենինականի բնակչության ներգաղթի գործակիցը կազմել է 8,5%, իսկ արտագաղթինը՝ 8,2%, մեխանիկական աճի գործակիցը համապատասխանաբար՝ 0,3% է: 1935թ. հունվար ամսին Լենինականի շրջանից Ռուսաստան մեկնել են 65 (38 տղամարդ, 27 կին) մարդ, որից 26-ը տեղավորվել են քաղաքներում, իսկ 39-ը՝ գյուղերում: Տղամարդկանցից 16-ը մեկնել է Ռուսաստանի քաղաքներ, իսկ 22-ը՝ գյուղեր, իսկ կանանցից 10-ը՝ քաղաք, ու 17-ը՝ գյուղ: Նույն ամսին Ռուսաստանից Լենինականի շրջան եկածների թիվը 81 մարդ է (42 կին, 39 տղամարդ), 13-ը՝ Լենինգրադի մարզից, 17-ը՝

[1] Թևոսյան Բ., Աշխատուժի զբաղվածության հարցի լուծումը Սովետական Հայաստանում /1921-1929թթ./, ԼՀԳ, 3/495/, Եր., 1984, էջ 19:

[2] ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 9, ց. 2, գ. 188, թ. 39:

Մորդովական ԻՍԽՀ-ից, 38-ը՝ Հյուսիսային Կովկասից, 65-ը(33 կին, 32 տղամարդ)՝ Ուկրաինայի Վինիցայի, Չերնիգովի և Խարկովի մարզերից: Ադրբեջանից եկածների թիվը 72 մարդ է (41 տղամարդ, 31 կին) և Վրաստանից՝ 92 (51տղամարդ, 41 կին), Հայաստանի այլ բնակավայրերից՝ 154 (85տղամարդ, 69 կին): Մեկնածներից 53-ը բանվորներ են եղել, 77-ը՝ ծառայողներ և 182-ը՝ աշխատանք չունեցողներ, իսկ եկածներից համապատասխանաբար 71-ը՝ բանվորներ, 79-ը՝ ծառայողներ և 194-ը աշխատանք չունեցողներ[1]: Վերլուծելով բնակչության տեղաշարժերը՝ գալիս ենք այն համոզման, որ Լենինական քաղաքի բնակչության թիվը միջպետական միգրացիայի հաշվին տարեկան միջինը ավելացել է 200-300 մարդով:

1926-1939թթ. Լենինականն աչքի է ընկել բնական աճի բարձր մակարդակով: Այսպես, 1926թ. քաղաքում 1000 բնակչի հաշվով ծնվածների թիվը կազմել է 47,7, 1939թ.՝ 45,1, իսկ մահացածների թիվը համապատասխանաբար՝ 20,0, 23,5, և բնական աճը՝ 27,7, 21,6: Բերված թվերից երևում է, որ այդ տարիներին քաղաքում բնակչության բնական աճի ցուցանիշների մեջ մեծ տատանումներ չեն գրանցվել, սակայն նվազել է թե՛ ծնելիության և թե՛ մահացության գործակցի մեծությունը: Համեմատության համար նշենք, որ նույն տարիներին Լենինականի բնակչության ծնելիության գործակիցը զիջել է Շիրակի տնտեսական շրջանի և գերազանցել է հանրապետության քաղաքային բնակչության նույն ցուցանիշը: Հայաստանում 1926 թ. ծնունդների թիվը 1000 բնակչի հաշվով կազմել է 54,7, 1939թ.՝ 42,4 մարդ, այդ թվում՝ քաղաքային բնակավայրերում նույն ցուցանիշը կազմել է համապատասխանաբար 38,4, և 35,6, իսկ Շիրակի տնտեսական շրջանում՝ 56,6 և 46,8 մարդ: Ծնելիության այդքան բարձր թվերը գրավեցին մասնագետների ուշադրու-

[1] ՀԱԱ Շիրակի մարզային մասնաճյուղ, ֆ. 9, ց. 2, գ. 188, թ. 26-27:

թյունը, կասկածներ կային, որ կարող է սխալներ թույլ տրված լինեն սկզբնական հաշվառման, այսինքն՝ ՔԿԱԳ-ի գրանցումների մեջ: Սակայն Հայաստանի ԿՎՎ կատարած մի շարք հետազոտությունները հաստատեցին գավառի գյուղական բնակչության ծնելիության բարձր մակարդակը:

Ծնունդների աճի վրա իր ազդեցությունն է ունեցել նաև իշխանությունների վարած ժողովրդագրական և սոցիալ-տնտեսական քաղաքականությունը: Օրինակ, 1936թ. ընդունվեց օրենք, որտեղ ՀԱԿ-ը (հղիության արհեստական կասեցում) դիտվել է որպես քրեական հանցագործություն: Թե ինչպիսի գործուն ազդեցություն ունեցավ ընդունված օրենքը Լենինականի բնակչության ծնունդների մակարդակի վրա, ներկայացնենք մի քանի թվային տվյալներով. քաղաքում ծնվածների թիվը 1936թ. կազմել է 2428, 1937թ.՝ 4001, 1938թ.՝ 3033 և 1939թ.՝ 3060 երեխա:

Այսպիսով, 1918 և 1920-1921թթ. Ալեքսանդրապոլի գավառում թուրքերի կողմից իրականացված եղեռնի քաղաքականությամբ էր պայմանավորված բնակչության կտրուկ նվազումը: Եթե 1915թ. գավառի առկա բնակչությունը կազմել է 245980 մարդ, ապա 1919թ.՝ 152414, 1922թ.՝ 152648 և 1931թ.՝ 227796 մարդ: Բնակչության վերարտադրության վրա այդ տարիների (1918թ. և 1920-1921թթ.) թողած ազդեցության ամբողջական արտահայտությունն է այն փաստը, որ բնակչության աճը հետ մղվեց 2530 տարով, գավառի 1915թ. 245 հազար բնակչությունը վերականգնվեց 1940-ական թթ.: Համեմատության համար նշենք, որ 1913թ. Հայաստանի մեկ միլիոն բնակչությունը վերականգնվեց միայն 1930թ.[1]: 1921-1931թթ. Ալեքսանդրապոլ-Լենինականի գավառի բնակչության շեշտակի աճը

[1] Դավթյան Լ., նշվ. աշխ., էջ 52:

հիմնականում պայմանավորված է եղել խորհրդային իշխանությունների ժողովրդագրական արդյունավետ քաղաքականությամբ:

ДЕМОГРАФИЧЕСКИЕ ПРОЦЕСЫ АЛЕКСАНДРОПОЛЬ-ЛЕНИНАКАНСКОГО УЕЗДА В 1914-1930 гг.

Арташ БОЯДЖЯН
Ширакский центр арменоведческих исследований НАН РА

Ключевые слова: геноцид, рождаемость, смертность, естественный рост, иммиграция, эмигра-ция, этнос, перепись населения, миграция, расселение.

В начале XX в. демографические процессы в Армении, в том числе в Александрополь-Ленинаканском уезде, были обусловлены рядом социально-экономических и политических факторов. Этот период выделялся сложными политическими событиями, которые, следуя одно за другим, существенно повлияли на этнодемографическое положение Армении.

В результате этого воспроизводство населения отстало на 25-30 лет (1918г. и 1920-0921 гг.), численность населения в регионе, которое в 1915г. составляло 245 тыс., было восстановлено лишь в 1940-ых годах.

DEMOGRAPHIC PROCESSES IN THE ALEXANDROPOL-LENINAKAN PROVINCE IN 1914-1930

Artash BOYAJYAN
Shirak Center for Armenological Studies of NAS RA

Key words: genocide, birth rate, mortality, natural growth, immigration, emigration, ethnicity, population census, migration, settlement:

At the beginning of the 20th century the demographic developments in Armenia as well as in Aleksandropol-Leninakan province were conditioned by socio-economic and political factors. This period of time is notable with complex political events, which one after another made an essential influence on the ethno-demographic situation of Armenia.

The total influence left on the reproduction of the population in those years (1918 and 1920-1921) was the fact that the growth of population was drawn back for 25-30 years. The population of 245.000 people of the province of 1915 was restored in 1940 ies.

1920 թ. ԹՈՒՐՔ-ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՌՉՈՒՆՅԱՆ –ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ ՀՈՒՇԵՐՈՒՄ

Ինգա ԱՎԱԳՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն,
«Կումայրի» արգելոց-թանգարան

Բանալի բառեր՝ 1920թ. հայ-թուրքական պատերազմ, որբանոց, Կազաչի պոստ, Գյոլայի ճակատամարտ, դերբենդյան կոտորած:

Անոտացիա: Վերջին տարիներին հրատարակված գրականության մեջ կարևոր տեղ են գրավում 1918թ. և 1920թ. թուրք-հայկական պատերազմների ժամանակ տեղի ունեցած իրադարձությունների անմիջական մասնակիցը դարձած ականատես վկաների պատմած ու գրի առած հիշողությունները, որոնք կարևոր նշանակություն ունեն Հայ դատի լուծման և հայոց ցեղասպանության ճանաչման համար: Հոդվածը նվիրված է նշանավոր պատմաբան Պետրոս Հովհաննիսյանի հոր՝ Հովհաննես Պողոսի Թռչունյան-Հովհաննիսյանի «Մեր գնդի ճակատագիրը» հուշապատման այն հատվածին, որտեղ վերապրածը ներկայացնում է նաև 1920թ. թուրք-հայկական պատերազմը: Հուշապատումը եզակի է նրանով, որ թույլ է տալիս վեր հանել ոչ միայն Մեծ եղեռն վերապրածի (վերապրածների) հոգեբանական բարդույթները, այլ նաև տեսնել և ընկալել այն ուղիները, որ նա փնտրում է հոգեբանական ծանր վիճակից դուրս գալու համար: Հոգեբանական այս դժվար հանգույցը գրեթե անհնարին է դառնում քանդել ողջ կյանքի ընթացքում, ինչի արդյունքում վերապրածը ունենում է լուրջ և անհաղթահարելի բարդույթներ:

Ինչպես մյուս վերապրածները, այնպես էլ Հովհաննես Հովհաննիսյանը իր պատմածի նկատմամբ զգում է բարոյական պատասխանատվություն և պարտքի գիտակցում[1]: Վերապրածը դնում է մի կարևոր խնդիր ևս՝ հավաքել, գրի առնել դաժան իրողությունների այլ վկաների հուշերը: Նա քաջ գիտակցում է բերված փաստերի համաշխարհային նշանակությունը, նաև եղելությունը գրի առնելու, տարբեր լեզուներով թարգմանելու, միջազգային հանրությանը ներկայացնելու անհրաժեշտությունը: Վերապրածը այս փաստերը որակավորում է ոչ միայն որպես հայոց պատմության ողբերգական էջ, այլև համաշխարհային պատմության խոշոր ոճրագործություն, որից աշխարհը պիտի դասեր քաղի՝ հետագայում նման այլ ոճրագործություններից խուսափելու համար: Համաշխարհային պատմության մեջ պետք է բոլոր լեզուներով գրվի, թող բոլոր, բոլոր ազգերն իմանան թուրք բարբարոսների վայրագությունների մասին: Ուշագրավ է վերապրածի դիմելաձևը մեզ. «Հայրենիքի ապագա սերունդներ՝ աղջիկ թե պատանի, լա՛վ լսեցեք էս բոլորը, էս իրողությունը, ձեր պապերու, մամերու, եղբայրներու, քույրերու հետ, դուք ձեր կյանքում չմոռանաք»: Վերապրածի առանձնաշնորհն այն է, որ իր հուշերում ներգրավել է նաև իր ընկերների, ազգականների, մերձավորների, հարևանների, անգամ թուրք զափթիեների հուշերը և փոքրիկ պատառիկներ, որոնք անգին տեղեկություններ են պարունակում պատմաքաղաքական, սոցիալ-տնտեսական, ազգագրական և կրթական առումով:

Ենթադրվում է, որ Հովհաննեսը ծնվել է 1899-1900 թթ., որովհետև ինչպես ինքն է գրում Մեծ եղեռնի ժամանակ տասնվեց տա-

[1] Տե՛ս Վ. Սվազլյան, Հայոց ցեղասպանությունը և պատմական հիշողությունը, Եր., 2003, էջ 14:

րեկան էր: Հովհաննես Հովհաննիսյանը ծնվել է Երզնկայի գավառի Ղարադեկին[1] գյուղում, որ ութ կմ է հեռու Երզնկա քաղաքից: Հովհաննես Հովհաննիսյան-Թոչունյանի հուշապատումը գրվել է Մեծ եղեռնից 53 տարի անց՝ 1968թ[2]:Հուշապատումն անավարտ է, պահպանված մասերն են «Գիրք առաջինը» և «Գիրք երկրորդի» մի հատվածը: «Գիրք երկրորդը», որ հեղինակը սկսում է Էջմիածնում Անդրանիկի զորախմբի լուծարումից հետո, մնացել է անավարտ: Վերապրածի հուշերում անգին են պատմական այնպիսի տեղեկությունները, որոնք վերաբերում են Փետրվարյան և Հոկտեմբերյան հեղափոխությունների քաղաքական և հասարակական մի շարք տեղեկություններին: Խոսվում է մեր ժողովրդի հասարակ խավի համար անըմբռնելի բոլշևիկյան գաղափարախոսության քայքայիչ ազդեցության մասին Հայաստանի Առաջին հանրապետության օրհասական ժամերին, ներկայացվում է նույն գաղափարախոսության պատճառով անցածը մոռացնելու և Խորհրդային Ադրբեջանում թուրքից փրկվելու, պատսպարվելու և փրկության նոր եզրեր ապարդյուն փնտրելու հանգամանքը:

Վերապրածը հիշում է հայերի կոտորածների մասին, որոնք տեղի են ունեցել 1920թ. Մուստաֆա Քեմալի արշավանքի ժամանակ Հյուսիսային Կովկասում՝ Դերբենդում և Պետրովսկ Պորտում: Նա Անդրանիկի հետ անցած իր ճանապարհը ավարտել է Էջմիածնում, սակայն կրկին զինվորագրվել է 1920թ. և մասնակցել հայ-

[1] Ստեփանյան Գ., Երզնկա (Հնագույն դարերից մինչև մեր օրերը), Պ.Հ. Հովհաննիսյանի և Ա.Գ. ՏԵր-Ստեփանյանի խմբագրությամբ, Եր., 2005, էջ 607-610:

[2] Ավագյան Ի., Մեր գնդի նահանջը (Հովհաննես Թոչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը), ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, «Առաջին աշխարհամարտը և հայ ժողովուրդը (պատմություն և արդիական խնդիրներ)», 1-2 հոկտեմբերի 2014, միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Եր., 2015, էջ 65-75: Ավագյան Ի., Մեր գնդի ճակատագիրը. Հովհաննես Թոչունյան-Հովհաննիսյանի հուշապատումը, «Մեծ եղեռնը վերապրածները», Գյումրի, 2016:

թուրքական պատերազմին: Հովհաննեսի հիշողություններում կարևոր տեղեկություններ կան Ալեքսանդրապոլի որբանոցի և որբահավաքի մասին[1]: «Մեր գնդի ճակատագիրը» հուշապատումի գլխավոր հերոսը ապրել է Լենինականում (Գյումրի):

Նա գրում է. «Տասնհինգ օր մնացինք Էջմիածնում[2], զենքերս հանձնեցինք, մեզ թուղթ տվին, որ ռազմաճակատում մասնակցել ենք կռվին, ով ուր ուզում էր, կարող էր գնալ, նաև բաց թողեցին գերի ուղտապանին՝ իր վեց ուղտերով[3]: Մենք չորս ընկերներով գնացինք Ալեքսանդրապոլ: Առաջվա Ալեքսանդրապո՞ լն էր, ա՜խ, որ ամեն մի ճաշարանից ուրախության ձայն էր լսվում: Հիմա համարյա մարդ չկար, տխուր էր քաղաքը. գազան թշնամին իր արյունոտ հետքն էր թողել: Մի երեք օր մնացինք Ալեքսանդրապոլում, գնացինք Ղարս[4] ման գալու: Հասանք, այստեղ էլ պատկերը ուրիշ էր, համարյա մարդ չկար քաղաքում: Անցնում էինք քաղաքի միջով, մեկ էլ տեսնենք՝ մի խումբ թուրք կանայք հավաքվել, լացի ձայն են հանում ու իրանց-իրանց խոսում են»: Հովհաննեսը պարզում է, որ քանի որ Ղարսը տվել էին հայերին, տեղի մահմեդական բնակչությունը մնացել էր անտեր: Քաղաքագլուխը կանանց ասում է, որ գնան Սարիղամիշ, էնտեղից էլ կուկուշկայով կգնաք Էրզրում, սակայն հրաժարվում է օգնել պարենով: Ղարսում տասնհինգ օր մնալուց հետո նրանք նորից եկան Ալեքսանդրապոլ, որպես պահակ

[1] Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Բարսեղյան Հ.Խ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան 5 հատորով (այսուհետ՝ ՀՏԲ), հ. III, ԵՊՀ հրատ., Եր., 1991, 992 էջ, հ. III, էջ 542:

[2] Տե՛ս Եղիշե Քաջունի, Զօրավար Անդրանիկի Հայկական առաջին հարուածող զօրամասը, Եր., 2015, էջ:

[3] ՈՒղտապանների մասին գրում է նաև Եղիշե Քաջունին:

[4] Տե՛ս ՀՏԲ, հ. III, էջ 70:

անցան աշխատանքի Կազաչի պոստի որբանոցում[1]: Տղաներին աշխատանքի ընդունողի անունը Հաջո էր: «Մեր գնդի աբոզի նաչալնիկն էր,-գրում է Հովհաննեսը: Նա իմացավ, որ ես եղել եմ Անդրանիկի բանակում: Աճեմյանը եկավ: Հաջոն էլ ելավ Աճեմյանին դիմավորելու»: Խոսքը Վարդան Աճեմյանի հոր մասին է, որը գաղթել էր Վանից և խոսում էր Վանի բարբառով: Նա կարևոր գործունեություն էր ծավալել որբանոցում և ղեկավարում էր Կազաչի պոստի պահեստները, որբերին, ճաշարանները: Հաջոն պարզում է, որ Աճեմյանին ձիապան է պետք և առաջարկում է Հովհաննեսին: Այսպես Հովհաննեսը դառնում է Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի Ալեքսանդրապոլի բժշկական մասի պատասխանատուների՝ կապիտան Հեքմանի, կապիտան Յարոի և միստր Թոմսի ձիապանը:

Այստեղ պետք է անդրադառնալ հուշագրի հայտնած մի կարևոր փաստի: «Իմ աշխատանքի երրորդ օրն է,-գրում է նա,-իրիկունը ձիերին մաքրում էի, մեկ էլ մի շուն՝ պոչը կտրած, մտավ գոմը: Ձիերը խրտնան, ես էլ մի քար առա ու խփեցի շանը, էս շունը սկսեց վնգստալը: Մի ամերիկացի եկավ ինձ կանչեց դուրս ու սկսեց ինձ ծեծելը, ես ձայն չէի հանում, մի լավ ինձ ծեծեց: Մտի՛կ արեք էս անաստվածին, մի շան համար ինձ ծեծեց: Ծեծելուն մնա՝ ես քեզ հում-հում կուտեմ, բայց արի ու տես, որ արևը մութ տեղ էր մտել, ու՞ր գնայի, զորացրվել էի, ո՛չ տուն, ո՛չ էլ ուտելիք ունեինք: Քաղաքում սով էր տիրում, ամեն օր երկու-երեք սել մեռել էին հավաքում: Եղածը պատմեցի մեր ձիու ֆելդշերին: Էս մարդը սկսեց

[1] Քաղաքի երեք հատվածներում՝ Կազաչի պոստ, Պոլիգոն և Սևերսկի, գտնվում էին զորանոցները: ՀՏԲ, Հ. էջ 569-572: Այս զորանոցներում էլ 1915թ. հետո գործում էր ՀՀ ամենամեծ որբանոցը, որին հովանավորում էր Ամերիկյան նպաստամատույցը:

ծիծաղելը: «Խելառի ձեռք ես ընկել, ա՛յ տղա, մի՛ նեղանա: Էդ ամերիկացին հիմար բժիշկ է, ինչ ուզում է, այն էլ անում է»: Անցնում է բավականին ժամանակ, ֆելդշեր Համբարձումը կանչում է Հովհաննեսին ու պատմում, որ այդ խելառ ամերիկացի բժիշկը հարձակվել է հիվանդանոցի որբերի վրա, հիվանդ երեխաներին սկսել է ծեծելը, քույրերը հասել են օգնության, դառել է քույրերին ծեծել: Նրան տարել էին ամերիկացիների շտաբը՝ կապիտան Հեքմանի մոտ[1]: 1920թ. ամերիկացիների շտաբը գտնվում էր հիմիկվա «սպիտակ»[2] հիվանդանոցի տեղում: Հայաստանի ազգային արխիվում պահպանվել է ՀՀ վարչապետին ուղղված Ալեքսանդրապոլի բժիշկների միության գրությունը՝ թիվ 142, որից պարզ է դառնում, որ խելագարը բժիշկ Հոտորն է. «Ալեքսանդրապոլի Բժշկական միությունը և Կարմիր խաչի Վարչության անդամները, մասնակցությամբ Հայաստանի Կարմիր խաչի Կենտրոնական վարչության փոխնախագահ Վ.Արծրունու, 1920թ. օգոստոսի 15-ի արտակարգ նիստում քննության առնելով ամսոյս 13-ին Կազաչի Պոստում տեղի ունեցած քստմնելի դեպքը և գտնելով, որ 1. ամսի 13-ին Ամերիկյան Նպաստամատույց Կոմիտեի Ալեքսանդրապոլի բժշկական մասի բժիշկ Հոտորը անխնա ձևով ծեծել է հիվանդանոցի որբերին յուր ձեռքի մտրակով, շատերին անելով արյունլվա... նա նման վերաբերմունք միշտ ցույց է տվել ինչպես Պոլիգոնի, այնպես էլ Կազաչի Պոստի հիվանդանոցներում: Ժողովը վճռեց ուղարկել սույն որոշումը Ամերիկայի միսիայի ներկայացուցիչ պ. Եարոյին,

[1] Ալեքսանյան Կ., Արևմտահայ գաղթականությունը Ալեքսանդրապոլի գավառում 1914-1922 թթ. էջ 346-348:

[2] Այժմ պաշտոնական անվանումն է «Ճերմակ» հիվանդանոց, հաճախ խոսակցական լեզվում օգտագործվում է «սիպտակ հիվանդանոց» ձևը և ոչ թե սպիտակ, ինչպես օգտագործում է վերապրածը:

Հայաստանի կառավարությանը, և եթե նոցա ձանը չլսվի, նաև Վաշինգտոն՝ Ամերիկյան մարդասեր կառավարությանը»:

Այդ նույն օրը մի ցավալի դեպք էլ է պատահում՝ մի ուժեղ ցնցում և ուժեղ պայթյուն: Ժողովուրդը խառնվում է իրար՝ կարծելով, թե էլի թուրքն է արշավում: Բայց պարզվում է, որ թուրքը իր հետքն է թողել, «ստանցին բոմբ է թաղել», գաղթականները հակառակի պես էդտեղ կրակ են վառել, բոմբը տրաքել է և մարդկանց բավականին վնասել: Իր հուշերում նույն միջադեպի մասին հիշում է մեկ այլ վերապրած՝ Հայրապետ Տոնոյանը, որ դարձյալ հաստատվել էր Լենինականում: Նա պատմում է. «Երբ հասանք Ալեքպոլ, թուրքերը նոր էին քաղաքից ետ քաշվել: Կայարանից դուրս եկանք և այժմյան Գորկու փողոցով բավականին ներքև էինք իջել, երբ կայարանում պայթեց թուրքերի թաքցրած ռումբը: Այդ ռումբի պայթյունից կայարանում և նրա շրջակայքում մեծ ավերածություններ եղան, իսկ քաղաքի շենքերի պատուհանների գրեթե բոլոր ապակիները ջարդվեցին»[1]: Արխիվային փաստաթղթերում այս դեպքի վերաբերյալ նույնպես պահպանվել են որոշ տեղեկություններ. «1918թ. դեկտեմբերի 28-ի այս պայթյունը խլեց 300-ից ավելի մարդկային կյանքեր, 500 վիրավորներ, տվեց 10-15 մլն ռուբլու վնաս…»: Պատմական կարևորդ դեպքերին զուգահեռ՝ վերապրածը հիշում է աշուղական արվեստին բնորոշ մի պատառիկ, որը լսել է Ալեքսանդրապոլում շրջելու ժամանակ.

Շուն տաճիկը Արփաչայն անցավ,

[1] Ավագյան Ի., Հայրապետ Տոնոյանի հիշողությունները, Մեծ եղեռնը վերապրածները, Գյումրի, 2006, էջ 17: Կ.Ալեքսանյան, Հայաստանի Հանրապետության կենտրոնական և Ալեքսանդրապոլի տեղական իշխանության մարմինների հարաբերությունները 1918-1920 թթ., Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ժողովածու, Գյումրի, 2008, էջ 121:

Քանդեց ավանները Շորագյալ,
Զարկեց այծյամներդ,կերավ գառներդ,
Մաքուր հորթ չմնաց Շորագյալ...

Սակայն այս ամենից զատ կարևոր են 1920թ. տեղի ունեցած մի քանի կարևոր իրադարձությունների մասին տեղեկությունները: Մասնավորապես վերապրածը հիշում է 1920թ. Մայիսյան ապստամբությանն առնչվող դեպքեր: «Եկավ 1920թ. մայիսը[1]: Ես միշտ նամակ էի տանում ստանցին, էնտեղից էլ կապոցներ էի բերում կապիտան Հեքմանին: Մի օր գնացի մեր տղեքի քովը, նրանք խոսում էին. «Բոլշևիկները եկել են, վերջապես ազատվանք թուրքի սարսափից, էլ վախ չկա»: Մի տասը օր հետո ես գնացի ստանցին, տեսա մի տասնհինգ-քսան հոգի՝ զինվորներով շրջապատված, ու մի պաշտոնյա՝ շապկեն ուրիշ տեսակ, որը գնում էր դրանց կողքից ու հրաման տալիս, բռնավորների մեջն էլ մի ռուս կար, մի կին էլ խոսում էր բռնավոր ռուսի հետ, մի վեց տղա էլ կողքերով գնում էին դեպի ստանցին: Ես մոտեցա մի տղու ու հարցրի. «Էս ովքե՞ր են սրանք»: Նա պատասխանեց. «Բոլշևիկներ են»: «Իսկ էդ մարդն ո՞վ է»: «Դա էլ միլպետն է, ֆրանսիայից է եկել, հայ է»: Մայիսյան ապստամբության ժամանակ ոստիկանապետ Ամատունին փոխարինվում է ֆրանսիահայ Ապրեսյանով, այս փաստը հիշում է Հովհաննեսը: Ալեքսանդրապոլի կայարան են գալիս դեպոյի բանվորները և լեզվակռվի մեջ մտնում Ֆրանսիայից եկած էս հայ ոստիկանապետի հետ: Բռնավորներին, բավականին ժամանակ կայարանում կանգնեցնելով, վերջը մի վագոնի մեջ տեղաբաշխելով, տանում են անհայտ ուղղությամբ:

[1] Դեռ XIX դ. հենց սկզբից Ալեքսանդրապոլում գործում էր նորաստեղծ բոլշևիկյան կազմակերպությունը, որի ղեկավարությամբ անցավ 1905թ. մեծ գործադուլը: ՀՏԲ, Հ. I, էջ 572:

Վերապրածը բավական զարհուրելի փաստ է հաղորդում Ջաջուռ գետակի սելավի մասին: Նալբանդից[1] Ալեքսանդրապոլ վերադառնալու ճանապարհին, երբ նա հասնում է Ջաջուռ[2] գյուղը, մի հզոր որոտ է լսվում, ձիերը առաջ չեն գնում, մեկ էլ վերևից մի սելավ[3] է գալիս և քշում տանում ցածը լողացող գյուղի երեխեքին, հորթերին: Բավականին սպասելով, երբ սելավը պակասում է, նա շարժվում է առաջ: «Սելավը ոնց որ վագոդ ցեխ լիներ: Կամրջի վրա համարյա մեկ մետր ցեխ էր նստել: 1920թ. էր, էլ չեմ հիշում մայիսի՞ն էր, թե՞ հունիսին»:

Կարևոր են 1920թ. թուրք-հայկական պատերազմի մասին հիշողությունները[4]: Վերապրածը գրում է, որ մի օր՝ 1920թ. աշնանը բեռնատար վագոնով Ղարսի[5] կողմից լիքը գաղթականներ եկան: «Թուրքը նորից հարձակվել է Հայաստանի վրա, տեսնենք՝ վերջը ինչ պիտի էղնի: Մի երեք օր վերջը սովորականի պես նամակ էի տանում ստանցի, մեկ էլ տեսա՝ իմ մորաքրոջս տղեն՝ Հարությունը, զինված մի երկու հոգի էլ հետը, կանգնել էին: Վազեցի, բարև տվի, հարցրի. «Հարությու՛ն եղբայր, էս ու՞ր եք գնում»:«Գնում ենք Ղարս կռվելու, թուրքը նորից հարձակվել է Հայաստանի վրա: Զինամթերքի ենք սպասում»: Հովհաննեսը կամավորագրվում է իր

[1] Տե՛ս ՀՏԲ, հ. III, էջ 949, հ. IV, էջ 130-131:

[2] Ջաջուռ՝ Շատջուր Հիմնադրվել է 1828 թ.: ՀՏԲ, հ. IV, էջ 388-389:

[3] Ջաջուռ,Դուզքենդ-գետակի ռեժիմը խիստ անկանոն է, սելավային:ՀՏԲ, հ. IV,էջ 388:

[4] Авагян И., Оганнисян А., 2017, Россия и русские в первой мировой войне-воспоминания пережившего Армянский геноцид, Стратегии и тренды развития науки в современных условиях, Материалы III Международной научно-практической конференции (Уфа, 15-16 февраля 2017г.), Уфа, с. 36-40. Авагян И., Оганнисян А., 2017, Судьба армянской диаспоры Дербента и депортированных армян в воспоминаниях очевидца (1918-1920гг.),Четвертые Всероссийские (с международным участием) историко-этнографические чтения, посвященные памяти профессора Магомедова Расула Магомедовича (12 апреля 2017г.), сборник статей, Махачкала, с. 19-22.

[5] 1920 թ.Կարսում կազմակերպվում է բոլշևիկյան ռազմահեղափոխական կոմիտե: ՀՏԲ, հ. III, էջ 70:

մորաքրոջ տղայի՝ հիսնապետ Հարությունի ջոկատին: Զինամթերքը, որ ստացել էր Հարությունը, անգլիական էր՝ անգլիական շորեր ու կոշիկներ: Առավոտ շուտ շարժվում են, հասնում Ղարս, կայարանում մնում երկու օր, ապա գնում Գյոլա[1]՝ շարժվելով դեպի արևմուտք: Այստեղ ջոկատն անցնում է մալականի գյուղի մոտով, հասնում Գյոլա, որը քրդական գյուղ էր, և որի բնակիչները փախել էին: Ովքեր որ չէին կարողացել փախչել, նրանց մի տեղ հավաքեցին և պահակ կարգեցին, որպեսզի հանկարծ զորքին վնաս չտան կամ նրանք զորքին վնասեն: «Տները լիքը կարագ, պանիր կար, տիկերով մածուն, որ տունը կուզես մտի, թողել էին ու փախել: Երկրորդ օրը ման էինք գալիս գյուղում, մտանք մի տուն. մեկ էլ մի ցավալի պատկեր բացվեց մեր առջև: Մի սիրուն հարս՝ տասնինը-քսան տարեկան, մի փոքր երեխա էլ կրծքի վրա, պառկած էր թախտի վրա: Մենք կարծեցինք, թե քնած է, ձեն տվինք, ոչ մի պատասխան: Մոտեցանք, մտիկ ենք անում, կարծեցինք, թե քնած է, լավ զննեցինք, տեսանք, որ մեռած են ինքն էլ, երեխան էլ: Մտիկ ենք անում, ինքն էլ, երեխան էլ՝ առողջ, թե ինչու են մեռել: Սկսինք ստուգել մարմինը: Գնդակի ոչ մի հետք չկար, Հարությունը նկատեց, որ խաչ է ծեծած երկու կրծքի արանքը: Հիմա հասկացանք եղելությունը: Էս հարսը հայ է եղել, երևի չի ուզեցել փախնել իր բռնակալի հետ, բռնել են թույնել թե՛ իրեն, թե՛ երեխուն»: Հարսին և երեխային թաղելով՝ Խմբապետ Հարությունը լուծում է հայ հարսի վրեժը և այրել է տալիս քրդի տունը: Տասնհինգ օրից արևելքից գյուղ են գալիս մի քանի վրացի պահակներ, որոնք եկել էին ճշտելու, թե թուրքը այս կողմերում երևացել է, թե ոչ: Երկու օր հետո գիշերը զորքը

[1] Գյոլա, Գյոլե-շրջան Կարսի մարզի Արդահանի օկրուգում, Կուրի ակունքների շրջանում: ՀՏԲ, հ.I, էջ 889:

շարժվում է և առավոտ հասնում Ղարսա Բուղաթաբասի[1], որը մալականի մեծ գյուղ էր: Կարսի մարզում երեք Բուղաթափա լեռ կա՝ Արսիան-Սողանլուի լեռներում, Արդահանի օկրուգում, Ալաջա լեռնահամակարգում՝ Արաքս և Կարս գետերի ջրբաժանում և Մեծրաց՝ Սողանլուի լեռների հս-արմ հատվածում, Չլդրի լեռներում: Հովհաննեսը գրում է, որ լեռան վրայից երևում էր Մերդենիքը[2], որտեղ ուժեղ կռիվ էր ընթանում, թնդանոթները երկու կողմից էլ ռմբակոծում էին, աշխատում էին գնդացիրները, պարզ երևում էին կռվողների դիրքերը: Հետևաբար խոսքը գնում է առաջին Բուղաթեփեի մասին:

Այստեղ տեղին է հիշել նաև կամավորների ոգին բարձրացնող մի տղայի մասին, որը Ալեքսանդրապոլից էր, և մի հոգևորականի, որն ասում էր, թե Ղարսը հայերի կռնակն է: Սակայն պակաս ազդեցիկ չէր բոլշևիկների քարոզչությունը ռազմաճակատում, որը բախվում էր Կարսի, հայրենիքի մասին պարկերացումների հետ: Հովհաննեսը պատմում է. «Մի քիչ վերջը մեր հայաթը վիրավոր բերին, տղեքը հարցնում էին կռվի մասին, էս վիրավորներից մեկը թե. «Մեր դեմ կռվողը թուրքը չէ, բոլշևիկներն են»: Հարությունը թե. «Ա՛յ տղա, թուրքին բոլշևիկ դարձրիր»: Ղարսա տերտերի տղեն է իր խմբով, կանգնել գոռում է. «Մենք բոլշևիկներ ենք, չկռվեք: Ես Ղարսա տերտերի տղեն եմ՝ բոլշևիկ»: Հենց այդ պահին խմբապետը կանչում է տերտերին, թե տղադ էս ի՛նչ քարոզներ է անում, բայց հոգևորականը ասում է՝ անժառանգ է:

Խումբը դարձյալ ողջ գիշեր գնում է և առավոտյան հասնում Գյոլա՝ փակելու Գյոլայի գիծը, ինչն անհրաժեշտ էր Կարսի ճամ-

[1] ՀՏԲ, հ. I, էջ 754:

[2] Մերդենիք, Մերդենեկ, Մերդենիկ-գյուղ Կարսի մարզի Արդահանի օկրուգում, Արդահան քաղաքից հվ-արմ, ՀՏԲ, հ. III, էջ 801:

փան բաց պահելու համար: Տասնհինգ օր այստեղ մնալուց հետո խմբին հայտնում են, որ թուրքը գրավել է Կարսը: Նահանջում են, թողնում են Գյոլան: Ամբողջ գիշերը ետ են գնում, մի երկու գյուղ ետ գալիս դեպի մալականի գյուղ, մալականի գյուղով անցնում, հասնում Ղզլչաղչաղ: Ղզլչաղչաղից դեպի արևմուտք՝ ջրի էն կողմում, մի տափակ սար կար, վրեն գլուխը դեպի արևելք, քարից մեծ պոզերով խոյ էր քանդակված: Դեռ մեր զորքը չէր հավաքվել, մեկ էլ բավական հեռվից հեծելազոր երևաց: Թուրքերն էին: Հրամանատարները հավաքվան, հեռադիտակով լավ զննեցին, հավատացին, որ իրոք թուրք են: Անմիջապես դիրքավորվեցինք:«Դատարկ չկրակեք, թող թշնամին լավ մոտենա»:Թշնամին մոտեցավ, սկսինք կրակել, թշնամին էլ իր հերթին դիրքավորվավ և սկսեց կռիվը: Բավականին ժամանակ Հարություն եղբայրը գալիս էր, խրատ էր տալիս զինվորներին, թե ինչպես լավ կրակեն, իրենց լավ պահեն, որ չվիրավորվեն: Էսպես մեկ էլ ասին, որ Անդրեասյան Հարությունը վիրավորվել է: Ես վազեցի այնտեղ, որտեղ որ եղբայր Հարությունն էր, բայց չհասա, նա արդեն մեռել էր, չար գնդակը սրտին էր կպել: Դիակը փռված էր, նա ոնց որ մի աժդահա լիներ՝ թիկունքը լայն, բոյով: Նստա լացի, ձեռքերը առի ձեռքերիս մեջ, լալիս եմ, երեսը պաչում ու լալիս»: Հրամանատարների հրամանով երեք զինվոր Ղզլչաղչաղի կամուրջի աջ կողմում մի փոս են փորում և էդտեղ թաղում Հարությունին: Վերապրածը կորցնում է իր միակ ազգականին: Մութն ընկնելուց հետո նահանջում են դեպի Ալեքսանդրապոլ: Երկու ամիս Հովհաննեսը ռոճիկ չէր ստացել, և նա գնում է որբանոց, որտեղ ամերիկացիները հարցնում են, թե ինչու սափրված չէ: «Հելլո՛ու, հելլո՛ու, Հանե՞ս....»: «Պատասխանեցի, որ պատերազմ էի գնացել: Կապիտան Յարոն հարցրեց. «Գալողը թու՞րքն է, թե՞ բոլշևիկը»: «Ի՞նչ բոլշևիկ, թուրքն է, դահիճ»: Յարոն թե. «Եթե

թուրքն է, օլ ռայդ, միայն բոլշևիկ չէղնի»: Որքան զարմանալի էր վերապրածի համար այսպիսի բան լսելը: «Ես զարմացա մնացի. մի՞թե բոլշևիկները էդքան վատ են, որ թուրքից էլ վատը եղան, էս ի՞նչ է ասում էս կապիտան Յարոն, ես բան չեմ հասկանում, աշխարհի երեսին Թուրքիայից էլ վատ պետություն կա՞, մի՞թե կարելի է մոռանալ օսմանցիների արարքը՝ հայոց կոտորածը, երկու միլիոն հայի արյուն խմեցին, հիմա թուրքը «օլ ռայդ» եղավ, իսկ բոլշևիկները՝ վատ: Թուրքը նորից սկսել է Հայաստանում մնացած հայերի կոտորածը, հլա թուրքը լավ է, էս ի՞նչ է ասում էս կապիտան Յարոն: Ես զարմացած կանգնել եմ, չգիտեմ, թե ինչ ասեմ: Չէ՞ որ երեկ մորաքրոջս տղան՝ Հարությունը, ընկավ թուրքի գնդակից, էստեղի որբերի հայրերին ու մայրերին սպանել է թուրքը, նորից որբերի թիվը պիտի կրկնապատկվի, և էս բոլորից հետո էլի թուրքերը «օլ ռայդ» են, իսկ բոլշևիկները՝ վատ: Էստեղ մի առակ հիշեմ՝ քոռի շատ պետքն է, թե մոմը թանկ է, ուզում է՝ մի մոմը մի ոսկի էղնի: Հիմա կապիտան Յարոյինն է, նրա շատ էլ պետքն է, թե Արևմտյան Հայաստանում երկու միլիոն հայ է սպանվել, հիմա էլ թուրքը Արևելյան Հայաստանում մնացած հայերին է սկսել ուտել: Էս կապիտան Յարոն մեջքիս զարկեց. «Թուրքը օլ ռայդ, օլ ռայդ, Հա՞նս, օլ ռայդ,-ես շշմել մնացել էի, չգիտեմ՝ ինչ ասեմ էս Յարոյին,-թուրքը լավ է, միայն թե բոլշևիկները չգային»: Ոնց որ դանակը զարկես սրտիս, էլ չկանգնա, դառա ու գնացի, մեկ էլ տեսա իմ ընկեր Աբեթին. իմ տեղն էր աշխատում»:

Աբեթից նա իմանում է, որ Հարությունի եղբայրը՝ Գարեգինը, իր ընտանիքով Աբետենց տանն է: Տունը Թուրքի թաղում էր: Թուրքի թաղը սկսվում է այժմյան ավտոկայանի տարածքից և հասնում մինչև հին գերեզմանոց: Այդ թաղում նախկինում ապրում

էին բավականին թվով թուրքեր[1]: Տեսնելով Գարեգինին Հովհաննեսը չի ասում Հարությունի հերոսական մահվան մասին Ղզլչաղչաղ գյուղում:«1966թ. ես եղա Երևանում և պատմեցի, թե ինչպես սպանվեց եղբայր Հարությունը»,-գրում է նա:

Այստեղ տեղին է նշել մի կարևոր հանգամանք: Բոլշևիկյան սին գաղափարախոսությունը փոխում է հայերի վերաբերմունքը խորհրդայնացած Ադրբեջանի հանդեպ՝ մեծացնելով դժգոհությունը դաշնակցականների հանդեպ, և նրանք թաքուն բռնում են Ադրբեջան գաղթելու ճանապարհը դժբախտություններից ազատվելու նպատակով: Գարեգինի ընտանիքին է միանում նաև դասալքած Հովհաննեսը. «Հայաստանի դաշնակցական կառավարությունը հաշտվել է թուրքերի հետ, էսպիսի ստորություն չի էղնի, որ սրանք են անում, մոռացան իրենց մոտիկ անցյալը, նորից հաշտվում են թուրքերի հետ, որ միասին կռվեն բոլշևիկների դեմ: Մենք չենք ուզում մնալ թուրքերի մեջ: Ես էլ զինվոր եմ, չեմ ուզում կռվել բոլշևիկների դեմ»: Ալեքսանդրապոլի[2] փողոցների երկու կողմերում զինվորներ կային, թնդանոթներ, գնդացիրներ, զինվորներ՝ հետևակ: Պահակակետի զինվորներին մի ոչխար տալով՝ Գարեգինը դասալքած Հովհաննեսին դուրս է բերում քաղաքից: Այն հարցին, թե ինչով են վատ բոլշևիկները, որ թուրքը «օլրայդ» է, Գարեգինը ասում է, որ բոլշևիկը նույն ռուսն է, միայն աղքատ դասակարգից: Այս պահից վերապրածի մոտ նկատվում է գաղափարախոսության հանդեպ վերաբերմունքի կտրուկ շրջադարձ:

---

[1] Հարությունյան Վ., Գյումրին, նրա մարդիկ, սովորույթները, Գյումրի, 1996, էջ 11: Մոտ 40-50 տուն մահմեդականները Գյումրու հվ-արլ-ում հիմնեցին «Թուրքի մահլեն»: Կ.Բազեյան, Գ.Աղանյան, նշվ.աշխ., էջ 14:

[2] Տե՛ս ՀՏԲ, Հ. II, էջ 569-572:

Անցնում են Ջաջուռը, Համամլուն, Ղշլաղը[1], Գյառգյառը[2], Վարդաբլուրը[3]: Վարդաբլուրում նրանք տասնհինգ օր մնում են անտառապահ Արամ Քալաշյանի տանը և որոշում գնալ Աղստաֆա,ապա Բաքու: Արամը մի նամակ է տալիս Շնող[4] գյուղի բոլշևիկներից մեկի անունով, որը օգնելու էր ընտանիքին: Գնալով Ուզունլար[5], ապա Ալավերդի[6],այնտեղից երկաթգծով հասնում են Շնող, գտնում այդ մարդուն և տալիս նամակը: Ճանապարհները լավ չէին: Ընտանիքը մի կես ամիս մնում է Շնողում և գոյությունը պահպանում՝ սարից զկեռ և աճար հավաքելով:

Կես ամսից նրանք ճանապարհ են ընկնում, սակայն անտառում հանդիպում մի խումբ թուրքերի, որոնք պնդում են, թե Հովհաննեսը եղել է բոլշևիկ Սև Մուրոյի խմբում և թալանելով սրանց գյուղը՝ ծեծելով սպանել է մի մարդու: Մի կերպ ազատվում են թուրքերի ձեռքից և հասնում այն թուրքական գյուղը՝ Աղստաֆա[7], որտեղ կարմիր հեծելազոր կար: Այստեղ լիքը գաղթականներ կային, որոնց մի վագոնում են տեղաբաշխում, վագոնում մնում են երկու օր: «Էստեղ,-գրում է Հովհաննեսը,-վագոնների ճակատներին մեծ-մեծ աստղեր էին նկարած, զինվորներն էլ պոլոզ գլխարկներով էին, որոնց վրա էլի կարմիր աստղեր էին: Մեզ մթերքով ապահովեցին: Աղստաֆայից դեպի արևմուտք՝ մի կես կմ-ի վրա, կամուրջ կար, կամուրջի էս կողմը բոլշևիկներն էին, մյուս կողմը՝ վրացիները: Երրորդ օրվա վերջը շարժվանք դեպի Բաքու»: Այստեղ հայերը

[1] Ղշլաղ, Կշլաղ, Ժդանով, Ժդանովո:ՀՏԲ, հ. II, էջ 502-503:
[2] Տե՛ս ՀՏԲ, հ. I, էջ 879:
[3] Տե՛ս ՀՏԲ, հ. IV, էջ 774:
[4] Տե՛ս ՀՏԲ, հ. IV, էջ 142:
[5] Ուզունլար, Ուզունլարա, Օձուն, ՀՏԲ, հ. V, էջ 173, հ. I, էջ 423:
[6] Ալավերդի, Մանասգոմ: ՀՏԲ, հ. I, էջ 67:
[7] Աղստաֆա-քաղաք Ադրբեջանական ՍՍՀ Ղազախի շրջանում՝ Կուր գետի հովտում: Երկաթուղային կայարան է Թիֆլիս-Բաքու գծի վրա: ՀՍՀ, հ. I, էջ 221:

փորձում են եղբայրական խոսքեր ասել տեղի թուրքերից մեկին, որը հայհոյում է հայերին: Բաժանվելով Գարեգինի ընտանիքից՝ Հովհաննեսը մեկ ուրիշ գնացքով մեկնում է Ղաչմազ[1], ապա Դերբենդ[2] և աշխատում ձկան վերամշակման գործարանում: Նա 1921-22թթ. աշխատել է տարբեր վայրերում՝ Դերբենդում, Պետրովսկ պորտում[3] (Մախաչկալա), Եկատերինոդարում (Կրասնոդար):

Դերբենդից շարժվում են հինգ կմ դեպի արևմուտք: Ձկան գործարանում նա աշխատում է երկու ամիս մինչև 1921թ.մարտ-ապրիլը:

Տեղի տաք հանքային ջրերում լողանալու համար հայ տղամարդիկ քայլում են լողափով և հանդիպում թուրք և չեչեն ոճրագործների ձեռագրին: «Մի ցավալի տեսարան բացվեց մեր առաջ, մի երկար փոսի մեջ՝ լիքը մարդու զանգ, ոտքերի, կողերի ոսկորներ, ի՞նչ ասեմ, փոսի երկարությունը՝ հարյուր մետր, լենքը քսան մետր կէղներ: Մի՞թե էստեղ էլ են հասել թուրքի գազանությունները: Քարացել ենք, չենք խոսում, նայում ենք էդ սարսափելի տեսարանին և մնացել ենք կանգնած: Գլուխներս կախ շարունակեցինք ճանապարհը, հասանք էնտեղ, որտեղ հանքային ջրերն էին: Մի

[1] Այս դեպքում խոսքը Խաչմաս քաղաքի երկաթուղային կայարանի մասին է, որը Ադրբեջանական ՍՍՀ Խաչմասի շրջանի վարչական կենտրոնն է: ՀՍՀ, հ. 5, Եր., 1979: Քարտեզի վրա տեղադրվում է Բաքու և Դերբենդ քաղաքների միջև: Հավանաբար Հովհաննեսի ազգական Գարեգինը շարունակել էր իր ճանապարհը և հասել Բաքու:

[2] Պարսկերեն դեր՝ դուռ, բենդ՝ անջրպետ՝ նույնանուն նավահանգիստը և երկաթուղային կայարանը գտնվում ենք Մախաչկալա և Մաքու քաղաքների միջև: ԲՀԷ, т. 8, М., 1972, с. 109.

[3] Պետրովսկ պորտում հայկական համայնքը ձևավորվել է XIXդ. կեսին: 1877թ. գործում էր Ս. Պողոս-Պետրոս հայկական եկեղեցին: Հայ բնակչության հիմնական մասը զբաղվել է առևտրով և արհեստներով: Առաջին աշխարհամարտի նախօրեին հայերի թիվը 1000 էր: «Հայ Սփյուռք» հանրագիտարան, էջ 466:

մեծ բասեին էր շինած, էդտեղից ջուրը բաժանվում էր առանձին վաննաների մեջ, առանձին շինած մի տասը-տասնհինգ վաննա կար: Բոլոր ջրերն էլ հավասար վազում էին՝ ո՛չ շատ տաք, ո՛չ շատ պաղ: Լողացանք, գնում ենք տուն. «Տղե՛ք, սրանք հա՞յ կէղնին, ի՞նչ կասեք»:

Տեսածի պատճառով Հովհաննեսը հիվանդանում է: «Յոթ օր քաշեց հիվանդությունս: Աչքիս առաջ էր էդ մարդկանց պատկերը, մտքիցս չէր ելնում, ինչպե՞ս էին սպանել էդ խեղճերին: Չէի կարողանում մոռանալ մարդկանց գանգերը, կարծես ես էի մեղավոր, ես ինձ տանջում էի»: Մտատանջությունների մեջ Հովհաննեսը փորձում է տեղի պահակ չեչեն Հասանից ճշտել, թե ովքեր են սպանվածները, Հովհաննեսը տեղի բնակիչներին չեչեններ է անվանում, ապա տեսնելով չեչենի անհավասարակշռված պատասխանը՝ հարցնում է հայ վարպետներից մեկին՝ Միքայելին: «Բարաքների կողմը, մեկ կմ ու կես կէղնի, էն կողմը մարդ են սպանել, ի՞նչ մարդիկ են, ո՞վ է սպանել, ընկե՛ր Հասան»: Էս Հասանը էնպես զայրացավ իմ վրա. «Կակո՞ե տվայո դելո»,-ու թողեց գնաց: Կա-չկա էս ավազակը գիտի եղելությունը: Ես պատմեցի վարպետ Միքայելին: Վարպետը զարմացավ և ասաց.«Գործը պրծնենք, գնանք տեսնենք՝ էդ ի՞նչ բան է եղել»: Գնացինք, ես ցույց տվի այն տեղը, որտեղ որ սպանել էին մարդկանց: Որ չտեսավ էդքան գանգեր իրար վրա, շատ զարմացավ.«Էս ի՞նչ գազանություն է եղել այստեղ,վոտ ի զվերինստվո: Ինչպե՞ս իմանանք, թե ինչ է կատարվել էստեղ»: «Ումի՞ց իմանաս, գազան չեչեններից»: Վարպետ Միխայելը իմանում է:

1918թ. երիտթուրքերը հասել էին մինչև Դերբենդ և ազգայնականներին օգնել տապալելու խորհրդային իշխանությունը: XIX դ. սկզբին (Դաղստանը Ռուսաստանին միանալուց հետո) Դերբենդում սկսել է վերականգնվել հայկական համայնքը: Նախկին Ս. Ա-

մենափրկիչ եկեղեցուց բացի՝ 1870թ. կառուցվել է Ս. Աստվածածին հայկական եկեղեցին: XIX դ. II կեսին բացվել են հայկական ծխական և Մարիամյան իգական դպրոցները: 1913թ. Դերբենդում ապրում էր 3000 հայ: 1918թ. հուլիսից մինչև 1920թ. մարտը Դերբենդը գտնվել է ազգայնականների ձեռքին, որոնք էլ իրագործել են հայերի ջարդերը: 1920թ. մարտի 25-ին Կարմիր բանակը ազատագրում է քաղաքը[1]: Հովհաննեսը գրում է. «Էս ինչ անբախտ ժողովուրդ ենք, 1915թ. թուրքը արևմտահայությանը կոտորեց, 1918թ. Արևելյան Հայաստանը ոտքի տակ գնաց, 1920թ. կոտորածը նորից կրկնվեց, չկշտացա՞վ գազանը: Մի կարճ ժամանակում երեք անգամ էլ էս ի՜նչ տանջանք է, որ քաշում է հայ ժողովուրդը: Բազմաթիվ հայեր թողել են իրենց հայրենի աշխարհը, ցրվել աշխարհով մեկ, էս գազան թուրքի սուրը հասել է նաև էստեղ: Ինչո՞ւ էսպես ստացվեց հայ ժողովրդի ճակատագիրը, մի ամբողջ ժողովուրդ ողբերգական կերպով կոտորվեց թուրքական դահիճների, աշխարհի անհագ բորենիների կողմից: Ինչքա՞ն զոհ գնաց. Աստծուն է հայտնի: Ո՞վ գիտե, ի՞նչ է հիմա նորից կատարվում Հայաստանում, ո՞ւմ են սպանում, որքա՞ն գերի տարան, ինչքա՞ն որբերի թիվ ավելացավ: Դժբախտությունը այն է,որ դաշնակցականները հաշվի չառան թուրք բարբարոսների արարքները՝ հայ ժողովրդի բնաջնջման նախորդ բոլոր փորձերը 1915-1918թթ. և ավելի ծանր վտանգի ենթարկեցին հայ ժողովրդի ճակատագիրը: Ժողովուրդը ձգտում էր դեպի Ռուսաստան, որը փրկության ձեռք էր մեկնում: Հայ ժողովուրդը իշխանություններից լավ էր հասկանում դա, նա չէր կարող իրեն ապահով զգալ, քանի դեռ դահիճ թուրքը Հայաստանում էր: Գելի հետ գառը չէր կարող ապրել: Հազար տարի էլ որ անցնի, մեր սե-

[1] БСЭ, т. 8, М., 1972, с. 109.

ռունդները չպետք է մոռանան այդ ամենը: Ամբողջ մի նահանգ՝ Ղարսի նահանգը[1], թողին թշնամուն: Մեր հայրենիքի մայրաքաղաք Անին, ամենասիրուն սարը՝ Արարատը[2], և շատ հարուստ գանձեր թողին թշնամուն: Անբուժելի, անմոռանալի վերք ու կսկիծ թողին ամեն մի հայի սրտում: Չարանենգ ձևով վերաբերվեցին հայ ազգի ապագային, դաշնակցական «մերուժաններն ու վասակները» հայի հողերը թողին հեռացան»:

Մի օր ռուսական թեթերից իմանում են, որ ռուսական տասնմեկերորդ բանակը մտել է Հայաստան[3]: Վերապրածը այս դեպքը գնահատում է որպես Հայաստանի փրկություն, և հայ ժողովրդի համար ազատության դռները բացվեցին Կարմիր Հոկտեմբերի[4] շնորհիվ: 1919թ. վերակազմավորված տասնմեկերորդ կարմիր բանակը 1920թ. ապրիլին գրավում է Բաքուն: Ադրբեջանի խորհրդայնացումից հետո՝ 1920թ. հունիսից մինչև 1921թ. մայիսը, բանակը արշավում է Հայաստան, Վրաստան և խթանում Անդկովկասի խորհրդայնացմանը:

1921թ. թուրքական զորքերը հեռանում են Հայաստանից[5], գյուղերում կողոպտում էին հայերի ունեցվածքը, անասուն չէին թողնում, տանում էին: Հովհաննեսը գրում է. «Տամազլղ թողեք տնները, չէ՞ որ մենք նորից պիտի գանք»,-և այդպես էլ սպասում են արյունախում դահիճները: Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ատամները սրած սպասում էին, որ իրենց հարազատ ալամանը

[1] Տե՛ս ՀՏԲ, հ. III, էջ 72:

[2] Հայաստանի մասին Աստվածաշնչում տե ս Ծննդոց 8.4, Երեմիա 6.27, IV Թագավորաց 19.37, Եսայի 37.38:

[3] ՀԲԷ, т.6, М., 1978, с. 26-27.

[4] Վերապրածը ի նկատի ունի 1917թ. Հոկտեմբերյան հեղափոխությունը:

[5] Ալեքսանյան Կ., Թուրքիայի ցեղասպանության քաղաքականության շարունակությունը, Ալեքսանդրապոլի գավառում, Բանբեր Հայաստանի արխիվների, թիվ 1, 2005, էջ 24:

հաղթի ռուսներին, որ հետո էլ իրենք հարձակվեն, գրավեն հարուստ Կովկասը: Բայց դահիճի մուրազը փորը մնաց: Կործանվեց ալամանը, թուրք ֆաշիստները, իրենց անհագուրդ բերանը բացած, նպաստավոր պայմանների էին սպասում, գլուխների պոզերը սրած, վայրի խոզի պես ատամները իրար խփելով՝ չխկչխկացնում էին ու սպասում հարմար վայրկյանին՝ Ռուսաստանի պարտվելուն, որպեսզի իրենք էլ հարձակվեն: Այդ հույսով էլ մինչև այժմ ապրում են»:

Թուրքերը քաղաքը թողել են ապրիլի 22-ին: Այս մասին Խորհրդային Հայաստանի Ալեքսանդրապոլի քաղաքային դումայի նախկին նախագահ Նիկոլայ Կիրակոսյանը ասել է, որ իր և Կարաբեկիրի վերջին տեսակցության ժամին Կարաբեկիրը ասել է. «Մենք գնում ենք, գալիս են կարմիրները, տեսե՛ք, հայե՛ր, ձեզ լա՛վ պահեք: Եթե մենք մեկ անգամ ևս եկանք, քարը քարի վրա չենք թողնի Ալեքսանդրապոլում: Ոչ մի ներում չի լինի, նույնիսկ երեխաներին: Բոլորին սրի կքաշենք: Այն, ինչ այս անգամ արեցինք, դա դեռ բարեբախտություն է: Վախեցե՛ք մեր երրորդ գալուց»:

Դերբենդից Հովհաննեսը տեղափոխվում է Կրասնոդար, որտեղ Թռչունյան ազգանունը փոխում է Հովհաննիսյանով՝ փորձելով ջնջել դաշնակացականի անցյալը և արդեն նոր ազգանունով ու նոր՝ բոլշևիկյան գաղափարախոսությամբ տոգորված, մի քանի տարի անց վերադառնում է Հայաստան և հանգրվանում Լենինականում:

АРМЯНО-ТУРЕЦКАЯ ВОЙНА 1920Г.В МЕМУАРАХ ОВАНЕСА ОВАННИСЯНА-ТРЧУНЯНА

Инга АВАГЯН
Ширакский центр арменоведческих исследований НАН РА,
Музей-заповедник Кумайри

Ключевые слова: армяно-турецкая война 1920, большевики, сиротский приют, Казачий пост, сражение при Гйола, Дербендская резня.

В статье представлены воспоминания Ованеса Ованнисяна-Трчуняна „Судьба нашего полка”, где автор вспоминает об исторических событиях 1918-1920гг. и представляѣт масштабы этой страшной трагедии. Рукопись состоит из восьми блокнотов-369 страниц. Мемуары были написаны 48 лет спустя после войны в 1968 г. Во время армяно-турецкой войны 1920г. Ованесу Ованнисяну-Трчуняну было 20 лет. Едва избегнув смерти, он обосновался в городе Ленинакане-Гюмри. На протяжении всей жизни Ованес Ованнисян-Трчунян пытается психологически преодолеть ужасы прошлого, но сделать это не только ему, но и другим выжившим практически не удается.

THE ARMENIAN-TURKISH WAR OF 1920 IN THE MEMORIES OF HOVHANNES HOVHANNISYAN-TRCHUNYAN

Inga Avagyan
Shirak Center for Armenological Studies RA
Kumayri historical and cultural museum-preserve.

Key words: Armenian-Turkish war of 1920, Bolsheviks, orphanage Kazachiy post, battle of Gyola, Derbend massacre.

The article presents the memories of Hovhannes Hovhannisyan-Trchunyan- "The fate of our regiment", where the author remembers the historical events of 1918-1920 and represent the scale of this terrible tragedy. The manuscript consists of eight notebooks - 369 pages. The memoriess were written 48 years after the war in 1968. During the Armenian-Turkish war of 1920 Hovhannes Hovhannisyan-Trchunyan was 20 years old. Having barely escaped death, he settled in the city of Leninakan-Gyumri. Throughout his life, Hovhannes Hovhannisyan-Trchunyan has been trying to psychologically overcome the horrors of the past, but not only he, but also other survivors practically fail to do this.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշոտ ՄԵԼՔՈՆՅԱՆ
Վրաստանի և Հայաստանի անկախության վերականգնման
100-ամյա ուղին (պատմական զուգահեռներ).....3

Ռուբեն ՍԱՖՐԱՍՏՅԱՆ
Հայոց ցեղասպանության քեմալական Թուրքիայի ծրագիրը (1920 թ.).....22

Արմեն ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Արկադի ԱԿՈՊՈՎ
Թուրքիայի ցեղասպանական քաղաքականության
շարունակությունը Ալեքսանդրոպոլի գավառում 1918-1921 թթ.....60

Կարեն ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հայաստանի խորհրդայնացումը հայ-ռուս-թուրքական
հարաբերությունների համատեքստում 1920 թվականին.....83

Արմեն ՄԱՐՈՒՔՅԱՆ
Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետությունների
խորհրդարանների ընդունած փաստաթղթերի
պատմահիրավական քննությունը.....117

Կարինե ԲԱԶԵՅԱՆ
1918 – 1920 թթ. թուրքական արշավանքները շիրակցիների
բանավոր հուշերում 145

Համո ՍՈՒՔԻԱՍՅԱՆ
Խորհրդային Հայաստանի արտաքին գործերի ժողովրդական
կոմիսարիատի կառուցվածքը 1920-1922 թթ. 163

Կարինե ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Ալեքսանդրապոլի պետական-քաղաքական գործիչները
1918-1920թթ. ……188

Կարինե ՍԱՀԱԿՅԱՆ
Հայ զինվորի բարոյահոգեկեբանական նկարագիրը
արդի մարտահրավերների համատեքստում.....216

Արտաշես ԲՈՅԱՋՅԱՆ
Ժողովրդագրական գործընթացները Ալեքսանդրապոլ-Լենինականի
գավառում 1914-1930-ական թթ.....231

Ինգա ԱՎԱԳՅԱՆ
1920 թ. Թուրք-հայկական պատերազմը
Հովհաննես Թռչունյան –Հովհաննիսյանի հուշերում.....252

С О Д Е Р Ж А Н И Е

Ашот МЕЛКОНЯН
100-летний путь восстановления независимости
Грузии и Армении (исторические параллели).....3

Рубен САФРАСТЯН
Программа геноцида армян кемалистской Турции (1920г.).....22

Армен АЙРАПЕТЯН, Аркадий АКОПОВ
Продолжение геноцидной политики Турции в
Александропольском уезде в 1918-1921гг.....60

Карен ХАЧАТРЯН
Советизация Армении в контексте
Армяно-Российско-Турецких отношений в 1920 году.....83

Армен МАРУКЯН
Историко-правовой анализ документов принятых парламентами
государств о признании геноцида армян.....117

Карине БАЗЕЯН
Нашествия турок 1918-1920 гг. в устных воспоминаниях ширакцев.....145

Амо СУКИАСЯН
Структура народного комиссариата иностранных дел
Советской Армении в 1920–1922 гг.....163

Карине АЛЕКСАНЯН
Государственные деятели Александропольского уезда
1918-1920 гг.....188

Карине СААКЯН
Формирование психики будущего солдата в контексте
национальной идеологии 216

Арташ БОЯДЖЯН
Демографические процесы Александрополь-Ленинаканского
уезда в 1914-1930 гг.....231

Инга АВАГЯН
Армяно-Турецкая война 1920г. в мемуарах
Ованеса Ованнисяна-Трчуняна.....252

CONTENTS

Ashot MELKONYAN
The 100-Year-Old Path of Georgia and Armenia‘S
Independence Restoration (Historical Parallels)……...……...3

Ruben SAFRASTYAN
The Kemalist Turkey Program of Armenian Genocide (1920)……..22

Armen HAYRAPETYAN, Arkadi AKOPOV
Continuation of Turkish Genocide Policy in
Alexandropol Uezd in 1918-1921yy……...60

Karen KHACHATRYAN
Sovietization of Armenia in the Context
of Armenian-Russian-Turkish Relations in 1920……...83

Armen MARUKYAN
Historical and Legal Analysis of Documents Adopted by the
Parliaments of States on Recognition of the Armenian Genocide……117

Karine BAZEYAN
Turkish Invasions of 1918-1920 in the Oral Memoirs of Shirakians……..….145

Hamo SUKIASYAN
Structure of People's Commissariat of Foreign Affairs of
Soviet Armenia in 1920–1922……...163

Karine ALEXANYAN
State Politicians of Province Alexandropol in 1918 – 1920……..188

Karine SAHAKYAN
Formation of the Psyche of a Future Soldier in the Context
of National Ideology……..216

Artash BOYAJYAN
Demographic Processes in the Alexandropol-Leninakan
Province in 1914-1930 ……..231

Inga AVAGYAN
The Armenian-Turkish war of 1920 in the Memories
of Hovhannes Hovhannisyan-Trchunyan……..252

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

Հ Ո Դ Վ Ա Ծ Ն Ե Ր Ի Ժ Ո Ղ Ո վ Ա Ծ Ո Ւ
«Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Յ Ա Ն Դ Ա Ս Ե Ր Ը.
1920-2020թթ. հին խնդիրներ և նոր մարտահրավերներ»
երիտասարդ գիտնականների դպրոց
07-13 դեկտեմբեր, 2020, Գյումրի

С Б О Р Н И К С Т А Т Е Й
«УРОКИ ИСТОРИИ:
1920-2020гг. Старые вопросы и новые вызовы»
Школа молодых ученых
Гюмри, 07-13 декабря, 2020

C O L L E C T I O N O F A R T I C L E S
“LESSONS OF THE HISTORY:
1920-2020: Old problems - new challenges”
School of Young Scientists
Gyumri, December 07-13, 2020

Գլխավոր խմբագիր՝ Ս. Հայրապետյան
Սրբագրիչներ՝ Ռ. Հովհաննիսյան
Ա. Սառաջյան
Հ. Մատիկյան
Տեխնիկական խմբագիր՝ Լ. Հոստանյան

Ծավալը՝ 280 էջ թուղթը՝ A5 տպաքանակը՝ 100 գինը՝ պայմանագրային

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա
Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Հայաստան Գյումրի Վազգեն Սարգսյան 5ա
http://shirakcenter.sci.am/. E-mail: hkentron@mail.ru